Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1707

ՀՄՈՒԹԻՒՆ
ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
ՑԱՌԱՔՇԱՆԱՐՈՒԹԻՒՆՔ
ԱՌՈՑ ՑԱՌՔԱԼԵԱՆՑ

ՑԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
-1871-

225
Մ-97

2010

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆԻ

2004

(5051
38)

16845-58

33198-ա.հ.

225
Մ-97

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՆՈՐ
ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Մ. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՌՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ
Տ. ՄԿՐՏՉԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՌՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
-1871-



Ի ՑԻՇԱՏԱԿ

ՀՈԳԻՈՑ ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏ ԱԴԱՆՅԻ
ՄՈՒՐԱՏԵԱՆ ԿԱՐՆԵՑԻՈՅ

ՈՐՈՅ ԱՐԴԵԱՄԲՓ ԻՍԿ ՏՊԱԳՐԵՅԱՒ

ՄԱՏԵԱՆՍ

ԵՕԳՈՒՏ ԵՒ Ի ՊԱՇՃԱՌՈՒԹԻՒՆ

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ Վ.ԸՐԺԱՄԱՆԻ

ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Գոհանամ զքեզն, Հայր՝ Տէր երկնի և երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և 'ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց։ Այո՛, Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո։ Մաթ. ԺԱ. 25, 26.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Մեր ազգային դպրոցները շատ և շատ թերութիւններ ունին, թէ դաստուութեան եղանակին նկատմամբ և թէ ուսանելեաց ընտրութեան։ Մեծ առաւելութիւն և առաջնութիւն կը տրուի երկրորդական ուսանելիքներուն, և ընդհակառակն, առանց կարեւոր մտադրութեան կը թողուին այն ուսմունքները, որոնք առաջին տեղը պիտի գրաւէին դաստիարակութեան մէջ։ Այն մարդիկը, որոնք լրջօրէն խորհած են դաստիարակութեան վերայ, քաջ կը զգան՝ թէ որչափ վնասակար է այս խառնաշփոթութիւնը։

Քրիստոնէական Կրօնի ուսումն, որ իւր բարոյական վսեմ և զարգ սկզբունքներով դպրոցական և ընկերական կեանց համեմիչ ալիւն է, կամ իսպառ չըկայ մեր դպրոցներուն մէջ. և կամ ստուերը միայն կայ։ Ո՞ գիտէ, թէ այս չէ գլխաւոր պատճառն, որ դպրոցական գեղեցիկ յարկը պատժարան մի եղած է շատ տեղ՝ թէ ուսուցչաց համար և թէ ուսանողաց։ Չը կայ դպրոցական գերդաստանի անդամոց մէջ փոխադարձ սիրոյ և վստահութեան այն սուրբ և խորհրդաւոր կապը, որ կը քաղցրացնէ ուսուցչի աշխատանքը և կը բեղմնաւորէ աշակերտի եռանդն ու ջանքը։ Չը կայ ճշմարտասիրութեան և արդարասիրութեան այն մշտաբորբոք հուրը, որ մանկական հասակէն կը վառէ աշակերտի միտքն ու սիրտը՝ արիաբար պատերազմիլ ամէն մոլորութեան և անիրաւութեան դէմ։ Չը կայ, վերջապէս, աստուածասիրութեան և մարդասիրութեան այն հեզահամբոյր հոգին, զոր միայն Քրիստոնէական Կրօնի ճշմարիտ ուսումը կարող է զարթուցանել ուսանողին մէջ, և՛ սէջ որ և իցէ արտաքին գիտութիւն կամ հմտութիւն։

Աւդ՝ կրթութեան և դաստիարակութեան արդիւնքը առատօրէն քաղելու և վայելելու համար՝ անհրաժեշտ հարկ է էական գիտութեանց առաջին տեղը Կրօնի ուսմանը ընծայել, նովաս սկսանիլ, շարունակել և աւարտել,

մարդոյ բովանդակ գոյութիւնը։ Բայց սոյն վսեմ նպատակին հասնելու համար՝ բաւական չէ, իբրեւ գեղ, կաթիլ կաթիլ և ելթ արբուցանել Կրօնի ուսուցմը։ այլ պէտք է Ս. Գրոց կենդանի աղբիւրին մօտեցնել մանուկները, և այս եղանակաւ զովացընել նոցա բարոյական ծարաւը։ Պէտք է քաղուածել Ս. Գրքին այն ամեն ճշմարտութիւնները, որոնք մանկանց հասողութենէն և կարողութենէն վեր չեն, և որոնք անհրաժեշտ են նոցա քրիստոնէական և բարոյական կենաց զարգացման համար։

Այս է Քրիստոնէական Կրօնի հմուտ և փորձառու ուսուցչաց հասուն խորհուրդը, և սոյն իսկ նպատակաւ յօրինուած է ներկայ Երկասիրութիւնը, որուն մէջ պատմական ձեւով ամփոփուած են Նոր Կտակարանի աստուածաշունչ ճշմարտութիւնները, հանդերձ պարզ և գիւրիմաց յորդորակներով։

Թէեւ Նոր Կտակարանի պատմութեան քանի մի տեսակ հրատարակութիւններ կան, բայց մենք մանաւանդ հետեւած ենք 1862ին Թիֆլիզի մէջ տեղական բարբառով հրատարակուած Դասագրքին, որ ունի այսպիսի վերնագիր —Սրբազան Պատմութիւն Հայ պղայոց և աղջկանց համար. աշխատ. Գ. Ս.—։ Եւ ահա սոյն առթիւ պարտք կը համարինք մատուցանել Աշխատասիրողին մեր շնորհակալութիւնը, վստահ լինելով, որ մեր Մեծարգոյ Բարեկամն, իւր Դասագրքի երկրորդ տպագրութեան ժամանակ, առանց նկատողութեան չը թողուր մեր սոյն հրատարակութեան մէջ գտնուած ճշտութիւնները և յաւելուածները։

Ներկայ երկասիրութիւնը, տարիներով մեր ուսուցչութեան ժամանակ, Քրիստոնէական Կրօնի դասական հրահանգ եղած է մեր ձեռքը, որոյ գաստառութեան համար մեր ընտրած ուսուցման միակ եղանակն է եղած՝ նախ ընդարձակօրէն բացատրելով պատմել, և ապա պահանջել աշակերտներէն, որ մտադրութեամբ կարդան, պատրաստեն, և ինքեանք եւս բանիւ բերանոյ պատմեն. իսկ ամբողջ Դասագիրքը աւարտելէն զկնի՝ աւետարանական խմբասներուն վրայ համառօտ շարագրածներ գրել տալով սրբագրած ենք, լաւագոյն ձայնիւ կարդալով։ Թէ ի՞նչ զգալի օգուտներ առած ենք այս եղանակին մէջ կը թողուենք որ իւրաքանչիւր գաստատու ինքնին փորձէ, տեսնէ և վկայէ։

Քաղցր յոյս մի կը քաջալերէ և կը միխիթարէ զմեզ, որ սոյն աւետարանական Պատմութիւնը, դպրոցական Դասագիրք լինելով հանդերձ, կարող է նա և բարեպաշտ Գիրք-դաստատներու մէջ ընթերցանութեան շահաւէտ գիրք լինել։ Երանի՜ թէ պտղաբերէ մեր այս յոյսը, և այնուհետեւ աւելի քան զչափն վարձատրուած կը համարինք զմեզ մեր սոյն ամենադոյզն աշխատանաց համար։

Մ. Վ. Մ.



Թոյլ տուք մանկուկներն. և մի արգելուք զդոսա գալ առ իս. զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։ Մատ. ԺԹ. 14։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ա.

Զաքարիա եւ Եղիսաբեթ։
Ղ-ի. Ա. 5։

ՀԵՐՈՎԴԵՍԻ թագաւորութեան ժամանակ, Յուդայի մի փոքրիկ և լեռներու մէջ շինուած քաղաքի մէջ, կը բնակէր Զաքարիա անունով մի բարեպաշտ քահանայ, իւր Եղիսաբեթ կնոջ հետ միասին։ Սոքա արդար էին Աստուծոյ առջեւ և կը վարէին առաքինի կեանք։

Զաքարիա և Եղիսաբեթ անզաւակ էին և այս մասին շատ կը տրտմէին, վասն զի բոլոր զաւակները մեծ ուրախութիւն են ծնողաց համար։ Նոքա երկար տարիներ կ'աղօթէին, որ Աստուած իրենց որդի պարգեւէ, բայց որովհետեւ երկուսն ալ արդէն շատ ծերացած էին, ուստի այլ եւս յոյս

չունէին զաւակ ունենալու։ Նոցա միակ ցանկութիւնը և փափաքը այն էր, որ կենդանի մնան և այն երջանիկ ժամանակը տեսնեն, յորում խոստացեալ Փրկիչը պիտի ծնուէր։

Քահանաները սովորական կարգաւ կը կատարէին իրենց պաշտօնը Երուսաղեմի տաճարին մէջ։ Կարգը հասաւ Զաքարիային և նա գնաց Երուսաղէմ։ Ժողովուրդը տաճարէն դուրս կ'աղօթէր. իսկ Զաքարիան խունկ արկանելու համար տաճարը մտաւ, ուր բացի 'ի քահանայէն այլ ոք չէր մտներ։ Զաքարիան խունկ դրաւ թնոց սեղանի վրայ, և յանկարծ տեսաւ որ սեղանի աջ կողմը կանգնած է Տիրոջ հրեշտակը։ Խռովեցաւ Զաքարիան և սաստիկ վախցաւ. բայց հրեշտակը քաջալերեց և ասաց. "Մի վախնար, Զաքարիա, քո աղօթքը լսուեցաւ, քո Եղիսաբեթ կինդ պիտի ծնի որդի և դու նորա անունը Յովհաննէս պիտի կոչես։ Նա պիտի լինի քեզ համար ուրախութիւն և ցնծութիւն, և շատերը պիտի ուրախանան նորա ծննդեան վրայ։ Զան զի մեծ պիտի լինի նա Տիրոջ առջեւ. գինի և օղի պիտի չըխմէ և դեռ իւր մօր արգանդին մէջ պիտի լցուի Հոգւով սրբով։ Նա Իսրայելացիներէն շատերը պիտի դարձնէ իրենց Աստուծոյն, և ինքը պիտի լինի Եղիայի հոգւով և զօրութեամբ։ Նա պիտի դարձնէ հայրերու սիրտը՝ որդիներուն և արդարներու իմաստութիւնը՝ անհաւաններուն, որ Տիրոջ համար բարեկարգ ժողովուրդ պատրաստէ։"

Զաքարիայի մեծ աւետիքը Զաքարիայի յոյսէն շատ վեր էր։ Նա ոչ միայն որդի ունենալու յոյսը խսպառ կտրած էր, այլ և արդէն անկարելի կը համարէր, ուստի և ասաց հրեշտակին. "Ինչով կարեմ հաւատալ այդ բանին, մինչդեռ ես ծեր եմ և իմ կինս օրերը անցուցած։" Հրեշտակը պատասխանեց. "Ես Գաբրիէլն եմ, որ կը կանգնիմ Աստուծոյ առջեւ և զրկուած եմ այս աւետիքը քեզ տալու, բայց որովհետեւ չըհաւատացիր ինձ, ուստի համր պիտի լինիս և պիտի չըկարենաս խօսիլ, մինչեւ այս ամենը կատարուի։"

Հրեշտակը հեռացաւ եւ Զաքարիան մնաց համր։ Ժողովուրդը տաճարէն դուրս կըսպասէր, և ամենքը կը զարմանային՝ որ Զաքարիան կ'ուշանայ տաճարին մէջ։ Վերջապէս Զաքարիան ելաւ տաճարէն, բայց չէր կարող խօսիլ։ Նա չըկարացաւ ասել սովորական օրհնութիւնը, այլ միայն լռութեամբ արձակեց ժողովուրդը. վասն զի համրացած էր և նշաններով միայն կը խօսէր. ուստի և ամենքը իմացան որ տեսիլ տեսած է։ Երբ որ նորա պաշտօնի օրերը լրացան, դարձաւ իւր տունը։ Շատ չանցաւ, Եղի-

սաբեթը յղացաւ, բայց երկար ժամանակ իւր ուրախութիւնը կը թաղցներ իւր աղգականներէն։

Բ.

Սուրբ կոյսն Մարիամ։

Ղուկ. Ա. 26։

ՔՐԻՍՏՈՍԻ ծննդեան ժամանակները, ոչ միայն Հրէից, այլ և հեթանոսաց մէջ, համբաւ տարածեցաւ, որ մարգարէից գուշակած Փրկիչը շուտով պիտի յայտնուի աշխարհին։ Բայց Հրէաները, ըստ մեծի մասին, այնպէս չէին հասկանար մարգարէութիւնները, ինչպէս հարկ էր հասկանալ։ Նոքա կը կարծէին թէ՝ Մեսիան աշխարհ պիտի գայ երկրաւոր մեծութեամբ և փառաւորութիւն։ Նոքա կը կարծէին թէ՝ Իսրայէլացի աղջիկներէն ամենէն հարուստը և երեւելին պիտի արժանանայ Մեսիայի մայրը դառնալու։ Բայց Աստուած ամեն բան ուրիշ կերպով անօրինած էր։

Գալիլիան, որ Իսրայէլացւոց առաջուան թագաւորութեան հիւսիսային մասն էր, և ըստ մեծի մասին հեթանոսները կը բնակէին, արհամարհելի եղած էր Հրէից աղգին։ Այս անշնան գաւառին մէջ կար մի փոքրիկ քաղաք Նազարէթ անունով։

Այս տեղ կը բնակէին Մարիամ կուսի բարեպաշտ ծնողքը՝ Յովակիմ և Աննան, որ Դաւիթ թագաւորի ցեղէն էին։ Սոքա անզաւակ էին եւ ջերմեռանդութեամբ կը խնդրէին, որ Աստուած օրհնէ իրենց ամուսնութիւնը, իրենց ցանկացած զաւակովը, ուստի և միշտ առատաձեռնութեամբ ողորմութիւն կուտային։ Շատ տարիներ աղօթեցին և միանգամ խոստացան՝ Աստուծոյ նուիրել այն զաւակը, որով կը հաճի Աստուած օրհնել նոցա ամուսնութիւնը։

Ամենողորմ Աստուածը լսեց այս բարեպաշտ ամուսիններու աղօթքը և պարգևեց մի դուստր, որմէ յետ ժամանակաց հաճեցաւ ծնանիլ աշխարհի Փրկիչը։ Արդար ծնողքը Աստուծոյ պարգեւած դուստրը անուանեցին Մարիամ։

Այսպէս երեւեցաւ այն գեղեցիկ արշալոյսը, որմէ պիտի ծագէր ճշմարտութեան Արեգակը, որուն ամեն սուրբեր կըսպասէին մեծ փափաքով։

Յովակիմը գոհութեան մեծագին զոհ մատոյց Աստուծոյ՝ ջերմեռանդ երախտագիտութեամբ։

Բարեպաշտ ծնողքը ամեն ջանք դորձ կը դնէին և այս սուրբ մանուկը կը կրթէին մեծ խնամքով և հոգատարութեամբ։ Երբ որ հասաւ իրենց խոստման ժամանակը, նը-

բերեցին մանուկը Աստուծոյ տաճարին։ Աստուած, որ կը կառավարէր սուրբ մանուկի ծնողաց սիրտը, այնպէս տնօրինեց իւր իմաստուն խորհրդով, որ նա մնայ տաճարի մէջ, միշտ ըսէ Տէրոջ խօսքը, մանկութենէ ընդունէ իւր մտքին և սրտին մէջ բարեպաշտ մտածմունքներ, սուրբ զգացմունքներ և ցանկութիւններ և լինի ընդունակ ծնանելու ամենասուրբ Բանն Աստուած։

Սուրբ Յովակիմ իւր դուստրը Աստուծոյն նուիրելէն յետոյ՝ փոխեցաւ այս կեանքէն դէպ՚ի յաւիտենական կեանքը և սակաւ ժամանակէն յետոյ փոխեցաւ նոյնպէս և սրբուհին Ննա։ Իսկ Մարիամ մնայ Երուսաղէմի տաճարին մէջ, ուր կը դաստիարակուէր քահանայից հսկողութեամբ եւ հոգատարութեամբ։ Որովհետեւ ջերմեռանդն սէր ունէր առ Աստուած, միտքը դրաւ իւր բոլոր կեանքը Աստուծոյ նուիրել, ուստի և խոստացաւ միշտ կոյս մնալ։ Աղքատութիւնը, մշանջենաւոր մենաւորութիւնը, աղօթքը, ընթերցմունքը և Աստուծոյ խօսքը լսելը, ծնան սուրբ Կուսի սրտին մէջ յոյս առ Աստուած և խորին խոնարհութիւն։

Ինն աւանդութիւնը կը պատմէ թէ՝ երբ Մարիամ 14 տարեկան եղաւ, քահանաները հրամայեցին հեռանալ տաճարէն

և ուրիշ աղջկանց նման ամուսնանալ, բայց նա չընդունեց այս առաջարկութիւնը, այլ յայտնեց, որ ինքը ուխտած է Աստուծոյ՝ միշտ կոյս մնալու։ Երբ յայտնեց Մարիամ իւր ուխտը, քահանաները խռովեցան, որովհետեւ աստուածային օրինաց մէջ հրամայուած է թէ՝ ով որ կ՚ուխտէ Աստուծոյ, պէտք է որ կատարէ։ Քահանայքը խորհուրդ կազմեցին և վճռեցին, որ Աստուծմէ հարցնեն։ Աստուած, Մարիամի հետ ամուսնանալու համար, ցոյց տուաւ մի արդար և երկիւղած մարդ Յուդայի ցեղէն։ Այս մարդն էր Յովսէփը։ Սա կը բնակէր նոյն Նազարէթ քաղաքին մէջ, ուր կը բնակէին սուրբ Կուսի ծնողքը։ Աւանդութիւնը կը պատմէ՝ որ Յովսէփ մօտ ութսուն տարեկան էր, արդէն զառամեալ և կը կերակրուէր իւր սեպհական աշխատանքով, թէ եւ Մարիամի պէս Դաւիթ թագաւորի ցեղէն էր։ Մարիամը նշանուեցաւ այս սուրբը մարդոյ հետ, որպէս զի նա լինի սուրբ Կուսի ողջախոհութեան և կուսութեան պահապանող։

Աստուած իւր Գաբրիել հրեշտակապետը առաքեց Մարիամ սուրբ Կուսին մօտ։ Մարիամ, որովհետեւ մարդարէից գրքերը շատ կը կարդար, արդէն գիտէր որ շուտ պիտի աշխարհ գայ խոստացեալ Մեսիան—

Փրկիչը—, ուստի և շատ կը փափաքէր այն ժամանակին հասնիլ։ Եւ ահա միանգամ, երբ նա խաղաղ առանձնութեան մէջ Աստուծոյ վրայ կը մտածէր, յանկարծ Գաբրիէլ հրեշտակը երկնային լուսով երեւեցաւ Մարիամին և ասաց. «Ուրախ լեր բերկրեալ ըդ, Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս։» (Ուրախացիր, ով շնորհընկալ կոյս, Տէրը քեզ հետ է, դու օրհնուած ես կանանց մէջ։)

Մարիամ իւր հեզութեամբ այնքան փոքր կը համարէր իւր արժանաւորութիւնները, որ չը կարաց հասկանալ այս երկնային տեսլեան պատճառը։ Նա խռովեցաւ և կ'ասէր իւր մտքին մէջ, ի՞նչ պիտի լինի այս ողջոյնը։ Հրեշտակը ասաց. «Մի վախնար, Մարիամ. դու շնորհք գտար Աստուծոյ առջեւ. դու պիտի յղանաս ու որդի ծնանիս և անունը դնես Յիսուս։ Նա մեծ պիտի լինի և պիտի կոչուի Որդի Բարձրելոյն։ Տէր Աստուածը պիտի նորան տայ իւր հայր Դաւթի աթոռը և նա յաւիտեան պիտի թագաւորէ Յակոբի ռան վրայ, և նորա թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ։

Հեզ կոյսը, թէ և նշանուած էր Յովսէփի հետ, բայց երբեք մտքին անցած չէր նորան կին լինելու և այս պատճառաւ ասաց

հրեշտակին. «Բայց ի՞նչպէս պիտի լինի այս, վասն զի ես մարդ չեմ դիտեր (այր չունիմ)։»

Հրեշտակը պատասխանեց. «Հոգին սուրբ քեզ պիտի գայ և Բարձրելոյն զօրութիւնը հովանի պիտի լինի քո վրայ. վասն զի քեզ մէն ծնանելու մանուկը՝ սուրբ է և Աստուծոյ որդի պիտի կոչուի։ Ահա քո Եղիսաբեթ ազգականդ եւս, որ ամուլ կոչուած էր, յղի է իւր ծերութեան մէջ, և այս վեցերորդ ամիսն է։ Վասն զի Աստուծոյ համար անկարելի բան չկայ։»

Սուրբն Մարիամ, սիրտը լցուած ջերմեռանդ շնորհակալութեամբ առ Աստուած, ասաց հեզութեամբ. «Ահա, ես Տիրոջ աղախինն եմ. թող լինի ինձ, ինչպէս ասացիր.» և հրեշտակը նորա մօտէն գնաց։

Գ.

Սուրբ կոյսն Մարիամ եւ ալդարն Եղիսաբեթ։

Ղուկ. Ա. 39։

Կարող ենք արդեօք խօսքով յայտնել այն, ինչ որ կրգդար սուրբ Կոյսը, երբ հրեշտակը հեռացաւ և ինքը միայնակ մնաց։ Նորա սիրտը լցուած էր երկնային կենդանի ուրախութեամբ։ Չէր կարող նա մինակ

իւր մէջ պարունակել իւր բոլոր երջանկութիւնը։ Պէտք էր որ մէկուն բանար իւր սիրտը, բայց որուն կարէր բանալ, եթէ ոչ իւր աղգական բարեպաշտ Եղիսաբեթին։ Հրեշտակը ինքը յիշեց Եղիսաբեթի անունը և յայտնեց, որ նա եւս արժանացած էր երկնային ողորմութեան։ Երեք օր պէտք էր որ Ճանապարհորդէր լեռներու մէջէն Եղիսաբեթին հասնելու, բայց այս Ճանապարհային դժուարութիւնը ամենեւին չկարաց արգելք դառնալ մատաղահաս Կուսի փափաքին. նա իսկոյն պատրաստուեցաւ Ճանապարհ ընկնելու, որ գնայ հաղորդէ Եղիսաբեթին իւր բաղդաւորութիւնը և մասնակից լինի նորա ուրախութեանը։ Յայտնի բան է, որ բարեպաշտ և բարեգործ մարդիկ կը կրկնապատկեն իւրեանց ուրախութիւնը, երբ իրարու կը հաղորդեն։ Նոքա կուրախանան իւրեանց մերձաւորներու յաջողութեանը վրայ այնպէս՝ որպէս թէ իրենց է պատահեր։ Եթէ ամենքը ճշմարտապէս բարի մարդիկ լինէին, անշուշտ՝ երկիրս արքայութիւն պիտի լիներ այն ժամանակ։

Մարիամ՝ Օ՛աքարիայի տունը մտնելով ողջունեց Եղիսաբեթը։ Իսկ Եղիսաբեթ երբ լսեց Մարիամի ձայնը՝ մանուկը իսկոյն խաղաց ցնծալով նորա որովայնի մէջ։ Եղիսաբեթ Հոգւով Սրբով լցուեցաւ և բարձրաձայն աղաղակեց. «Օրհնեալ ես դու կանանց մէջ և օրհնեալ է քո որովայնի պտուղը։ Ուստի՞ է ինձ այս երջանկութիւնը, որ իմ Տիրոջ մայրը մօտս եկաւ։ Ահա, երբոր ողջոյնդ լսեցի, իսկոյն մանուկը ուրախութենէն խաղաց որովայնիս մէջ։ Երանի քեզ որ հաւատացիր թէ ամեն բան պիտի կատարուի, ինչ որ Տէրն ասաց։»

Մարիամ, մինչեւ սրտի խորը շարժուած, ասաց. «Իմ անձս կը մեծացնէ (կը փառաւորէ) Տէրը և հոգիս ցնծացաւ իմ Փրկիչ Աստուծով։ Վասն զի նայեցաւ նա իւր աղախնոյ խոնարհութեան վրայ և այսուհետեւ ամեն ազգեր պիտի երանի տան ինձ։ Վասն զի մեծացոյց զիս հզօրն և սուրբ է նորա անունը։ Նորա ողորմութիւնը ազգէ ազգ իւր երկիւղածներու վրայ է։ Նա յայտնեց իւր բազկի զօրութիւնը, ցրուեց ամբարտաւաններու սրտի խորհուրդը, հզօրները աթոռէն ձգեց և խոնարհները բարձրացուց։ Աղքատները բարութեամբ լցուց և մեծատուները ունայն արձակեց։ Օգնեց իւր Իսրայէլ ծառային և յիշեց իւր ողորմութիւնը, որ խոստացաւ մեր հայրերուն, Աբրահամին և նորա զաւակին յաւիտեան։»

Սուրբ Մարիամ երեք ամիս մնաց Եղիսաբեթի մօտ և ապա դարձաւ իւր տունը։

Դ.

Սուրբ Յովհաննէս Կարապետի ծնունդը։

ԶԱՔԱՐԻԱՅԻՆ և Եղիսաբեթին որդի ծնաւ, ինչպէս գուշակած էր հրեշտակն։ Այր և կին մեծ շնորհակալութեամբ ընդունեցին մանուկը, որպէս Աստուծոյ նուէր. բայց Եղիսաբեթ առաւել ուրախանալու պատճառ մի եւս ունէր, վասն զի այն ժամանակ ամուլ կինը անպտուղ կը համարուէր ամենուառջեւ։ Նա ամբողջ յիսուն տարի կը համբերէր այս նախատանացը, որ այժմ վերացաւ իւր վրայէն։ Այս ամեն բարութեան համար գոհացաւ նա Աստուծմէ և ասաց. «Ինչ ուրախութիւն է այս, զոր Տէր Աստուած զրկեց ինձ ծերութեանս ժամանակ։ Ողորմութեամբ նայեցաւ նա ինձ և իմ վրայէս նախատինքը վերցուց։» Նորա աղգականները և մերձաւորները՝ Աստուծոյ ցուցած մեծ ողորմութիւնը տեսնելով կուրախանային նորա հետ։

Երբ որ թլփատութեան ութերորդ օրը հասաւ, կամեցան հօր պատուոյն համար Զաքարիա անուանել մանուկը, վասն զի ազգականները չգիտէին որ մանկան անունը արդէն նշանակուած է հրեշտակէն։ Ոչ, ասաց Եղիսաբեթ, նա պէտք է որ Յովհաննէս

անուանուի։ Ազգականները ասացին, որ նոցա ազգի մէջ նոյն անուամբ մարդ չկայ, և կ'ակնարկէին Զաքարիային՝ որ անուն տայ մանկանը, և Զաքարիան որովհետեւ տակաւին համր էր, առաւ տախտակ և վրան գրեց այս խօսքերը. «Նորա անունը Յովհաննէս է։» Ամենքը զարմացան այս բանիս վրայ։

Իսկոյն բացուեցաւ Զաքարիայի լեզուն. վասն զի հրեշտակի ամեն ասածը կատարուեցաւ։ Զաքարիա բարձր ձայնով սկսաւ օրհնել զԱստուած։ Ահ և երկիւղ պատեց ամենուն, որոնք ներկայ էին և որոնք այն երկրին մէջ կը բնակէին։ Ուր որ լսուեցաւ այս համբաւը, ամենքը կ'ասէին առ հասարակ. «Ի՞նչ պիտի լինի այս մանուկը.» իսկ Զաքարիան Հոգւով Սրբով լցուած մարգարէացաւ և ասաց. «Օրհնեալ է Իսրայելի Աստուածը, որ այցելութեան եկաւ մեզ և փրկութիւն արար իւր ժողովրդին։ Նա փրկութեան եղջիւր հանեց մեզ իւր ծառայ Դաւթի տանէն, ինչպէս որ սուրբերը գուշակեցին։ Նա փրկեց մեզ մեր թշնամիներէն և ամեն մեզ ատողներէն։ Նա ողորմեցաւ մեր հայրերուն և յիշեց իւր ուխտը, զոր երդմամբ խոստացաւ մեր Աբրահամ հօրը։ Մենք, մեր թշնամիներէն փրկուելով, առանց երկիւղի պիտի պաշտենք զԱստուած, սրբութեամբ և արդարութեամբ, մեր բո-

ըոր կենաց մէջ։ Իսկ դու, մանուկ, Բարձ-
րելոյն մարգարէն պիտի լինիս, պիտի երթաս
Նորա առջեւ և Նորա ճանապարհը պատրաստես, ժողովուրդը պիտի խրատես, և գիտցնես իրենց մեղաց թողութիւնը և փրկութիւնը, որ պարգեւեցաւ մեզ Աստուծոյ ողորմութեամբ և գթութեամբ, որով ծագեցաւ երկնից Արեգակը որ խաւարի և մահուան ստուերի մէջ նստողները լուսաւորէ և մեր ոտքերը ուղղէ խաղաղութեան ճանապարհին վրայ։ »

Մանուկը կ'աճէր և կը զօրանար հոգւով և կը բնակէր անապատի մէջ մինչեւ մարդկանց յայտնուելու օրը։

Ե.

Քրիստոսի ծնունդը։

Ղուկ. Բ. 1։ Մատթ. Ա. 18։

Յովսէփ, Մարիամ կուսի նշանածը, տակաւին չգիտէր Մարիամին յայտնուած աւետիքը, բայց Աստուած ինքը յայտնեց Յովսէփին այս գաղտնիքը։ Հրեշտակը երեւեցաւ Յովսէփին և ասաց. "Յովսէփ, Դաւթի որդի՝ մի վախնար քեզ մօտ առնուլ Մարիամ կինդ. վասն զի Նորա ծնածն՝ Սուրբ Հոգին է։ Նա պիտի ծնի որդի և դու պիտի ա-

նուանես Յիսուս (Փրկիչ), որ իւր ժողովուրդը մեղքերէն պիտի փրկէ։ » Յովսէփ երբ քնէն արթնացաւ, իսկոյն կատարեց հրեշտակի հրամանը։ Դաւ նա Մարիամը իւր տունը և կը բնակէին Նազարեթին մէջ խաղաղութեամբ, համաձայնութեամբ, լի երախտագիտութեամբ առ Աստուած և կը վարէին սուրբ և անարատ կեանք։

Այս ժամանակ Հռովմայեցւոց Օգոստոս կայսերէն հրաման եկաւ Հրէաստան, որ՝ աշխարհագիր ընեն նորա բոլոր հպատակները։ Յմեն մարդ պարտական էր իւր հայրենեաց մէջ իւր անունը գրել տալ։ Յովսէփ և Մարիամ, որովհետեւ Դաւթի թագաւորի ցեղէն էին, պէտք էր որ իւրեանց անունը Հրէաստանի Բեթղեհեմ քաղաքի մէջ գրել տային, որ Դաւթի հայրենիքն էր։ Այսպէս կատարուեցաւ վաղեմի մարգարէութիւններէն մէկը, որով գուշակուած էր թէ՝ Քրիստոս Բեթղեհեմի մէջ պիտի ծնի։ Յովսէփ և Մարիամ գնացին Բեթղեհեմ։ Նոքա երեկոյեան հասան այն տեղ։ Մեծ բազմութիւն ժողովեցաւ իւրեանց անունը գրել տալու համար։ Յմեն տներ լցուած էին նոր եկած մարդիկներով։ Յոսէփ գիշերն անցնելու համար օթեւան որոնեց, բայց տուն չը տուին. պատճառն որ ամեն տներ արդէն բռնուած էին և

մանաւանդ որ իրենք աղքատ էին։ Գիշերը հատաւ և նոքա ճանապարհորդութենէն յոգնած՝ և ոչ մի ապաստան գտան։ Ի՞նչ խղճալի վիճակ։ Բաղաքի մօտ կար մի այր (մաղարա) ուր գիշերները և վատ եղանակներուն կը ժողովէին հովիւները իւրեանց խաշները։ Այն այս այրին մէջ ծնաւ Յիսուս Քրիստոս՝ Որդին Աստուծոյ։ Սուրբ Մարիամ պատեց մանուկը խանձարուրով և դրաւ մսուրի մէջ, որովհետեւ ուրիշ տեղ չկար։

Այսպէս Աստուծոյ Որդին, երբ երեւեցաւ աշխարհի վրայ, աղքատութեան և անպատուութեան հանդիպեցաւ։ Նա ծնաւ այրին մէջ, նա բաց ի աղքատ խանձարուրէն ուրիշ հագուստ չունեցաւ, խոտը և յարդը միայն նորա հանգստարան եղան, որոնք սփռուած էին այրին մէջ։ Որչափ բարձր է երկինքը երկրէս, այնչափ բարձր են Աստուծոյ խորհուրդները մարդկանց խորհուրդներէն։ Ի՞նչ է մարդկանց խնդրածը և որոնածը աշխարհիս մէջ, եթէ ոչ պատիւ և հարստութիւն. ի՞նչ է Քրիստոսի խնդրածը, եթէ ոչ խոնարհութիւն և հեզութիւն, որոյ օրինակը ցոյց տուաւ նոյն բոպէին, երբ որ աշխարհ մտաւ։ Ուրեմն, թէ՛ հարստութեան ցանկացողները և թէ՛ աղքատութեան համար լացողները իւրեանց միտքը թող բերեն, որ Յիսուս Քրիստոս ծնաւ որպէս աղքատ մանուկ և նորա ընտրած սուրբ ծնողքը՝ Յովսէփ և Մարիամ, աղքատ էին։ Թող ամենքը մտածեն այս գեղեցիկ օրինակին վրայ եւ սիրտերը խաղաղ պահեն և մխիթարուին։ Կան բարիքներ և առաքինութիւններ, որոնք աւելի լաւ են քան թէ հարստութիւնը։

Զ.

Բեթղեհեմի հովիւները։

Ղ՞ուկ. Բ. 8։

Այն գիշեր, երբ ծնաւ մարդկային աղգի Փրկիչը, Բեթղեհեմի բոլոր բնակիչները (ոչ ապաքէն և բոլոր մարդկութիւնը) ընկղմած էին խոր քնոյ մէջ, միայն քանի մի հովիւներ արթուն էին և դաշտին մէջ կը պահպանէին իւրեանց խաշները։ Սոքա բարի մարդիկ էին և հոգւով հեզ և խաղաղ, ինչպէս իւրեանց գառները։

Այն գիշերը յանկարծ տեսան հովիւները երկնից առջեւ Աստուծոյ հրեշտակը երկնային լուսով պատած։ Շատ վախցան նոքա, բայց հրեշտակը քաջալերեց և ասաց. «Մի՛ վախնաք, ես կ'աւետեմ ձեզ մեծ ուրախութիւն, որ ամեն մարդկանց համար պիտի լինի։ Այսօր Փրկիչ ծնաւ ձեզ Դաւթի քաղաքին մէջ։ Եւ այս թող նշան լինի ձեզ,

16845-58

որ պիտի մանուկը գտնէք խանձարուրով պատած և մսուրի մէջ դրուած։»

Հովիւները յանկարծ աւետաբեր հրեշտակի հետ ուրիշ անթիւ հրեշտակներ եւս տեսան, որոնք կը փառաբանէին զԱստուած և կ'երգէին ասելով. «Փառք 'ի բարձունս և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն։» Փառք և գոհութիւն Աստուծոյ, որ երկնքի ու երկրի մէջ խաղաղութիւն հաստատուեցաւ և մարդկանց մէջ հաճութիւն։

Եկէք երթանք, ասացին հովիւները ուրախութեամբ, եկէք երթանք և տեսնենք, ինչ որ Տէրը յայտնեց։ Նոքա մտան պրին մէջ, գտան այն տեղ Յովսէփը և Մարիամը և տեսան մանուկը մսուրի մէջ դրած։ Նոքա մօտեցան մանկանը և կը նային լուութեամբ և խորին յարգանօք։

Մարիամ և Յովսէփ, որոնք կը կարծէին թէ՝ ոչ ոք չգիտէ մանկան ծնունդը, զարմացան, երբ տեսան թէ հովիւներուն եւս յայտնուած է։ Հովիւները պատմեցին իրենց երեւցած տեսիլը, դուրս եկան պրէն, կը փառաւորէին զԱստուած և կը գոհանային ամէն տեսածներու և լսածներու համար և կը պատմէին իւրեանց ծանօթներուն։ Իսկ Մարիամ կը պահէր իւր սրտին մէջ այս ամենը և կը մտածէր։

Է.

Յիսուսի տաճարը տարուիլը։

Ութ օրէն յետոյ թլփատուեցաւ մանուկը և անուանեցաւ Յիսուս, ինչպէս կոչուած էր հրեշտակէն իւր ծնեդենէն առաջ։

Մովսէսի օրէնքով պէտք էր որ ծնողները քառասուն օրէն յետոյ նորածին մանուկը, եթէ արու էր, Երուսաղէմի տաճարը տանէին, և իբրև անդրանիկ, նուիրէին Աստուծոյ և ապա զոհով վերստին դնէին։ Հարուստները զոհ կը բերէին գառը, իսկ աղքատները մի զոյգ տատրակ կամ աղաւնի։ Անդրանիկները նուիրելու օրէնքը գրած էր Մովսէս այն գիշերի յիշատակի համար, երբ Եգիպտացւոց բոլոր անդրանիկները սպաննուեցան և Իսրայէլացիք ազատուեցան ծառայութենէ։

Այս օրէնքը կատարելու համար՝ սուրբ Մայրը մանուկն առաւ և Երուսաղէմի տաճարը գնաց։ Բայց Մարիամ, թէ և Դաւիթ և Սողոմոն թագաւորներու ցեղէն էր, սակայն չկարացաւ հարուստներու. զոհ բերել, այլ բերաւ միայն մի զոյգ աղաւնի։ Ամօթ չհամարեց իւր աղքատութիւնը, ուստի և մատոյց իւր աղքատ նուէրը։

Մարիամը հեզութեան ամենագեղեցիկ օրինակ է։ Աղքատութիւնը ծանր չերեւիր

մարդուն, երբ որ անդորր սրտիւ համբերել գիտէ։ Մէ հարստութիւնը մարդու համար արժանաւորութիւն է և ոչ ադքատութիւնը յանցանք։ Առաքինութիւնն է միայն որ կը բարձրացնէ զմարդ, և ընդհակառակն՝ միայն մեղքն է որ կը ցածացնէ զմարդ։

Ը.

Աստուածընկալ Սիմէօնը եւ Անանա մարգարէուհին։ Ղ-ի. Բ. 25։

Երուսաղէմի մէջ կը բնակէր մի արդար և երկիւղած ծերունի, Սիմէօն անունով, և կը սպասէր Իսրայէլի մխիթարութեանը, այն է Փրկչի գալստեանը. որովհետեւ Հոգին սուրբ խոստացած էր նորան՝ որ առանց Մեսիան տեսնելու պիտի չմեռնի։ Երբ մանուկ Յիսուսը տաճարը բերին, Սիմէօն եւս նոյն տեղը եկաւ Հոգւոյն սրբոյ ազդմամբ։

Սիմէօն տաճարը մտնելով տեսաւ Յիսուս Մանուկը և ճանաչեց որ խոստացեալ Փրկիչն է, ուստի ձեռքն առաւ, փառաբանեց զԱստուած և 'ի բոլոր սրտէ ուրախանալով աղաղակեց. «Տէր, այժմ խաղաղութեամբ արձակէ քո ծառայդ, քո խօսքին

համեմատ. որովհետեւ աչքերս տեսան քո փրկութիւնը, որ պատրաստեր ես ամեն ժողովուրդներուն համար։ Այս տեսայ լոյսը, որ պիտի լուսաւորէ հեթանոսները։ Այս տեսայ քո Իսրայէլ ժողովուրդիդ Փառքը։»

Յովսէփ և Մարիամ կը զարմանային իրենց ըսածներուն վրայ։ Սիմէօն օրհնեց բարեպաշտ ծնողները և ասաց Մարիամին. «Ահա այս մանուկը շատերու գլորմանը և կանգնմանը պատճառ պիտի լինի. սա է նշան հակառակութեան։ Իսկ քո սիրտդ պիտի սրով խոցուի և շատ սրտերու խորհուրդներ պիտի յայտնուին։»

Տաճարին մէջ կար նոյնպէս մի այրի պառաւ կին, Անանա անունով, որ արդէն ութսուն և չորս տարեկան էր։ Սա իւր մարդուն հետ բնակեր էր միայն եօթը տարի և առյդ հասակին մէջ այրիացեր։ Իւր ամուսնոյ մահէն յետոյ իւր կեանքը անցուցեր էր պահոմ աղօթքով և բարեգործութեամբ, միշտ ծառայելով տաճարին մէջ։ Սա մարգարէուհի էր և երբ տեսաւ Յիսուս մանուկը, ճանաչեց որ խոստացեալ Փրկիչն է, և ամենուն կը պատմէր, որոնք Երուսաղէմի փրկութեանը կը սպասէին։

Թ.

Մոգերու երկրպագութիւնը։

Մատթ. Բ. 1.

ՔԱՆԻ մի բարեպաշտ մարդոց յայտնի էր արդէն Փրկչի ծնունդը. բայց երկրաւոր իշխանները, իմաստունները եւ քահանայապետները տակաւին չըգիտէին այս երկնաւոր այցելութիւնը։

Երեւելեան հեռաւոր երկիրներէն երեք մարդիկ եկան Երուսաղէմ։ Սոքա մոգեր էին, այսինքն իմաստուններ, որոնք կը պարապէին զանազան գիտութիւններով եւ բնութեան գաղտնիքները քննելու կ'աշխատէին։ Այս մարդիկը իւրեանց անսովոր հագուստով, պատկառելի կերպարանքով և մոգ անունով ամենու ուշադրութիւնը գրաւեցին. վասն զի այն ժամանակները մեծ համբաւ ունէին արեւելեան լուսաւոր երկիրներուն վրայ, ուստի և ամենքը զարմացան մոգերու գալստեան վրայ։ Երբ Երուսաղէմ հասան, իսկոյն սկսան հարցնել. «Որ է Հրեից նորածին թագաւորը։ Մենք Արեւելքի մէջ տեսանք նորա աստղը և եկանք որ երկիր պագութիւն տանք։» Այս համբաւը տարածուեցաւ բոլոր քաղաքի մէջ և Հերովդէս երբ լսեց, խռովեցաւ, նոյնպէս և բոլոր Երուսաղեմը։ Փառասէր թագաւորը կ'երկնչէր, որ մի գուցէ իւր գահէն զրկուի։

Հերովդէս իւր մօտ կոչեց քահանայապետները և ժողովրդեան դպիրները (կարդացողները) և հարցուց թէ. «Որ պիտի ծնանի Քրիստոս։» Նոքա պատասխանեցին. «Յուդայի Բեթղեհէմ քաղաքի մէջ.» որովհետեւ այսպէս գրած է Մէքիա մարգարէն. «Եւ դու, Բեթղեհէմ, Յուդայի երկիր, բնաւ կրտսեր չես Յուդայի իշխաններու մէջ, քեզմէն պիտի իշխան ելնէ և իմ Իսրայէլ ժողովուրդը հովուէ։» Միք. Ե. 2։

Հերովդէս խորոյն ծածուկ իւր մօտ կոչեց մոգերը, մեծարեց և հարցուց աստղի երեւելու ժամանակը։ Նոքա ամէն բան պարզմտութեամբ պատմեցին, ուստի եւ Հերովդէս ասաց. «Գնացէք Բեթղեհէմ և ստուգեցէք Մանկան համար եւ երբ որ գտնէք, իմաց տուէք ինձ, որ ես եւս գամ և երկր պագութիւն տամ։

Մոգերը թագաւորի խօսքը լսելով պատրաստուեցան Բեթղեհէմ գնալու, որ Երուսաղեմէն երկու ժամու ճանապարհ էր։ Երբ որ Երուսաղեմէն ելան, արեւելեան աւետաբեր աստղը վերստին երեւեցաւ և երթալով նոցա առջեւէն՝ առաջնորդեց մինչև այն տեղը, ուր էր յաւիտենական Մանուկը իւր մօր հետ միասին։ Մոգերը տուն մտան

և տեսան Մարիամը և Մանուկը։ Այս իմաստուններին ամենեւին չըխառնվեցան ծնողի և մանկան աղքատ վիճակէն, վասն զի գիտէին թէ ինչ է մարդու իսկական արժանաւորութիւնը։ Մէկ կողմէն Աստուածամայր կուսի երեսին վայելող անմեղութիւնը ազնուութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը և բարութիւնը, իսկ միւս կողմէն Մանկան սքանչելի գեղեցկութիւնը և խաղաղ կերպարանքը, պարզապէս կը ցուցնէին ամէն բան։ Մոգերը ընկան աստուածային Մանկան առջեւ, երկրպագութիւն տուին եւ բանալով իւրեանց գանձը՝ պատարագ (ընծայ) մատուցին ոսկի, կնդրուկ և զմուռս։

Երեւի թէ սովորութիւն կար նոցա հայրենեաց մէջ ընծաներ տանել նորածիններուն, մանաւանդ թագաւորազուններուն. բայց Յիսուսին մատուցած ընծաները խորհրդաւոր նշանակութիւն ունէին։ Ոսկին՝ թագաւորներուն կուտային՝ որպէս հարկ. կնդրուկը կամ խունկը կը բուրէին աստուածպաշտութեան և աղօթքի ժամանակ. իսկ զմուռով կ'օծէին մեռածներու մարմինները։ Ուրեմն՝ մոգերը ոսկին մատուցին Յիսուսին՝ որպէս թագաւորի, կնդրուկը մատուցին՝ որպէս Աստուծոյ եւ զմուռը՝ որպէս մարդոյ։

Մոգերը կամեցան Հերովդէսի մօտ դառնալ և աւետիք տալ, բայց հրեշտակը երեւեցաւ նոցա՝ տեսլեան մէջ եւ արգիլեց, ուստի ուրիշ ճանապարհաւ գնացին իւրեանց հայրենիքը։

Ժ.

Փախուստը յԵգիպտոս։

Հերովդէս, երբ որ տեսաւ թէ մոգերը յետ չը դարձան և իմացաւ որ ուրիշ ճանապարհաւ գնացեր են իւրեանց երկիրը, սաստիկ բարկացաւ և անգթաբար հրաման տըւաւ, որ Բեթղեհեմի և իւր շրջականերուն բոլոր մանուկները կոտորեն, երկու տարեկանէն սկսեալ մինչեւ նորածինները, կարծելով որ նոցա հետ կը սպանուի Նոյնպէս և աստուածային մանուկն։ Բայց՝ դեռ այս անգութ հրամանը չէր հրատարակուած՝ որ հրեշտակը երեւեցաւ Յովսէփին տեսլեան մէջ և ասաց. «Ա՛ռ կնոջ, առ մանուկն ու իւր մայրը, փախիր Եգիպտոս և մնա այն տեղ, մինչեւ ես քեզ ասեմ. վասն զի Հերովդէս մանուկը կը փնտռէ, որ սպաննէ։»

Յովսէփ երբ արթնցաւ, իսկոյն կատարեց հրեշտակի հրամանը, առաւ մանուկն ու իւր մայրը գիշերով և Եգիպտոս գնաց,

ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը։ Այս-
պէս կատարուեցաւ այն մարգարէութիւնը,
որով դուշակուած էր թէ, «Եգիպտոսէն
պիտի կոչեմ իմ որդին։» Ովսէ. Ա. 1։

Հերովդէսի ղրկած սպանիչները սիրու-
եցան Բեթղեհեմի և նորա շրջակայ գիւղե-
րուն մէջ։ Սկսան մայրերու ձեռքէն յա-
փշտակել անմեղ մանուկները և անխնայ
կոտորել, որով կատարուեցաւ Երեմիայի
մարգարէութիւնը, որ կ'ասէ. «Հռամայի
մէջ ձայն լսուեցաւ, ողբ, լաց և մեծ կոծ։
Հռաքելը կուլար իւր որդւոց վրայ և չէր
կամիր մխիթարուիլ, որովհետեւ չկային։»
Երեմ. ԼԱ. 15։

Հերովդէս այս չարագործութենէն յետոյ
երկար չապրեցաւ։ Նորա մահէն յետոյ
հրեշտակը դարձեալ երեւեցաւ Յովսէփին
և ասաց. «Կա՛ մանուկն ու իւր մայրը և
դարձիր Իսրայելի երկիրը, որովհետեւ մե-
ռան նոքա, որոնք մանուկը կը խնդրէին, որ
սպաննեն։» Յովսէփ մանուկը և մայրն առ-
նելով դարձաւ Յուդայի երկիրը. բայց եր-
բոր լսեց թէ Հերովդէսի տեղ կը թագաւո-
րէ նորա որդին Արքեղայոս՝ վախցաւ այն
տեղ մնալու, ուստի և տեղափոխուեցաւ
Գալիլեայի Նազարէթ քաղաքը, ուր որ ա-
ռաջ կը բնակէր։

Ժ. Ա.

Տասներկու տարեկան Յիսուսը տաճարի մէջ։
Ղուկ. Բ. 41։

Յովսէփ և Մարիամ ամեն տարի Զատ-
կի տօնին կ'երթային Երուսաղէմ։ Յիսուս
երբ տասներկու տարեկան եղաւ, իւր-
եանց հետ տարան այն տեղ. և երբ տօնի
օրերը լրացան, տուն դարձան. իսկ Յիսուս
առանց ծնողաց գիտութեանը՝ մնաց Երու-
սաղեմի մէջ։ Յովսէփ և Մարիամ հարցու-
ցին ուղեկիցներէն և երբ չգտան, շատ խը-
ռովեցան և դարձան Երուսաղէմ։ Երեք օր
փնտռելէն յետոյ՝ գտան տաճարին մէջ, որ
վարդապետներուն (ուսուցիչներուն) հետ
նստած՝ բան կը հարցնէր և նոցա պատաս-
խանները մեծ ուշադրութեամբ կը լսէր։
Ամեն ներկայ գտնուողները կը զարմանային
տասներկու տարեկան մանուկի իմաստու-
թեան և տուած պատասխաններուն վրայ։
Մայրը երբ տեսաւ որդին՝ ասաց. «Որդեակ,
այս ինչ բերիր դու մեր գլխուն։ Ահա
հայրդ և ես՝ խիստ վշտացած քեզ կը փընտ-
ռէինք։» — «Ինչո՞ւ կը փնտռէիք զիս, պա-
տասխանեց մանուկը, միթէ չգիտէիք, որ
ես պարտական եմ իմ հօրս տանը լինիլ։»
Այս խօսքերու միտքը նոքա չհասկցան այն
ժամանակ։ Յիսուս ծնողաց հետ Նազարէթ

դարձաւ, որոց հնազանդ էր ամեն կերպով։ Այրը՝ նորա ամեն խօսքերը իւր սրտին մէջ կը պահէր. իսկ մանուկը կը զարգանար հասակաւ և կը փայլէր իմաստութեամբ և շնորհքով։

Ժ. Բ.

Յովհաննէս կը քարոզէ Յորդանանի անապատին մէջ։ Մատթ. Գ. 1։ Մարկ Ա. 1։ Ղուկ. Գ. 1։ Յովհ. Ա. 6։

Կը մօտենար ժամանակը, որ Յիսուս յայտնապէս պէտք է կատարէր փրկութեան մեծ գործը։ Հրեշտակը արդէն առաջուց յայտնած էր, որ Յովհաննէս մարդոց սրտերը պիտի պատրաստէ Փրկիչն ընդունելու համար։ Յովհաննէս զեղս ուշխարհէն հեռացած՝ առանձնութեան մէջ կ'անցընէր իւր երիտասարդութեան օրերը։ Կը բնակէր նա անապատին մէջ և խստակեաց կեանքով ու աղօթքով կը պատրաստուէր իւր մեծ կոչման և պաշտօնին համար։ Հրէից աղգի բարքը խիստ վատթարացած էր այն ժամանակ, հարկաւոր էր աներկիւղ խրատող և յանդիմանող, որ նոցա թիւր մտքերը ուղղէ և քարացած սրտերը կակղացնէ։ Յայտնուեցաւ

այս անաչառ ուսուցիչը՝ Յովհաննէս, որոյ արտաքին անսովոր տեսիլը՝ պարզապէս կը ցուցնէր իւր զգաստ և բարեխառն բնաւորութիւնը։ Նորա հագուստը մաղեղէն էր, գօտին մաշկեղէն, իսկ կերակուրը՝ վայրի մեղը և մարախ։ Գինի և օղի երբեք չէր խմած, այլ միայն ջուր։ Նորա բնակարանն էր անապատի այրը։

Յովհաննէս յայտնուեցաւ իբրեւ քարոզիչ Յորդանանու շրջականներու մէջ, և իւր քարոզութիւնն էր ապաշխարութիւն և պատրաստութիւն. «Ապաշխարեցէք, կ'ասէր նա, վասն զի մօտեցեր է երկնքի արքայութիւնը։» Ապաշխարողները և նոր ու աստուածահաճոյ կեանք վարողները կը մկրտէր Յորդանանի մէջ։ Այս արտաքին լուացումն նշան էր, որ ապաշխարողները կը փափաքին ներքին մեղքերէ սրբուիլ և մաքրուիլ։

Ապաշխարութեան արժանի պտուղ արարէք, կ'ասէր Յովհաննէս իւր քարոզը լսողներուն, և որպէս զի հասկանան թէ ինչ է այս պտուղը, կ'ասէր. «Ով որ երկու հանդերձ ունի, մէկը պէտք է չունեցողին տայ, ով որ շատ կերակուր ունի, պէտք է բաժին տայ չունեցողին։» Մենք ինչ պէտք է որ ընենք, կը հարցնէին մաքսաւորները։ — Մի պահանջէք ժողովրդէն, ինչ որ օրէնքը հրա-

մայած չէ։ Մենք ինչ պէտք է ընենք, կը հարցնէին զինուորականները. — Ոչ ոք մի՛ զրկէք և ոչ ոք մի՛ զրպարտէք, այլ բաւականացէք ձեր թոշակով։ Այս պատասխաններէն ամեն մարդ կարող էր մակաբերել, որ ապաշխարութեան արժանի պտուղն այն է, որ ամեն մարդ իւր պարտաւորութիւնները անթերի կատարէ և իւր մերձաւորին բարի կամենայ։

Յովհաննէսի մօտ եկան նմանապէս Փարիսեցիք և Սադուկեցիք։ Փարիսեցիք երեսպաշտ և կեղծաւոր մարդիկ էին, որոնք աւելի արտաքին բարեպաշտութեան համար կը հոգային քան թէ սրտի յատակութեան և հոգւոյ աստուածպաշտութեան։ Աւելի սուրբ կը համարէին արտաքին ծէսերը պաշտելը որոնք մարդկային աւանդութեց վրայ էին հիմնուած, քան թէ Աստուծոյ պատուէրները կատարել։ Իսկ Սադուկեցիք, ընդհակառակն, միայն կը հաւատային Մովսիսի օրէնքներուն և մարգարէից գրածներուն, բայց սուրբ Գիրքը լաւ չհասկնալով չէին ընդուներ մեռելոց յարութիւնը և հոգւոյ դոյութիւնը։ Փարիսեցիք կատարեալ սրբութիւն կը համարէին ծէսերու արտաքին կատարումն, և ապաշխարութեան ու իրենց սրտերը ուղղելու վրայ ամենևին չէին մտածեր։ Նոքա կը կարծէին թէ Աբրահամ մեծ նահապետի որդիքը անպատճառ պիտի ժառանգեն երկնից արքայութիւնը։ Իսկ Սադուկեցիք առաքինութիւնը և հաւատը կը համարէին իրրեւ միջոց ժամանակաւոր օգտի համար, և կը պնդէին թէ՝ մահէն յետոյ ոչ մի բանի պէտք չէ սպասել. այս պատճառաւ կ'ուզէին Յովհաննէսէն իմանալ թէ՝ ինչ կ'ասէ արդեօք իրենց օգտին համար և իրենց թշնամի Փարիսեցւոց հակառակ։

Յովհաննէս երբ տեսաւ՝ աղաղակեց. "Արարէք պտուղ արժանի ապաշխարութեան։ Մի՛ ասէք, թէ մենք Աբրահամու զաւակներն ենք։ Աստուած կարող է այս քարերէն անգամ Աբրահամու որդիք յարուցանել։ Տեսէք ահա, կացինը ծառին արմատին վրայ դրած է. այն ծառը որ բարի պտուղ չտար, պիտի կըտրուի և կրակը ձգուի։"

ԺԳ.

Սուրբ Յովհաննէս Կարապետի վկայութիւնը Քրիստոսի համար։ Մատթ. Գ. 11։ Մարկ. Ա. 7։ Ղուկ. Գ. 16։ Յովհ. Ա. 26։

Հրէից մէջ համբաւ տարածուած էր որ Եղիա մարգարէն կամ մեծ մարգարէներէն մէկը պիտի յայտնուի երկրիս վրայ եւ մարդիկներու սիրտը պատրաստէ Աստուած

ընդունելու համար։ Այս պատճառաւ Երուսաղեմէն քահանաներ և ղեւտացիներ ղրկուեցան Յովհաննէսի մօտ, որ խնդան թէ ով է նա։ Ուստի, երբ Յովհաննէսին հարցուցին թէ՝ արդեօք դու Քրիստոսն ես. նա պատասխանեց՝ ես Քրիստոսը չեմ։—Արդեօք դու Եղիան ես, կամ մարգարէներէն մէկը.—նա պատասխանեց, ոչ։—Ուրեմն ով ես դու, ասացին քահանաները և ղեւտացիները. ասա մեզ, մենք պարտաւոր ենք տեղեկութիւն տալ քո մասին մեր մեծերուն։

—Ես նա եմ, որուն համար ասաց Եսայի մարգարէն. 'Ձայն խօսողի ձայնն է անապատի մէջ, որ կը կոչէ. Պատրաստեցէք Աստուծոյ ճանապարհը. (Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճանապարհս Տեառն։)—Ուրեմն ինչու կը մկրտես դու, երբ ոչ Քրիստոսն ես, ոչ Եղիան և ոչ մարգարէն, հարցուցին քահանաները։—Յովհաննէս պատասխանեց. ես ջրով կը մկրտեմ, բայց ձեր մէջ մէկը կայ, զոր դուք չէք ճանաչեր, եւ որուն կօշիկին կապը ես չեմ արժանի քակել, նա է որ իմ ետեւէս կուգայ, թէպէտ և ինձմէն առաջ է։ Նա պիտի մկրտէ Հոգւով սրբով և հրով։ Նա հեծանոց ունի իւր ձեռքը. կալը պիտի սրբէ, ցորենը պիտի ժողովէ շտեմարանի մէջ, իսկ յարդը պիտի այրէ անշէջ հրով։

Ժ Դ.

Յիսուս կը մկրտուի Յովհաննէսէն։ Մատ. Գ. 13։ Մարկ. Ա. 9։ Ղուկ. Գ. 21։ Յովհ. Ա. 29։

Յովհաննէս արդէն գիտէր Փրկչի գալուստը և Աստուած յայտնած էր թէ՝ որուն վրայ որ տեսնէ Հոգւոյն Սրբոյ իջնելը, նա պիտի հաւատացեալները մկրտէ Հոգւով Սրբով։ Երբ Յովհաննէս կը մկրտէր Ժողովուրդը՝ Յիսուս եւս եկաւ Նազարեթէն, որ մկրտութիւն ընդունի։ Յովհաննէս երբ տեսաւ զՅիսուս, աղաղակեց. «Ահա Աստուծոյ Գառն։» Երբ Յիսուս կամեցաւ ժողովուրդի բազմութեան հետ դեռը մնալ և մկրտուիլ, Յովհաննէս արգիլեց այս յարգական խօսքերով. «Ես պարտաւոր եմ քեզմէն մկրտուիլ և դու ինձ մօտ կուգաս։» (Ինձ պարտ է 'ի քէն մկրտիլ և դու առ ինձ գաս)։

Բայց Յիսուս պատասխանեց և ասաց. «Թող տուր այժմ, որովհետեւ այսպէս կը վայելէ մեզ որ արդարութիւնը կատարենք։» Յովհաննէս այլ ևս չընդդիմացաւ և Յիսուս Քրիստոս մկրտուեցաւ Յորդանանի մէջ. Այս մկրտութեան ժամանակ երկինքը բացուեցաւ և Սուրբ Հոգին իբրեւ աղաւնի իջաւ Յիսուսի վրայ։ Նոյնպէս երկնքէն ձայն լսուեցաւ թէ՝ «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։»

Ժ Ե.

Յիսուս Քրիստոս կը փորձուի սատանայէն։

Մաթ. Դ. 1։ Մարկ. Ա. 12։ Ղուկ. Դ. 1։

ՅԻՍՈՒՍ Քրիստոս, Որդին Աստուծոյ, իւր մարդեղութեամբը կոչուեցաւ Որդի մարդոյ. որովհետեւ ինչպէս որ կատարեալ Աստուած էր, նոյնպէս և կատարեալ մարդ եղաւ. վասն զի ընդունեց մարդկային մարմին, հոգի, միտք, կամք և ամեն մարդկային կիրք բաց 'ի մեղաց։ Նա իւր մարդեղութեամբ կամեցաւ մարդիկներուն ցոյց տալ՝ թէ ինչպէս պէտք է զսպել բնութեան կիրքերը և յաղթել փորձութեանց։ Վասն զի՝ փորձութեց մէջ կ'երեւի մարդոյ տկարութիւնը և առաքինութիւնը։ Ադամ փորձուեցաւ դրախտի մէջ և Յիսուս Քրիստոս փորձուեցաւ երկրիս վրայ՝ անապատի մէջ։ Ադամ, ամեն բարիքներով շրջապատուած՝ չընդդիմացաւ փորձութեան. իսկ Յիսուս Քրիստոս սոսկալի անապատին մէջ ամեն կարօտութեան համբերեց և փորձողին (սատանային) յաղթեց։ Առաջին մարդոյ պատմութենէն տեսանք՝ թէ ինչպէս շուտ կարող է մարդ դայթակղիլ. իսկ Յիսուս Քրիստոսի սուրբ Աւետարանին մէջ կը տեսնենք՝ թէ ինչպէս կարող է մարդ փորձութեան յաղթել։

Յիսուս, իւր մկրտութենէն յետոյ, հեռացաւ անապատ, ուր քառասուն օր պա-

հելէն զինի՝ անօթեցաւ։ Փորձիչը իսկոյն մօտեցաւ Յիսուսին եւ ասաց. «Եթէ դու Աստուծոյ որդի ես, հրամայէ՝ որ այս քարերը հաց լինին։» Բայց Յիսուս փորձողին պատասխանեց Ս. Գրքի այս խօսքով. «Ոչ թէ միայն հացով կ'ապրի մարդ, այլ ամեն խօսքով, որ Աստուծոյ բերանէն կ'ելնէ։» Բ. Օրէն. Ը. 3։ Այն ժամանակ սատանան առաւ տարաւ զՅիսուս և կայնեցուց Երուսաղեմի տաճարի աշտարակին վրայ և ասաց. «Թէ որ դու Աստուծոյ որդին ես, այս տեղէն քեզ վար ձգէ, որովհետեւ գրուած է թէ՝ հրեշտակներուն պատուիրուած է քո համար, որ իրենց ձեռքերուն վրայ պիտի բռնեն և չըթողուն բնաւ, որ ոտքդ քարին դպչի։» Սաղմ. Ղ. 11, 12։ Յիսուս պատասխանեց. «Բայց գրած է նմանապէս թէ՝ մի փորձեր Տէր Աստուածդ,» այսինքն քո Աստուծոյ կարողութիւնը փորձելու նպատակաւ՝ անձնդ վտանգներու մէջ մի ձգեր։ Ի վերջոյ, սատանան տարաւ զՅիսուս մի ամենաբարձր լերան վրայ և այն տեղէն ցոյց տալով երկրաւոր թագաւորութեանց մեծութիւնները՝ ասաց. «Այս ամենը քեզ կուտամ, եթէ ինձ երկրպագութիւն տաս։» Այն ժամանակ Յիսուս պատասխանեց. «Հեռացիր, կորիր, սատանայ. վասն զի գրուած է պատուիրանաց մէջ թէ՝ քո Տէր Աստու-

ծոյն միայն երկիրպագութիւն տուր և նո-
ցան միայն ծառայէ։» Բ. Օրէն. Զ. 13։
Այնուհետեւ սատանան թողեց զՅիսուս,
և հրեշտակները եկան պաշտելու։ Այսպէս
եւս, երբ մենք դեւերը մեզմէն կը հեռա-
ցընենք, հրեշտակները կուգան և նոցա տե-
ղը կը բռնեն։ Երբ որ փորձանքներուն կը
յաղթենք՝ մեր հոգին կը ցնծայ երկնային
ուրախութեամբ։

Այս պատմութենէն պիտի իմանանք, որ
աշխարհիս մէջ ամեն մարդ շրջապատուած է
փորձանքներով, վասն զի Քրիստոս ինքը, որ
ամենէն անմեղն էր, փորձուեցաւ սատանա-
յէն։ Մանուկներն անգամ փորձանքներէն
ազատ չեն, մանաւանդ երբ որ հասած են
այն հասակին, որ պէտք է ընտրեն բարին
չարէն։ Մեղայ երեւոյթը հեշտարար է, իսկ
առաքինութեանը՝ դժուարին. բայց ամենե-
ւին պիտի չզգայթակղուինք, այլ պէտք է
զԱստուած յօդնութիւն կոչենք, նորա եր-
կիւղը մեր սրտերու մէջ պահենք և քաջա-
լերուելով փորձութեանը յաղթենք։ Վասն
զի հաստատ պէտք է իմանանք, որ մեղքը
որչափ որ քաղցր երեւի, և շքով ու փառ-
քով պատած լինի, երբեք կարող չէ երջան-
կութիւն տալ մարդուն։ Երբ որ մարդ մե-
զաւոր է, նորա սիրտը կատարեալ դժոխք է։
Նա զուրկ է երջանկութենէ, վասն զի խիղ-

ճը՝ իբրեւ ներքին դատաւոր միշտ կը նեղէ
կը չարչարէ և չը թողուր խաղաղութիւն վա-
յելել։ Բայց առաքինութիւնը որչափ որ
անշուք և խոնարհ երեւի, դարձեալ մարդ-
ուն երջանկութիւն կուտայ։

Ժ Զ.

Յիսուսի առաջին աշակերտները։

Մատ. Դ. 18։ Յով. Ա. 56։

Յիսուսի մկրտութենէն յետոյ՝ Յովհան-
նէսը տեսնելով ասաց. «Ահաւասիկ Քրիս-
տոս՝ Գառն Աստուծոյ։»

Յովհաննէսի աշակերտներէն երկուքը
հետեւեցին Յիսուսին, և նա երբ տեսաւ
թէ՝ իւր ետեւէն կ'երթան, հարցուց՝ ինչ
կը խնդրէք. նոքա պատասխանեցին՝ կամինք
տեսնել թէ ուր կը բնակիս դուն։ Յիսուս
ասաց՝ եկէք և տեսէք։ Նոքա ուրախութիւ
գնացին Յիսուսի ետեւէն մինչեւ նորա օ-
թեւանը (բնակարանը), և բոլոր օրը մնացին
նորա մօտ։ Այս աշակերտներէն մէկուն ա-
նունը Անդրէաս էր, և որովհետեւ Յիսուսի
առաջին աշակերտը նա եղաւ, ուստի և ե-
կեղեցին նախակոչ կ'անուանէ։ Անդրէաս դը-
նաց իւր Սիմոն եղբօր մօտ և ասաց. «Մենք
տեսանք Մեսիան։» Սիմոնն եւս կամեցաւ

Փրկիչը տեսնել և գնաց նորա մօտ։ Յիսուս Սիմոնի անունը կոչեց Կեփաս կամ Պետրոս, որ կը նշանակէ վէմ (քար)։ Այս անունով Յիսուս կամեցաւ ցուցընել նորա հաւատոյ հաստատութիւնը, և այս պատճառաւ էր, որ յետոյ ասաց թէ. «Այդ վիմի վրայ (այսինքն հաւատոյ հաստատութեան վրայ) պիտի շինեմ իմ Եկեղեցին, որուն պիտի չկարենան յաղթել դժոխքի դռները։»

Միւս օրը, երբ որ Յիսուս Գալիլիա կը դառնար, պատահեցաւ Փիլիպպոս անուն մի մարդու և ասաց. «Եկ իմ ետեւէս։» Փիլիպպոս գտաւ Նաթանայէլը և ասաց. «Մենք տեսանք Յիսուս Նազարէթցին՝ Յովսէփի որդին, որուն համար գրած են Մովսէս և միւս մարգարէքը։» Նաթանայէլ պատասխանեց. «Մի՞թէ կարելի է, որ Նազարէթէն բարի բան լինի։» Փիլիպպոս ասաց. «Եկ և տես։»

Յիսուս Քրիստոս երբ տեսաւ զՆաթանայէլ ասաց. «Ահա՛ ճշմարիտ Իսրայելացի, որոյ մէջ նենգութիւն չկայ։» Նաթանայէլ զարմանալով ասաց Յիսուսին. «Ուստի՞ կը ճանաչես դու զիս։» Յիսուս պատասխանեց. «Դեռ Փիլիպպոս քեզ չէր կոչած, որ ես քեզ տեսայ թզենու տակ։» Նաթանայէլ զարմանալով աղաղակեց. «Ռաբբի (վարդապետ,) դու ես Աստուծոյ որդին. դու ես Իսրայելի թագաւորը։» Յիսուս պատաս-

խանեց. «Դու այն պատճառաւ միայն հաւատացիր թէ տեսայ քեզ թզենու տակ, բայց դու եւս աւելի մեծամեծ գործքեր պիտի տեսնես։ Ճշմարիտ ասեմ ձեզ, դուք պիտի տեսնէք երկինքը բացուած և Աստուծոյ հրեշտակները որ կ'ելնեն և կ'իջնեն մարդոյ որդւոյ վրայ։»

Յովհաննէս Մկրտիչ երբ խմացաւ թէ մեծ բազմութիւն կը ժողովուին Յիսուսի քարոզութիւնը լսելու՝ հեզութեամբ ասաց. «Այժմ ուրախութիւնս կատարեալ է. նա (Յիսուս) պիտի աճի այսուհետեւ և ես պիտի մեղմանամ։ Խարձրէն եկածը ամենէն բարձր է։ Նա եկաւ Աստուծմէ որ նորա պատուիրանները հրատարակէ։ Հայրը կը սիրէ Որդին, ուստի և ամէն բան նորա ձեռքը տուաւ։ Ով որ հաւատայ Որդուն, պիտի յաւիտենական կեանք ընդունի։ Իսկ ով որ չհնազանդի Որդուն, նա կեանք չը տեսներ. այլ Աստուծոյ բարկութիւնը պիտի մնայ նորա վրայ։» Յովհ. Գ. 27—36։

ԺԷ.

Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքը։

Յովհ. Բ. 1։

Գալիլիայի Կանա փոքրիկ քաղաքին մէջ հարսանիք էր, ուր ներկայ էր նոյնպէս Մա-

ցիամ՝ Յիսուսի մայրը։ Նորապսակները իմանալով որ Յիսուս Գալիլիա դարձած է՝ հրաւիրեցին հարսանիք իւր աշակերտներու հետ միասին։ Յիսուս՝ ողորմածն և մարդասէրն, չարհամարհելով մարդկային անմեղ ուրախութիւնները, եկաւ սոյն հարսանեաց հացկերոյթը՝ աշակերտներով հանդերձ։ Յիսուս իւր գալստեամբ կամեցաւ ցոյց տալ նմանապէս, որ օրինաւոր ամուսնութիւնը Աստուծմէ օրհնուած է և միանգամայն յարգելու արժանի։

Երեւի թէ՝ նորապսակները աղքատ էին, որովհետեւ հացկերութի ժամանակ գինին պակսեցաւ։ Աստուածամայրը՝ նկատելով տան տիրոջ խռովութիւնը և պատճառը իմանալով կամեցաւ ազատել նոյն մտատանջութենէն, ուստի և յայտնեց Յիսուսին որ գինին պակսած է։ Յիսուս զբաղուած էր աւելի բարձր խորհրդներով, ուստի և պատասխանեց. «Օ՜ի կայ իմ և քո, կին դու, իմ ժամանակս դեռ հասած չէ։» Թէ և այս պատասխանը բացասութեան նման էր. բայց Մարիամ գիտէր իւր որդւոյ իմաստութիւնը և բարութիւնը և անմիջապէս ասաց սպասաւորներուն. «Ինչ որ ձեզ հրամայէ (Յիսուս) կատարեցէք։»

Այն տեղ կային վեց թակոյկներ (ջրի ամաններ) լուացուելու համար։ Վասն զի

Եբրայեցիք սովորութիւն ունէին սեղան նստելէն առաջ և ելնելէն յետոյ լուանալ ձեռքերը և շատ անգամ բոլոր մարմինը։ Յիսուս ասաց սպասաւորներուն. «Թակոյկները ջրով լցէք։» Նորա հրամանը իսկոյն կատարուեցաւ և ջրամանները մինչ'ի բերան լցուցին ջրով։ Յիսուս ասաց սպասաւորներուն. «Այժմ առէք և բերէք տաճարապետին (սեղանի վերակացուին)։» Տիրոջ կամքով հասարակ ջուրը՝ ընտիր գինի փոխուած էր. բայց տաճարապետը չգիտեր կատարուած հրաշքը և կը կարծէր թէ փեսան սը խալուեր է իւր կարգադրութեան մէջ, ուստի կոչեց իւր մօտ և ասաց. «Մարդիկ սովորաբար առաջ անոյշ գինին կը խմեն և յետոյ վասը, երբոր արդէն բաւական խըմած են. իսկ դու մինչեւ ցայժմ անոյշ գինին պահեցիր։» Բայց սպասաւորները, որոնք գիտէին՝ թէ ջուրը գինի փոխուած է, զարմացած կայնած էին։

Այսպէս սկսաւ Յիսուս իւր բարերար հրաշագործութիւնները մարդկանց համար։ Առաջին անգամ նա Կանայի մէջ յայտնեց իւր փառքը և աշակերտները հաւատացին։

ԺԸ.

Յիսուս Քրիստոս կ'արտաքսէ հատավաճառ-
ները։ Մաթ. ԻԱ. 12։ Մարկ. ԺԱ. 15։
Ղուկ. ԺԹ. 45։ Յովհ. Բ. 15։

Պասեքի տօնը Հրէից ամենամեծ եւ հանդիսաւոր օրն էր։ Այս տօնը կը կատարէին Երուսաղէմի մէջ, որ բոլոր Պաղեստինու մայրաքաղաքն էր։ Այս տեղ կը հաւաքուէր բազմաթիւ ժողովուրդ Իսրայէլի ամէն քաղաքներէն և գիւղերէն։ Այս տեղ կը ժողովուէին շրջակայ ազգերէն նա և կուսպաշտներ, որ սուրբ տաճարին մէջ երկրպագեն Ճշմարիտ Աստուծոյն։ Պասեքի տօնը երբ մօտեցաւ, Յիսուս եւս գնաց Երուսաղէմ, որովհետեւ նա կը յարգէր իւր ազգի սուրբ արարողութիւնները և բարեպաշտ սովորութիւնները։

Երուսաղէմի տաճարը շինուած էր շատ հոյակապ և շքեղ։ Տաճարը երեք բաժանումն ունէր։ Առաջինը կամ արտաքին բաժանումը ժողովրդեան համար էր. երկրորդը քահանայից համար. իսկ երրորդը միայն քահանայապետի համար, և այն եւս տարին մի անգամ։ Առաջին մասին մէջ կը կանգնէր բոլոր ժողովուրդը և կ'աղօթէր, բայց շարագործ մարդիկ դրան մօտ համարձակ անասուններ կը վաճառէին և դրամներ (ըն-

տակներ) կը մանրէին։ Այս անկարգութիւնը յառաջ եկած էր այսպէս. — Իսրայէլացիները երբոր Երուսաղէմ կուգային, սովորաբար իրենց հետ կը բերէին եղներ, արջառներ, այծեր և ոչխարներ՝ զոհելու համար. իսկ աղքատները կը բերէին աղաւնիներ և տատրակներ եւ շատ անգամ մանր դրամներու կարօտութիւն կը կրէին։ Հեռու քաղաքներէն եկողներու համար շատ մեծ դիւրութիւն էր նոյն իսկ տաճարի մօտ զոհելու անասուններ գտնել և դրամներ մանրել։ Ուստի և տաճարի վերակացուները իւրեանց անհոգութեամբ կամ արծաթասիրութեամբ թոյլ տուած էին՝ տաճարի նախասենեկին մէջ անասուններ վաճառել, դրամներ մանրել և այն սուրբ տեղը շահավաճառութեան տեղի շինել։

Յիսուս՝ տաճարը մտնելու ժամանակ՝ տեսաւ վաճառականներու և սեղանաւորներու բազմութիւնը. տեսաւ բազմաթիւ եղներ, այծեր, ոչխարներ և աղաւնիներ, միով բանիւ, տեսաւ, որ աղօթքի տունը վաճառատեղոյ դարձած է։ Սիրտը լցաւ տրտմութեամբ, որ Աստուծոյ տաճարը այնպիսի անարգութեան հասած է։ Ուստի շինեց մի չուանեայ խարազան և բոլոր անասուններն ու վաճառողները արտաքսեց. իսկ աղաւնեվաճառներուն և սեղանաւորներուն

ասաց. «Առէք, տարէք այդ ամենը և իմ հօր տունը վաճառի տուն մի շինէք։»

Ամենքը հնազանդեցան Տիրոջ հրամանին և ամենեւին չհամարձակեցան ընդդէմ խօսիլ։ Յիսուսի նախանձը աստուածային տան համար՝ ամենու սրտի մէջ երկիւղ և յարգանք վառեց։ Տաճարի նախագաւիթը խսպառ մաքրուեցաւ և վերստին թագաւորեցին այն սուրբ տեղւոյն մէջ կարգ և լուութիւն։

Երբ հատավաճառները տաճարէն հեռացան՝ քահանայքը և անուանի Հրէաները մօտեցան Յիսուս Քրիստոսին։ Թէ և գիտէին նոքա, որ անվայել է Աստուծոյ տունը վաճառատեղի շինել, բայց զարմացած էին այն իշխանութեան և զօրութեան վրայ, որով Յիսուս վճռաբար ջնջեց չարագործութիւնը, ուստի և կը հարցնէին. «Ի՞նչ իրաւունք ունիս, որ այդպէս կը հրամայես. ցոյց տուր մեզ քո իշխանութեան նշանը։» Յիսուս արդէն գործքով ցոյց տուաւ, որ չարագործութիւնը ջնջելու իշխանութիւն ունի։ Նա կարող էր ամենեւին պատասխան չտալ հարցանողներուն, բայց արժան համարեց պատասխանել, թէ եւ այլաբանօրէն։ Նա ասաց. «Քանդեցէք այս տաճարը, և ես երեք օրուան մէջ վերստին կըկանգնեմ։» Այս խօսքերու միտքը չկարացին

հասկանալ։ Հարցնողները կարծելով թէ Երուսաղէմի տաճարի շինութեան համար կ'ասէ, պատասխանեցին. «Քառասուն ու վեց տարի հաղիւ շինուեցաւ այս տաճարը եւ դու երեք օրուան մէջ պիտի՞ կանգնես։» Այս ասելով՝ բարկութեամբ հեռացան։ Բայց Յիսուս Քրիստոս նոյն խօսքերը իւր մարմնոյ տաճարին համար ասաց, որուն երեք օրուան մէջ յարութիւն տուաւ իւր աստուածութեամբ։ Աշակերտները յիշեցին այս մարգարէական խօսքերը Յիսուսի յարութենէն յետոյ։

Պասեքի ժամանակ, երբ Յիսուս Երուսաղէմի մէջ էր, շատերը տեսնելով նորա գործած հրաշքները՝ կը հաւատային։ Բայց Յիսուս ճանաչելով նոցա սիրտը՝ չէր հաւատար նոցա շնորհաբեր խօսքերուն։ Նա կարօտ չէր ուրիշի վկայութեան՝ մարդ ճանաչելու համար։ Վասն զի սրտագէտ էր և ամենուն սրտի գաղտնիքը կը կարդար։ Որչափ կը սխալին այն մարդիկը, որոնք առանց սրտի ուղղութեան և սրբութեան, միայն արտաքին ձեւերով զԱստուած կը պաշտեն։ Այնպիսիները երբէք չեն կարող միանալ Աստուծոյ հետ և նորա քաղցրութիւնը ճաշակել։ Միայն Աստուծոյ տաճար է, այն ժամանակ միայն Աստուած կը հաճի բնակիլ նորա մէջ, երբ սուրբ զգացմունքներով

և ցանկութիւններով լցուած է։ Եթէ Երուսաղէմի տաճարը աղօթքի տուն էր եւ վաճառատեղի դառնալով Յիսուսի սրտմտութիւնը շարժեց, առաւել եւս աղօթքի տուն է մեր սիրտը, որ երբեք պէտք չէ չար խորհուրդներու բնակարան շինենք և զՍատուած տրտմեցնենք մեր վրայ։

Ժ Թ.

Փրկչի խօսակցութիւնը Նիկոդիմոսի հետ։

Յով. Գ. Է։

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԷՆ մէկը, Նիկոդիմոս անունով, եկաւ Յիսուսի մօտ գիշեր ժամանակ, վասն զի եթէ միւս Փարիսեցիները տեսնէին, պիտի հալածէին այս բանի համար։ Նիկոդիմոս ասաց Յիսուսին. «Վարդապետ, գիտեմ որ դու Աստուծոյ ղրկածն ես, որովհետեւ քո գործածն ոչ ոք չէ կարող գործել, եթէ Աստուած նորա հետ չը լինի։» Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտն ասեմ քեզ, ով որ վերստին չը ծնի, չէ կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել։» — Բայց ինչպէս կարող է մարդ երկու անգամ ծնանիլ, ասաց Նիկոդիմոս։ — Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտն ասեմ քեզ, ով որ ջրէն և հոգիէն չծնանի, չէ կարող Աստուծոյ

արքայութիւնը մտնել։ Խօսքս մարմնաւոր ծննդեան համար չէ, շարունակեց Յիսուս, այլ հոգեւոր ծննդեան։ Դու մի զարմանար որ ասացի քեզ, թէ մարդ պէտք է վերստին ծնանի։ Վասն զի հողմը կը շնչէ, ուր կը կամի և միայն ձայնը կը լսես, բայց չը գիտես թէ ուստի՞ կուգայ և ո՞ւր կ'երթայ։ Այսպէս իմացիր և հոգիէն ծնածն։» — Ի՞նչպէս կարելի է, որ այդ լինի, հարցուց Նիկոդիմոս։ Յիսուս պատասխանեց. «Դու Իսրայելի վարդապետն ես և այդ չը գիտե՞ս։ Այս կ'ասեմ քեզ, ինչ որ գիտեմ, և կը վկայեմ ինչ որ տեսած եմ, բայց դուք իմ վկայութիւնս չէք ընդունիր։ Եթէ երկրաւոր բաներ կը պատմեմ ձեզ՝ և չէք հաւատար, հապա եթէ երկնաւորը պատմեմ, ինչպէս կարող էք հաւատալ։ Ոչ ոք երկնքին չէ բարձրացեր, եթէ ոչ միայն նա, որ երկնքէն իջաւ, այսինքն Յիսուս Քրիստոս Որդին մարդոյ, որ երկնքին մէջ է։ Ինչպէս որ Մովսէս անապատին մէջ օձը բարձրացուց, նոյնպէս պիտի բարձրանայ և մարդոյ Որդին, որ հաւատացողը չը կորնչի, այլ յաւիտենական կեանք ժառանգէ։ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ իւր միածին Որդին տուաւ, որպէս զի՝ ով որ հաւատայ, չը կորնչի, այլ յաւիտենական կեանք ընդունի։ Աստուած ղրկեց իւր Որդին՝ ոչ թէ աշխարհը դատե-

լու համար, այլ փրկելու։ Ով որ հաւատայ Որդուն՝ չդատապարտուիր. իսկ ով որ չը հաւատայ, նա արդէն դատապարտուած է, որովհետեւ չըհաւատայ Աստուծոյ միածին Որդուն։ Լոյսը եկաւ աշխարհ, բայց մարդիկ խաւարը աւելի սիրեցին քան թէ լոյսը, որովհետեւ իրենց գործքերը չար էին, և այս չար գործքերը խաւարի մէջ աւելի հեշտ կարող էին ծածկել։ Ով որ չար կը գործէ, նա կը փախչի լուսէն, որ իւր չարութիւնը չը յայտնուի և յանդիմանուի. իսկ ճշմարտութիւն սիրողը և գործողը ամենեւին չը թաքչիր, այլ լուսի մօտ կուգայ, որ ամենքը տեսնեն, որ նորա գործքերը Աստուծոյ կամաց համեմատ գործուեցան։»

Յիսուս քանի մի ժամանակ դարձեալ մնաց Հրէաստանի մէջ և կ'ուսուցանէր ամենուն։ Բայց երբ Փարիսեցիք իմացան որ շատերը կ'աշակերտին Յիսուսին, նախանձեցան և սկսան հալածել։ Ուստի և Յիսուս վճռեց Գալիլիա դառնալ։

Ի.

Սամարացի կինը։ Յով. Դ. 7։

Երուսաղեմէն Գալիլէա դառնալու ճանապարհը Սամարիայի վրայէն էր, որ առաջ Իսրայելի թագաւորութեան կը պատ-

կանէր և իւր անունը ստացած էր Սամարիա մայրաքաղաքէն։ Ճանապարհը կ'անցնէր Սիւքար քաղաքի մօտէն, որ հին ժամանակ կը կոչուէր Սիւքեմ։ Այս քաղաքի մօտ էր այն երկիրը, որ Յակովբ ժառանգութիւն տուաւ իւր Յովսէփ որդուն։ Այս տեղ ջրհոր մի կար, որ փորուած էր Յակովբի հրամանաւ և կը կոչուէր Յակովբայ աղբիւր։ Յիսուս Քրիստոս նստաւ այս ջրհորի մօտ հանգստանալու. իսկ նորա աշակերտները գնացին քաղաքը կերակուր գնելու։

Այս ժամանակ քաղաքէն կին մի եկաւ, որ ջրհորէն ջուր հանէ։ Հրէաները 'ի հընուց շատ կ'ատէին Սամարացիները։ Նոքա չէին կամենար նոցա հետ մի ամանէ ուտել կամ խմել։ Թէ և Յիսուս գիտէր, որ Սամարացիք շատ մոլութիւններ ունին, բայց դարձեալ Հրէաները կը պարսաւէր իրենց անհաշտ ատելութեան համար։ Երբ Սամարացի կինը ջուրը հանեց, Յիսուս ասաց. «Ջուր տուր ինձ խմելու։»

Այս կինը այսպիսի քաղցր և հեղ ձայն լսելով՝ չըկարաց իւր զարմանքը թաքցնել, ուստի և ասաց Յիսուսին. «Դու որ Հրեայ ես, ինչպէս ջուր կը խնդրես Սամարացի կնոջէ. Հրեայքը Սամարացւոց հետ կապակցութիւն չունին։ Նոքա մեզմէն կը զզուին։» Յիսուս ամեն միջոց 'ի գործ կը դնէր, որ

իւր լսողներու միտքը բարձր առարկաներու վրայ դարձնէ, վասն որոյ և ասաց նոյն կնոջը. «Եթէ դու գիտնայիր Աստուծոյ պարգեւը և իմանայիր թէ ո՞վ է, որ քեզ հետ կը խօսի, դու ինքդ ինձմէն կենդանի ջուր կը խնդրէիր։»

Սամարացի կինը չըհասկացաւ Յիսուսի խօսքերը և պատասխանեց. «Դու դոյլ անգամ չունիս, որ ջուր հանես, իսկ ջրհորը շատ խոր է, ուստի՞ պիտի կենդանի ջուր առնես։ Մի՞թէ դու աւելի մե՞ծ մարդ ես քան մեր նախահայր Յակովբը, որ այս ջրհորը տուաւ մեզ, որմէ ինքն, իւր որդիքը և խաշները կը խմէին։»

Յիսուս իւր խօսքը շարունակելով ասաց կնոջը. «Ո՞վ որ այս ջուրը խմէ, վերստին կը ծարաւի, բայց ո՞վ որ իմ տուած ջրէն խմէ, յաւիտեան չը ծարաւիր, և իմ տուած ջուրը նորա համար կը լինի յաւիտենական կեանք տուող ջրոյ աղբիւր։»

Բայց Սամարացի կինը դարձեալ չըհասկանալով, որ այս կենդանարար աղբիւրն ինքն Յիսուս Քրիստոսն է և նորա փրկարար վարդապետութիւնը, ասաց. «Տէ՛ր, տուր ինձ այն ջրէն, որ կարենամ յաւիտեան ծարաւս զովացնել և ամենեւին չըգալ այս տեղէն ջուր հանելու։»

Յիսուս ասաց կնոջը. «Գնա՛, այրդ (երիկ)

կոչէ և նորա հետ միասին եկ այս տեղ։» — «Ես այր չունիմ, պատասխանեց կինը։» — Իրաւ է որ այր չունիս կրկնեց Յիսուս, որովհետեւ հինգ այր փոխած ես և այժմ ունեցածդ քո այրը չէ։» Այս խօսքերը զարմացուցին Սամարացի կինը։ Նա վախցաւ, երբ որ իրեն անծանօթ և ուրիշ անգամ չըտեսած մարդէն իւր կենաց մանրամասն հանգամանքները լսեց։ Շփոթուած և շուարած կանգնած էր Յիսուսի առջեւ իբրեւ դատաւորի առջեւ։ Վերջապէս, իւր ամօթը զսպելով եւ սրտանց զղջալով աղաղակեց. «Տէ՛ր, ինձ այնպէս կը թուի, որ դու մարգարէ ես։»

Սրտագէտն Յիսուս կարդաց կնոջ սրտի մէջ յուզուած զղջումն եւ ուղղութեան փափաքն, ուստի և ամենեւին յանդիմանական խօսք չասաց։ Յիսուս գթած և ողորմած էր զղջացող մեղաւորներու վրայ և ամեն ժամանակ ցոյց տուաւ, որ աշխարհ եկած է ոչ թէ դատելու համար, այլ փրկելու, ոչ թէ մեղաւորները յանդիմանելու, այլ ուղղելու։

Սամարացի կինը կամէր փարատել այն տարակուսանքը և երկբայութիւնը, որ նորա սրտի վրայ ծանր նստած էր։ Այս տարակուսանքն էր Հրէաներու և Սամարացիներու մէջ եղած վէճը, թէ ո՞ւր է աղօթելու

իսկ տեղը։ Սամարացիք իրենց համար տաճար հիմնեցին Սիւքար քաղաքի մօտ Գարիզին լերան վրայ, բայց Հրէայք կը հաստատէին թէ բաց ի Երուսաղեմի տաճարէն, ուրիշ ոչ մի տեղ կարելի չէ արժանապէս պաշտել զԱստուած և փառաւորել. ուստի և քանդեցին Սամարացւոց նոր շինած տաճարը։ Այն տեղէն, ուր փորուած էր Յակովբի ջրհորը, կ'երեւէին Սամարացւոց տաճարի աւերակները։ Սամարացի կինը, ճշմարտապէս հաւատալով այս իրեն յայտնուած մարգարէին, կամէր իմանալ նորա կարծիքն այս բանի համար, ուստի և ասաց. "Մեր հայրերը այս լերան վրայ երկրպագութիւն տուին Աստուծոյ, բայց դուք Հրէաներդ կ'ասէք թէ միայն Երուսաղեմն է Աստուծոյ երկրպագութեան արժանաւոր տեղին։" Յիսուս պատասխանեց. "Հաւատա՛ ինձ, ով կին, ահա՛ ժամանակը կը հասնի, որ մարդիկ պիտի երկրպագեն Հօր, ոչ այս լերան վրայ և ոչ Երուսաղեմի մէջ։ Ժամանակը կը հասնի և արդէն հասած է, որ ճշմարիտ երկրպագուները պիտի երկրպագեն Աստուծոյ հոգւով և ճշմարտութեամբ, վասն զի Հայրը այնպիսի երկրպագուներ կը խնդրէ։ Աստուն զի, Աստուած հոգի է և նորա երկրպագուները պարտական են հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագանել։"

Սամարացի կինը մտադրութեամբ կը լսէր Յիսուսի խօսքերը և իսկոյն միտքը բերաւ Մեսիան, որ ամենեցուն պիտի ուսուցանէր ճշմարիտ հաւատը, ուստի ասաց. "Ես գիտեմ, որ Մեսիան պիտի գայ, նա պիտի սորվեցնէ մեզ ամեն բան։" — Յիսուս պատասխանեց, "Ես եմ այն՝ որ քեզ հետ կը խօսիմ։"

Սամարացի կինը խօսք չէր գտներ իւր ուրախութիւնը ու յարգանքը յայտնելու։ Նորա սիրտը կը վառուէր մեծ փափաքով, որ շուտ հաղորդէ իւր քաղաքակիցներուն այս աւետիքը։ Նա թողեց իւր սափորը և իսկոյն քաղաքը վազեց։ Ամեն հանդիպողին այսպէս կ'ասէր. "Գնացէք տեսէք այն մարդը, որ ճանաչեց զիս և ամեն գործածներս պատմեց։ Տեսէք, թէ արդեօք նա՞ է Քրիստոսն։"

ԻԱ.

Յիսուս Քրիստոս Սամարիայի մէջ։

Յովհ. Դ. 27։

Յիսուսի աշակերտները, քաղաքի մէջ կերակուր գնելէն զկնի, դարձան նորա մօտ և տեսնելով որ իրենց վարդապետը Սամարացի կնոջ հետ կը խօսի, զարմացան։ Նոքա

շատ հետաքրքիր էին և կամէին իմանալ թէ ինչ բանի վրայ կը խօսէր Յիսուս կնոջ հետ, բայց չէին համարձակեր հարցնել։ Լռութեամբ մատուցին Յիսուսին գնած կերակուրը։ Բայց տեսնելով՝ որ նա ընկղմած է խորին մտածման մէջ, ասացին. «Վարդապետ, հաց կեր։» Յիսուս պատասխանեց «Ես ուտելու կերակուր ունիմ, որ դուք չը գիտէք։» Աշակերտները նորա խօսքերուն բուն իմաստը չը հասկանալով՝ իրարու կը հարցնէին. «Մի թէ մէկը կերակո՞ւր բերած է նորա համար։» Այն ժամանակ Յիսուս պատասխանեց. «Իմ կերակուրս այն է, որ կատարեմ նորա կամքը, որ զիս ղրկեց եւ կատարեմ այն գործը, որոյ համար նա զիս ղրկեց։ Դուք կ'ասէք, որ չորս ամսէն յետոյ պիտի գայ հունձի ժամանակը, բայց ես կ'ասեմ, որ հունձի ժամանակն արդէն եկած հասած է։ Նայեցէք արտերուն վրայ, արդէն հնձելու ժամանակն է։ Հնձողը վարձ կը ստանայ եւ յաւիտենական կենաց համար պտուղ կը ժողովէ։ Թէ սերմանողը եւ թէ հնձողը միասին պիտի ուրախանան։ Բայց այլ է սերմանողը եւ այլ է հնձողը։ Ես կը ղրկեմ զձեզ հնձել, ինչ տեղ որ դուք չէք սերմանել, ուրիշները վաստակեցին, իսկ դուք նոցա վաստակածը կը ժողովէք։»

Սամարացի կնոջ խօսքով նորա քաղաքա-

կիցներէն շատերը հաւատացին Յիսուս Քրիստոսին. իսկ ժողովուրդը քաղաքէն նորա մօտ գալով՝ կը խնդրէին որ իրենց մօտ մնայ։ Յիսուս երկու օր Սիւքարի մէջ մնաց եւ այս միջոցին հաւատացելոց թիւը բազմացաւ։ Սիւքարի բնակիչները կ'ասէին Սամարացի կնոջը. «Այժմ ոչ թէ քո խօսքով կը հաւատանք, այլ մենք ինքներս լսեցինք նորա վարդապետութիւնը եւ գիտենք որ նա ճշմարտիւ Քրիստոսն է, աշխարհի Փրկիչը։»

ԻԲ.

Թագաւորազնի որդւոյ բժշկութիւնը Կափառնայում քաղաքի մէջ։ Յով. Դ. 46։

Երկու օրէն յետոյ Յիսուս Գալիլիա գնաց, ուր ուրախութեամբ ընդունեցին։ Գալիլեացիք Պասեքի տօնին Երուսաղէմ կ'երթային եւ ամեն գործքերուն վկայ էին, ինչ որ գործած էր Յիսուս։ Նորա համբաւը արդէն տարածուած էր բոլոր այն երկրին մէջ։

Կափառնայում Գալիլեայի ամենահարուստ քաղաքներէն մէկն էր, ուր կը բնակէր մի երեւելի թագաւորական, որ իւր պաշտօնին համար ամենուն սիրելի էր։ Այս պաշտօնաւորը որդի մի ունէր մահուան

մահՀի մէջ պառկած և ամեն րոպէ կըսպասէին նորա վախճանելուն։

Այս հիւանդի սրտացաւ հայրը, լսելով որ Յիսուս Հրեաստանէն Գալիլիա դարձած է և Կանայի մէջ է, որ Կափառնայումէն երկու ժամ ճանապարհ հեռի էր, ճամապարեց գնաց նորա մօտ և աղաչեց որ գայ իւր տունը և իւր որդին բժշկէ։ Յիսուս ասաց. "Մինչեւ նշան չըտեսնէք, չէք հաւատար։" —Թագաւորաղն պատասխանեց. "Տէր, փութացէք, քանի որ որդիս մեռած չէ։"—"Գնա՛ տուն, ասաց Յիսուս, քո որդին կենդանի է։" Թագաւորաղնը հաւատաց Տիրոջ խօսքին և տուն դարձաւ։ Բայց տակաւին տուն չէր մտած, ծառայքը նորա առաջն ելան և ուրախութեամբ աղաղակելով աւետիս տուին թէ՝ "Մանուկն կենդանի է։" Սատուգեց և իմացաւ որ նոյն ժամուն առողջացած է մանուկն, երբ որ Յիսուս ասաց. "Որդիդ կենդանի է։" Թագաւորաղն և իւր բոլոր ընտանիքը հաւատացին Յիսուս Քրիստոսին։

Ի Գ.

Յիսուս Քրիստոսի քարոզութիւնը Նազարէթի մէջ։ Ղուկ. Դ. 16։

ՅԻՍՈՒՍ դարձաւ Նազարէթ, իւր սնունդեան քաղաքը և իւր սովորութեամբ, շաբաթ օրը մտաւ ժողովարանացը կամ աղօթից տունը։ Երբ ամենքը հաւաքուեցան, Յիսուս ելաւ իւր տեղէն, որ նշան էր թէ կամի Օրինաց գրքէն բան կարդալ։ Նորա գործքերու համբաւը Նազարէթ եւս հասած էր. ուստի առանց ընդդիմանալու Նասայի մարգարէի գիրքը Յիսուսին տուին։ Յիսուս գիրքը բացաւ և սկսաւ յետագայ խօսքերը կարդալ. "Աստուծոյ հոգին իմ վրայ է, նա օծեց զիս և առաքեց, որ աղքատներուն աւետարանեմ, սրտով բեկեալները բժշկեմ, գերիներուն թողութիւն (ազատութիւն) քարոզեմ, կոյրերուն լոյս աւետեմ, վիրաւորուածները առողջացնեմ և Տիրոջ տարեկանը ընդունելի քարոզեմ։" Եսայի ԿԱ. 1, 2։ Այս կարդալէն յետոյ, Յիսուս գիրքը փակեց, տուաւ պաշտօնէին և վերստին նստաւ իւր տեղը։ Ներկայ եղողները ամենքը իրենց հայեցուածքը Յիսուսի վրայ դարձուցին. իսկ նա սկսաւ ասել թէ՝ այժմ իսկ կատարուեցան մարգարէին խօսքերը։

Ամենքը կը վկայէին Յիսուսին, կը զարմանային նորա բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ և կ'ասէին. "Չէ՞ որ սա Յովսէփի որդին է։" Նոցա միտքը Յիսուսին յայտնի էր, ուստի և ասաց. "Գիտեմ որ պիտի ասէք դուք ինձ այն հին առակը, "Բժիշկ, բժշկէ քո անձդ։ Կ'ասէք, լսեցինք

ինչ որ Կափառնայումի մէջ գործեցիր, այժմ նոյնը արա այս տեղ քո գաւառիդ (հայրենիքիդ) մէջ։» Բայց Ճշմարիտն ասեմ ձեզ, որ ոչ մի մարգարէ ընդունելի չէ իւր քաղաքի մէջ։ Յիշեցէք, Եղիայի մարգարէի ժամանակը, երբ երկինքը փակուեցաւ երեք տարի և վեց ամիս, և երբ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ, այն ժամանակը խեղճեր շատ կային Իսրայելի մէջ, բայց մարգարէն միայն ղրկուեցաւ Սիդոնացւոց Սարեփթա քաղաքի այր մի կնոջ մօտ։ Նոյնպէս եւս Եղիսէ մարգարէի ժամանակ շատ բորոտներ կային Իսրայելի մէջ, բայց միայն Նէեման Ասորին բժշկուեցաւ։

Ժողովականները երբ լսեցին այս խօսքերը՝ սաստիկ բարկացան. Յիսուս քաղաքէն հանեցին և տարան այն լերան գագաթը, ուր Նազարէթը շինուած էր։ Նոքա կամէին այն լեռնէն գահավէժ առնել (վար ձգել) բայց Փրկիչն անցաւ նոցա մէջէն և հեռացաւ։

Ի Դ.

Ձկան հրաշալի որսը։ Ղուկ. Ե. 1։

Յիսուս Նազարէթէն գնաց Գենեսարէթայ ծովակի մօտ, որ իւր մեծութեան պատճառաւ կը կոչուէր ծով Գալիլիացւոց

կամ ծով Տիբերական։ Այս ծովակի շրջակայքը շատ գեղեցիկ էին և նման էին այգիի։ Ամեն տեղ բուսած էին պտղաբեր ծառեր, ամեն տեղ կ'երեւէին քաղաքներ և գիւղեր։ Մեծ բազմութիւն կ'երթար Յիսուսի ետեւէն եւ կը փափաքէին նորա քարոզած աստուածային խօսքերը լսել և իրենց ախտերէն բժշկուիլ։

Ամենքը կը ժողուէին նորա շուրջ։ Զրկնորսի երկու դատարկ նաւակներ կային ծովեզրին վրայ։ Զկնորսները նաւակներէն ելած իրենց գործիները կը լուային։ Յիսուս մտաւ նաւակներու մէկուն մէջ, որ կը պատկանէր Սիմոն Պետրոսին և խնդրեց, որ ելեզրէն փոքր ինչ յառաջ վարէ դէպ'ի ծովամէջը, որ աւելի դիւրութեամբ կարենայ ուսուցանել ժողովրդին։ Երբ քարոզութիւնը աւարտեց, հրամայեց Յիսուս՝ Պետրոսին որ դարձեալ յառաջ նաւէ և ուռկանը ձգէ։ Պետրոս պատասխանեց. «Վարդապետ, մենք բոլոր գիշերը աշխատեցանք և ոչինչ չը կալանք, բայց այժմ՝ քո հրամանին հնազանդելով կրկին կը ձգեմ ուռկանս։»

Սիմոնն և նորա եղբայրն Անդրէաս նաւեցին դէպ'ի ծովակին մէջ տեղը, գործիքը ձգեցին և այնքան ձուկն կալան, որ ծանրութենէն ուռկանը պատռուեցաւ։ Նոքա նշան տուին իրենց ոստակիցներուն՝ Յովհան-

նէսին և նորա եղբայր Յակոբին միւս նաւի վրայ, որ իրենց օգնութիւն հասնեն։ Երբ սոքա եւս մօտեցան, ուռկանը հանին եւ այնքան ձուկը կալան, որ կը դժուարանային ջրի երեսին մնալ։ Սիմովն Պետրոս սարսեցաւ թէ Տիրոջ ամենակարողութենէն և թէ իւր անարժանութենէն։ Իսկոյն Յիսուսի ծունկերը ընկաւ աղաղակելով. "Տէր, հեռացիր ինձմէն, ես մեղաւոր մարդ եմ։" Նոյնպէս զարմացան և զարհուրեցան ամենքը, որոնք Սիմովն Պետրոսի հետ էին։ Բայց Յիսուս պատասխանեց Սիմովն Պետրոսին, "Մի վախնար, այսուհետեւ մարդիկ պիտի որսաս յաւիտենական կենաց համար։"

Երբ ափը հասան, նաւակները ցամաքը հանին և ամեն բան թողլով՝ գնացին Յիսուսի Քրիստոսի ետեւէն։

Ի Ե.

Յիսուս Քրիստոս կ'ինչնէ Կափառնայում եւ կը շրջի Գալիլիայի մէջ։

Յիսուս մտաւ Կափառնայում, որ Գենեսարէթի ծովեզրին վրայ էր։ Այս քաղաքին մէջ տուն ունէին Սիմովն Պետրոս և իւր եղբայրը։ Յիսուս այս քաղաքը իւր բնակութեան համար տեղ ընտրեց՝ փոխանակ

Թշնամի Նազարէթին։ Այս տեղ եւս՝ առաջ մտաւ ժողովարանոցը և կ'ուսուցանէր ժողովրդին։ Երբոր Յիսուս ժողովարանոցէն ելաւ, մտաւ Պետրոսի տունը և իրեն հետ էին Յակոբոս և Յովհաննէս։ Պետրոսի զոքանչը սաստիկ ջերմով հիւանդացած կը տագնապէր։ Պետրոս յայտնեց Յիսուսին և խնդրեց որ հիւանդին օգնէ։ Յիսուս մօտեցաւ հիւանդի մահճին, ձեռքէն բռնեց և իսկոյն ջերմը թողաւ։ Հիւանդը ելաւ և կըսպասաւորէր Յիսուսին և իւր աշակերտներուն ճաշի ժամանակ։

Այսբժշկութեան համբաւը տարածուեցաւ բոլոր քաղաքի մէջ։ Օրը շաբաթ էր և Հրէաները մինչեւ արեգակի մայր մտնելը ոչինչ չէին գործեր. իսկ երբ երեկոյ եղաւ, հիւանդները Փրկչի մօտ բերին։ Բազաքացիք ամենքը ժողովեցան Պետրոսի դըռան մօտ։ Յիսուս միայն ձեռք դնելով կամ շփելով կը բժշկէր ամեն հիւանդները։ Ոչ մի մարդու խնդիր չէր մերժեր, ոչ ոք իր մօտէն չէր հեռացներ առանց բարութեան, այլ առհասարակ ամենուն կ'օգնէր, ամենքը կը մխիթարէր և այնպէս կ'արձակէր։ Ի՜նչ գեղեցիկ և խրատական տեսարան մեր համար, որ մեր բարերար Տէրը շրջապատած է խեղճերու և տառապեալներու բազմութենէն։ Ի՜նչ սէր, ի՜նչ կարողութիւն և ի՜նչ մխի-

թարիչ գթութիւն։ Ով չը յանձներ ուրա-
խութեամբ իւր անձը այս մարդասէր Փրը-
կչին։

Յիսուս Քրիստոս գիշերուան մէջ եւս
երկար ժամանակ դեռ կը շարունակէր իւր
միսիթարութիւնները։ Սիւս օրը, երբ ա-
ռաւօտեան արշալոյսը երեւեցաւ, ելաւ
քաղաքէն, բարձրացաւ սարի վրայ և սկը-
սաւ աղօթել այն տեղ։ Քաղաքի մէջ եւս,
ուր Յիսուս այնքան բարերարութիւն ը-
րաւ, սովորականէն առաջ ամեն բան սկը-
սաւ շարժիլ և կենդանանալ։ Ամենքը կը
փափաքէին Յիսուսը տեսնել, ամենքը կը
վնտռէին։ Յիսուս գիտէր այս, ուստի և
պատիւէն փախչելով հեռացած էր։

Սիմոն Պետրոս ժողովրդի բազմութե-
նէն շրջապատած, վերջապէս գտաւ Յի-
սուս և ասաց. «Վարդապետ, ամենքը քեզ
կը վնտռեն, ամենքը կը խնդրեն որ դար-
ձեալ քանի մի ժամանակ եւս մնաս իրենց
մօտ։» Բայց Յիսուս, որ երբէք չէր մոռա-
նար իւր բարձր նպատակը, այլ հաւասա-
բապէս կը սիրէր բոլոր մարդկութիւնը, պա-
տասխանեց. «Ես պարտական եմ ուրիշ
քաղաքներու և գիւղերու մէջ եւս աւե-
տարանել Աստուծոյ արքայութիւնը, որով-
հետեւ սոյն այս բանիս համար ղրկուած եմ։»
Յիսուս անցաւ բոլոր Գալիլեան, ուսուցա-

նելով ժողովրդանոցներու մէջ, քարոզելով
Աստուծոյ արքայութիւնը և բժշկելով ամեն
ախտեր և հիւանդութիւններ։ Ամեն տեղ
փայլեցաւ այն երկնային իմաստութիւնը, որ
կը բղխէր նորա շրթունքներէն, ամեն տեղ
ծաւալեցաւ այն աստուածային սէրը, որ
ամեն վիշտ կը թեթեւցնէր։ Մեծ բազ-
մութիւն կը ժողովուէր Յիսուսի մօտ Գա-
լիլիայէն, Հրէաստանէն, Յորդանանի միւս
կողմէն, եւս և Երուսաղեմէն։ Նորա համ-
բաւը հասաւ մինչեւ Սորիք և ուրիշ սահ-
մանակից թագաւորութիւններ։ Նորա մօտ
կը բերէին զանազան ցաւերով հիւանդացած-
ներ, դիւահարներ, անդամալոյծներ, կոյ-
ռեր, խուլեր, համրեր, կաղեր և նա ամենն-
ալ կը բժշկէր։ Առողջութիւն և կեանք կը
բղխէին նորա աչքէն։ Վիշտ ու ցաւ կը հե-
ռանային, ուր որ նա կ'երեւէր։ Ամեն տեղ
իւր հետ կը տանէր ուրախութիւն և միսի-
թարութիւն, ուր կը մտներ։ Ի՜նչ մարդա-
սիրութիւն, ի՜նչ գթութիւն։

Ի Զ.

Կարիքնայում քաղաքի հարիւրապետը։

Մատթ. Ը. 5։ Ղուկ. Է. 1։

ԵՐԲՈՐ Յիսուս շրջեցաւ Գալիլիայի միւս
քաղաքները և աւարտեց, վերստին դարձաւ

կափառնայում, զոր իւր բնակութեան տեղ ընտրած էր։ Այս քաղաքի մէջ կար մի Հրեռովմէացի հարիւրապետ, այսինքն հարիւր զինուորներու գլխաւոր։ Հարիւրապետը ունէր մի հաւատարիմ և մտերիմ ծառայ, զոր շատ կը սիրէր և որ հիւանդացած էր մերձ 'ի մահ։ Հարիւրապետը, երբ լսեց որ Յիսուս դարձած է, Հրէից ծերերէն մի քանիսը ղրկեց նորա մօտ խնդրելու, որ գայ և հիւանդը ազատէ։ Ծերերը գնացին յայտնեցին Յիսուսին հարիւրապետի խնդիրքը և այս եւս յաւելցուցին թէ. «Արժանի է նա, որուն այս շնորհքը կը ցուցնես. վասն զի նա կը սիրէ մեր ազգը, և մեր ժողովրդանոցը նա շինած է։» Յիսուս գընաց նոցա հետ և երբ մօտեցան հարիւրապետի տանը. հարիւրապետը իւր բարեկամները նորա առաջը ղրկեց և յետոյ ինքն եւս եկաւ և ասաց. «Տէր, մի աշխատիր ինքդ գալու, ես չեմ արժանի, որ դուն իմ տունս մտնես. այս պատճառաւ էր, որ ինքնս իմ անձս անարժան համարեցի քո մօտ գալու. այլ միայն խօսքով ասա, և մանուկս կը բժշկուի։ Վասն զի ես եւս, թէ և իշխանութեան տակ կարգուած մարդ եմ, բայց իմ հրամանիս տակ մարդիկ ունիմ, որոնք ինձ կը հպատակեն և կրկատարեն ինչ որ ես կը հրամայեմ։»

Յիսուս Քրիստոս երբ լսեց հարիւրապետի խօսքը, զարմացաւ և դարձաւ իւր չորս կողմը եղած ժողովուրդին ասաց. «Կը հաւատացնեմ ձեզ, որ Իսրայելի մէջ անդամ ես այսպիսի հաւատ չը գտայ. Ճշմարիտը կ'ասեմ ձեզ, որ Արեւելքէն և Արեւմուտքէն շատերը պիտի գան և մտանակից լինին երկնային արքայութեան ուրախութեանցը՝ Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ միասին. բայց արքայութեան որդիքը (Իսրայելացիք) պիտի արտաքսուին արտաքին խաւարին մէջ, ուր պիտի լան և ատամները կրճտեն։» Յետոյ դարձաւ և հարիւրապետին ասաց. «Գնա, ինչպէս հաւատացիր, թող այնպէս լինի քեզ։» Այն ըսպէին առողջացաւ հիւանդը և պատգամաւորները տուն դառնալով՝ հիւանդ ծառայն բժշկուած գտան։

Ի Է.

Անդամալուծի բժշկութիւնը։ Մար. Բ. 5։ Ղուկ. Ե. 18։

Հարիւրապետի ծառայի բժշկութենէն յետոյ շատ ժողովուրդ հաւաքուեցաւ Յիսուսի մօտ։ Ոչ միայն գտնուած տունը, այլ և նորա շուրջ ժողովուրդ լցուեցաւ։

Յիսուս տան մէջ եւս կ'ուսուցանէր։ Նա իւր աստուածային զօրութեամբ ամենքը կը բժշկէր։ Նորա մօտ կը ժողովուէին շատ ողորմելիներ ամեն կողմէն, Դպիրներն, Հրէաստանէն և նաև Երուսաղեմէն։ Ոմանք կուգային որ նորա մխիթարիչ քարոզութիւնը լսեն, և ոմանք կուգային միայն հեռաքրքրութեան համար։ Երկան Յիսուսին մօտ նմանապէս շատ դպիրներ և փարիսեցիներ, ոչ թէ բժշկուելու կամ բան մի սովորելու, այլ Յիսուսի ամեն մի գործքը նկատելու համար։ Նոքա կը յուսային, իրենց կարծիքով, կամ նախատանաց արժանի բան գտնել եւ կամ աւելորդ խօսք մի լսել Յիսուսէն, որպէս զի զբաղարտեն ժողովուրդի առջեւ եւ ջնջեն կամ նուազեցնեն այն յարգը և պատիւը, զոր ժողովուրդը կուտար Յիսուսին։ Բայց Յիսուս ամենեւին նոցա նենգութիւնը չէր նայեր, այլ շարունակ կ'ուսուցանէր և կը բժշկէր։

Այս ժամանակ մահճի վրայ դրած մի անդամալոյծ կը բերէին Յիսուսի մօտ։ Անդամալոյծը բերող մարդիկը ժողովուրդի բազմութեան պատճառաւ չըկարենալով ներս մտնել՝ հնարք մի մտածեցին Յիսուսին մօտենալու համար։ Հրէաստանի տներու տանիքները բոլորովին տափարակ էին և երբեմն այնպէս թեթեւ, որ դիւրութեամբ կարելի էր վեր առնել. վասն զի այսպիսի տաք և անանձրեւ կլիմային կամ երկրին մէջ այնքան կարեւորութիւն չըկար վատ եղանակի դէմ պաշտպանուելու։ Իսկ լաւ եղանակներու մէջ տանիքները ճեմելու տեղի էին, վասն որոյ եւ պատած էին վանդակներով և արտաքուստ սանդուղներ ունէին վեր ելնելու համար։

Այսպէս ահա հիւանդին բարձրացուցին սանդուղի վրայ, տանիքը վեր առին, որ միանգամայն եւ առաստաղ էր, և հիւանդը մահճով իջուցին Յիսուսի ոտքերու մօտ։

Յիսուսը՝ այս գործողութեանը մէջ հաստատ հաւատ տեսնելով կ'ուրախանար. իսկ Փարիսեցիները և Դպիրները նախանձով կը բորբոքէին և ցաւակցութեան ու ողորմածութեան զգացմունքի դէմ կը մեղանչէին։

Սրտագէտ Յիսուսը, ինչպէս Փարիսեցւոց սրտի մէջ եղածը կը կարդար, նոյնպէս և այն ողորմելի հիւանդինը որ իւր ոտքերու մօտ էր։ Նա կը տեսնէր նորա մէջ հին մեղաց զղջումն, որ չարչարող ախտէն եւ հիւանդութենէն աւելի զօրեղ էր, ուստի և ասաց. "Քաջալերուիր, ներուած են քեզ քո մեղքերդ։"

Դպիրները և Փարիսեցիները այս լսելով իրենց մէջ ասացին. "Նա զԱստուած կը հայհոյէ։ Բայց Աստուծմէ, ո՞վ կարող է մարդոյ

մեղքերը թողուլ։» Յիսուս, որ նոցա գաղտնի խորհուրդը կը տեսնէր ասաց. «Ինչու՞ վատ խորհուրդներ կը խորհիք։ Որն աւելի դիւրին է, ասել ներուած են քեզ մեղքերդ, թէ ասել՝ ել, առ մահիճդ և գնա. բայց որպէս զի գիտնաք թէ՝ Մարդոյ Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերուն թողութիւն տալ. ահա կ'ասեմ... (և դառնալով ասաց անդամալուծին) ել, առ մահիճդ և գնա։»

Հիւանդը ելաւ իսկոյն, առաւ իւր մահիճը և գնաց։ Տեսնողները ամենքը զարմացան, վասն զի այսպիսի բան երբէք տեսած չէին, ուստի և կը փառաւորէին զԱստուած։

ԻԸ.

Յիսուս կը յարուցանէ Յայրոսի աղջիկը եւ կը բժշկէ ճիւանդ կինը։ Մարկ. Ե. 22։ Ղուկ. Ը. 41։

ՅԻՍՈՒՍ երբ ելաւ այն տանէն, ուր բժշկեց անդամալոյծը, տեսաւ Մատթէոս անունով մարդ մի, որ մաքսաւորութեան կը պարապէր։ Յիսուս ասաց նորան. «Եկ իմ ետևէս։» Մատթէոս հետևեցաւ Յիսուսին և մաքսաւորը՝ առաքեալ դարձաւ և ապա Աւետարանիչ և մարտիրոս։ Մատթէոս ուրախանալով Յիսուսը իւր տունը հրաւիրեց

ճաշելու։ Երբ սեղան նստան, Յիսուսին և իւր աշակերտներուն սեղանակից էին նոյնպէս Մատթէոսի առաջուան ընկերները, այսինքն մաքսաւորները և ուրիշ ծանօթներ։ Փարիսեցիք շատ կ'ատէին մաքսաւորները՝ որպէս անարժան մեղաւորներ. իրենց անձը արդար կը համարէին, իսկ մաքսաւորներէն կը խորշէին, ուստի և հարցուցին Յիսուսի աշակերտներուն. «Ինչպէս կարող էք դուք մաքսաւորաց և մեղաւորաց հետ մի սեղանէ ուտել և խմել։» Յիսուս երբ լսեց Փարիսեցւոց խօսքը՝ ասաց. «Բժիշկը հիւանդներուն պէտք է եւ ոչ ողջերուն. և ես եկայ որ, ոչ թէ արդարները, այլ մեղաւորները կոչեմ ապաշխարելու։»

Այն ժամանակ Յովհաննէսի աշակերտները մօտեցան Յիսուսին և ասացին. «Ինչո՞ւ մենք և Փարիսեցիք յաճախ կը պահենք, իսկ դու և քո աշակերտներդ չէք պահեր։» Յիսուս պատասխանեց. «Առագաստի մանուկները (հարսանիք հրաւիրուածները) անհնար է որ տրտմին քանի որ փեսան իրենց մօտ է. իսկ երբ փեսան հեռանայ, այն ժամանակը կը պահեն։»

Այս խօսակցութեան ժամանակ, Հրէից իշխաններէն մէկը, Յայրոս անունով, ներս մտաւ, ընկաւ Յիսուսի ոտքերը և ասաց. «Աղջիկս կը մեռնի. եկ, ձեռքդ վրան դիր,

որ կենդանանայ։» Յիսուս խսկոյն եկաւ և գնաց Յայրոսի տունը։ Նորա ետեւէն կերթային իւր աշակերտները և ժողովրդեան մեծ բազմութիւն։ Այս բազմութեան մէջ կին մի կար, որ տասներկու տարիէն ի վեր հիւանդ էր, բոլոր իւր ունեցածը ծախած և բժշկներու տուած էր, թեթեւութիւն մի գտնելու համար, բայց ամենեւին օգուտ ստացած չէր։ Լսելով Յիսուսի բժշկութեանց համբաւը, յոյս ունէր նորա ձեռքով բժշկուելու, բայց կանայի ամօթխածութիւնը և երկչոտութիւնը չէր ներեր իրեն, որ բազմութեան մէջ համարձակի յայտնել Յիսուսին իւր հիւանդութիւնը։ Հաւատալով՝ որ միայն նորա հանդերձին ձեռք դնելով կարող է բժշկուիլ, ստիպուեցաւ Յիսուսի ետեւէն գնալ։ Ընդաւ բազմութեան միջէն. մօտեցաւ Յիսուսին, կամաց իւր ձեռքը նորա հանդերձի քղանցին (ծայրին) հպեց և խսկայն կատարեալ առողջութիւն զգաց։

Կինը կը կարծէր թէ այս բանը մարդ չիմացաւ և արդէն կամէր հեռանալ, բայց Փրկիչը, որուն համար ամենեւին ծածուկ բան չկար, դառնալով հարցուց. «Ո՞վ մերձեցաւ ինձ։» Աշակերտները պատասխանեցին. «Տէր, կը տեսնես ահա, թէ ո՞րքան ժողովուրդ շրջապատած է քեզ, ինչպէս կա-

րելի է խմանալ թէ ով մերձեցաւ քեզ։» Բայց Յիսուս ասաց. «Ես գիտեմ, որ մեկը դիտմամբ մօտեցաւ ինձ. վասն զի ես զգացի, որ ինձմէն զօրութիւն ելաւ։» Յայտնի բան է, որ Յիսուս գիտէր թէ ով մերձեցաւ, բայց կամէր յայտնել բժշկուողին հաւատը և համեստութիւնը և ուրիշներուն օրինակ տալ։ Ամօթխած կինը, տեսնելով որ չէ կարող թաղցել Յիսուսի ամենատես աչքէն, դողալով ընկաւ ոտքերը և ամեն բան պատմեց։ Յիսուս գթութեամբ նայելով ասաց. «Դաշալերուիր աղջիկս, քո հաւատը քեզ փրկեց, գնա խաղաղութեամբ։»

Մինչդեռ Յիսուս կը խօսէր՝ Յայրոսի ծանօթներէն ոմանք եկան նորա մօտ և ասացին. «Դարդապետին աշխատութիւն մի տար (մի անհանգստացներ) դուստրդ մեռաւ։» Խեղճ հայրը շուարեցաւ իբրեւ կայծակնահար. բայց Յիսուս քաջալերելով ասաց. «Մի վախնար, այլ միայն հաւատա և նա կ'ապրի։»

Երբ տուն եկան ամեն բան խառնուածութեան և շփոթութեան մէջ տեսան։ Հաւաքուած էր մեծ բազմութիւն. ոմանք կուլային և կ'ողբային մեռած աղջկանը վրայ, և ոմանք արդէն կը պատրաստուէին թաղելու համար։ Յիսուս ասաց ներկայ եղողներուն.

«Ինչու՞ կուլաք և կ՚ողբաք, նա մեռած չէ, այլ կը ննջէ։» Ամենքը սկսան ծիծաղել Յիսուսի վրայ, վասն զի հաստատ գիտէին, որ մեռած է աղջիկը։ Յիսուս հրամայեց որ հեռանան ամենքը և միայն մնացին աղջկան հայրը, մայրը և իւր երեք աշակերտները, Պետրոս Յակոբոս և Յովհաննես։ Օտարացաւ Յիսուս հանդուցելոյն, ձեռքէն բռնեց և ասաց. «Աղջիկ, քեզ ասեմ, ելի կանգնէ» Իսկոյն կենդանացաւ մեռեալն, կանգնեցաւ և սկսաւ մանդալ։ Սա տասներկու տարեկան էր։ Ամենքը սարսափեցան, երբոր այս հրաշքը տեսան։

Յիսուս հրամայեց, որ կերակուր տան յարութիւն առած աղջկանը և սաստիկ արգիլեց, որ այս անցքը ուրիշներուն չպատմեն։

Ի Թ.

Հիւանդը Պրոպատիկէ աւազանի մօտ։

Յովհ. Ե. 2։

Յիսուս Երիսաղէմի դարձը ամենակրօնաւորելէն յետոյ՝ երկրորդ անգամ հասաւ Պասեքի տօնը։ Այս տօնի համար, ըստ սովորութեան, Երուսաղէմի մէջ հաւաքուեցաւ մեծ բազմութիւն և Յիսուս եւս եկաւ այն տեղ։ Ինչպէս ամեն ժամանակ, նոյնպէս և այս անգամ իւր նպատակն էր բարերարութիւն և մարդասիրութիւն։

Երուսաղէմի այն դրան մօտ, որ ոչխարի դռան կը կոչուէր, կար աւազանաձեւ ջրոյ աւազան մի, որ եբրայեցերէն Բեթհեզդա կ՚անուանուէր, այսինքն գութ ողորմութեան։ Վասն զի այս աւազանի չորս կողմը շինուած կային հինգ սրահներ, ուր կը պառկէին բազմաթիւ հիւանդներ, այն է, կոյրեր, կաղեր, անդամալոյծներ և ուրիշ զանազան ախտաւորներ։ Սոքա ամենքը ջրի յուզուելուն կը սպասէին, որովհետեւ ջուրը միշտ աւազանաձեւ չէր, այլ միայն տարին միանգամ, երբ որ հրեշտակը կ՚իջնէր և կը յուզէր։ Երբոր աւազանի ջուրը կը սկսէր յուզուիլ և ալեկոծուիլ, հիւանդները կ՚աճապարէին մէջն ընկնելու և յուզմանէն յետոյ առաջին լուացուողը իսկոյն կը բժշկուէր, ինչ հիւանդութիւն որ ունենար։

Այս հիւանդանոցի մէջ կար ողորմելի հիւանդ մի, որ ոչ ինքը կարող էր ջրի յուզման ժամանակ աւազանը մտնել և ոչ եղբայր, որդի կամ բարեկամ ունէր, որ օգնեն մտնելու։ Ութսուն երեսուն ութ տարիէն՝ի վեր պառկած էր այս տեղ, կը կերակրուէր ողորմութեամբ, բայց ամենակարեւոր ժամանակին մէկը չը կար որ օգնէր։ Թէպէտ

աղքատ մարդը թշուառութեան մէջ բարե-
կամ հաղիւ կը դանէ երկրիս վրայ, բայց երա-
կնքին մէջ միշտ պաշտպան ունի։

Յիսուս երբ եկաւ աւազանի մօտ և
տեսաւ հիւանդը՝ հարցուց «Կամիս ողջ լի-
նիլ։» Հիւանդը պատասխանեց. «Տէր,
ես օգնական չունիմ, որ ջուրը յուզուելու
ժամանակ աւազանը մոցնէ, իսկ ես ինքս
այնքան թոյլ և տկար եմ, որ մինչեւ աւա-
զանին կը մօտենամ, ուրիշը ինձմէն առաջ
ջուրը կը մտնէ արդէն։» Փրկիչը ասաց.
«Էլ, ա՛ռ մահիճդ և գնա։» Ընդամարտիծը
իսկոյն ողջնալով առաւ մահիճը և հեռա-
ցաւ այն տեղէն, սիրտը լցուած երախտա-
գիտութեամբ և ուրախութեամբ։ Յիսուս
ես այնպէս հեռացաւ առանց նկատուե-
լու, որ բժշկուող հիւանդը չկարողացաւ
գտնէ անունն իմանալ։

Այս բժշկութեան օրը շաբաթ էր։ Մով-
սիսի օրէնքով շաբաթ օրը ամեն աշխատանք
արգիլուած էր։ Երբոր տեսան թէ հիւան-
դը իւր մահիճը առած կ'երթայ, ասացին.
«Պէտք չէ որ մահիճդ շալակես երթաս,
միթէ չգիտէ՞ս որ այսօր շաբաթ է։» Բժըշ-
կուածը պատասխանեց. «Նա որ զիս բժըշ-
կեց, հրամայեց մահիճս առնուլ և երթալ։»
Իւ արդէն աներկբայ հաւատացած էր, որ
երեսուն ութ տարուան հիւանդութիւնը

մի խօսքով բժշկողը՝ անշուշտ իշխանութիւն
ունի և հրամայել, որ շաբաթ օրը մահիճը
վերցնեն և երթան։ Ամենքը սկսան խնդրել և
հարցնել թէ՝ ո՞վ է արդեօք բժշկողը, բայց
Յիսուս արդէն հեռացած էր և բժշկուածն
ես չգիտէր իւր բարերարի անունը։ Մի
քանի ժամանակէն յետոյ Յիսուս պատա-
հեցաւ նոյն մարդոյն տաճարի մէջ և ասաց.
«Այժմ դուն ողջ ես, զգոյշ կաց, որ այսու-
հետեւ չմեղանչես և աւելի չար լինի քեզ։»
Բժշկուածը ճանաչեց իւր բարերարը և ա-
մենուն կը պատմէր, որ Յիսուսն է զինքը
բժշկողը։ Նա երախտագիտութենէ շար-
ժուած՝ այնպէս կը կարծէր թէ ամեն լսող-
ները պիտի իրեն հետ միասին փառաւորեն
զԱստուած այս հրաշքին համար։ Բայց Հը-
րէից սրտերը ճշմարիտ բարեպաշտութենէ
և բարեկամական սիրոյ զգացմունքներէ ցամ-
քած էին։ Նոքա միայն արտաքին ծէսերը
պինդ կը պահէին և կը պաշտէին, առանց
ներքին խորհրդին մտադիր լինելու։ Նոքա
՝ի բոլոր սրտէ Յիսուսը կ'ատէին և մինչեւ
անգամ կ'աշխատէին սպանել՝ շաբաթ օրը
բարերարութիւն գործելուն համար։ Յի-
սուս կը պատասխանէր, «Իմ հայրս մինչեւ
ցայժմ կը գործէ և ես կը գործեմ։»

Հրէաները աւելի կը զայրանային և կը
ջանային կեանքէ զրկել, մանաւանդ այն

պատճառաւ, որ Յիսուս կ'անուանէր զինքը՝ Որդի Աստուծոյ և հաւասար Աստուծոյ։ Իսկ Փրկիչը առ ոչինչ համարելով նոցա սպառնալիքները՝ կ'ասէր. "Հայրը կըսիրէ որդին և ամեն բան կ'ուսուցանէ գործելու՝ ինչ որ ինքն կը գործէ։ Դուք պիտի աւելի մեծ հրաշքներ տեսնէք։ Ինչպէս հայրը կը կեցուցանէ և կը կենդանացուցանէ մեռածները, նոյնպէս և Որդին։ Հայրը ամեն դատաստանը Որդուն տուած է, որ ամենքը պատուեն Որդին, ինչպէս կը պատուեն Հայրը։ Ով որ չը պատուէ Որդին, չըպատուեր Հայրը, որ իր Որդին ղրկած է։ Ճշմարիտ ասեմ ձեզ, ով լսէ իմ խօսքերը և հաւատայ զիս ղրկողին, նա յաւիտենական կեանք կրստանայ։ Ճշմարիտն ասեմ ձեզ, պիտի ժամը գայ և արդէն եկած է, որ գերեզմաններու մէջ գտնուածները պիտի լսեն Աստուծոյ Որդւոյ ձայնը և լսելով պիտի կենդանանան։ Նոքա որոնք բարի գործած են, պիտի յարութիւն առնեն յաւիտենական կեանք ժառանգելու համար, իսկ նոքա, որոնք չար գործած են, պիտի յարութիւն առնեն դատուելու համար։"

Այս ասելով Թողաւ Յիսուս իւր դէմ ժողովուած Հրէաները և ոչ ոք հանդգնակեցաւ նորա վրայ յարձակելու, վասն զի դեռ նորա ժամն հասած չէր։

Լ.

Մի քանի խրատական անցքեր։ Մատ. ԺԲ. 1։ Մարկ. Բ. 23։ Ղուկ. Զ. 1։

Յիսուս Քրիստոս Հրուսաղէմէն Գալիլիա դառնալով կ'անցներ շաբաթ օրը արտերու մէջէն։ Աշակերտները քաղցելով ըկըսան հասկ կորզել, բռան մէջ շփել և ուտել։ Փարիսեցիներէն մի քանիսը տեսան այս բանը։ Մովսիսի օրէնքով արգիլուած էր ինչպէս շաբաթ օրուան ծանր աշխատանքները, նոյնպէս և ցորեն աղալը։ Փարիսեցիք, որոնք կը ջանային ամենէն սուրբ և իմաստուն երեւիլ, կըհաստատէին որ շաբաթ օրը հասկ շփելը ընդդէմ է օրինաց և այս պատճառաւ կը պարսաւէին Յիսուսի աշակերտները։ Այս բանի համար Յիսուս ասաց Փարիսեցւոց՝ յետագայ խրատական խօսքերը. "Գրեթէ դուք հասկընայիք, որը մոռիւն կամիմ և ոչ զզոհ, բառերու միտքը, ամենեւին չէիք դատապարտեր անմեղները։ (Այսինքն իմ կամեցածս է մարդասիրութիւն և ոչ թէ շաբաթ օրուան կամ ծիսից պահպանութիւն և ընդ նմին ոմն և ատելութիւն։) Շաբաթը մարդուս համար է ըստեղծուած և ոչ թէ մարդը շաբաթի համար։ Մարդոյ որդին նոյնպէս և Շաբաթի տէրն է։"

Յայտնի բան է, որ կիւրակի և տօնի օրերը մենք պէտք չէ գործենք, որ Աստուած նշանակեր է մեր հանգստութեան համար, այլ պարտական ենք թողուլ ամեն ծանր աշխատանքները և նոյն օրը նուիրել աղօթքի և հոգեղուարձ պարապմունքներու։ Բայց դարձեալ, սոյն օրերուն մէջ, որ յատկապէս Աստուծոյ պաշտամանը նուիրուած են, կարող ենք օգտակար գործքեր կատարել, մանաւանդ այնպիսիներ, որոնք մարդասիրութեան կը վերաբերին և անհնարին է յետաձգել։

Յիսուս միանգամ կը ճաշէր մի փարիսեցու մօտ։ Նոյն ժամանակ սուրբ համարուած սովորութիւն մի կար, որ կը պահանջէր, որ մարդիկ սեղանէն յառաջ եւ յետոյ իրենց ձեռքը լուանան։ Փարիսեցին ջերմեռանդութեամբ կը կատարէր այս սովորութիւնը։ Յիսուս իւր աշակերտներով հանդերձ ամեն ժամանակ չէր հետեւեր այս սովորութեանը, կամելով ցոյց տալ որ արտաքին լուացումներն ըստ ինքեան արժանաւորութիւն չունի, առանց ներքին սրբութեան։ Հիւրընկալ փարիսեցին տժգոհութեամբ նկատեց այս բանը և կը մտածէր թէ ինչո՞ւ արդեօք Յիսուս և իւր աշակերտները ձեռքերը չը լուացին։ Յիսուս, որուն յայտնի են ամեն մարդոյ խորհուրդները, ասաց. «Դուք փա-

րիսեցիքդ սովորութիւն ունիք բաժակի և պնակի արտաքինը սրբել, բայց ձեր ներքինը լցուած է յափշտակութեամբ և չարութիւն։»

Պիղատոս, Հրէաստանի հռովմէական կառավարիչը, հրամայեց Ի մահ դատապարտել քանի մի գալիլեացիներ, որոնք կասկածաւոր եղած էին Հռովմայեցւոց տերութեան առջեւ։ Այս Գալիլեացիքը դատապարտուեցան և սպանուեցան տօն օրը եւ նոցա արիւնը խառնուեցաւ զոհերու արեան հետ։ Երբ այս բանը պատմեցին Յիսուսին, պատասխանեց. «Դուք կը կարծէք թէ այս Գալիլեացիքը՝ ուրիշներէն աւելի մեղաւո՞ր են, որ այս մահով մեռան։ Ոչ բնաւ. խմացէք որ, եթէ դուք եւս չապաշխարէք, նոյն կերպով պիտի կորնչիք։»

Այս ժամանակ մի ուրիշ դժբաղդութիւն եւս պատահեցաւ Երուսաղէմի մէջ։ Այն աշտարակը, որ շինուած էր Սելոամի աւազանի մօտ, քանդուեցաւ և տասնութ հոգի սպանեց։ Յիսուս ասաց. «Դուք կը կարծէք, թէ այն մարդիկը, որոնք Սելոամի աշտարակի տակը մնացին, ամենէն մեծ մեղաւորներն էին Իսրայելի մէջ։ Հաւատացէք, որ այդպէս չէ։ Եթէ դուք եւս չապաշխարէք, նոցա նման պիտի կորնչիք։»

Նմանապէս մենք, այսպիսի անցքեր լսելով կամ տեսնելով, պարտական ենք մտա-

ծել, որ եթէ մեզ եւս յանկարծական մահ հասնէ, ինչպէս պիտի ներկայանանք մեր դատաւորին, որ է Աստուած։ Մեր մերձաւորի դժբաղդութիւնը տեսնելով պարտաւոր ենք զգուշանալ և ամեն ժամանակ աստուածային կամաց հետեւիլ, վասն զի չը գիտենք թէ երբ կամ ինչպէս մահը կը հասնի մեզ։

ԼԱ.

Յիսուս կը բժշկէ ձեռքով գօսացեալը։

Մաթ. ԺԲ. 10։ Մարկ. Զ. 1։ Ղուկ. Զ. 6։

ԳԱԼԻԼԻԱՅԻ ճանապարհորդութեան ժամանակ Յիսուս շաբաթ օրը ժողովրդանոցը մտաւ և կ'ուսուցանէր։ Նորա ունկնդիրներու մէջ կար տկար մարդ մի, որոյ աջ ձեռքը այնպէս գօսացած էր, որ ամենեւին չէր կարող գործադրել։ Դպիրները և Փարիսեցիները կընայէին Յիսուսի գործքերուն և կըսպասէին որ շաբաթ օրը մարդ մի բըժշկէ, որ ամբաստանեն իբրեւ պատժոյ արժանի. որովհետեւ նոքա շաբաթ օրը մարդ բժշկելն անգամ պատուիրանի դէմ կը համարէին։

Յիսուս, որ գիտէր նոցա խորամանկութիւնը, դարձաւ եւ ասաց գօսացածին.

«Գ՛ել և մէջ տեղը կանգնէ։» Գօսացածը կատարեց Փրկչի հրամանը, ելաւ և կանգնեցաւ ժողովրդեան առջեւ։ Ամեն բարի մարդ կը ցաւէր այն ողորմելիին վրայ, որ ղուրկ էր այն ձեռքէն, որով իր օրական հացը կը վաստկէր. բայց Փարիսեցիք և դպիրք այս զգացմունքը չունէին, միայն հետաքրքրութեամբ կընայէին և կամէին տեսնել, թէ ինչպէս պիտի վերջանայ այս տեսարանը։

Յիսուս ասաց Դպիրներուն և Փարիսեցիներուն. «Ես կը հարցնեմ ձեզ. ինչ պէտք է գործել շաբաթ օրը, բարի՞, թէ չարմարդ փրկել, թէ կորուսանել։» Ամենքը լռեցին, որովհետեւ ոչ կարող էր ասել թէ պէտք չէ շաբաթ օրը բարի գործել և կամ մարդ փրկել։

Յիսուս շարունակեց իր խօսքը. «Եթէ ձեր մէջէն մէկը ոչխար ունենայ և փոսի մէջ ընկնի, միթէ շաբաթ օրն անգամ չըհանէ՞. բայց մարդը ո՞րչափ առաւել է ոչխարէն։» Այս խօսքիս դէմ եւս չըկարացին պատասխան տալ, այլ լռեցին ամօթահար։

Յիսուս կը ցաւէր նոցա քարասրտութեան վրայ, ուստի դարձաւ և ասաց գօսացածին. «Ձգէ ձեռքդ։» Ձգեց նա չորացած ձեռքը և խկոյն միւսի նման առողջ դտաւ։

Դպիրները և Փարիսեցիները, որոնք կը

ջանային Յիսուսի փառքը և համբաւը նը-
ւազեցնել, ժողովրդեան առջեւ մնացին ա-
մօթահար։ Նոքա զայրացան և ժողովրդա-
նոցէն ելնելով կը խորհէին և կը մտածէին
թէ ինչ հնարք գտնեն արդեօք, որ սպանեն
Յիսուս, որ ամենուն բարերար կը հանդի-
սանայ և իրենց յանդիմանական խօսք ան-
գամ չասայ։

Բայց Յիսուս իմանալով նոցա խորհուրդը
հեռացաւ և իւր աշակերտաց հետ միասին
գնաց Գալիլիացւոց ծովի մօտ։

ԼԲ.

Տասն երկու առաքեալներդ։ Մատ. ժ. 1։

Երբ Յիսուս Գալիլիա դարձաւ, վե-
րստին ժողովուեցաւ նորա մօտ մեծ բազ-
մութիւն ամեն կողմէն։ Ոչ միայն Իսրայելի
երկրէն կը ժողովէին, այլ և կռապաշտ քա-
ղաքներէն, Տիւրոսէն և Սիդոնէն, որ տես-
նեն և լսեն Յիսուսի վարդապետութիւնը։
Շատերը կը բերէին իւրեանց հիւանդները
Յիսուսի մօտ, որ և կը բժշկեր։ Շատերը
կը բանային նորա առջեւ իւրեանց ցաւը և
վիշտը եւ մխիթարութիւն կըստանային։
Շատերը կը փափաքէին լսել Յիսուսի քա-
ղցրութիւնները, որով կը խրատեր լինել ա-

ռաքինի և երանելի։ Ողորմածն և մարդա-
սէրն Յիսուս առ ինքն դիմողներէն բնաւ
չէր հեռանար, մինչեւ անգամ մեղաւորնե-
րէն եւս. նա պատրաստ էր ամենուն օգ-
նելու։

Յիսուս Քրիստոս երբեմն միայն կը հե-
ռանար ժողովուրդէն և աշակերտներէն, որ
առանձին աղօթէ։ Մի անգամ բոլոր գիշերը
աղօթելէն զկնի դարձաւ իւր աշակերտնե-
րու մօտ և տեսնելով ամեն կողմէն հաւա-
քուած բազմութիւնը, որ եկած էր իր վար-
դապետութիւնը լսելու, խիստ ցաւեցաւ
այս մարդոց վրայ, որոնք ցրուած էին ինչ-
պէս ոչխարներ առանց հովուի։ Յիսուս
Քրիստոս ասաց իւր աշակերտներուն. "Հունձը
շատ է, իսկ մշակները սակաւ են։ Խնդ-
րեցէք հնձի Տիրոջէն, որ շատ հնձողներ հա-
նէ արտին համար։" Յետոյ իւր մօտ կոչեց
աշակերտները և տասն երկուսը ընտրեց Իս-
րայելի 12 ցեղերուն թուով, որոնք պիտի
քարոզէին Փրկչի վարդապետութիւնը։

Սոքա անուանեցան Առաքեալներ, որոց
անուանքն են — Սիմովն, անուանեալն Պետ-
րոս և Անդրէաս նորա եղբայրը, Յակոբոս
և Յովհաննէս՝ Զեբեդեայ որդիքը, Փիլիպ-
պոս և Բարդուղիմէոս, որ ասդէն յայտնի
է Նաթանայէլ անուանով. Թովմաս և Մատ-
թէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեայ, Զե-

բէոս՝ անուանեալն Թադէոս, Սիմոնի Կա-
նանացի (այսինքն Կանայ քաղաքէն), և Յու-
դա Իսկարիովտացի։ Բայց ի այս տան եր-
կուսէն Յիսուս ընտրեց այլ եւս եօթանա-
սուն աշակերտներ։

Յիսուս երկու երկու առաքեց իւր ընտ-
րածները այս պատուէրները տալով. «Մին-
չեւ սահմանած ժամանակը չհասնի, մի գը-
նաք ամենեւին ոչ Սամարացւոց քաղաքները
և ոչ հեթանոսաց մօտ, այլ յատկապէս գը-
նացէք Իսրայելի տան կորած ոչխարներու մօտ։
Քարոզեցէք նոցա Աստուծոյ արքայութեան
մերձենալը, հիւանդները բժշկեցէք, բորոտ-
ները սրբեցէք, մեռեալները յարուցէք, դե-
ւերը հալածեցէք։ Դուք ձրի ստացաք այս
պարգեւը, ուրեմն ձրի եւս տուէք ուրիշ-
ներուն։ Ճանապարհի համար մի առնէք ձեր
հետ, ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ պղինձ, ոչ հա-
ցով պարկ, ոչ աւելորդ հագուստ, ոչ կօշիկ
և ոչ գաւազան։ Արժան մշակ արժանի է իւր
աշխատանաց վարձին։»

«Երբ մտնէք մի քաղաքի կամ գիւղի
մէջ, իմացէք թէ ո՞վ է ամենէն արժանա-
ւորն, նորա՞ տունը բնակեցէք, մինչեւ այն
տեղէն ելնելն։ Երբ տուն մտնէք, տան տի-
բոջը ողջոյն տուէք այս խօսքերով. «Խաղա-
ղութիւն այս տանս։» Եթէ արժանի է
տունը ձեր օրհնութեանը, իր վրայ կ'իջնէ,

իսկ եթէ արժանի չէ, ձեր օրհնութիւնը
առ ձեզ կը դառնայ։

«Եթէ մէկը ձեզ չընդունէ և ձեր խօս-
քերը չլսէ, այն տանէն կամ քաղաքէն ելլ-
նելու ժամանակ՝ թափ տուէք ձեր ոտներու
փոշին։ Ճշմարիտ ասեմ ձեզ, որ Սոդոմին
և Գոմորին աւելի դիւրին կը լինի գատաս-
տանին օրը քան թէ այն քաղաքին։

«Ես կ'առաքեմ ձեզ ինչպէս ոչխարներ
գայլերու մէջ, ուստի խորագէտ եղէք ինչ-
պէս օձ և միամիտ ինչպէս աղաւնի։

«Ոչ ապաքէն երկու ճնճղուկ մի գանգով
(փոքրիկ դրամ) կը վաճառուին, բայց ա-
ռանց ձեր երկնաւոր Հօր կամքին եւ ոչ
մէկը երկրի վրայ կ'ընկնի. իսկ ձեր գլխու-
մազերն անգամ հաշուած են։ Մի վախնաք,
դուք ճնճղուկներէն աւելի լաւ էք։

«Ով որ ինձ խոստովանի և փառաւորէ
մարդոց առջեւ, ես եւս ինքը կը խոստո-
վանեմ և կը փառաւորեմ իմ երկնաւոր Հօր
առջեւ։ Բայց ով որ ինձ ուրանայ մարդոց
առջեւ, ես եւս ինքը կ'ուրանամ իմ երկ-
նաւոր Հօրս առջեւ։

«Ով որ իւր հայրը կամ մայրը ինձմէն
աւելի սիրէ, նա ինձ արժանի չէ։ Ով որ իւր
որդին կամ աղջիկը ինձմէն աւելի սիրէ, նա
ինձ արժանի չէ։ Ով որ չառնու իւր խաչը
և իմ ետեւէս գայ, նա ինձ արժանի չէ։

«Ով ձեզ ընդունի, զիս կ'ընդունի, ով զիս ընդունի, իմ առաքիչն կ'ընդունի։ Ով որ այս փոքրիկներէն մէկուն բաժակ մի տա-ռըն ջուր տայ իմ աշակերտի անունով, ճըշ-մարիտ և Ճշմարիտն ասեմ ձեզ, նա չը մնար առանց վարձի։»

Յիսուս Քրիստոս այս խրատները վեր-ջացնելով և այն աշակերտները Թողլով, զրա երկու երկու առաքեց, իւր հետ առաւ մնացած աշակերտները և գնաց ուրիշ քա-ղաքներ որ քարոզէ և բարերարութիւն ընէ։

ԼԴ.

Յիսուս Քրիստոս կը յարուցանէ Նայինի այրի կնոջ որդին։ Ղուկ. Է. 11։

ՅԻՍՈՒՍ, երբոր կը ջրջեր Գալիլիայի մէջ, մօտեցաւ մի քաղաքի, որ կը կոչուէր Նային։ Յիսուսին ուղեկից էին իւր աշակերտները և ժողովրդեան բազմութիւնը։ Երբ քաղա-քին մօտեցան, տեսան որ մարդիկ կը տանեն թաղելու մեռած պատանի մի, որ այրի կը-նոջ միամօր որդի էր։ Ընորդի և անօգնական մնացած մայրը արտասուքով և յուսահա-տութեամբ կ'երթար իւր որդու անշունչ դիակի ետեւէն. նմանապէս ցաւակից քա-ղաքացիներէն շատերը կ'երթային նորա հետ։

Յիսուս շատ ցաւեցաւ մօր տրտմութեան վրայ և ասաց. «Մի լար.» յետոյ նշան տը-ւաւ մարմինը տանողներուն որ կ'անգնին, և նոքա հնազանդեցան։ Փրկիչը մօտեցաւ դիակին և ասաց. «Պատանի, քեզ ասեմ, ել, կանգնէ։» Մեռեալն իսկոյն կենդանա-ցաւ, նստաւ և սկսաւ խօսիլ։ Յիսուս յան-ձնեց պատանին իւր մօրը։ Այս հրաշքը տեսնողները ամենքը զարհուրեցան, ամեն-քը կը փառաւորէին զԱստուած և կ'ասէին. «Մեծ մարգարէ յայտնուեցաւ մեր մէջ և տէրը այցելութիւն ըրաւ իւր ժողովրդին։» Այս հրաշագործութեան համբաւը տարա-ծուեցաւ բոլոր Հրէաստանի և շրջակայ եր-կիրներու մէջ։

ԼԴ.

Յովհաննէս Մկրտիչէն դրկուածները Յի-սուսի մօտ։ Մատթ. ԺԱ. 2։ Ղուկ. Է. 18։

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ, այս մեծ սուրբ մարդը արդիլուած էր բանտի մէջ։ Թանտարդելու-թեան պատճառը յետոյ պիտի յայտնենք։ Յովհաննէսի աշակերտները երբեմն այցե-լութեան կ'երթային բանտի մէջ, ուստի և պատմեցին այն հրաշքները, զոր Յիսուս կը գործէր։ Յովհաննէս ղրկեց Յիսուսի մօտ

իւր երկու աշակերտները և պատուիրեց որ հարցնեն. «Դու այն ես արդեօք որ պիտի գայ, թէ ուրիշին սպասենք։» Յովհաննէսի աշակերտները եկան և տեսան որ Յիսուս շրջապատուած է խեղճերու բազմութենէն։ Ով որ հաւատով նորա մօտ կու գար, կը բժշկէր, կը մխիթարէր և կ'ուսուցանէր։ Երբ աւարտեց Յիսուս իւր գործը՝ ասաց Յովհաննէսի աշակերտներուն. «Գնացէք պատմեցէք Յովհաննէսին ինչ որ ձեր աչքով տեսաք։ Ահա կոյրերը կը տեսնեն, կաղերը կ'ընթանան, բորոտները կը սրբուին, խուլերը կը լսեն, մեռեալները յարութիւն կ'առնեն և աղքատները կ'աւետարանուին։ Երանելի է նա, որ չը գայթակղիր իր վրայ։» Երբոր Յովհաննէսի աշակերտները գնացին, Յիսուս սկսաւ խօսիլ ժողովրդեան հետ Յովհաննէս Մկրտչի վրայ և ասաց, «Ի՞նչ գնացիք տեսնելու անապատի մէջ. եղէգն որ հողմէն կը շարժի։ Ի՞նչ գնացիք տեսնելու, արդեօք փափկութեան հանդերձներով զարդարուած մարդ։ Ի՞նչ գնացիք տեսնելու, արդեօք մարգարէ։ Այո՛, ասեմ ձեզ, նա առաւել է քան զմարգարէ։ Նա այն է, որուն համար գրուած է. Ահա կը զրկեմ քո հրեշտակը քո առջեւ, որ յարդարէ (պատրաստէ) քո ճանապարհդ։»

Յետոյ սկսաւ Յիսուս ցաւակցութեամբ

նախատել այն քաղաքները, ուր այնքան հրաշքներ գործեց և ապաշխարեցին, ինչպէս էին Քորազին, Բեթսայիդա, Կափառնաում. նախագուշակեց այս քաղաքներու քանդումն և ամայանալն և նոցա բնակիչներու ծանր պատիժը Աստուծոյ դատաստանի օրը։

Այս միջոցին առաքեալները, որոնք քարոզելու ղրկուած էին, դարձան և կը պատմէին Յիսուսին իւրեանց գործոյ յաջողութիւնը և գործած հրաշքները, մանաւանդ այն, թէ դեւերն ալ կը հպատակին իրենց երկնչելով Յիսուսի անունէն։ Բայց Փրկիչը ասաց առաքելոց. «Մի ուրախանաք, որ դեւերը կը հպատակին ձեզ, այլ ուրախացէք, որ ձեր անուններն գրուած են երկնքին մէջ։» Այն ժամանակ Յիսուս ուրախացաւ և ասաց. «Փառք եմ քեզմէն, ով Հայր, երկնքի և երկրի տէր, որ քո գաղտնիքը իմաստուններէն և գիտուններէն ծածկեցիր և յայտնեցիր տղաներուն։ Այո՛, Հայր, այսպէս էր քո կամքդ։ Ամեն բան տուած է ինձ Հայրս, ոչ ոք կը ճանաչէ զՈրդին, բայց միայն Հայրը, իսկ զՀայրն ալ ոչ ոք կը ճանաչէ, բայց միայն Որդին և նոքա միայն, որոց Որդին կը յայտնէ։ Ինձ մօտ եկէք, ով աշխատեալներ և վաստակեալներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ։ Առէք իմ լուծ»

ձեր վրայ և սովորեցէք ինձմէն, որ ես հեզ եմ և սրտով խոնարհ և հանգիստ կը գտնէք ձեր անձանց համար. որովհետեւ իմ լուծս քաղցր է և բեռս փոքրոգի։» Ի՞նչ գեղեցիկ հրաւէր և ի՞նչ թեթեւութիւն վաստակեալներու և աշխատեալներու համար։ Որչափ երջանիկ են այն մարդիկը, որոնք Յիսուսի քաղցր հրաւէրը կը լսեն, աշխարհի ծանր լուծը կը թօթափեն և փրկչական քաղցր լուծը իւրեանց վրայ կ'առնուն։

Լ Ե.

Սերմանացանի եւ հունձի առակը։

Մատ. ԺԳ. 4։ Մարկ. Դ. 5։ Ղուկ. Ը. 5։

ՅԻՍՈՒՍ միանգամ կանգնած էր Գենեսարէթի ծովեզրին վրայ և կը քարոզէր. իսկ ժողովուրդը մեծ բազմութեամբ կը հաւաքուէր նորա մօտ. Յիսուս նստաւ նաւակի մէջ և սկսաւ ուսուցանել առակներով. —«Մէկ սերմանահան ելաւ սերմանելու, և սերմանելու ժամանակ սերմերէն մի քանիսը ընկան ճանապարհի վրայ և ոտնակոխ եղան անցաւորներէն և կամ կերակուր դարձան թռչնոց. միւսները ընկան ապառաժի վրայ, ուր շատ հող չը կար, որ արմատ բռնեն, և թէպէտ բուսան, բայց արեգակի տապէն

շուտով չորացան, որովհետեւ արմատ չունէին։ Մի քանիսը ընկան փուշերուն մէջ և պտուղ չը տուին, որովհետեւ փշերէն խեղդուեցան. բայց ոմանք ընկան լաւ երկրի վրայ և արդիւնաւոր պտուղ տուին, մի քանիսը հարիւրաւոր, միւսները վաթսնաւոր և ոմանք երեսնաւոր։ Ով որ ականջ ունի լսելու, թող լսէ։» Այս խօսքն եւս աւելցուց Յիսուս առակին վրայ։

Աշակերտները խնդրեցին Յիսուսէն, որ մեկնէ այս առակը և նա սկսաւ մեկնել այսպէս. «Սերմն է Աստուծոյ խօսքը։ Ճանապարհի վրայ ընկած սերմերը կը նշանակեն Աստուծոյ այն խօսքերը, որոնք քարոզուած են, բայց այնպիսի մարդիկ կան, որոնք քարոզածը կը լսեն. բայց այնքան բթացուցած են իրենց միտքը և զգացմունքը, որ չեն հասկանար. ուստի և սատանան դիւրութեամբ կը խլէ նոցա սրտերէն ցանած սերմունքը։ Ժողով ծածկած ապառաժը կը նշանակէ այն մարդկանց սրտերը, որոնք Աստուծոյ խօսքը ուրախութեամբ կը լսեն և կ'ընդունեն, բայց չեն թողուր արմատ բռնելու, վասն զի, երբ նեղութեանց և հալածանաց կը պատահին, շուտով կ'ուրանան իրենց ճշմարիտ հաւատը և փորձանաց ժամանակ կը մոռանան Աստուծոյ խօսքերը և պատուէրները։ Փշերու մէջ ընկած սեր-

մերը կը նշանակեն Աստուծոյ խօսքը, որ քաջրողջուած է այնպիսի մարդկանց, որոնք թէ և կ'ընդունին, բայց աշխարհային հոգսերով և մեծութեան պատրանքներով կը խեղդեն այն ազնիւ սերմերը, ուստի և ոչ կ'աճին և ոչ պտուղ կու տան։ Իսկ պտղաբեր երկրի մէջ ցանուածը կը նշանակէ այն մարդկանց սրտերը, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն, ուրախութեամբ կը հասկանան և իրենց սրտի մէջ կու պահեն, որ և պտուղ կուտայ երբեմն հարիւր, երբեմն վաթսուն և երբեմն երեսուն։»

Յիսուս Քրիստոս ուրիշ առակ մի եւս ասաց ժողովրդին.— «Երկնքի արքայութիւնը նման է այն մարդուն, որ բարի սերմը ցանեց իւր ագարակին մէջ։ Բայց մինչդեռ պահապանները քնացած էին, եկաւ թշնամին և որոմն (վատ բոյս) ցանեց ցորենի մէջ։ Ցորենը բուսաւ, նմանապէս բուսաւ և որոմն։ Ծառայքը գնացին իւրեանց տիրոջն ասացին. «Տէր, դու բարի սերմն ցանեցիր ագարակիդ մէջ, որոմն ուստի՞ է գոյացեր։» —Տէրը պատասխանեց. «Որոմն իմ թշնամիս է ցաներ։» —Ծառայքը ասացին. «Թոյլ տուր մեզ որ գնանք և որոմները քաղենք։»— «Ոչ, պատասխանեց տէրը, գուցէ պատահի որ որոմը քաղած ժամանակ՝ ցորենը եւս արմատէն խլէք։ Այժմ թողէք, որ երկուքը

միասին աճին, իսկ յետոյ հունձի ժամանակ ես կը պատուիրեմ հնձողներուն որ որոմը հաւաքեն, միասին կապեն և կրակը ձգեն, իսկ ցորենը կը ժողովեմ շտեմարանիս մէջ։»

Աշակերտները ասացին. Տէր, մեկնէ մեզ որոման առակը։

Փրկիչը ասաց աշակերտներուն. — «Բարի սերմն ցանողն մարդոյ Որդին է (Յիսուս Քրիստոս,) ագարակը աշխարհս է. ցորենը արքայութեան որդիքն են, որոմն՝ չարութեան որդիքը. իսկ որոմն ցանող թշնամին՝ սատանան է։ Հնձողները հրեշտակներն են և հունձք աշխարհիս կատարածը։ Ինչպէս որ որոմը կը ժողովեն և կ'այրեն կրակի մէջ, նոյնպէս եւս կը լինի աշխարհիս կատարածին։ Մարդոյ Որդին պիտի ղրկէ իւր հրեշտակները, որ անօրէնութիւն գործողները ժողովեն կրակի մէջ ձգեն, որ լան և իրենց ատամները կրճտեն. իսկ արդարները և պատուիրանապահները կը ծագեն ինչպէս արեգակն՝ արքայութեան մէջ։ Ով ականջ ունի լսելու, թող լսէ։»

ԼԶ.

Փրկչի մի քանի առակները։ Մատթ. ԺԳ. 51։
Մարկ. Դ. 50։ Ղուկ. ԺԳ. 18։ — ԺԵ. 4։

ՅԻՍՈՒՍ կ'ասէր. «Ի՞նչ բանի նմանեցրնեմ երկնքի արքայութիւնը և ինչպէս նը-կարագրեմ ձեզ համար։ Երկնքի արքայութիւնը նման է մանանեխի հատին, զոր կը ցանէ մարդ իւր ագարակի մէջ։ Այս հատը ամենափոքրիկ սերմերէն մէկն է, բայց երբ աճի, կը լինի ամեն բանջարներէն բարձրը, այնպէս որ թռչունները նոքա հովանեաց տակ կը հանգչին։»

Այսպէս ահա ամեն բարի բան կրսկսի մարդուս մէջ անշմարելի կերպով. բայց երբ արմատ կը բռնէ, կը գործէ մեծ և երեւելի առաքինութիւններ։ Իսկ ընդ հակառակն չարութիւնը եւս մարդու սիրտը կը մտնէ անշմարելի կերպով. բայց արմատանալով կը խեղդէ ամեն բարի զգացմունք եւ մարդը չարագործ կը լինի։ Ուստի մարդ ամեն փոքրիկ բանէ պիտի զգուշանայ։ Վնաս է որ իւր սրտին մէջ սնուցանէ սեր առ բարին և ամենափոքր պատահման մէջ անգամ պարտաւոր է հաստատ մնալ առաքինութեան և բարեպաշտութեան պատուէրներուն մէջ. Պարտական է նա չա-

ղութեան ամենափոքր ցանկութիւնն անգամ իւր սրտէն ջնջել և փորձութիւնէ փախչիլ։ Այս է երկնային արքայութեանը արժանանալու միջոցը և ճանապարհը։

Փրկիչը շարունակեց. «Երկնքի արքայութիւնը նման է այն խմորին, զոր կինը խառնելով երեք գրիւ (չափ) ալիւրի հետ՝ կը թողու, մինչեւ որ ամենը խմորուի։»

Փոքր խմորը խառնուելով շատ ալիւրի հետ՝ բոլորը կը խմորէ։ Այս խմորուած հացէն կը շինուի աճեցուն և բարեհամ հաց։ Այսպէս Փրկչի խօսքերը պիտի մտնեն մեր սիրտը, որ արժանանանք երկնային արքայութեանը։ Բայց եթէ մենք չարութեանը տեղի կու տանք, որ մեզ վայ թագաւորէ, նա խմորի պէս կը տիրէ մեր սրտին և բարի զգացմանց համար տեղ չը թողուր։

Յիսուս կ'ասէր. «Երկնքի արքայութիւնը նման է ագարակի մէջ ծածկուած գանձի։ Ով որ գտնէ այն գանձը, կ'աճապարէ և ուրախութեամբ կը վաճառէ ամեն բան, ինչ որ ունի, որ ծախու առնէ երկրի այն մասը, ուր գանձը ծածկուած է։»

Մենք պարտական ենք ամեն բան զոհել Քրիստոսի վարդապետութեանը հաւատարիմ մնալու համար։ Պարտական ենք նոյն վարդապետութիւնը պահպանել ինչպէս ամենաշնիւ գանձ, որ կարողէ տալ մեզ երա-

նութիւն և յաւիտենական կեանք։

Մի և նոյն խրատը կը պարունակուի նը-
մանապէս և յետագայ առակի մէջ։

«Երկնքի արքայութիւնը նման է մար-
գարիտ գնող վաճառականի։ Այն վաճա-
ռականը երբ թանկագին մարգարիտ մի կը
գտնէ, իր բոլոր ունեցածը կը վաճառէ և
այն մարգարիտը կը գնէ։»

«Երկնքի արքայութիւնը նման է ուռ-
կանի, որ ծովին մէջ ձգուած է։ Որոնց մէջ
կը ժողովուին ամեն տեսակ ձկներ։ Բայց
երբ կը լցուի ուռկանը, ջուրի ափը կը հա-
նեն, լաւ ձկները կ'ընտրեն ամանի մէջ կը
դնեն, իսկ վատերը կը ձգեն ի բաց։ Այս-
պէս պիտի լինի աշխարհիս կատարածին։
Հրեշտակները պիտի արդարները մեղաւոր-
ներէն բաժանեն եւ մեղաւորները կրակի
մէջ ձգեն, ուր պիտի լան և ատամները
կրճտեն։»

Պատմենք մի քանի առակներն եւս։

«Եթէ մարդ եթէ հարիւր ոչխար ունե-
նայ և մէկը կորցնէ, արդեօք չը թողնիր ա-
նապատի մէջ իւր բոլոր հօտը՝ կորուսուա-
ծը որոնելու և գտնելու համար։ Իսկ երբ կը
գտնէ, կ'ուրախանայ, իւր ուսին վրայ կը դնէ
և տուն կը բերէ, կը կոչէ իւր բարեկամները

և դրացիները և կ'ասէ. «Ուրախացէք ինձ
հետ, ես գտայ իմ կորուսեալ ոչխարը։»

Ինչպէս բարի հովիւը կը փնտռէ իւր կո-
րած ոչխարը, նոյնպէս և մեր Փրկիչը կը կո-
չէ ամեն մեղաւորները ապաշխարելու։ Ինչ-
պէս հովիւը կ'ուրախանայ իւր կորած ոչ-
խարը գտնելու համար, նոյնպէս և մեր երկ-
նաւոր Հայրը կ'ուրախանայ մեղաւորի ա-
պաշխարելուն համար։

Եթէ կին մի տասն դրամ ունենայ եւ
մէկը կորցնէ, ոչ ապաքէն խնդոյն կը վառէ
իւր լապտերը, կը փնտռէ տան անկիւնները
մէջ և սենեակը կ'աւլէ, որ կորած
դրամը գտնէ։ Իսկ երբ գտնէ, կը կոչէ
իւր բարեկամները և դրացիները և կ'ասէ.
«Ուրախացէք ինձ հետ, կորուսեալ դրամն
գտայ։»

Այս համեմատութիւնը մեկնելու հա-
մար՝ Յիսուս ասաց. «Այսպէս եւս հրեշ-
տակները երկնքի մէջ կ'ուրախանան մեղա-
ւորի դարձի համար։»

Եթէ ձեզմէ մէկը ունի մշակ մի որ կը
մշակէ նորա ագարակը, կամ կ'արածէ նորա
հօտը, շնորհակալութիւն կը մատուցանէ՞
արդեօք այն մշակին, երբ օրական աշխա-
տանքէն յետ դառնայ և կամ կը վարձատրէ՞,
որ տիրոջ հրամանը կատարած է անթերի։
Կարծեմ թէ, ոչ։ Այսպէս եւս, երբ

անթերի կատարէք դուք ձեր պարտաւորութիւնը, չը պարծենաք, այլ ասացէք. «Մենք, ինչպէս հրամանակատար ծառաներ, կատարեցինք մեր պարտքը, կատարեցինք այն, ինչ որ պարտական էինք կատարելու։»

«Այն ծառայն, որ գիտէ իւր տիրոջ կամքը և չը կատարեր, խստութեամբ կը պատժուի. իսկ նա, որ չը գիտէ տիրոջ կամքը և չը կատարեր, սակաւ պատիժ կը տանայ։ Ում շատ տրուած է, շատ կը պահանջուի. իսկ ում որ սակաւ տրուած է, սակաւ կը պահանջուի։»

Ամեն մարդ պարտական է ուսանիլ և ճանաչել Աստուծոյ կամքը և սիրով կատարել։ Որչափ թշուառ են ուրեմն այն մարդիկը, որոնք Աստուծոյ կամքը չը գիտեն. և որչափ թշուառագոյն են նոքա, որ գիտեն և չեն կատարեր։

«Եթէ ձեզմէն մէկը կամենայ մեծ շինուածք մի կառուցանել, առաջուց չը հաշուէր արդեօք թէ որքան ծախք կ'երթայ, և կամ ինքն այնքան կարողութիւն ունի՞, որ հիմն արկանելէն յետոյ չատիպուի շինուածքը անկատար թողուլ և ծաղր լինիլ մարդկան, որոնք անշուշտ պիտի ասեն. «Ահա այս մարդը սկսաւ շինք կառուցանել, բայց կարողութիւն չունի, որ 'ի կատար հասուցանէ։»

«Կամ ո՞ր թագաւորը պատերազմ ունենցած ժամանակ առաջուց չը հաշուեր, թէ արդեօք իւր տասն հազար զօրքով կարո՞ղ է ընդդիմանալ թշնամւոյն քսան հազարին, թէ ո՛չ։ Երբ տեսնէ թէ կարող չէ ընդդիմանալ, պատգամաւորներ կը ղրկէ և խաղաղութիւն կը խնդրէ։»

«Եթէ ձեզմէն մէկը այնքան հաստատուն կամք չունի, որ կարենայ իւր ամեն բանը թողուլ և իմ ետեւէս գալ, նա կարող չէ՛ իմ աշակերտս լինիլ։»

Յիսուսի Ճշմարիտ աշակերտը, Ճշմարիտ քրիստոնեայն, ամեն ժամանակ պարտական է պատրաստ լինիլ և ատուածային սիրոյ համար ամեն բան ուրախութեամբ թողուլ։ Վա՜ն զի՜ ով որ այս պատրաստութիւնը չունի և ուրիշ բաները Աստուծմէ աւելի կը սիրէ, այս կը նշանակէ որ նա Աստուծոյ պաշտօնը և սէրը ուրիշ առարկաներու տրուած է և հեռացած է Քրիստոսի աշակերտութենէն։

Լէ.

Մի քանի խրատական առակներ, որոնք կ'ուսուցանեն, թէ աղօթքը շատ կարեւոր է մարդուն եւ ամեն ճշմարիտ աղօթք միշտ չնչին կը չինի։ Ղուկ. ԺԸ. 2։

Տէրը ասաց. «Խնդրեցէք՝ և պիտի տըրուի ձեզ. փնտռեցէք և պիտի գտնէք. զարկէք (դռռը) և պիտի բացուի ձեզ։»

Մէկ մարդ մի բարեկամ ունէր, և մի անգամ գիշերը եկաւ նորա մօտ և ասաց. «Բարեկամ, երեք հաց տուր ինձ, վասն զի հեռու տեղէ ծանօթ մի եկած է մօտս և ես կերակրելու բան չունիմ։» Բարեկամը պատասխանեց. «Մի տաղտկացներ զիս, ես դուռս փակեր եմ, որդիքս կը քնանան, ես չեմ այժմ կարող ելնել և հաց տալ քեզ։» Իսկ աղաչաւորը դրան եռեւը կանգնած անդադար կը բախէր և հաց կը խնդրէր։ Այն ժամանակ բարեկամը ասաց. «Եթէ ոչ բարեկամութեան համար, գոնէ ձանձրութենէ ազատուելու համար ելնեմ տամ, ինչ որ կը խնդրէ։»

Քրիստոս այլ առակով եւս կը յորդորէր իր ունկնդիրները որ աղօթքէ չը ձանձրանան։

Նա կ'ասէր. «Մի քաղաքի մէջ կար մի դատաւոր, որ ոչ Աստուծմէ կ'երկնչէր և

ոչ մարդիկներէ կ'ամաչէր։ Այն քաղաքի մէջ կը բնակէր նոյնպէս մի այրի կին, որ կը գանգատէր իւր թշնամիէն և պաշտպանութիւն կը խնդրէր դատաւորէն։ Դատաւորը երկար ժամանակ ականջ չէր դներ այրի կնոջ խնդրուածքին, և վերջապէս ասաց ինքն իրեն. «Եթէ աստուածային երկիւղն ու մարդասիրութիւն անգամ զիս չը պարտաւորեն այրի կնոջ արդարութիւնը պաշտպանելու, գոնէ ձանձրութենէ ազատուելու համար ստիպուած եմ կնոջ խնդրուածքը կատարելու, որ միւս անգամ չաշխատեցնէ զիս։» Եթէ անսիրտ դատաւորը լսեց այրի կնոջ խնդրուածքը, միթէ բարեգութն Աստուած չը լսէր իւր ընտրեալներու աղօթքը, որոնք գիշեր և ցորեկ կ'աղօթեն։ Միթէ Աստուած առանց պաշտպանութեան կը թողու արդարութեան համար զրկանք կրողները։ Ճշմարիտն ասեմ ձեզ, որ Աստուած շուտով օգնութեան կը հասնէ և իւր ծառայից խնդրուածքը կը կատարէ։ Ուստի՝ ամեն աղօթող 'ի բոլոր սրտէ վստահ պիտի լինի Աստուծոյ ողորմածութեան և մարդասիրութեան վրայ, և երբեք աղօթքէ չը պիտի ձանձրանայ։ Աստուած այնպիսի ճանապարհով կը կատարէ մեր խնդրուածքը և այնպէս կը պահէ մեր օրինաւոր բաղձանքը, որ մեր ցանկացածէն շատ աւելի կը լինի։

Միայն այս հարկաւոր է, որ մեր խնդրուածքները Աստուծոյ կամքին համաձայն լինին, ապա թէ ոչ՝ անկատար կը մնան. վասն զի ինքն ասած է. «Կը խնդրէք և չէք առնուր, որովհետեւ չարաչար կը խնդրէք.» այսինքն, իմ կամքէն արտաքոյ բաներ կը խնդրէք։

ԼԸ.

Ապաշխարող մեղաւոր կինը։ Ղուկ. Է. 31։

ԻՍՐԱՑԵԼԱՑԻՔ ճաշի կամ կերակուր ուտելու ժամանակ շատ բաներու մէջ զանազան սովորութիւններ ունէին։ Օրինակի համար, հիւրի ոտքերը կը լուային, հոտաւէտ ծխանելիքներ կը ծխէին, անուշահոտ նիւթեր կը սրսկէին, և այլն։ Այն երկիրներու բնակիչները կօշկի կամ մաշկի տեղ կը հագնէին հողաթափ, և որովհետեւ ոտքերը առանց ծածկուելու կը մնային, ուստի եւ շուտով կը փոշոտուէին և շատ կ'աղտոտուէին։ Իսրայելացիք, որոնք մաքրութիւն շատ կը սիրէին, ճաշէն առաջ հիւրերու ոտքերը և ձեռքերը կը լուային, ու գլուխը իւղով կ'օծէին։ Իսկ հարուստները փոխանակ ձիթապտղի իւղին, որ այն երկրի մէջ սովորական էր, հիւրերու համար կը պատրաստէին անուշահոտ օծանելիքներ։

Փարիսեցիներէն մէկը, Սիմոն անունով, աղաչեց որ Յիսուս իւր հետ հաց ուտէ, և Փրկիչը՝ Փարիսեցւոյ տունը մտնելով սեղան բազմեցաւ։ Այն քաղաքին մէջ կին մի կար, զոր ամենքը կ'ատէին, որովհետեւ մեղաւոր էր։ Բայց այս կինը, ճանաչելով զՅիսուս, մեծ յարգանք ցոյց տուաւ, իւր մեղքը ապաշխարելով։ Երբ լսեց, որ Յիսուս փարիսեցի Սիմոնի տունն է, շուտ այն տեղ գնաց հոգեւոր սղոմութիւն եւ մխիթարութիւն գտնելու համար։ Երբ որ տուն մտաւ, առանց խօսելու, Յիսուսի ոտներն ընկաւ և սկսաւ արտասուք թափել։ Իւր յորդ արտասուքով Յիսուսի ոտները կը թանար (կը թրջէր) իր երկար մազերովը կը սրբէր և կը համբուրէր։ Այս կինը բերած էր մի շիշ ալնիւ իւղ, որով օծեց Փրկչի ոտները։

Փարիսեցին, որ Յիսուսը մեծարած էր, լուութեամբ կը նայէր այս արարմանը։ Նա պարտաւորութիւն համարած էր յայտնի մեղաւորները առել և ինքն իրեն կ'ասէր. «Եթէ սա (Յիսուս) ճշմարտիւ մարգարէ լինէր, պէտք է որ իմանար, թէ ո՞վ է այս կինը, որ կը համարձակի նորան մօտենալ։ Նա մեղաւոր կին է։»

Արտագէտն Յիսուս, իմանալով նորա խորհուրդը՝ ասաց. «Սիմոն, ես քեզ բան մի

ունիմ ասելու։» — «Այո, վարդապետ, պա-
տասխանեց Սիմոնն։» — Փրկիչը ասաց. «Մէկ
փոխատու ունէր երկու պարտապան։ Ա-
ռաջինը պարտ էր յիսուն դահեկան, իսկ երկ-
րորդը՝ հինգ հարիւր. բայց երկուքն ևս կարո-
ղութիւն չունէին իրենց պարտքը վճարելու։
Փոխատուն երկուսին ևս ներեց իրենց
պարտքը։ Ի՞նչ կը կարծես, երկուսէն որն ա-
ւելի շատ սիրեց իր բարերարը։» Սիմոնն
պատասխանեց. «Այս կարծեմ թէ նա՝ որուն
աւելի ներուեցաւ։» — «Ուղիղ դատեցիր,»
ասաց Փրկիչը։

Փարիսեցին չէր հասկընար, թէ որ բանին
կը վերաբերի այս առակը։ Յիսուս դէպ 'ի
կինը դառնալով՝ ասաց Սիմոնին. «Կը տես-
նես այս կինը։ Երբ ես քո տունդ եկայ, դու
ջուր անգամ չտուիր ինձ, որ ոտքերս լուա-
նամ. իսկ սա անդադար իւր արտասունքով
կը լուայ և իւր մազերով կը սրբէ։ Դու
երբ զիս ընդունեցիր, սովորական համբոյրն
անգամ չտուիր, իսկ սա կը համբուրէ իմ
ոտքերս։ Դու հասարակ իւղով անգամ չ'օ-
ծեցիր գլուխս, իսկ սա թանկագին և անու-
շահոտ իւղով օծեց ոտքերս։ Ուստի և կ'ա-
սեմ քեզ, որ կը ներուին սորա մեղքերը, ո-
րովհետև սա շատ կը սիրէ զիս. իսկ ում
որ սակաւ կը ներուի, նա սակաւ կը սիրէ։»
Յետոյ դառնալով դէպ 'ի կինը ասաց.

«Կը ներուին քեզ մեղքերդ։» Մեղանի մոտ
նստողները սկսան տրտնջալ և միմեանց ա-
սել. «Ո՞վ է սա, որ իրեն կը սեպհականէ
մեղքեր թողնելու իշխանութիւնը։» Բայց
Յիսուս չընայելով նոցա տրտունջին, ասաց
կնոջը. «Բա հաւատքդ փրկեց քեզ, գնա խա-
ղաղութեամբ։»

Այս կնոջ գեղեցիկ օրինակէն կ'ուսանինք,
որ ամէն մեղաւոր, որ զղջայ և արտա-
սունքով Յիսուսի մարդասիրութեանը դի-
մէ, թողութիւն կը գտնէ իւր մեղքերուն։
Նորա ալէկոծուած սիրտը կ'անդորրանայ և
մի անպատում խաղաղութիւն կը տիրապե-
տէ անհանգստութեան տեղ։ Ընդհան-
ութեան շիշը մարդուս սրտի օրինակն է,
իսկ աղնիւ իւղը՝ նորա ջերմեռանդութիւնը։
Ինչպէս այն բեկուած շիշէն, նոյնպէս ևս
մարդու զղջմամբ բեկուած սրտէն անու-շա-
հոտութիւն մի կը դեղանի, որ հաճելի է
Աստուծոյ։ Անուշահոտութիւն մի, որոյ
բուրումն մինչև երկինքը կը ծաւալի։

Լ Թ.

Յիսուս Քրիստոս կը սատէ մրրկին։

Մարկ. Դ. 35։ Ղուկ. Ը. 22։

Մի անգամ, երբ Յիսուս Գենեսարե-
թայ ծովակի մոտ էր, իր աշակերտաց հետ

նաւը մնաւ և ասաց. «Եկէք անցնինք ծովակի միւս ափը։» — Իսկոյն նաւեցին քանի մի նաւերով հանդերձ։ Գնալու ժամանակ Յիսուս քնացաւ։ Երդէն ծովակի կամրջի մէջ տեղը հասած էին և ահա յարեաւ սաստիկ հողմն։ Ծովակը սկսաւ ալեկոծիլ։ Փոքրիկ նաւակը կը ծածկուէր ալիքներէն, իսկ մեծ նաւը վտանգի մէջ էր և Յիսուս կը քնանար։

Աշակերտները սարսափած և Յիսուսի շուրջը ժողովուած զարթուցին ասելով. «Տէր, փրկէ մեզ, կը կորնչինք։»

Յիսուս արթնցաւ, սաստեց սաստկաշունչ հողմին և ալեկոծեալ ծովին և իսկոյն տիրեց խաղաղութիւն։

Այն ժամանակ Յիսուս դառնալով դէպ ի աշակերտները ասաց. «Ո՞ւր է ձեր հաւատը։» Նորա հետ եղողները, երբ նորա մեկ խօսքովը աղատեցան ալեկոծութեան վտանգէն, սկսան իրարու ասել զարմացած. «Ով է սա, որ կ'ինչեսէ հողմերուն և ալիքներուն և նոքա կը հնազանդին և կը հպատակեն։»

Խ.

Փրկչի մի քանի խօսքերը։

Օրինականներուն (Փարիսեցիներէն) մեկը հարցուց Յիսուսին. «Վարդապետ, օրինաց

ո՞ր պատուիրանն է ամենէն մեծն և առաջինը։» Փրկիչը պատասխանեց. «Սիրէ՛ քո Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր անձնովդ և բոլոր մտքովդ. այս է առաջին եւ մեծ պատուիրանն։ Եւ երկրորդ՝ սիրէ՛ նը մանապէս ընկերդ իբր և քո անձդ։ Ընաւել քան զայս չկայ պատուիրան։ Այս երկու պատուիրաններու մէջ կը պարունակին մարգարէից ամեն օրէնքները եւ պատուիրանները։»

Մեկ դպիր, Ճանապարհի վրայ հանդիպելով Յիսուսին, ասաց. «Տէր, ուր որ երթաս, պիտի հետեւիմ քեզ։» Այս դպիրը կը կարծէր թէ՝ Յիսուս պիտի շուտով երկրաւոր թագաւորութիւն ստանայ և կը յուսար որ իր այսպիսի հաւատարմութեան համար ինքն ևս պիտի հարստանայ Յիսուսի շնորհիւ։ Սրտագէտ Յիսուս նորա սրտի մէջ եղածն կը կարդար, ուստի և պատասխանեց. «Աղուէսները որջ ունին և երկնքի թռչունները բոյն, բայց մարդոյ որդին մի տեղ անգամ չունի, որ իւր գլուխը դնէ։» Կամեցաւ ցոյց տալ, որ իւր թագաւորութիւնը աշխարհային թագաւորութիւն չէ և դպիրը չէ կարող իւր մտքի մէջ դրած երկրաւոր բաղձանքին հասնիլ։

Յողովրդէն մեկը ասաց Յիսուսին. «Տէր, հրամայէ՛ եղբօրս, որ բաժանէ ինձ հետ իւր

ստացուածքը։» Յիսուս, չկամենալով աշ-
խարհային բաներու մէջ խառնուիլ պատաս-
խանեց. «Ո՞վ է կացուցեր զիս (դատաւոր
և բաժանարար) որ ձեզ դատեմ և բաժա-
նեմ։» Յետոյ ասաց այս երկու եղբայրնե-
րուն. «Հեռացէք արծաթասիրութենէ. հա-
ղորդութիւնը մարդուն կեանք չըտար։»
Յիսուս նշմարեց իսկոյն որ նոքա իւրեանց
բոլոր սիրտը հարստութեան են ընծայեր.
ուստի և կամեցաւ հասկացնել, որ մարդու
ճշմարիտ կեանքը ստուածպաշտութեան
մէջ է և ոչ թէ արծաթասիրութեան կամ
նիւթապաշտութեան։

Մինանգամ Պետրոս առաքեալը մօտեցաւ
Յիսուսին և ասաց. «Եթէ եղբայրս մեղանչէ
իմ դէմ կամ զրկէ զիս, քանի՞ անգամ
պարտական եմ ներել։ Ներեմ արդեօք եօ-
թըն անգամ։» Պետրոս կը կարծէր թէ եօ-
թըն անգամ ներելը մեծահոգութենէ վեր
բան է։ Բայց Փրկիչը պատասխանեց. «Ոչ
թէ եօթն, այլ եօթն եօթանասուն ան-
գամ պարտական ես ներել։» Այսինքն նե-
րողութեանը չափ և սահման չկայ. ճշմա-
րիտ քրիստոնեայն միշտ պարտական է ներել,
երբ դինքը կը զրկեն։

Յովհաննէս առաքեալը մի անգամ ասաց
Յիսուսին. «Վարդապետ, մենք մի մարդ
տեսանք, որ մեզ հետ չէր շրջեր, և քո ա-

նունովդ դեւեր կը հալածէր։ Մենք արգե-
լեցինք, որ միւս անգամ այս տեսակ գործ-
քեր չը գործէ։» Յիսուս պատասխանեց.
«Ի զուր արգիլած էք։ Ով իմ անունովս հր-
աշք կը գործէ, նա չը չարախօսեր ինձ վրայ.
ով որ մեզ հակառակ չէ, նա մեզ հետ է։»
Կամեցաւ հասկացնել, որ քրիստոնեայք
պէտք չէ աննեղողամիտ լինին, պէտք չէ
պարծին որ իրենք միայն Քրիստոսի ճշմա-
րիտ աշակերտներ են, և հետեւապես պէտք
չէ այլոց բարի գործքերը առ ոչինչ համա-
րեն և արգիլեն։

Մի անգամ, Ժողովրդի բազմութեան
մէջ, մի կին լսելով Փրկչի քարոզութիւնները,
սիրտը ասատիկ շարժեցաւ նորա խօսքե-
րէն։ Նա չափազանց ուրախութենէն սկը-
սաւ աղաղակել. «Երանի այն մօրը, որ քեզ
պահպաներ է իւր որովայնին մէջ և երանի
այն ստինքներուն որ քեզ կերակրեր են։»
Յիսուս պատասխանեց. «Այս պատճառաւ
ահա երանելի են և նոքա, որոնք Աստուծոյ
խօսքը կը լսեն և կը կատարեն։» Յիսուս
կամեցաւ հասկացնել թէ՝ ոչ միայն իւր ծը-
նող մայրն է երանելի, այլ ամեն մարդ, ով
որ Աւետարանի պատուէրները և ճշմար-
տութիւնները կ'ուսանի և Աստուծոյ կամաց
համաձայն կեանք կը վարէ։

Մի անգամ Յիսուս կը քարոզէր իւր

շուրջ հաւաքուած ժողովրդին և ամենքը մեծ ուշադրութեամբ կը լսէին։ Ունկնդիրներու մէջէն մէկը ասաց Յիսուսին. «Ահա եկեր են քո հայրդ և եղբայրներդ և կը փափաքին քեզ տեսնել։» Բայց փրկիչը պատասխանեց. «Ո՞վ է իմ հայրս և իմ եղբայրներս.» և ապա իւր շուրջ ժողովուած ունկնդիրները ցուցնելով աւելցուց. «Ահա իմ հայրս և եղբայրներս։ Որքա՜ ամենքը, որոնք Հօրս կամքը կը կատարեն, են ինձ համար թէ՛ մայր, թէ՛ եղբայրներ և թէ՛ քոյրեր։» Ի՞նչ գեղեցիկ և խորհրդաւոր խօսք։ Ի՞նչքան պարտական են մարդիկ աստուածային պատուէրները անթերի կատարել, որ արժանանան Յիսուսի ընտանութեանը։

Յիսուս միանգամ նստած էր տաճարի գանձանակին հանդէպ և ամենքը կուգային գանձակը նուէր կը ձգէին տաճարի ծախսուց համար։ Շատ հարուստներ մեծամեծ ընծաներ կը բերէին և մի խեղճ կին ձգեց միայն երկու լումայ (ամենափոքր դրամ)։ Այն ժամանակ Յիսուս ասաց իւր աշակերտներուն. «Ճշմարիտն ասեմ ձեզ, որ այս խեղճ այրի կինը ուրիշներէն աւելի տուաւ։ Որքա՜ իրենց աւելորդէն նուէր կուտան Աստուծոյ, բայց սա իւր չքաւորութենէն բոլոր ունեցածն տուաւ։» Յիսուս կամեցաւ ցոյց տալ որ Աստուած մարդու սրտին կը

նայէ և ոչ թէ տուած ողորմութեան՝ շատութիւնը կամ սակաւութիւնը։ Ուստի և ջերմեռանդն սիրտը ամեն ճոխ նուէրներէ նախամեծար է Աստուծոյ համար։

Մի քանի Փարիսեցիներ կը հարցնէին Յիսուսին. «Երբ պիտի գայ Աստուծոյ արքայութիւնը։» Նա պատասխանեց. «Աստուծոյ արքայութիւնը չքդար տեսանելի կերպով։ Չէ կարելի ասել թէ այս տեղէ Աստուծոյ արքայութիւնը կամ այն տեղ, այլ Աստուծոյ արքայութիւնը ձեր մէջն է։»

Փարիսեցիք, որովհետեւ արտաքին և տեսանելի բաներու վարժած էին, կը կարծէին թէ Աստուծոյ արքայութիւնը եւս տեսանելի նշաններ ունի։ Բայց Յիսուս հասկացուց, որ Աստուծոյ արքայութիւնը հոգեւոր է և ով որ ցանկայ կարող է իւր սրտի մէջ գտնել։ Հասկացուց, որ այն մարդիկը արդէն արքայութի՛ն կը վայելեն, որոց սրտի սրբութեան մէջ Աստուած կը բնակի։

ԽԱ.

Յովհաննէս Մկրտչի վրայ։ Մատ. ԺԴ. 3։ Մարկ. Զ. 17։ Ղուկ. Գ. 19։

Հերովդէս, որ կոտորեց Բեթղեհեմի և նորա շրջակայ քաղաքներու և գիւղերու մա-

նուկները, վաղուց արդէն մեռած էր։ Նորա երկիրը չորս մասն բաժնուեցաւ նորա որդւոց մէջ, որոնք արդէն արժանի չը համարուեցան Ինգաւորդ անուան, այլ կը կոչուէին չորրորդապետ։ Նորա մէկ որդին Հերոդէս Ագրիպասը Գալիլիայի չորրորդապետն էր։

Այս Հերոդէսը շատ գերբնական բաներ լսելով Յովհաննէս Մկրտչի վրայ, որ նորա թագաւորութեան մէջ ամենէն նշանաւոր մարդը համարուած էր, կամեցաւ իւր աչքով տեսնել, ուստի և հրամայեց իւր մօտ կոչել։ Հերոդէս կը փափաքէր նորա խրատները լսել, կը պատուէր այս սուրբ մարդը և շատ անգամ նորա խօսքով կը վարուէր։

Բայց Հերոդէս իւր եղբայր Փիլիպպոսի կինը յափշտակեց և հետը ամուսնացաւ։ Յովհաննէսը կը յանդիմաներ զՀերոդէս այս գործի համար և կ'ասէր որ օրինաց դէմ է։ Սակայն Հերոդէս ոչ Յովհաննէսի խօսքը լսեց և ոչ իւր խղճմտանքի ձայնը։ Իսկ Հերոդիա (Հերոդիադա) նոյն ժամանակէն 'ի վեր այնպէս կ'ատէր զՅովհաննէս, որ ամեն կերպով կ'աշխատէր սպանել տալու։ Նա միշտ կը հրապուրէր զՀերոդէս, որ մարգարէն կեանքէ զրկէ։ Բայց սա չէր համաձայներ չարասէր կնոջ կամքին։ Վասն զի ինքը գիտէր Յովհաննէսի սրբութիւնը և կը պատուէր և մանաւանդ կը վախնար

ժողովրդի ապստամբութենէն և խռովութենէն, որոնք զՅովհաննէս Դէպ մարգարէ կը ճանաչէին։ Հերոդիան խնդրուածքով և շողոքորթութեամբ այն աստը հասուց, որ Հերոդէս հրամայեց բանտի մէջ դնել ըստ մարգարէն։ Այս նենգութեամբ չը աւանականացաւ Հերոդիա, և մի ուրիշ հնարք գտաւ իւր չար նպատակին հասնելու։

Մէկ օր Հերոդէսը կը տօնէր իւր ծընընդեան տարեդարձը, և այս պատճառաւ մեծ խնջոյք պատրաստեց իւր պալատական, ներու, զօրավարներու, պաշտօնատարներու և ամեն երեւելի Գալիլեացիներու համար։ Խնջոյքի ժամանակ Հերոդիադայի աղջիկը ներս մտաւ և սկսաւ պարել, թագաւորը ուրախացընելու համար։ Ամեն հանդիսականները հաւնեցան այս աղջկան կաքաւելուն, և Հերոդէս այնքան ուրախացաւ՝ որ ասաց աղջկանը. "Խնդրէ ինձմէն ինչ որ կամիս, ես պատրաստ եմ մինչեւ անգամ իմ թագաւորութեան կէսը քեզ տալ։" Նա երդումով հաստատեց իւր խոստումը։

Աղջիկը գնաց իւր մօր մօտ խորհուրդ հարցնելու՝ թէ ի՞նչ պէտք է որ խնդրէ թագաւորէն։ Մայրը ասաց աղջկանը. "Խնդրէ Յովհաննէս Մկրտչի գլուխը։" Իւր նա դառնալով խնջոյքի դահլիճը՝ ասաց թագա-

ւորին. «Այս կը խնդրեմ քեզմէն, որ հրամայես այս բոպէին Յովհաննէս Մկրտչի գլուխը սկուտեղի (ամանի) վրայ այս տեղ բերելու։»

Թէ և այս ծանր խնդիրը սաստիկ սարսափեցուց Հերովդէսին, բայց որովհետեւ բոլոր հանդիսականաց առջեւ երդուած էր աղջկան խնդիրը կատարելու, ուստի չը կամեցաւ իւր երդումը ժխտել (խօսքը չը պահել)։ Իսկոյն դահիճը ղրկեց, որ բանտը մտնելով Յովհաննէսի գլուխը կտրեց և սկուտեղի վրայ դնելով՝ բերաւ աղջկանը։ Իսկ սա առաւ արիւնաթաթախ գլուխը և տարաւ իւր մօրը։

Օգտուրելի անցք։ Բայց ինչ կարող ենք խելամտել այս տեղէն։ Մէրթ կը տեսնենք որ անօրէնութիւնը յաղթող կը հանդիսանայ առաքինութեան, և երբ կը տեսնենք՝ որ արդարները կը հալածուին, պարտական ենք Աստուծոյ անսուտ խոսքը յիշել. «Այս կեանքէն աւելի ուրիշ լաւ կեանք կայ, ուր մեղքը պիտի պատժուի, իսկ առաքինութիւնը պիտի վարձատրուի։» Վասն զի Աստուած արդարադատ է։ Հերովդիադայի չարագործութենէն պարտիմք տարսափիլ, իսկ Հերովդէսի թեթեւամտութենէն զգուշանալ, որ այնպիսի անմիտ երդումն կամ խոստումն չը տանք,

որ ստիպուինք մեր երդումը պահպանելու համար՝ չարիք գործել։

Խ Բ.

Յիսուս Քրիստոս սակաւ հացով կը յագեցնէ մի քանի հազար հոգիներ։ Մաթ. Ժգ. 15։ Մարկ. Զ. 35։ Ղուկ. Թ. 12։ Յովհ. Զ. 5։

ԵՐԲՈՐԴ անգամն էր, Փրկչի մկրտութենէն զկնի, որ կը մօտենար Պասէքի տօնը։ Յողովուրդը ամեն կողմէն հաւաքուելով Յիսուսի մօտ, ոչ մի բոպէ ազատ չէին թողուր ոչ զՅիսուս և ոչ նորա աշակերտները. ուստի ասաց նա աշակերտներուն. «Գնացէք մի առանձին անապատ տեղ և անդ սակաւ ինչ հանգստացէք։» Ինքն եւս նաւնստաւ և Գալիլեայի ծովակէն անցնելով գնաց անապատ։

Յողովուրդը նկատեց թէ որ կողմը գընաց Յիսուսի նաւակը, և ինքն եւս աճապարեց նոյն կողմը գնալ ոտքով։ Իսկոյն մերձակայ քաղաքներէն և գիւղերէն միացաւ նոցա հետ մեծ բազմութիւն։ Յիսուս, որ ամբոխէն խոյս տուած էր, վերատին տեսաւ որ շրջապատուած է ինքը մեծ բազմութենէ։ Գաղտրութեամբ կ'ընդունէր Յիսուս ամեն եկողները և սարի վրան բարձրանալով այն

տեղէն կը տեսնէր՝ թէ ոչչափ մարդիկ իւր մօտ կը հաւաքուին։ Նա երկար ժամանակ կը քարոզէր Աստուծոյ արքայութիւնը, կը բժշկէր հիւանդները և կ'օգնէր ամենուն, որոնք կարօտ էին նորա օգնութեանը։

Երեկոյին արդէն մայրը մնալու վրայ էր։ Աշակերտները մօտեցան Փրկչին և ասացին. — "Վարդապետ, ժամանակն արդէն անցած է և այս տեղը անապատ է։ Արձակէ այս մարդիկը, որ երթան իրենց համար կերակուր գտնեն մերձակայ քաղաքներէն։"

Յիսուս պատասխանեց. "Հարկաւոր չէ, դուք կերակրեցէք այդ ժողովուրդը։" —Աշակերտները պատասխանեցին — "Ընկալելի է. ո՞ւր կարող ենք մենք այսքան բազմութեան համար հաց գտնել և գնել։"

Յիսուս ասաց. — "Գնացէք, տեսէք, չը կա՞յ արդեօք փոքր ինչ հաց։" Ընդրէաս առաքեալը մօտեցաւ Յիսուսին և ասաց. "Այս տեղ պատանի մի կայ, որ ունի հինգ հաց և երկու ձուկն. բայց այսքան բազմութեան համար ի՞նչ պիտի լինի։"

Բերէ՛ք ինձ մօտ, պատասխանեց Յիսուս, և հրամայեց որ բոլոր ժողովուրդը խոտերու վրայ դաս դաս նստեցնեն։ Երբ ամենքը նստան, իւրաքանչիւր դասակարգին մէջ հարիւր հարիւր եւ յիսուն յիսուն, այնուհետեւ շատ դիւրին էր նոցա թիւը իմանալ։ Այս տեղ կար հինգ հազար հոգի, բաց 'ի կանայքը և մանուկները։

Յիսուս նայեցաւ այս մեծ բազմութեան վրայ, որ հաց և կերակուրն թողած՝ եկած էին իւր քարոզութիւնը լսելու, և առաւ հինգ հացը և երկու ձուկը, աչքերը բարձրացուց դէպ 'ի երկինք, գոհացաւ Աստուծմէ և օրհնեց հացերը և ձկները։ Յետոյ կոտորեց և տուաւ աշակերտներուն որ բաժանեն ժողովրդին։ Ամենքը կերան, ոչչափ կամեցան, և յագեցան։

Փրկիչը հրամայեց աշակերտներուն, որ հաւաքեն հինգ հացէն և երկու ձուկէն մնացած կոտորները, և աշակերտները հաւաքելով՝ լցուցին տասներկու սակաւի։

Ժողովուրդը տեսնելով այս հրաշքը՝ կ'ասէր. "Իրաւի, սա այն մարգարէն է, որուն մենք կրսպասէինք —սա Մեսիան է։" Ամենքը միաբանեցան, որ Յիսուսը Երուսաղէմ տանեն և անուանեն Թագաւոր Իսրայէլի։ Յիսուս ժողովրդեան խորհուրդը հասկանալով՝ անկատելի կերպով առանձնացաւ լերան գլուխը՝ աղօթելու համար։

Յիսուս իւր մարդասիրութեամբը կերակրեց այսչափ մարդիկը, բայց երբ կամեցան նոքա 'ի նշան երախտագիտութեան զինքը թագաւոր անուանել, հեռացաւ, ո-

բովհետեւ նորա թագաւորութիւնը աշխարհային չէր։ Յիսուս հացը բեկանելու ժամանակ գոհացաւ երկնաւոր Հօրէն, ցուցնելով որ իւր կամքը և նորա կամքը մի է։ Յիսուս ցոյց տուաւ նմանապէս, որ մենք ոչ միայն մեր բաղմախորտիկ կերակուրները, այլ ցամաք հացն անգամ գոհութեամբ սրբոտի պիտի ուտենք. վասն զի գոհ սրտով մենք կը պարտաւորենք զԱստուած մեր բոլոր օրինաւոր աշխատանքները օրհնելու և ածեցնելու։

Խ Գ.

Յիսուս կը գնայ ջրի երեսին։ Մատ. ԺԴ. 25։
Մարկ. Զ. 46. Յովհ. Զ. 15։

ՅԻՍՈՒՍ, լերան գլուխը առանձնանալու ժամանակ, պատուիրեց իւր աշակերտներուն իրեն չքսպասել, այլ նաւակ նստիլ և ծովի միւս ափը նաւել. Այս նաւագնացութեան ժամանակ եղաւ սաստիկ և հակառակ հողմն. ծովակը ալեկոծեցաւ և նաւակը վտանգի մէջ էր. Գիշերը հասաւ և մթնացաւ. Աշակերտները հազիւ թէ ծովակի մէջ տեղը հասած էին, յանկարծ տեսան մարդ մի որ կու գար ալիքներու վրայէն

և սարսափելի երկիւղով պաշարուեցան։ Այս մարդն էր ինքն մարդասէր Փրկիչն, որ աշակերտաց սարսափը տեսնելով գոչեց. Ես եմ, մի՛ վախնաք։» Պետրոս առաքեալը ասաց. «Տէր, եթէ դու ես, հրամայէ, որ ես քեզ մօտ գամ ջրի վրայէն։ — «Եկ» պատասխանեց Յիսուս։ Պետրոս նաւակէն ելնելով սկսաւ գնալ ջրի երեսին, բայց երբ տեսաւ իր շուրջը բարձրացած ալիքները, վախցաւ և կը խեղդուէր։ Պետրոս աղաղակեց. «Տէր, օգնէ ինձ, ես կը խեղդուիմ։» Յիսուս իսկոյն ձգեց իւր ձեռքը, բռնեց զՊետրոս և ասաց. «Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար։

Նաքա մտան նաւակի մէջ, մրրիկը հանդարտեցաւ, և շուտով հասան իրենց ցանկացած ափը։ Նոցա հետ նաւողները՝ ամենքը կ'ընկնէին Յիսուսի ոտքերը և կ'ասէին. «Արդարեւ՝ դու Աստուծոյ որդի ես։»

Խ Դ.

Յիսուս Քրիստոս կ'օրհնէ մանուկները։
Մատ. ԺԹ. 1։ Մարկ. Թ. 38։—Ժ. 13։ Ղուկ. Թ. 46։—Ժ. 73։

Ո՛ւ քանի բարեպաշտ մայրեր, երկնաւոր վարդապետի սիրով և հաւատով լցուած, բերին նորա մօտ իրենց երեխայքը և կը փա-

փաքէին, որ օրհնէ։ Բայց աշակերտները ժողովրդի բազմութեան և նեղուածքի պատճառաւ, չէին թողուր մանուկները Յիսուսի մօտ գալու։

Արդասէրն և անմեղն Յիսուս, որ կը սիրէր անմեղ մանուկները, նեղացաւ աշակերտաց վարմունքի վրայ։ Նա ասաց աշակերտներուն.— «Մի արգելուք այդ մանուկները ինձ մօտ գալու. թոյլ տուէք, որ գան, որովհետեւ այդպիսիներուն է երկնքի արքայութիւնը։» Ով որ անմեղ մանկան պէս մաքուր սրտով և հեզութեամբ չընդունէր երկնից արքայութեան վարդապետութիւնը, նա կարող չէ արքայութեան մէջ մտնել։

Յիսուս կ'օրհնէր իւր մօտ եկած ամէն մանուկները, ձեռքը նոցա վրայ դնելով։

Մի անգամ դարձեալ, երբ աշակերտները կը վիճէին թէ ո՞վ է իրենց մէջ մեծն, Յիսուս կոչեց իւր մօտ մի մանուկ և ասաց աշակերտներուն իբրեւ խրատ. «Ով որ այսպիսի մանուկներէն մէկը կ'ընդունի իմ անունովս, նա զիս կ'ընդունի. իսկ ով որ զիս կ'ընդունի, կ'ընդունի նա իմ առաքիչն (ղրկողն)։ Իսկ ընդհակառակն, ով որ գայթակղեցնէ այս փոքրիկներէն մէկը, որոնք ինձ հաւատացած են, աւելի լաւ էր, որ այնպիսի մարդու վզէն քար կախուէր և ծովը ձգուէր։» (Այսինքն անմեղներուն գայթակ-

ղեցնողը գերեզմանի անգամ արժանի չէ)։ «Վա՜յ այն մարդուն, որոյ ձեռքով գայթակղութիւնը աշխարհ կը մտնէ։ Ընկարելի է, որ աշխարհիս մէջ գայթակղութիւն չը լինի. բայց վա՜յ այն մարդուն, որուն ձեռքով որ կը լինի։» «Մի արհամարհէք այս փոքրիկներէն և ոչ մէկը, վասն զի նոցա հրեշտակները միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հօր երեսը։ Այս մարդոյ Որդին այն պատճառաւ աշխարհ եկաւ, որ կորածները գտնէ և կեցուցանէ։»

Յիսուս այս խրատը ինչպէս աշակերտներուն տուաւ, նոյնպէս ամէն մարդու։ Ամէն մարդ պարտական է զգուշանալ, որ գայթակղութեան առիթ չը տայ իւր մերձաւորին, մանաւանդ այն մարդիկը, որոնք առաջնորդ կարգուած են ուրիշներուն, ինչպէս են թագաւորները՝ ժողովրդին, հոգեւոր հովիւները՝ իրենց հօտին, ուսուցիչները՝ իրենց աշակերտներուն, հայրերը՝ իրենց որդւոցը, և այլն։ Վա՜յ այն մեծերուն, որոնք իրենցմէ փոքրերուն գայթակղութեան տեղի կու տան, թէ անվայել վարքով և թէ խօսքով։ Այսպիսի մարդիկը պատասխանատու են ոչ միայն իրենց, այլ և իրենց մերձաւորի կամ ընկերի յանցանաց համար, որուն գայթակղութեան առիթ տուած են։ Եւ ընդհակառակն, երանելի են այն մարդ-

դիկը, որոնք իրենց գեղեցիկ վարքով՝ օրինակ դարձած են իրենց ընկերին և հանած են մոլորութենէ։ Այսպիսիներն ահա կրկնապատիկ վարձու կ'արժանան. և եթէ դայթակղեցողները ծովը ձգուելու արժանի են, մոլորութենէ դարձնողները արժանի են աստուածային գրկախառնութեան։

Խ Ե.

Խրատ հեզութեան եւ Աստուծոյ արքայութեան դժուար ճանապարհին վրայ։ Մաթ. Ի. 20։

ՅԻՍՈՒՍ երկու աշակերտներու, այսինքն Յակոբի և Յովհաննէսի, մայրը մի անգամ իւր երկու որդւոց հետ եկաւ Փրկչի մօտ և ասաց. «Կ'աղաչեմ, կատարէ իմ խնդրուածքս։» — «Ի՞նչ է խնդիրդ։» հարցուց Փրկիչը։ — Դ'թէ մայրը ընկաւ Յիսուսի ոտքերը և կը խնդրէր իւր որդւոց համար՝ ասելով. — «Այնպէս արա, որ քո արքայութեան մէջ իմ որդիքս նստին քո մօտ, մէկը աջ կողմդ, իսկ միւսը ձախ։» Յիսուս պատասխանեց. «Դուք չգիտէք թէ ինչ կը խնդրէք։ Կարող էք դուք արդեօք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ։» Նոքա պատասխանեցին. — «Կարող ենք։»

Այս տեղէն կ'երեւի, որ այս երկու աշակերտաց մայրը չուներ ուղիղ և բարձրախոհ հասկացողութիւն երկնային արքայութեան վրայ. այլ այնպէս կը խորհէր, ինչպէս կը խորհէին նոյն ժամանակի Հրեայքը թոյլ հասկացողութեամբ, այսինքն կը նմանեցնէր երկրաւոր թագաւորութեան, ուր շատ բան կարելի է ձեռք բերել խնդրանքով եւ պաշտպանութեամբ այլոց։ Նա կը կարծէր նմանապէս, որ իւր որդիքը կարող էին բաղդաւոր լինիլ, եթէ անուանի և հարուստ լինէին։ Բայց Յիսուս այլապէս կ'ուսուցանէր։ Ոչ թէ մեծութիւնը և հարստութիւնն են, որոնք մարդն ժառանգ կ'առնեն Աստուծոյ արքայութեանը, այլ հեզութիւնը և առաքինութիւնը։ Ով որ ուրախութեամբ կը խմէ վշտաց և չարչարանաց բաժակը, նա կըստանայ պսակ երկնային արքայութեան մէջ։ Բայց յայտնի է, Փրկիչն ասաց այն աշակերտներուն. «Դուք կարող էք իմ բաժակս խմել, բայց իմ աջ կամ ձախ կողմը նստիլ միայն նոքա կարող են, որոց համար այդ տեղը պատրաստեր է իմ Հայրս։»

Միւս տասն առաքեալները, լսելով Յակոբի և Յովհաննէսի խնդիրը, բարկացան նոցա վրայ։ Յիսուս կոչեց իւր մօտ բոլոր աշակերտները և ասաց. «Ձեր մէջէն ով որ կամի առաջին լինիլ, թող լինի ձեր ամենուն պաշտաւորը. վասն զի մարդոյ Որդին աշխարհ

եկաւ ոչ թէ ուրիշներէն ծառայութիւն ստանալու, այլ ամենուն ծառայելու և իւր անձը շատերու փրկութեան համար դնելու։»

Յիսուսի վարդապետութիւնը և կեանքը ամենուն համար գեղեցիկ օրինակ է։ Քրիստոնէութեան մէջ ամենէն մեծը նա է, որ ամենուն օգտին համար կ'աշխատէ, ամենուն կը սպասաւորէ, և կը ջանայ իւր կեանքը զոհել այլոց երջանկութեան համար։

Խ Զ.

Մեծատուն երիտասարդը։ Մատ. ԺԹ. 16։ Մարկ. Ժ. 17։ Ղուկ. ԺԸ. 18։

Մի անգամ Ճանապարհի վրայ հանդիպեցաւ Յիսուսին հարուստ երիտասարդ մի, որ ընկաւ Փրկչի ոտները և ասաց. «Վարդապետ բարի, ի՞նչ պէտք է գործեմ, որ յաւիտենական կեանք ժառանգեմ։»

Յիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ Բարի կը կոչես զիս. բարին միայն Աստուած է. իսկ եթէ կամիս յաւիտենական կեանք ժառանգել, կատարէ Աստուծոյ պատուէրները։»

«Ո՞ր պատուիրանները,» հարցուց երիտասարդը։—Պատասխանեց Յիսուս. «Պատուիրանները յայտնի են, այն է մի սպանանիր, մի շնար, մի գողանար, մի սուտ վկայեր, պատուէ՛ քո հայրդ և մայրդ, եւ սիրէ՛ ընկերդ ինչպէս քո անձդ։» — «Այս ամենը ես 'ի մանկութենէ կատարեր եմ, պատասխանեց երիտասարդը, ուրիշ ի՞նչ պիտի գործեմ։»

Յիսուս քաղցրութեամբ նայեցաւ նորա վրայ և ասաց. «Այժմ մի բան միայն պակաս է քեզ։ Եթէ կը փափաքիս կատարեալ լինիլ, վաճառէ ունեցածդ և բաժանէ աղքատներուն, այն ժամանակ կըստանաս դանձ երկնքի մէջ։ Յետոյ եկ իմ ետեւէս։»

Երիտասարդը, երբ այս պատուէրը լսեց, տրամեցաւ, որովհետեւ շատ հարուստ էր և կամք չունէր իւր ստացուածքը թողուլ։ Երբ երիտասարդը հեռացաւ, Յիսուս ասաց աշակերտներուն. «Հարուստ մարդուն շատ դժուար է երկնային արքայութեան մէջ մտնել։» Այս խօսքերու վրայ զարմացան աշակերտները, բայց Փրկիչը շարունակեց ասելով. «Ընկարելի է որ երկինից արքայութեան մէջ մտնէ այն մարդը, որ իւր բոլոր յոյսը դրած է իւր հարստութեան վրայ։ Աւելի դիւրին է մալուխին ասեղի ծակը մտնելը, քան թէ հարուստին երկնքի արքայութիւնը։»

Աշակերտները աւելի զարմացան և միմեանց կ'ասէին. «Ուրեմն ո՞վ կարող է փրկ-

կուիլ։» Բայց Յիսուս ասաց. «Ինչ որ անհնարին է մարդոց համար, հնարաւոր է Աստուծոյ համար։» Երիտասարդը իւր բոլոր սիրտը տուած էր իւր հարստութեանը եւ կուռքի նման կը պաշտէր։ Որչափ որ արտաքուստ Աստուծոյ պատուէրները կատարող կը ձեւանար, սակայն իւր սէրը իւր ստացուածքներուն նուիրած էր։ Եթէ այնպէս չը լինէր, նա խոկալն կը թողուր իւր ստացուածքը եւ կ'երթար մարդասէր Փրկչի ետեւէն, որուն մէջ է ճշմարիտ երջանկութիւնը։ Բայց կը տեսնենք որ երիտասարդը՝ փոխանակ ուրախանալու՝ տրտմեցաւ եւ հեռացաւ։ Ուրեմն ճշմարիտ աստուածպաշտութիւնը եւ պատուիրանապահութիւնը այն է, երբ բոլոր սրտով, բոլոր անձով եւ ամեն զոհողութիւն կը պաշտենք։ Իսկ երբ մեր հարստութիւնը մեր աշխարհային ցանկութիւնները եւ վայելքները մեզ համար կուռք չինած ենք եւ մեր սիրտը նոցա նուիրած, այն ժամանակ ունայն է մեր արտաքին պատուիրանապահութիւնը եւ չենք կարող Փրկչի սրբայութիւնը ժառանգել։

Խ Է.

Քանանացի կինը։ Մատ. ԺԵ. 21։

Ի անգամ Յիսուս Սիդոնի և Տիւրոսի սահմաններու մէջ էր, որ Փիւնիկէի ծովեզերեայ երկու մեծ քաղաքներն էին։ Այս քաղաքներու մէկէն եկաւ Յիսուսի մօտ Քանանացի կռապաշտ կին մի և սկսաւ աղաչել այս խօսքերով. «Տէր, Դաւթի որդի, ողորմեա ինձ։ Աղջիկս այսահար է և խիստ չարաչար կը տանջուի։»

Սրտագէտ Փրկիչը կարդաց Քանանացի կնոջ սիրտը և կամեցաւ իրեն շուրջ պատած Իսրայելացիներուն յայտնել նորա հաւատը և ամէնքը ամաչեցնել։ Իսկ կնոջը ամենեւին չը պատասխանեց, կամելով փորձով ցոյց տալ նորա հաւատոյ հաստատութիւնը։

Քանանացի կինը Յիսուսի ետեւէն երթալով անդադար կ'աղաչէր։ Աշակերտները մօտեցան Յիսուսին և ասացին. «Արձակէ այդ կինը, որովհետեւ անդադար կ'աղաղակէ և մեզմէն չը հեռանար։» Յիսուս պատասխանեց. «Ես ղրկուած եմ Իսրայելի կորուսեալ ոչխարներու մօտ։»

Քանանացի կինը մօտեցաւ, ընկաւ Յիսուսի ոտները և ասաց. «Տէր, օգնէ։»

Իսրայելացիք այնչափ կ'ատէին կռապաշտները, որ շուն կը կոչէին։ Յիսուս նոցա մը-

տածութեան եղանակին հետեւելով ասաց Բանանացի կնոջը. «Արդարութիւն չէ մանուկներէն հացը խլել և շուներուն տալ։»
— «Իրաւ այդպէս է, պատասխանեց Բանանացի կինը, բայց շներն եւս կը կերակրուին այն փշրանքներէն, որոնք տէրերու սեղանէն կը թափուին։»

Այն ժամանակ Յիսուս աղաղակեց. «Ով կին, քո հաւատդ մեծ է, թող կատարուի ինչ որ կը ցանկաս. գնա խաղաղութեամբ։»

Այն վայրկենէն նորա աղջիկը ողջացաւ և մայրը երբ տուն դարձաւ, տեսաւ որ աղջիկը բոլորովին ողջ է։

Խ Ը.

Յիսուսի աշակերպութիւնը։ Մաթ. ԺԷ. 1։ Մարկ. Թ. 1։ Ղուկ. Թ. 28։

Յիսուս Քրիստոս իւր հետ առնելով իւր երեք աշակերտները, Պետրոս, Յակոբոս՝ և Յովհաննէս գնաց թափոր լեռն։ Երբ հասաւ լերան գագաթը՝ սկսաւ աղօթել, և աղօթելու ժամանակ այլակերպեցաւ, այսինքն կերպարանքը փոխուեցաւ։ Նորա երեսը արեգակի նման լուսաւորուեցաւ և հանդերձները ծպիտակացան ինչպէս ձիւն։ Յիսուսի մօտ երեւեցան երկու մարդիկ,

երկնային լուսով պատած։ Սոքա էին Մովսէս և Եղիա մարգարէները, որոնք կը խօսէին Տիրոջ հետ այն բանեբու վրայ, ինչ որ պատահելու էր Երուսաղեմի մէջ։

Պետրոս առաքեալը սոյն նորահրաշ տեսլեան վրայ զմայլելով ասաց. «Տէր, լաւ է մեզ այս տեղ մնալ։ Եթէ հրամայես, երեք տաղաւար կը շինենք, մէկը քեզ համար, միւսը Մովսէսի եւ երրորդը Եղիայի համար։» Պետրոս ուրախութենէն չգիտեր թէ ինչ կը խօսէր։

Այս խօսակցութեան ժամանակ եկաւ լուսաւոր ամպ, և այն ամպէն ձայն մի լսուեցաւ, որ կ'ասէր. «Սա է իմ սիրելի որդին, սորան լսեցէք։» Աշակերտները երբ լսեցին այս երկնային ձայնը, զարհուրեցան, ընկան գետնի վրայ և սկսան աղօթել։

Յիսուս մօտեցաւ աշակերտներուն եւ ասաց. «Եղէք, մի վախնաք։» Երբ եկան, միայն տեսան Յիսուսը իւր սովորական կերպարանքով։

Յիսուս պատուիրեց աշակերտներուն, որ այս տեսիլը ուրիշներուն չպատմեն մինչեւ իւր յարութեան օրը։

Խթ.

Ընտանեկան որդին։ Ղուկ. ԺԵ. 11։

Յիսուս Քրիստոս ժողովրդին պատմեց մի անգամ յետագայ առակը։

Մէկ մարդ ունէր երկու որդի։ Կրտսերը ասաց իւր հօրը՝ տուր ինձ ստացուածքիդ մէկ մասը։ Հայրը բաժանեց իւր ստացուածքը իւր երկու որդւոց մէջ և տուաւ կրտսերին ինչ որ իր բաժինն էր։ Այս հարստութեամբ երիտասարդը գնաց հեռաւոր երկիր, և շատ ու զեխ կեանք վարելով բոլոր հայրական ստացուածքը ծախեց եւ վատնեց։

Երբ այն երկրին մէջ սով պատահեցաւ, երիտասարդը արդէն բոլոր կարողութիւնը վատնած լինելով սաստիկ պակասութեան և կարօտութեան մէջ ընկաւ։ Ուստի և ստիպուեցաւ ծառայել մի դեղացու, որ ղրկեց իւր խոզերը արածելու և կերակուր չէր տար։ Երիտասարդը ուրախութեամբ կը ցանկար լցնել իւր քաղցը այն եղջիւրներով (տեսակ ինչ պտուղ) որով խոզերը կը կերակրուէին, սակայն այն ևս չբկար։ Վերջապէս զղջալով՝ ասաց. «Քանի վարձկաններ ունի հայրս, որ հացով կը կշտացընէ, իսկ ես այս տեղ սովամահ կը մեռնիմ։ Երթամ հօրս մօտ և ասեմ. — Հայր, մեղայ

յերկինս և առաջի քո, ես այժմ արժանի չեմ քո որդիդ կոչուելու, ընդունէ զիս ինչպէս քո ծառաներէդ մէկը։» Նա պատրաստուեցաւ և ճանապարհ ընկաւ եկաւ իւր հօր մօտ։ Դեռ շատ հեռու էր, հայրը տեսաւ և գութը շարժուելով իւր դժբաղդ որդւոյ վրայ, նորա առաջը վազեց, փարեցաւ պարանոցին, գրկեց և սկսաւ համբուրել։ Այն ժամանակ որդին ասաց. «Հայր մեղայ երկնքին դէմ և քո առջեւդ, չեմ արժանի քո որդին կոչուելու։» Բայց հայրը նորա խօսքը ընդհատեց և հրամայեց ծառաներուն ամենալաւ հանդերձներ բերել եւ հագցնել որդուն. հրամայեց նոյնպէս մատանին մատը դնել և կօշիկները ոտքերուն։ Պատուիրեց պարարակ եզը մորթել, ուրախութեան խնջոյք կազմել, ուտել և ուրախանալ. վասն զի կ'ասէր հայրը. «Այս իմ որդին որ ես մեռած կը համարէի՝ այժմ ողջացաւ, կորսուած կը կարծէի՝ և այժմ գտնուեցաւ։» Այս ուրախութեան ժամանակ նորա մեծ որդին դարձաւ ագարակէն ուր կ'աշխատէր, և երբ որ նուագարաններուն և երգերուն ձայնը լսեց, հարցուց ծառաներէն մէկուն. — Այս ինչ է։ — Ծառան պատասխանեց. «Եղբայրդ եկաւ և հայրդ հրամայեց պարարակ եզը մորթել և խնջոյք պատրաստել, կամելով ամենուն յայտնել

իւր ուրախութիւնը իւր որդւոյ կենդանութեան և առողջութեան համար։» Այնքան տխրեցաւ երէց որդին, որ չէր ուզեր տուն մտնել, բայց հայրը նորա առաջն եկաւ և աղաչելով համոզեց որ ներս մտնէ։

Երէց որդին պատասխանեց. «Այսչափ տարի է որ ես կը ծառայեմ քեզ հաւատարմութեամբ, կը կատարեմ ամէն հրամանները և սակայն մի ուլ անգամ տուած չես ինձ, որ իմ բարեկամներուս հետ ուրախանայի։ Իսկ եղբայրս, որ ստացուածքներուդ կէսը վատնեց, նորա համար հրամայեցիր մորթել պարարակ զուարակը։» — «Որդեակ իմ, պատասխանեց հայրը, դու միշտ ինձ մօտ ես, և ինչ որ ունիմ քեզ կը պատկանի։ Բայց դու ինքդ այժմ պէտք է ուրախ լինիս, որ քո եղբայրդ կորած էր՝ գտնուեցաւ, մեռած էր՝ կենդանացաւ։»

Այս առակը շատ խորհրդաւոր է և կը պարունակէ իւր մէջ Աստուծոյ անհուն մարդասիրութիւնը։ Այս առակը կը ցուցնէ, թէ ինչպիսի սիրով կ'ընդունի Աստուած դէջացած մեղաւորները։

Ծ.

Ողորմած Սամարացին։ Ղուկ. Ժ. 25։

Մէկ Իսրայէլացի, որ միշտ կը պարապէր Սուրբ Գիրքը կարդալով և օրէնքները սովորելով, եկաւ Յիսուսի մօտ և ասաց. «Վարդապետ, ինչ գործեմ, որ յաւիտենական կեանք ժառանգեմ» Իսրայէլացին հարցուց ոչ թէ Փրկչէն ճշմարտութիւն սովորելու համար, այլ փորձելու. որովհետեւ օրինականները վարժած էին այս տեսակ խնդիրներու առաջարկութեան մէջ։ Յիսուս պատասխանեց. «Ի՞նչ է գրուած օրինաց մէջ. ի՞նչպէս կը կարդաս դու։»

Օրինականը ասաց. «Սիրէ քո Տէր Աստուածդ քո բոլոր սրտովդ, բոլոր անձովդ, բոլոր զօրութեամբդ և բոլոր մտքովդ, և ընկերդ սիրէ ինչպէս քո անձդ։»

Յիսուս ասաց. «Ճշմարիտ պատասխանեցիր. կատարէ այդ և յաւիտենական կեանք կը ժառանգես։»

Օրինականը ամաչեցաւ Յիսուսի պարզ և հասարակ պատասխանէն, և կը փափաքէր խորամանկ հարցմունքով դժուարութեան մէջ պաշարել զՅիսուս և իւր ամօթը ծածկել, ուստի հարցուց. — «Բայց ո՞վ է իմ ընկերս։» Երեւի թէ ինքն այն օրինական

մեկնիչներէն էր, որոնք կը պատուիրէին ընկեր ճանաչել միայն Հրէաները և ոչ թէ ամեն մարդիկ։

Յիսուս, իբրեւ օրինականի հարցմունքին պատասխան, պատմեց յետագայ առակը։ — Մէկ մարդ Երուսաղեմէն Երիքով կ'երթար և աւազակաց ձեռքն ընկաւ, որոնք մերկացուցին, վիրաւորեցին և կիսակենդան թողին ճանապարհի մէջ և իրենք գնացին։

Մէկ քահանայ նոյն ճանապարհէն կ'անցնէր, տեսաւ վիրաւորուածը և անցաւ գընաց։ Նոյնպէս Ղեւտացի մի անցնելու ժամանակ տեսաւ վիրաւորուածը և առանց դթալու՝ հեռացաւ։ Վերջապէս նոյն ճանապարհէն կ'անցնէր Սամարացի մի. սա տեսաւ վիրաւորուածը, դթացաւ, ցաւեցաւ վրան, մօտեցաւ վէրքերը լուաց ձէթով և գինիով, փաթաթեց և գրաստի վրայ դնելով՝ տարաւ պանդոկը եւ մինչեւ միւս օրը կը հոգար և խնամք կը տանէր։ Հետեւեալ օրը, երբ կամեցաւ իւր ճանապարհը շարունակել, կոչեց պանդոկապետը, հիւանդը յանձնեց և երկու դահեկան տուաւ ասելով. "Խնամք տար այս հիւանդին, եթէ իմ տուածէն աւելի ծախք ընես, յետ դարձած ժամանակ կը վճարեմ։"

Այս անցքը պատմելէն զկնի՝ Յիսուս հարցուց օրինականին. "Այս երեք անձինք-

ներէն ո՞րն էր աւելի մերձաւոր աւազակաց ձեռքն ընկած մարդուն։"

Օրինականը պատասխանեց, "Այս, որ դթացաւ և ողորմութիւն ըրաւ։" Այն ժամանակ Փրկիչը պատասխանեց. "Երթա՛ գնա՛ և դու ինքդ մի և նոյնը կատարէ՛։"

Ծ Ա.

Երկու պարտապանների առակը։ Մաթ. ԺԸ. 23։

Յիսուս ասաց. "Մէկ թագաւորերը հաշիւ կրպահանջէր իւր ծառաներէն և կալուածոց վերակացուներէն. ուզեց իւր մօտ ծառաներէն մէկը, որ պարտական էր բիւր (10,000) քանքար։ Իւր որովհետեւ չը կարողացաւ հատուցանել այս գումարը, տերը հրամայեց վաճառել պարտապանը, իր կինը, որդիքը և ստացուածքը, և պարտքը վճարել։ Ծառայն ընկաւ տիրոջ ոտքերը և ասաց. "Փոքր ինչ համբերէ՛ և բոլոր պարտքը կը հատուցանեմ։" Թագաւորը դթացաւ ծառայի վրայ. ազատութիւն շնորհեց և բոլոր պարտքը ներեց։ Երբ ելաւ ծառայն, հանդիպեցաւ իւր ընկերներէն մէկուն, որ իրեն պարտ էր հարիւր դահեկան։ Իսկոյն բռնեց իւր պարտապանը կը խեղդէր և կ'ասէր. "Շուտով վճարէ՛ ունեցած պարտքդ։"

Ընկերը ոտքն ընկաւ և կ՝աղաչէր ասելով. «Շամբերէ՛ և կը վճարեմ։» Բայց պարտատէրը չընայելով պարտապանի աղաչանքին, հրամայեց բանտը դնել և չազատել մինչեւ որ վճարէ։

Թագաւորի ծառաներէն ոմանք այս անցքը տեսնելով շատ տրտմեցան և դնացին Թագաւորին պատմեցին։ Թագաւորը կոչէ՛ ուաւ իւր մօտ չար ծառայն և ասաց. «Խստասիրտ և չար հոգի, ես բոլոր պարտքդ քեզ շնորհեցի՝ աղաչելուդ համար. իսկ դու ինչու՞ ծառայակցիդ չողորմեցար»։ Թագաւորը բարկացաւ և դահիճներու ձեռքը մատնեց, մինչեւ որ բոլոր պարտքը հատուցանէ։

Այս առակը ներողութեան ամենագեղեցիկ օրինակ է։ Եթէ կը ցանկանք մեր մեղքերուն Թողութիւն ստանալ մեր երկնաւոր Թագաւորէն, մենք եւս պարտական ենք մեր ընկերներու յանցանքը Թողուլ, որոնք մեր դէմ մեղանչած են։ Վասն զի առանց մեր ընկերի յանցանքը ներելու՝ անհնար է որ Աստուծմէ Թողութիւն ստանանք մեր մեղքերուն։ Որովհետեւ Աստուծոյ դէմ ունեցած մեր յանցանքները աւելի մեծ են քան Թէ մեր ընկերաց յանցանքը մեր դէմ։

Ծ Բ.

Մաքսաւորը եւ Փարիսեցին։ Ղուկ. ԺԸ. 10։

Յիսուս մի առակ ասաց այն մարդիկներուն համար, որոնք ինքնահաւան են, կը պարծին իրենց առաքինութեան և արդարութեան վրայ և կ՝ատեն սրտաբեկ մեղաւորները։ Յիսուսի առակն էր այս։ — Մէկ անգամ երկու մարդ տաճարը մտան աղօթելու, որոց մէկը Փարիսեցի էր, իսկ միւսը մաքսաւոր։ Փարիսեցին ինքնահաւանութեամբ կանգնած՝ կ՝աղօթէր այսպէս. «Աստուած, շնորհակալ եմ քեզմէն, որ ես յաւիտենական, անիրաւ և շնացող չեմ ինչպէս ուրիշ մարդիկը և կամ այս մաքսաւորը։ Ես շաբաթը երկու անգամ կը պահեմ և իմ բոլոր ստացուածքէն տասանորդ կու տամ։» Իսկ մաքսաւորը հեռու կանգնած, չէր համարձակեր աչքերը երկինքը բարձրացնել և իւր կուրծքը ծեծելով կ՝աղաղակէր. «Աստուած ողորմեա՛ ինձ մեղաւորիս.» այսինքն քաւէ՛ իմ մեղքերս։

Այս առակը պատմելէն յետոյ Յիսուս աւելցուց այս խօսքերը. «Ո՛չ մարիսն ասեմ ձեզ որ այս մաքսաւորը աւելի արդարացած դարձաւ իւր տունը քան Թէ Փարիսեցին։ Ով որ կը բարձրացնէ իւր անձը՝ կը խոնարհի, և ով որ կը խոնարհեցնէ՝ կը բարձրանայ։»

ԾԳ.

Դարձեալ մի քանի առակներ։

Մէկ մեծատուն շատ ցորեն ժողովեց իւր արտերէն և կը մտածէր ասելով թէ՝ պիտի ընեմ, տեղ չունիմ, որ հաւաքած ցորենս ամբարեմ։ Յետոյ ասաց. գիտեմ թէ ինչ պիտի ընեմ, կը քանդեմ շտեմարաններս և աւելի կը մեծացնեմ, կը ժողովեմ նոցա մէջ բոլոր հարստութիւնս և կ՚ասեմ իմ անձին. «Ով անձն, դու այնչափ հարստութիւն ունիս, որ շատ տարիներ քեզ բաւական է, այժմ հանգստացիր, կեր, խմէ և ուրախ լեր։» Բայց Աստուած ասաց այս մեծատանը. «Ընդ միտ, այս գիշեր պէտք է հոգիդ քեզմէն առնեն, ո՞ւմ պիտի թողուս քո հարստութիւնդ։» Այս առակի վրայ աւելցուց Յիսուս յետագայ խօսքերը. Մի և նոյնը պիտի պատահի այն մարդուն, որ աւելի կը հոգայ հարստութիւն ժողովելու՝ քան թէ Աստուծոյ կամքը կատարելու։» Ո՞ւր մարդու ամենամեծ հոգը և ջանքը պէտք է լինի Աստուծոյ կամքը կատարել և ոչ թէ իւր կեանքը և մտածմունքը անցաւոր բաներու վրայ մաշել։

«Մէկ մարդ ունէր երկու որդի, ասաց Փրկիչը։ Նա առաջինին ասաց. —Որդեակ,

գնա՛ աշխատէ այգու մէջ։— Բայց որդին պատասխանեց. —Չեմ երթար, —բայց յետոյ զղջացաւ և գնաց աշխատելու։ Հայրը եկաւ միւս որդւոյ մօտ և ասաց. —Դու՛ նա՛ աշխատէ այգու մէջ։— Նա պատասխանեց. —Ահա՛ կերթամ, —բայց չը գնաց։ Այս երկուսէն ո՞րը կատարեց հօր կամքը։» Ուսանողները պատասխանեցին. Առաջինը։» Այն ժամանակ Յիսուս ասաց Փարիսեցիներուն։ «Ճշմարիտն ասեմ ձեզ, որ մաքսաւորները և մեղաւորները ձեզմէ առաջ պիտի մտնեն երկնից արքայութիւնը։ Յովհաննէս Մկրտիչը եկաւ ձեզ ճշմարտութիւն ուսուցանելու, դուք չը հաւատացիք. իսկ մաքսաւորները և մեղաւորները հաւատացին։ Այժմ եւս դուք կը տեսնէք և չէք ապաշխարեր։»

Յիսուս ասաց. «Մէկ մարդ ունէր իւր այգու մէջ թզենի մի, երեք տարի կըսպասէր, որ պտուղ ստանայ նոյն թզենիէն, բայց չըստացաւ։ Եւ ապա ասաց այգեպանին. Ահա՛ երեք տարի է որ կըսպասեմ պըտուղ ստանալ և չեմ ստանար. կորէ՛ ուրեմն այդ թզենին, որ ի՞նչ՝ տեղ չը բռնէ։— Այգեպանը պատասխանեց. —Մի՛ տարի ևս թո՛ղ, տէ՛ր, ես նորա շուրջը կըփորեմ և աղբով կը պատեմ, կարելի է որ այն ժամանակը պըտուղ բերէ։ Իսկ եթէ չը բերէր, այն ժա-

մանակը հրամայէ որ կարեն։»

Այդու տէրն է երկնաւոր Հայրն, այդեպանն է Աստուծոյ Որդին, իսկ Թղենին է իւրաքանչիւր մարդ։ Աստուած մեզ՝ ստեղծեց, որ պտուղ տանք, այսինքն բարի գործեր գործենք և մեր ժամանակը կամ կեանքը օգտաւէտ քաներու համար գործ դնենք. իսկ եթէ անպտղաբեր ծնանք և 'ի չարն գործ դնենք թէ մեր կեանքը և թէ Աստուծոյ համբերութիւնը, նա այն ժամանակը յաւիտենական տանջանաց կը մատնէ զմեզ։ Ուրեմն մեր կենաց ամեն ժամերը բարի պտուղներով զարդարուած պիտի լինին, որ քրանաթոր այդեպանի, այսինքն մարդասէր Փրկչի թափած արիւնը 'ի զուր չանցնի մեր համար։

Ծ Դ.

Քանքարներու առակը։ Մատ. Իե. 14։

ՅԻՍՈՒՍ ասաց յետագայ առակը. «Մէկ հարուստ մարդ իւր հայրենիքէն օտար երկիր դնալու ժամանակ կոչեց իւր ծառայքը և բաժանեց նոցա մէջ իւր ունեցածը։ Մէկուն տուաւ հինգ քանքար, միւսին երկու, և երրորդին մէկ, իւրաքանչիւրին իր ըն-

դունակութեանը կամ կարողութեանը համեմատ, որպէս զի շահեցնեն իրենց տիրոջ օգտին համար։ Հինգ քանքար ստացողը աշխատեց և հինգ քանքար եւս շահեցաւ։ Նմանապէս և երկու քանքար ստացողը՝ երկու քանքար եւս շահեցաւ։ Իսկ նա որ մի քանքար ստացած էր, գետինը փորեց և քանքարը թաղեց, կարծելով թէ այս կերպով աւելի լաւ կը պահպանէ իւր տիրոջ ստակը։

Մի քանի ժամանակէն յետոյ տէրը իւր հայրենիքը դառնալով՝ ծառաները կոչեց և հաշիւ պահանջեց այն քանքարներու մասին, որ հաւատացեր էր նոցա։ Հինգ քանքար ստացողը ասաց. «Տէր, դու ինձ հինգ քանքար տուիր և ահա քեզ հինգ քանքար եւս վրան շահեցայ։» Տէրը ասաց. «Ապրիս, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ սակաւուն հաւատարիմ եղար, շատի վրայ կը նշանակեմ զքեզ, որ կառավարես։ Մտանակից եղիր ուրեմն տիրոջդ ուրախութեանը։»

Երկու քանքար ստացողը ասաց. «Տէր, դու ինձ երկու քանքար յանձնեցիր, ահա երկու քանքար եւս վրան շահեցայ։»—«Ապրիս, ասաց տէրը, ով բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ սակաւ բանի մէջ հաւատարիմ եղար, ես քեզ շատ բան կը հաւատամ։ Ուրախացիր ուրեմն տիրոջդ հետ միասին։»

Վերջապէս եկաւ նա, որ մէկ քանքար ստացած էր և ասաց. «Տէր, ես քեզ կը ճանաչեմ և գիտեմ, որ խիստ մարդ ես, կը հնձես այն տեղէն, ուր չես սերմանել և կը ժողովես այն տեղէն, ուր չես սփռել։ Ես վախցայ քեզմէն, ուստի և քանքարդ թաղեցի գետնի մէջ, ահա նոյնը կը դարձնեմ քեզ։»

Այն ժամանակ տէրը ասաց. «Չար և ծոյլ ծառայ, եթէ գիտէիր, որ ես կը հնձեմ այն տեղէն, ուր չեմ սերմանել, և կը ժողովեմ այն տեղէն, ուր չեմ սփռել, պարտական էիր ուրեմն իմ քանքարը սեղմանաւորներուն տալ, որ ես եկած ժամանակս շահով ստանայի։ Արդ առէք քանքարը և տուէք նորան, որ տասն քանքար ունի։ Որովհետեւ ունեցողին կը տրուի և կ'աւելնայ, իսկ ով որ չունի և ունենալու փափաք ելս չունի, ունեցածն ելս ձեռքէն կ'առնուի։ Հանեցէք ուրեմն այս անպիտան ծառան արտաքին խաւարը, ուր պիտի լինի լալը և ատամանց կրճտելը։»

Այս առակով կ'ուսուցանէ մեզ Յիսուս, որ մենք պարտական ենք Աստուծմէ մեզ տրուած ընդունակութիւնները և շնորհքները մեր աշխատանքով և ժրաջանութեամբ արդիւնաւորել և ամեն նորա շնորհած պարգեւները օգտակարութեամբ գործածել։

Կ'ուսուցանէ որ մեր աստուածատուր կարողութիւնքը և ընդունակութիւնքը կը բազմապատկին, երբ որ մեր կողմէն ելս կ'աշխատինք և մեր իմացածը ուրիշներուն կ'ուսուցանենք։

Ծ Ե.

Այգիի համար վարձուած մշակներու առակը։

Մաթ. Ի. 1։

Իսրայելացիք կը պարծենային, որ իրենք Ղ վաղուց անտի Աստուծոյ ընտրեալ ազգն են, և կը կարծէին թէ միայն իրենց համար պիտի ծնանի խոստացեալ Փրկիչը։ Նոքա ամենեւին չէին ուզեր հաւատալ, որ կռապաշտներն ելս, այսինքն ճշմարիտ Աստուածը չը ճանաչողները, կարող են Քրիստոսի արքայութիւնը մտնել։ Յիսուս յետագայ առակով կամեցաւ ցոյց տալ թէ ոչչափ անիրաւ և խստասիրտ են նոքա, և ոչչափ ողորմած է Աստուած ամեն մարդիկներու համար, որոնք վաղ թէ ուշ զղջմամբ կը դառնան առ Աստուած։

Յիսուս կ'ասէր. «Երկնային արքայութիւնը նման է տանուտէր մարդոյ, որ առաւօտեան վաղ գնաց մշակներ վարձեց

լուր այգիի համար։ Օրը մէկ դահեկանով վարձեց բանուորները և ղրկեց այգին աշխատելու։ Յամը երեքին և իններին դարձեալ ելնելով ուրիշ պարապ մշակներ եւս գտաւ, վարձեց և այգին ղրկեց աշխատելու։ Վերջապէս, արեւը տակաւին մայրը չը մտած, Յամը տան և մէկին հրապարակի մէջ տեսաւ անգործ կանգնած մարդիկ, հարցուց՝ ինչու անգործ էք մնացեր։ Մշակները պատասխանեցին, — Որովհետեւ մեզ չը վարձեցին։ — Դուք եւս գնացէք այգին, — ասաց տանուտերը, — վարձը բաժանած Յամանակ կ'ըստանաք ինչ որ արժան է։"

Երեկոյեան՝ տանուտերը հրամայեց կառավարչին, որ բոլոր մշակները կոչէ, և ըսկըսաւ նոցա վարձը բաժանել, վերջիններէն սկսելով, որոնք ամենէն յետոյ եկած էին։ Իւրաքանչիւր մշակ ստացաւ մի մի դահեկան, նա և նոքա, որոնք տասնումէկ Յամին էին գնացեր։ Առաջինները գալով կը սպասէին իրը թէ աւելի պիտի ստանան. բայց երբ տեսան թէ իրենցը ուրիշներուն հաւասար է, սկսան տրտնջալ տանտիրոջ վրայ և ասել. "Վերջինները Յամ մի աշխատեցան և այժմ մեզ նոցա հետ կը հաւասարեցնես, որ բոլոր օրուան ծանրութիւնը քաշեցինք և արեգակի տաքութեանը համբերեցինք։" Տանուտերը պատասխանեց մէկուն. "Այս քեզ

չեմ զրկեր, չէ՞ որ դուն ինձ հետ մէկ դահեկանի խօսք կապեցիր։ Առ դուն քեզ պատկանածը և գնա. ես կ'ուզեմ, որ վերջինին եւս այնքան տամ, ինչքան քեզ տուի։ Միթէ ես իշխանութիւն չունիմ իմ սեպհականութեանս վրայ։ Միթէ կը նախանձիս, որ ես առատ եմ։"

Այսպէս պիտի լինի երկնային արքայութեան մէջ։ Առաջինները յետին պիտի լինին, և յետինները՝ առաջին։ Որովհետեւ կոչուածները շատ են, բայց ընտրուածները սակաւ։"

Յիսուս այս առակով կ'ուսուցանէ մեզ, որ մեր կենաց օր Յամանակին մէջ որ զղջանք, դարձեալ Աստուած կ'ընդունէ մեր զղջումը և կը վարձատրէ ապաշխարած մեղաւորները այն երանութեամբ, որ պատրաստած է արդարոց համար։ Բայց որովհետեւ մեր կենաց ոչ մէկ վայրկեանը մեր ձեռքը չէ, և անորոշ է մեր մահուան Յամը, ուստի պէտք է որ միշտ պատրաստ լինինք և չյետաձգենք մեր զղջումը և ուղղութիւնը։ Միշտ պարտական ենք այնպէս վարել մեր կեանքը, որ պատրաստ լինինք Աստուծոյ դատաստանին ներկայանալու։ Այս պատճառաւ է, որ Աւետարանը միշտ պատրաստութիւն և արթնութիւն կը քարոզէ մեզ։

ԾԶ.

Այլոյի առակը։ Մաթ. ԻԱ. 33։ Մարկ. ԺԲ. 1։ Ղուկ. Ի. 9։

ՓՐԿԻՉԸ մի անգամ երբ կը քարոզեր Երուսաղեմի տաճարին մէջ՝ Հրէաներուն ասաց յետագայ առակը։

Մի մարդ այգի տնկեց, ցանկով պատեց, հնձան փորեց, կանգնեց աշտարակ նորա մէջ և այգին յանձնելով մշակներուն՝ ինքն գնաց օտար երկիր շատ տարիներ մնալու համար։

Երբ այգեկութի ժամանակը հասաւ՝ ղրկեց իւր ծառաները, որ երթան մշակներէն պահանջեն խաղողի գինը. բայց մշակները այն ղրկած ծառաներէն մի քանիսը սպանին, մի քանիսը քարկոծեցին և միւսները տանջելով հալածեցին։ Տերը ղրկեց ուրիշ ծառաներ, առաջիններէն աւելի շատ, բայց սոցա հետ եւս նոյնպէս վարուեցան։ Վերջապէս այգիի տերը ասաց. «Ղրկեմ որդիս, կարելի է ամաչեն.» բայց մշակները երբ տեսան որդին՝ ասացին. «Ահա այս է ժառանգը, եկէք սպաննենք և նորա ժառանգութեանը տիրենք։» Իսկոյն բռնեցին ղրկուած որդին, այգիէն դուրս հանին եւ սպանին։

Այս առակը պատմելէն յետոյ Յիսուս հարցուց քահանաներուն և Դպիրներուն. «Երբ այգիի տերը գայ ինչ պիտի ընէ մշակներուն։» Նոքա պատասխանեցին. «Նա պիտի դատապարտէ այն չար մշակները եւ այգին պիտի տայ ուրիշներուն, որոնք իւր ժամանակին պտղոց գինը կը հատուցանեն։» Յիսուս ասաց Հրէաներուն. «Այսպէս ա՞հա ձեզմէն պիտի խլվի երկնքի արքայութիւնը և պիտի յանձնուի այն ազգին, որ պտուղ կը բերէ։»

Քահանայապետները և Դպիրները զգալով, որ այս առակը իրենց կը վերաբերի, կ'ուզէին նոյն ժամին բռնել Յիսուսը, բայց կը վախնային ժողովուրդէն, ուստի ղրկեցին նորա մօտ խորամանկ մարդիկ, որ անզգոյշ խօսք մի հանեն նորա բերնէն և մատնեն քաղաքական կառավարութեան։

Փարիսեցիներուն աշակերտները և Հերովդիանոսները մօտեցան Յիսուսին և ասացին. «Վարդապետ, մենք գիտենք, որ դու ճշմարիտ ես և ոչ ոքի երեսին չես նայիր (այսինքն աշառութիւն չես ըներ,) այլ ճշմարտութեամբ կ'ուսուցանես Աստուծոյ ճանապարհը։ Այսմ մեզ ուրեմն, մենք Հրէաներս պարտակա՞ն ենք արդեօք հարկ տալ Հռովմէացւոց կայսրը։» Յիսուս նոցա խորամանկութիւնը հասկնալով ասաց. «Ինչ

ջու՝ կը փորձէք զիս. ցուցէք ինձ դահեկան մի. որու՞ պատկերը և որու՞ անունն է վրան գրուած»։ Նոքա պատասխանեցին. — Կայսերս։ — «Ուրեմն կայսերը տուէք կայսեր, իսկ Աստուծոյն՝ տուէք Աստուծոյ։» Երբ այս լսեցին, ամենքը զարմացան Նորա իմաստուն պատասխանին վրայ և գնացին։

Իսկ քահանայապետները եւ Դպիրները չէին համարձակեր առանց պատճառի Յիսուսը բռնել. վասն զի նոքա կը վախնային ժողովրդէն, որ զՅիսուս որպէս մարգարէ կ'ընդունէին։

Ծ Լ.

Թագաւորի հարսանիքը հրաւիրուածներու վրայ։

Մաթ. Ի.Բ. 1։ Ղուկ. Ժ.Դ. 16։

Յիսուս ասաց. «Երկնքի արքայութիւնը նման է այն հարսանիքին, որ Թագաւորը պատրաստեց իւր որդւոյ համար։ Նա շատերը կոչեց հարսանիք, բայց սակաւները եկան։ Երբ Թագաւորը ղրկեց իւր ծառաները, որ յայտնեն թէ ճաշը արդէն պատրաստ է և կը սպասեն հրաւիրեալներուն, մէկը կը հրաժարուէր ասելով թէ՝ պէտք է գնամ ագարակս տեսնելու, միւսը կ'ասէր գործ ունիմ, իսկ ոմանք մինչեւ անգամ ա-

նարգեցին և սպանին Թագաւորի հրաւիրակները։ Երբ Թագաւորը այս բանը լսեց, սաստիկ բարկացաւ և զինուորները ղրկեց որ սպաննողները սպաննեն և նոցա քաղաքները այրեն։ Յետոյ Թագաւորը ասաց իւր ծառաներուն. «Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրուածները անարժան գտնուեցան. գնացէք ուրեմն և ում որ հանդիպիք ճանապարհի վրայ՝ ամենքը հարսանիք հրաւիրեցէք։» Ծառաները կատարեցին Թագաւորի հրամանը եւ առհասարակ չար և բարի մարդկանց մեծ բազմութիւն ժողովեցին ճաշի համար, այնպէս որ բոլորը պալատը լցուած էր հիւրերով։

Թագաւորը եկաւ որ իւր հիւրերը տեսնէ, և նոցա մէջէն մէկը նկատելով, որ հարսանեաց հանդերձ չունէր՝ ասաց. «Ի՞նչպէս մտար դու այս տեղ առանց հարսանեաց հանդերձի.» բայց նա լուռ եղաւ։ Այն ժամանակ Թագաւորը ասաց իւր ծառաներուն. «Կապեցէք նորա ձեռքերը և ոտքերը և ձգեցէք արտաքին խաւարի մէջ, ուր պիտի լինի լալ և ատամանց կրճտումն։ Վասն զի կոչուածները շատ են, բայց ընտրուածները սակաւ։»

Թագաւորի հարսանիքը հրաւիրուածները Հրէաներն են, որոց Քրիստոսի վարդապետութիւնը քարոզուեցաւ ուրիշ աղ-

գերէն առաջ։ Այն հիւրը, որ հարսանիք եկած էր առանց վայելուչ հագուստի, օրինակ է այն մարդիկներուն, որոնք անուամբ քրիստոնեայ են և Քրիստոսի եկեղեցւոյն կը պատկանին, բայց անվայել կեանք կը վարեն։ Իսկ ճանապարհներէն ժողոված մարդիկն են ամեն ազգերը. վասն զի քրիստոնէութիւնը առանց խորութեան բոլոր մարդկութիւնը իւր ծոցը կը հրաւիրէ։

Ծ Ը.

Տասն կուսերու վրայ։ Մաթ. Ի Ե. 1։

ՅԻՍՈՒՍ իւր ունկնդիրները յորդորելու համար ամեն սովորական պատահմունքներէ խրատական օրինակներ կ'առնէր և կ'ուսուցանէր։ Հարսանեաց ժամանակ Իսրայելացւոց մէջ սովորութիւն կար, որ հարսի ընկերները կը սպասէին նորապսակին, որ սովորաբար գիշերը կուգար, և այն ժամանակ կոյսերը վառած լապտերներով առաջը կ'երթային և ուղեկցութեամբ կը բերէին մինչեւ այն տունը, ուր պիտի լինէր հարսանիքը։ Այս սովորութենէն առիթ առնելով Յիսուս պատմեց յետագայ առակը։

«Երկնքի արքայութիւնը նման է տասն կոյսերու, որոնք լապտերներ առին՝ որ փեսայի առաջը գնան։ Այս կոյսերէն հինգը

իմաստուն էին, իսկ հինգը յիմար։ Յիմարները լապտերներ առին, բայց ձէթ չըպատրաստեցին։ Իսկ իմաստունները իրենց հետ ամանով ձէթ առին։ Բայց որովհետեւ փեսան ուշացաւ, ամենքը քնացան։ Կէս գիշերուան մէջ ձայն բարձրացաւ, թէ ահա փեսան կուգայ, աճապարեցէք շուտով առաջը ելնելու։ Կոյսերը իսկոյն ելան և վառեցին իրենց լապտերները։ Այն ժամանակ յիմարները ասացին իմաստուններուն. «Ձէթ տուէք մեզ, որովհետեւ ահա մեր լապտերները կը մարին։» Իմաստունները պատասխանեցին. «Երթէ մեր ձէթէն ձեզ եւս մասն տանք, բաւական չը լինիր մեզ և ձեզ, ուրեմն աւելի լաւ է, որ գնաք ձեզ համար ձէթ գնէք որչափ հարկաւոր է։ Մինչեւ նոքա գնացին ձէթ գնելու, փեսայն եկաւ։ Պատրաստ գտնուողները նորա հետ ներս մտան հարսանեաց ուրախութիւնը կատարելու և դռները փակեցին։ Յետոյ եկան միւս կոյսերը և սկսան ասել. «Տէր, տէր, բաց մեզ դուռը։» Բայց փեսայն պատասխանեց. «Ես ձեզ չեմ ճանաչէր։»

Այսպէս ուրեմն, պատրաստ կացէք, ասաց Յիսուս, որովհետեւ դուք ո՛չ օրը գիտէք և ոչ ժամը, թէ երբ պիտի գայ մարդոյ Որդին (կենդանիները և մեռեալները դատելու)։

Ծ Թ.

Մեծատան եւ Ղազարոսի առակը։ Ղ-ի. ԺԶ. 19։

ՅԻՍՈՒՍ շարունակելով ուսուցանել ժողովրդին՝ ասաց յետագայ առակն եւս։

"Մի քաղաքի մէջ կը բնակէր մէկ հարուստ մարդ, որ միշտ կը հագնէր ծիրանի և բեհեղ, և ամեն օր կ'ուրախանար և կը զուարճանար։ Կար նոյնպէս աղքատ մի Ղազարոս անունով որ բոլորովին ծածկուած էր վէրքերով և պառկած էր հարուստի դրան մօտ։ Այս խեղճը կը կերակրուէր այն փշրանքներէն, որոնք կը թափուէին մեծատան սեղանէն, և շուներ խնամող, միայն շները կուգային և կը լիզէին նորա վէրքերը։ Այս աղքատը մեռաւ և հրեշտակները նորա հոգին տարան Աբրահամի գոգը։ Մեռաւ նոյնպէս հարուստը և փառքով թաղուեցաւ։ Դժոխքի տանջանաց մէջէն աչքը վեր բարձրացուց հարուստը և հեռուէն տեսաւ, որ Ղազարոսը Աբրահամի գոգն է։ "Հայր Աբրահամ, ազաղակեց մեծատունը, խղճա վրաս, զրկէ՛ Ղազարոսը, որ իր մատին ծայրը թաց ընէ և զովացնէ լեզուս, վասն զի սաստիկ տապէն կը պապակիմ։"— "Որդեակ, պատասխանեց Աբրահամը, միտդ բեր, որ դուք կենդանութեանդ ժամանակ վայելեցիք բոլոր երկրաւոր բարութիւնները,

իսկ Ղազարոսը աղքատութեան մէջ կը տառապէր։ Այժմ նա այստեղ կը մխիթարուի և դուք կը տանջուիս։ Եւ բայց յայտնենք, մեր և ձեր մէջ մեծ վիհ կայ և այս անդունդէն ոչ դէպ ի ձեզ կարող են անցնիլ և ոչ այդ տեղէն դէպ ի մեզ։ Այն ժամանակ դրժբաղդը ասաց. "Աղաչեմ դքեզ հայր, զրկէ Ղազարոսը մեր տունը, ես հինգ եղբայր ևս ունիմ, թող երթայ զգուշացնէ, որ չըգան այս չարչարանաց տեղը։" Աբրահամը պատասխանեց. "Նոքա ունին Մովսէսը և այլ մարգարէները, թող նոցա լսեն։" —"Ոչ, հայր իմ, ասաց տանջուողը, եթէ մեռեալներէն մէկը երթայ նոցա մօտ, անպատճառ նոքա պիտի ապաշխարեն։" — Աբրահամը ասաց. "Եթէ Մովսիսին և մարգարէներուն չեն լսեր, նմանապէս չեն հաւատար և չեն համոզուիր, եթէ մեռեալներէն մէկը յարութիւն առնէ։"

Քանի՞ քանի մեծատուններ կան աշխարհիս մէջ որ առատօրէն կը վայելեն իրենց հարստութիւնը և չեն կարեկցիր այն աղքատներուն, որոնք իրենց դուռը կը դեգերին։ Քանի՞ մարդիկ կան, որ ճոխութեան և իշխանութեան մէջ կը լուսն և բոլորովին մոռացած են իրենց նման մարդիկը, որոնք զանազան վիշտերու մէջ կը տառապին։ Բայց Աստուծոյ գթութեան աչքէն երբէք անտես

չեն վշտացեալները։ Այս անպատճառ օր մի պիտի քաղցրացնէ նոցա կրած գառնութիւնները, մանաւանդ եթէ Աստուծոյ անուան և ճշմարտութեան համար մատնուած են տառապանքներու։ Մեծատուները աւելի պիտի գրաւէին Աստուծոյ սէրը, եթէ իւրենց սեղանը անկարող և անօգնական աղքատներու համար բաց լինէր, եթէ իրենց տունը իբրեւ կարօտելոց գանձարան լինէր, և եթէ իրենք մարդասիրութեամբ վառուած լինէին։ Ինչ տեղ պակաս է գթութիւնը մարդկանց մէջ և տիրած է անձնապաշտութիւն, այն տեղէն վերցուած է երջանկութիւնը, որ միայն մարդասէր և սուրբ սրտերու բաժինն է։

Կ.

Յիսուսի Քրիստոսի ճրաշքներդ ու բարեգործութիւններդ։ Մատ. Ի. 26։ Մարկ. Ժ. 46։ Ղուկ. ԺԸ. 35։ Մարկ. Է. 31։ Ղուկ. Ժէ. 12։

ՅԻՍՈՒՍ միանգամ եկաւ Շրիքով քաղաքը Ծանապարհի վրայ նստած էր կոյր աղքատ մի և կը խնդրէր ողորմութիւն։ Այս կոյրը լսելով որ իւր մօտէն շատ ժողովուրդ կ'անցնի՝ հարցուց. «Այս ինչ է։» — Պատասխանեցին. — «Յիսուս Նազովրեցին կ'անցնի այս տեղէն։» — Կոյրը սկսաւ աղաղակել. «Դաւթի որդի, ողորմեա՛ ինձ։» — Այնքան գնացողները կը սաստէին և կը հրամայէին լռել. իսկ նա եւս աւելի կ'աղաղակէր. «Դաւթի որդի, ողորմեա՛ ինձ։» Յիսուս կանգնեցաւ և հրամայեց, որ կոյրը իւր մօտ բերեն և ապա հարցուց. «Ի՞նչ կամիս» — Կոյրը պատասխանեց, «Այնպէս որպէս որ աչքերս տեսնեն։» — «Տէ՛ր, ասաց Փրկիչը, քո հաւատքդ քեզ փրկեց։» Այն րոպէին կոյրը սկսաւ տեսնել և Տիրոջ ետեւէն գընալով կը փառաւորէր զԱստուած։ Այնպէս սկսան փառաւորել ամենքը, որոնք այս հրաշքը տեսան։

Միւս անգամ բերին Յիսուսի մօտ մի խուլ և համր մարդ և կը խնդրէին որ ձեռքը նորա վրայ դնէ։ Յիսուս մատները նորա ականջներու վրայ դրաւ և ձեռքէն բռնեց և ապա աչքերը դէպ 'ի երկինքը բարձրացնելով ասաց. «Բացուի՛ր։» Այն րոպէին խուլը և համրը սկսաւ խօսիլ և լսել։ Յիսուս արգիլեց որ ուրիշներուն չը յայտնէ, բայց որչափ Փրկիչը կ'արգիլէր, նա աւելի եւս փառաբանութիւն կը մատուցանէր։ Իսկ ժողովուրդը զարմացած կ'աղաղակէր՝ Նորան (Յիսուսին) տրուած է իշխանութիւն երկրիս վրայ. ահա խուլերը կը լսեն և համրերը կը խօսին։

Մի անգամ Յիսուս տեսաւ տան բորոտները, և որովհետեւ այս ցաւը տարափոխիկ էր, նոքա չէին համարձակեր մարդու մօտենալ, այլ միայն հեռուէն կ՚աղաղակէին. «Տէր, օգնէ մեզ։» Յիսուս տեսնելով ասաց, «Գնացէք, ձեր անձը ցուցէք քահանային։» Բորոտները հաւատացին Յիսուսի խօսքին և հնազանդեցան։ Մովսէսի օրէնքը կը հրամայէր, որ բորոտութենէ սրբուածները յայտնուէին քահանային, որովհետեւ քահանայքը պէտք է քննէին և վկայէին, որ նոքա կարող են կրկին դառնալ և մարդկանց հասարակութեան մէջ մտնել։ Քահանայից մօտ գնալու ժամանակ՝ բորոտները զգացին, որ սրբուած են իրենց ախտէն։ Բժշկուածներէն մէկը դարձաւ Յիսուսի ոտներն ընկաւ և բարձր ձայնով կը գոհանար և կ՚օրհնէր զԱստուած, և այս անձն էր Սամարացի, որ Երեսներուն ատելի էր։ Յիսուս ասաց նորան. «Չէ՞ որ ես տասն անձը բժշկեցի, ո՞ւր են մնացած իններ։ Ինչու՞ չեկան նոքա զԱստուած փառաւորելու, այլ միայն եկաւ այս օտարազգին։»

Յետոյ ասաց բժշկուածին. «Երթ, գնա խաղաղութեամբ, քո հաւատքդ քեզ փրկեց։»

ԿԱ.

Զաքէոս։ Ղուկ. ԺԹ. 1։

ՅԻՍՈՒՍ կը մօտենար Երիքովին։ Այս քաղաքի մէջ կը բնակէր հարուստ մաքսապետ մի, Զաքէոս անունով։ Նա շատ կը փափաքէր Յիսուսը տեսնել, բայց կարճահասակ լինելով չէր կարող Փրկչին շրջապատած ժողովրդի ետեւէն տեսնել։ Ճանապարհի վրայ կար թզենի մի, Զաքէոսը իսկոյն ելաւ այս ծառի վրայ՝ որ գոնէ այն տեղէն տեսնէ աստուածային վարդապետը։ Երբ Յիսուս ծառին մօտեցաւ՝ կոչեց Զաքէոսը, որ թզենուս վրայ նստած էր, և ասաց. «Զաքէոս, իջիր այդ տեղէն։ Այս քո տունը կուգամ։»

Այսպէս առատութեամբ վարձատրեց Փրկիչը զԶաքէոս այն փափաքին համար, որ կը ցանկար զՅիսուս տեսնել։ Զաքէոս շուտով իջաւ. ծառէն և մեծ ուրախութեամբ Փրկիչը իւր տունը ընդունեց։ Այն տեսնողները կ՚ասէին. «Ի՞նչպէս կարող է նա իջնել այն մարդու տունը, որ ամենու առջեւ համարուած է իբրեւ մեղաւոր։»

Իսկ Զաքէոս մօտեցաւ Յիսուսի և ուրախութիւն ասաց. «Տէր, ես իմ բոլոր ստացուածքիս կէսը կուտամ աղքատաց և եթէ մէկը զրկած եմ՝ քառապատիկ կը հատուցանեմ։»

Յիսուս պատասխանեց. «Այսօր փրկութիւն եղեւ այս տանը, որովհետեւ սա եւս Աբրահամի որդի է։ Մարդոյ որդին եկաւ կորածները փրկելու։»

Այս տեղէն կ'ուսանինք, որ ամեն բարի ցանկութիւն միշտ կը վարձատրուի Աստուծմէն։ Բաւական է որ մարդ 'ի բոլոր սրտէ փափաքի Աստուծոյ հետ միանալու, միշտ կը տեսնէ որ Աստուած իւր մէջն է։

ԿԲ.

Կոյր ծնածի բժշկութիւնը։ Յովհ. Թ. 1։

Ու անդամ Յիսուս պատահեցաւ մի մարդու, որ կոյր ծնած էր և ճանապարհի վրայ նստած՝ անցնողներէն ողորմութիւն կը խնդրէր։ Յիսուսի աշակերտները կը կարծէին թէ ամեն մեծ պատահար կամ դժբաղդութիւն մի պատիժ է, որ Աստուած կը ղրկէ մարդու մեղայ համար։ Բայց որովհետեւ այս ողորմելին կարող չէր արժանի լինիլ այդ տեսակ պատժոյ, ըստ որում 'ի ծնէ կոյր էր, աշակերտները չը գիտէին թէ ուրուն վերաբերեն այս դժբաղդութիւնը, ուստի և հարցուցին Փրկչին. «Վարդապետ ոմ է մեղանչեր, սա, թէ իւր ծնողքը, որ այս խեղճը կոյր է ծնուեր։»

Յիսուս պատասխանեց. «Ոչ որ չէ մեղանչեր, ոչ սա ինքը և ոչ իւր ծնողները, այլ պատահեր է այս, որ Աստուծոյ գործքերը յայտնուին։»

Պարտաւոր եմք իմանալ, որ Աստուծոյ ղրկած բոլոր նեղութիւնները, կամ չարերը ուղղելու համար են և կամ բարիները կատարելագործելու։ Չարագործներու չարչարանքը կը կոչուի պատիժ, իսկ բարեգործներունը՝ փորձոնք կամ փորձութիւն։ Բայց թէ ոը կը ղրկուի մարդուս, արդեօք պատիժը՝ թէ փորձու�, այն միայն Աստուած գիտէ և չարչարուողն խիղճը։ Ի՞նչ անհամեմատ բարերարութիւն է մեղաւորի համար, երբ նա իւր նեղութիւնները կրած ժամանակ կը խոստովանի, որ այն նեղութիւնը ղրկուած է Աստուծմէ իր մեղքերը քաւելու համար։ բայց մանաւանդ ի՞նչ անհամեմատ մխիթարութիւն է բարեգործի համար, երբ կը խոստովանի, որ աստուածային փառաց համար պարտաւոր է ամեն նեղութիւն և չարչարանք համբերութեամբ տանել և հաւատացած է անկասկած, որ ճշմարիտ և ողորմած Աստուածը անպատճառ կը վարձատրէ ամեն վշտակրութեանց համար։

Յիսուս յաճախ կը յիշեցներ աշակերտաց իւր մերձակայ մահը՝ և 'ի ծնէ կոյրի ընկղմած խաւարը համեմատելով այն խա-

ւարի հետ, ուր իւր մահէն յետոյ պէտք է լինէր, ասաց. «Քանի որ ցերեկ է, պէտք է կատարեմ իմ Աստուծոյ գործքերը, վասն զի խաւարը կը հասնի և այն ժամանակ մարդ կարող չէ գործել։ Մինչդեռ ես աշխարհի վրայ եմ, աշխարհի լոյն եմ։» Յետոյ չոքեց գետնին, կաւ շինեց և ծեփելով կոյրի աչքերը՝ ասաց. «Գնա, լուա Սելոամի աւազանին մէջ։»

Կոյրը գնաց լուացուեցաւ և աչքերը բացուեցան։ Այն ժամանակ ամէն դրացիները և ծանօթները սկսան միմեանց ասել. «Սա այն կոյրը չէ՞, որ ողորմութիւն կը խնդրէր։» Ոմանք կ'ասէին իսկ և իսկ նա է, իսկ միւսները կ'ասէին՝ նորա նման է։ Իսկ ինքը ասաց, ես ճշմարիտ այն կոյրն եմ։ Ամենքը հետաքրքիր եղան իմանալու՝ թէ ինչպէս բացուեցան նորա աչքերը։ Հրեայ ազգը պատասխանեց. «Այն մարդը, զոր Յիսուս կ'անուանեն, աչքերս կաւով ծեփեց և հրամայեց լուացուիլ Սելոամի աւազանի մէջ և ապա սկսայ տեսնել։» Բայց ոմն է այն մարդը, կը հարցնէին հետաքրքրութեամբ։ «Չը գիտեմ, պատասխանեց կոյրը։» Այն ժամանակ կոյրը տարան Փարիսեցիներու մօտ, որոնք նմանապէս հարցուցին՝ թէ ինչպէս բացուեցան նորա աչքերը։ Բժշկուած կոյրը դարձեալ նոյն պատասխանը տուաւ Փարիսեցիներուն ասելով. «Մէկը աչքերս կաւով ծեփեց, հրամայեց լուացուիլ. ես լուացուեցայ եւ ահա կը տեսնեմ։»

Յիսուս կոյրը բժշկեց շաբաթ օրը, ուստի և ասոնք մէջ մէջ Փարիսեցիներուն մէջ։ Ոմանք կ'ասէին՝ այս մարդը Աստուծմէ զրկուած չէ, որ շաբաթը չըպահեր. միւսները կ'ասէին՝ միթէ կարող է մեղաւոր մարդը այսպիսի հրաշքներ գործել։ Վերջապէս հարցուցին բժշկուածին՝ դուն ինչ կ'ասես այն մարդուս համար, որ աչքերուդ լոյս տուաւ։ — Ես կը կարծեմ որ նա մարգարէ է, պատասխանեց բժշկուածը։ Սակայն Փարիսեցիները չէին ուզեր հաւատալ, որ նա կոյր ծնուած է, ուստի և կոչեցին նորա ծնողները։ «Սա ձեր որդին է, հարցուցին, դուք կ'ասէք, որ նա կոյր ծնուած է, այժմ ինչպէս կը տեսնէ։» Կոյրի ծնողները պատասխանեցին. — «Նա ճշմարտիւ մեր որդին է և կոյր ծնած էր, բայց թէ այժմ ինչպէս լոյս ստացան նորա աչքերը, այդ չը գիտենք։ Նա այժմ չափահաս է և ինքը կարող է իւր մասին խօսիլ։» Ծնողները երկիւղէն այսպէս պատասխանեցին, որովհետեւ կը վախնային, որ եթէ բոլոր ժողովրդի առջեւ խոստովանելու լինին զՅիսուս որպէս Մեսիա, Փարիսեցիները պիտի զլրենք

հեռացնեն ժողովրդէն. եւ այս էր պատ-
ճառն որ ասացին՝ մեր որդին հաւակն ա-
ռած է, իրեն հարցուցէք։

Փարիսեցիները վերստին կոչելով բժշ-
կուած կոյրը ասացին. «Փառք տուր Աստու-
ծոյ։ Մենք գիտենք, որ քեզ բժշկողը մե-
ղաւոր է, որովհետեւ շաբաթ օրը բժշկեց.
դու ևս համաձայնիր մեղ հետ։» — Նա պա-
տասխանեց. «Չս ջրգիտեմ թէ արդեօք մե-
ղաւոր է նա, միայն այսքանը գիտեմ, որ
կոյր էի և այժմ կը տեսնեմ։» — Փարիսեցի-
ները վերստին կրկնեցին. «Ասա մեղ, ինչ-
պէս բժշկեց քեզ։» — Նա արդէն պատասխանեց
ձեղ, պատասխանեց նա, բայց դուք չլսիա-
մեցաք լսել. ինչու դարձեալ կրկնեմ։ Կա-
միք արդեօք նորա աշակերտ լինիլ։» Փարի-
սեցիք սաստիկ բարկացան այս պատասխանին
վրայ և պարսաւելով կ'ասէին. — «Դու ինքն
ես նորա աշակերտը, մենք Մովսէսի աշա-
կերտ ենք։ Մենք գիտենք, որ Աստուած խօ-
սեցաւ Մովսէսի հետ. իսկ այդ մարդը մենք
ամենեւին չենք ճանաչեր, թէ ո՞ր տեղէն է։»—
«Զարմանալին այդ է, պատասխանեց բը-
ժշկուածը, որ դուք չգիտէք թէ ո՞ր տեղէն է
նա, բայց նա իմ աչքերուս լոյս տուաւ։ Չս
գիտեմ որ Աստուած մեղաւորի աղօթքը չը
լսեր, այլ կը լսէ այն մարդոյ աղօթքը, որ կը
կատարէ Աստուծոյ կամքը։ Մինչեւ ցայսօր

երբէք լսուած չէ՝, որ մէկը կոյր ծնածի աչ-
քը բանայ։ Եթէ նա Աստուծմէ ղրկուած
չը լիներ, ինչպէս կարող էր այդ հրաշքը
գործել։»— «Մեղայ մէջ ծնար և դարձեալ
կը համարձակիս մեղ ուսուցանել,» աղաղա-
կեցին Փարիսեցիները և ժողովրդէն դուրս
հանին։

Յիսուս երբ այս բանը իմացաւ, տաճա-
րի մէջ պատահելով բժշկուածին ասաց. «Կը
հաւատա՞ս դու Աստուծոյ Որդւոյն։»—Երի-
տասարդը պատասխանեց. «Ո՞վ է նա, Տէր,
ես կամիմ հաւատալ.»—Հա՛ դու կը տես-
նես և կը խօսիս նորա հետ. պատասխանեց
Փրկիչը։»—«Կը հաւատամ, Տէր,» ուրախու-
թեամբ աղաղակեց երիտասարդը և երկրը-
պագութիւն տուաւ։

Յիսուս ասաց. «Չս եկեր եմ աշխարհ
դատաստան ընելու, որ կոյրերը տեսնեն,
իսկ տեսնողները կուրանան։» Երբ այս
խօսքերը լսեցին Փարիսեցիները, աղաղակե-
ցին. «Միթէ մենք կո՞յր ենք։»—«Եթէ դուք
կոյր լինէիք, պատասխանեց Յիսուս, մեղք
չէիք ունենար, բայց այժմ կը կարծէք թէ
ամեն բան կը տեսնէք, և այդ պատճառաւ
դուք ուրիշներէն աւելի մեղաւոր էք։»

Աշխարհիս մէջ ամեն ժամանակ Փարի-
սեցիներ կան, որոնք կը կարծեն թէ ամեն
բան գիտեն և ամեն բան կը տեսնեն, սա-

կայն ճշմարտապէս ոչինչ չեն տեսներ։ Որչափ Փարիսեցւոց գործքերը դատապարտուած են Աստուածայանի մէջ, պէտք է իմանանք որ ամէն ժամանակ Փարիսեցութիւնը հակառակ է ճշմարիտ քրիստոնէութեան, վասն զի արտաքին աստուածպաշտութիւնը առանց ներքնոյն բոլորովին անպտուղ է։

ԿԳ.

Ողորմութիւն գտնող մեղաւոր կինը։
Ի վերջ Յովհ. Աւետարանին։

Փարիսեցիները եւ օրէնսուսոյցները (դպիրները) կը նախանձէին Յիսուսի փառաց վրայ եւ ամէն կերպով կ'աշխատէին մէկ պատճառ գտնել եւ Փրկիչը դատապարտել։ Գիտէին որ նա բարեսիրտ է եւ կը կարծէին թէ պիտի պաշտպանէ մեղաւոր կինը, որ Մովսիսի օրէնքով արժանի էր 'ի մահ դատապարտելու. եւ այս կերպով որոշած էին, որ Յիսուս օրինաց պիտի հակառակի եւ իրենք առիթ պիտի ունենան դատապարտել։

Յիսուս մի անգամ տաճարի մէջ կը քարոզէր ժողովրդին։ Փարիսեցիները եւ դպիրները մեղաւոր կին մի բերին նորա մօտ եւ դէմ յանդիման կանգնեցնելով՝ ասացին. «Վարդապետ, ահա այս կինը այնպիսի մեղք

է գործեր, որ Մովսիսի օրէնքով հարկ է որ քարկոծուի, դու ինչ կ'ասես այս մասին։»

Յիսուս գլուխը դէպ 'ի գետին խոնարհեցուց եւ սկսաւ աւազի վրայ գրել, առանց պատասխանելու։ Բայց որովհետեւ նոքա կրկնեցին պատասխանել, ուստի Յիսուս գլուխը բարձրացուց եւ հայեցուածքը իւր առջեւ եղած մարդկանց վրայ ձգելով ասաց. «Թող առաջին անգամ նա քար ձգէ այդ կնոջ վրայ, ով որ ձեր մէջէն անմեղ է իւր խղճմտանքի առջեւ։» Յետոյ դարձեալ գլուխը խոնարհեցնելով՝ շարունակեց գրել աւազի վրայ։

Այս պատասխանը լսելով եւ իրենց խղճմտանքէն յանդիմանուելով ամէնքը մէկ մէկ սկսան հեռանալ տաճարէն, ծերերէն սկսեալ մինչեւ վերջին մարդը։ Վերջապէս միայն մնացին Փրկիչը եւ կինը, որ կանգնած էր տաճարի դաւթի մէջ։ Յիսուս տեսնելով որ ոչ ոք չը կայ, բայց 'ի դատապարտուած կնոջէն, ասաց. «Որը են նոքա, որոնք կը դատապարտէին զքեզ, այժմ ոչ ոք չդատապարտեց զքեզ։» — Ոչ ոք, պատասխանեց կինը։ — Ես եւս չեմ դատապարտեր, ասաց Փրկիչը, գնա, այսուհետեւ մի մեղանչեր։»

Որ եւ իցէ յանցաւոր դատապարտելէն առաջ՝ մարդ պարտական է իւր խիղճը քննել եւ իմանալ թէ ինքն ինչ վիճակի մէջ է,

անմեղ է արդեօք, թէ նոյն յանցանքով ծանրացած, որոյ մասին կ'ուզէ ուրիշները դատապարտել։ Այս տեսակ անձնախորձութիւնը շատ օգտակար է մարդուն, վասն զի թէ ինքը իրմէն կը պատկառի և թէ այլոց յանցանքը տեսած ժամանակ՝ իրենը չը մոռանար, և հետեւապէս ուրիշները դատապարտելէն առաջ նախ իւր անձը կը դատապարտէ, և այսպէսով ընկերութեան մէջ ուղղութեան և ներողամտութեան հոգին կը տիրապետէ՝ քան թէ թշնամութեան և ատելութեան։

ԿԴ.

Մարթա եւ Մարիամ։ Ղուկ. ԺԸ. 38։

Յիսուս, Ղատկի տօնին Երուսաղէմ գնալու ժամանակ, ինքն մի գիւղի մէջ։ Այս տեղ Մարթա անունով բարեպաշտ կին մի ընդունեց իւր տունը։ Մարթան ունէր Մարիամ անունով քոյր մի և Ղազարոս անունով եղբայր։ Մարիամը նստաւ Փրկչի ոտներու մօտ և կը լսէր նորա քարոզը. իսկ Մարթան հոգս կը քաշէր և կ'աշխատէր ամեն կերպ պատիւ տալ Յիսուսին։ Երբոր պէս Մարթան մօտեցաւ Փրկչին և ժգո-

հութեամբ ասաց. «Տէր, չէս տեսներ, որ քոյրս զիս մինակ թողած է՝ քեզ ծառայելու։ Հրամայէ, որ ինձ օգնէ։» Յիսուս պատասխանեց. «Մարթա, Մարթա, դու շատ բաներու վրայ կը մտածես և կը հոգաս, բայց միայն մի բան հարկաւոր է։ Մարիամը լաւ մասն է ընտրեր իրեն համար, այն՝ որ երբէք իրմէն չը յափշտակուիր։»

Յիսուս այս խօսքով ցոյց տուաւ, որ ճշմարտութեան առջեւ աշխարհիս բոլոր հոգացողութիւնները ոչինչ են։ Մարթան կը հոգար նիւթական բաներու վրայ, իսկ Մարիամը Յիսուսի քարոզած ճշմարտութիւնը կը լսէր։ Ճշմարտութիւն ուսանիլը մարդու համար առաջին պարտք պէտք է լինի աշխարհիս վրայ։ Հայի, կերակուրի, հագուստի, պատուոյ և այլ անցաւոր իրաց հոգսերը պէտք չէ որ մարդը յետաձգեն ճշմարտութեան ուսումէն. վասն զի մարդուն ամենէն առաջ մի բան հարկաւոր է, որ է Ճշմարտութիւն։

ԿԵ.

Ղազարոսի յարութիւնը։ Յովհ. ԺԱ. 1։

Այն գիւղը, ուր կը բնակէին Ղազարոսը և իր քոյրերը՝ Մարթան և Մարիամ, կ'ա-

նուանուէր Բեթանիա։ Ղազարոս, զոր Յի-
սուս շատ կը սիրէր, հիւանդացաւ։ Երկու
քոյրերը Փրկչի մօտ գնացին լրենց եղբօր
հիւանդութեան համբաւը տանելու։ Նոքա
հրամայեցին ասել Տէրոջը թէ՝ "Լա, զոր
դուն կը սիրես, հիւանդ է։"

Երբ Յիսուս լսեց այս լուրը՝ ասաց.
"Այն հիւանդութիւնը մահաբեր չէ, այլ
Աստուծոյ փառաց և նորա Որդւոյ փառա-
ւորուելու համար է։" Իսկ ինքը, Ղազարո-
սի հիւանդութիւնը լսելէն զկնի, երկու օր
եւս նոյն տեղը մնաց։ Այս տեղը Դալիլե-
այի մէջ էր, Բեթանիայէն հեռի։ Յետոյ
Յիսուս ասաց իւր աշակերտներուն. "Կրկ-
կին գնանք Հրէաստան։" Բայց աշակերտ-
ները ասացին. "Վարդապետ, Հրէայքը
կամին քեզ քարկոծել և դուն դարձեալ նոյն
տեղը կ'երթաս։"

Յիսուս պատասխանեց. "Օրը տասներ-
կու ժամ չունի։ Յերեկով մանեկողը չդդա-
թակղիր, որովհետեւ կը տեսնէ աշխարհի
լոյսը, այլ նա կը դայթակղի, որ գիշերով
մանկուդայ, վասն զի լոյս չը տեսներ։"
Այսպէս քանի մի վայրկեան լուռ մնալէն յետոյ
աւելցուց այս խօսքերը. "Մեր բարեկամ
Ղազարոսը ննջեց, պիտի երթամ արթնցը-
նեմ։" Աշակերտները ասացին. "Տէր, ե-
թէ ննջեց, ուրեմն հիւանդութիւնը կ

թեթեւնայ։" Բայց Յիսուսի խօսքերը նը-
ջելու կամ քնանալու համար չէր, այլ Ղա-
զարոսի մահուան, սակայն աշակերտները
չը հասկացան։ Այն ժամանակ Յիսուս յայտ-
նապէս ասաց. "Ղազարոսը մեռաւ, և ես
ուրախ եմ ձեր մասին, որ կը հաստատուիք
ձեր հաւատքին մէջ, որովհետեւ դուք գի-
տէք որ ես այն տեղ չէի։ Գնանք ուրեմն
նորա մօտ։" Որովհետեւ Հրէայքը սաստ-
տիկ զայրացած էին Յիսուսի վրայ. Թոմմաս
առաքեալը, վախնալով իր վարդապետի կե-
նաց վտանգէն, ասաց. "Մենք եւս գնանք
և նորա հետ միասին մեռնինք։"

Երբ Յիսուս Բեթանիա հասաւ, Ղա-
զարոսն արդէն մեռած և թաղուած էր։
Այս գեղը Երուսաղեմէն շատ հեռի չէր,
օւստի և շատ Հրէայք եկած էին Մարթան
և Մարիամը վիշտարելու։ Մարթան Յի-
սուսի մօտենալը լսելով շտապեց նորա ա-
ռաջը ելաւ, իսկ Մարիամ մնաց տունը։
—"Տէր, աղաղակեց Մարթան, եթէ դուն
մեզ մօտ լինէիր, մեր եղբայրը չէր մեռնիր։
Սակայն այժմ եւս կը հաւատամ ես, որ Աս-
տուած ամէն բան կուտայ քեզ, ինչ որ իր-
մէն խնդրես։" — "Եղբայրդ յարութիւն
պիտի առնէ, ասաց Փրկիչը։" — "Գիտեմ,
որ յարութիւն պիտի առնէ, պատասխանեց
Մարթան, յարութեան վերջին օրը։" —Յի-

սուս ասաց. «Ես եմ կեանքը և յարու-
թիւնը։ Ով ինձ հաւատայ, եթէ մեռնի
եւս՝ կը կենդանանայ, և ամեն ոք որ կենդա-
նի է և կը հաւատայ ինձ, չը մեռնիր։ Կը
հաւատա՞ս այս խօսքին։» — «Կը հաւատամ,
Տէր, պատասխանեց Մարթան, որ դու ես
Աստուծոյ որդին, որ գալու էր աշխարհ։»
Որպիսի հաւատ։ Միայն հաստատ հաւա-
տացող և բարեպաշտ հոգին կարող էր տալ
այսպիսի պատասխան այնպիսի վշտալի փոր-
ձութեան ժամանակ։

Մարթան այս ասելով դարձաւ տուն և
կամաց իւր քրոջը ասաց. «Վարդապետը ե-
կաւ և քեզ կը կոչէ։» Մարիամը ելաւ և
շուտով գնաց նորա առաջը։ Այն Հրէայքը,
որոնք մխիթարութեան եկած էին, երբ
տեսան թէ Մարիամը շտապով դուրս ելաւ,
իրենք եւս նորա ետեւէն գնային ասելով.
«Նա կ'երթայ իւր եղբօր գերեզմանի վրայ
լալու։»

Մարիամ երբ մօտեցաւ Յիսուսին՝ նորա
ոտներին ընկաւ և ասաց. «Տէր, եթէ դու
այս տեղ լինէիր, եղբայրս չէր մեռնիր։»
Յիսուս տեսնելով որ Մարիամ կ'արտասուէ,
նոյնպէս և նորա հետ եկած Հրէաները, ին-
քըն եւս խռովեցաւ հոգւով, ուստի և
հարցուց. «Ո՞ւր դրիք Ղազարոսը։» — Նո-
քա պատասխանեցին. «Տէր, եկ և տես։»

Յիսուս երբ գերեզմանին մօտեցաւ,
լացաւ և Հրէայքը սկսան ասել. «Տեսէք՝
թէ ինչքան կը սիրէր։» Իսկ ոմանք կ'ասե-
ին. «Մինթէ նա, որ կոյրի աչքերը բացաւ,
չէր կարող այնպէս ընել, որ Ղազարոսը չը
մեռնէր։» Ղազարոսը դրուած էր այրի մէջ,
որ փորուած էր ժայռէն, և դուռը ծածկը-
ւած էր մեծ քարով։ Յիսուս մօտեցաւ գե-
րեզմանին և ասաց. «Վեր առէք քարը։»
Մեռածի քոյրը՝ Մարթան կրկնեց ասելով.
«Տէր, մարմինը այժմ հոտած կը լինի, որով-
հետեւ արդէն չորս օր է, որ թաղուած է։»
Յիսուս պատասխանեց. «Չե՞ս քեզ չասացի՞,
որ եթէ հաւատաս, կը տեսնես Աստուծոյ
փառքը։»

Վեր առին այն քարը, որով ծածկուած
էր գերեզմանը և Յիսուս իւր աչքերը դէպ
'ի երկինքը բարձրացնելով՝ ասաց. «Հայր,
շնորհակալ եմ քեզմէն, որ ինձ լսեցիր։ Ես
գիտէի, որ դու միշտ կը լսես իմ աղօթքը.
բայց ես այս կը գործեմ ինձ շրջապատող
մարդկանց համար, որպէս զի նորա ամենքը
հաւատան, որ դու ես զիս ղրկեր։»

Այս ասելէն յետոյ Յիսուս բարձր ձայ-
նով աղաղակեց. «Ղազարոս, ել, դուրս եկ։»
և մեռեալը դուրս ելաւ գերեզմանէն։ Ոտ-
ները և ձեռքերը փաթաթուած էին երիզով
և երեսը ծածկուած էր վարշամակով։ Յիսուս

ասաց. «Բացէք և լուծէք կապանքները և թողէք որ երթայ։»

Հրէաներէն շատերը, որոնք եկած էին Մարթայի և Մարիամի հետ, այս հրաշքը տեսնելով՝ հաւատացին Յիսուսին. իսկ մի քանիսը գնացին Փարիսեցիներու մօտ և այս անցքը պատմեցին։ Քահանայապետները և Փարիսեցիները ժողովեցան, խորհելու և ուրոշելու թէ ինչ պէտք է որ ընեն։ Նոքա կ'ասէին. «Այս մարդը մեծամեծ հրաշքներ կը գործէ, եթէ մենք այսպէս թողունք. ամենքը պիտի հաւատան, որ նա Քրիստոսն է, և այն ժամանակ Հռովմէացիք պիտի գան թէ՛ մեր քաղաքը և թէ՛ մեր ազգը։»

Կայիափան, որ այն տարուան Քահանայապետն էր, ասաց. «Միթէ դուք աւելի լաւ չէք համարուիր, որ մէկը մեռնի շատերու համար, քան թէ ամբողջ ազգը կորնչի։»

Քահանայապետներու և ծերերու ժողովի մէջ վճռուեցաւ, որ Յիսուսը սպաննեն, բայց Փրկիչը թագեաւ Հրէաներէն և հեռացաւ գնաց այն քաղաքը, որ Եփրայիմ կը կոչուէր և որ անապատի մօտ էր։

Բայց որովհետեւ Զատկի տօնը մօտ էր և շատ մարդիկ զանազան տեղերէ Երուսաղէմ կը ժողովուէին, կը սպասէին որ Յիսուս եւս տօնին պիտի գայ այն տեղ. ուստի քահանայապետները և Փարիսեցիները ամենուն

պատուէր տուին, որպէս զի ով որ Յիսուսը տեսնէ, իմացնէ իրենց՝ որ բռնեն։

ԿԶ.

Մարիամը իւղով կ'օծէ զՅիսուս։ Մաթ. ԻԶ. 6։ Մարկ. ԺԳ. 3։ Ղուկ. Է. 36։ Յովհ. ԺԲ. 1։

Զատկի տօնէն վեց օր առաջ Յիսուս եկաւ Բեթանիա, ուր էր յարութիւն առած Ղազարոսը։ Այս տեղ նորա համար ընթրիք պատրաստեցին։ Մարթան սեղանին կը ծառայէր և Ղազարոս եւս այն մարդկանց մէջ էր, որոնք հացկերութի նստած էին։ Իսկ Մարիամ առաւ մեծ շիշ մի թանկագին իւղով լեցուն, կ'օծէր Յիսուսի ոտները և իւր մազերով կը սրբէր։ Բոլոր տունը լցուեցաւ անոյշ հոտով։

Յիսուսի աշակերտներէն մէկը՝ Յուդա Իսկարիովտացի, որ վերջը մատնելու էր իւր վարդապետը, ասաց՝ այս ինչ շռայլութիւն է։ Աւելի լաւ չէր, որ այդ իւղը ծախուէր և դրամը բաժնուէր աղքատներուն։

Յուդան այս խօսքը ասաց, ոչ թէ աղքատներու համար հոգ տանելով, այլ այն պատճառաւ, որ ինքը արծաթասէր և ագահ մարդ էր։ Նա էր որ արկղը իւր մօտ կը

պահէր և տուած ողորմութիւնները նորա մէջ կը ժողովէր։

Յիսուս ասաց Մարիամի համար. «Թող տուէք, դա իմ թաղման աւուր համար պահած էր։ Աղքատները ամէն ժամանակ ձեզ հետ են, բայց դուք միշտ ձեզ հետ չէք ունենար։»

Երբ համբաւ տարածուեցաւ որ Յիսուս Բեթանիայի մէջ է, մեծ բազմութիւն հաւաքուեցաւ, որ տեսնեն թէ Յիսուսը և թէ իւր յարուցած Ղազարոսը։ Իսկ քահանայապետները տեսնելով որ շատ ժողովուրդ կը հաւաքուի Յիսուսի մօտ և շատերը կը հաւատան, վճռեցին սպաննել թէ զՂազարոս և թէ զՅիսուս։

ԿԷ.

Յիսուս Երուսաղէմ կը մտնէ։ Մաթ. ԻԱ. 1։ Մարկ. ԺԱ. 1։ Ղուկ. ԺԹ. 25։ Յովհ. ԺԲ. 12։

Մէկ օրը առաւօտեան Յիսուս իւր աշակերտաց հետ Բեթանիայէն Երուսաղէմ գնաց։

Ձանապարհի վրայ, Զիթենեաց սարի ստորոտը, Բեթանիա անունով փոքրիկ գիւղ մի կար։ Այս տեղէն Յիսուս իւր երկու աշակերտները ղրկեց այն գիւղը և պատուիրեց ասելով. «Գնացէք այն գիւղը, որ ձեր առջեւն է, երբ նորա մէջ մտնէք, կը գտնէք կապած էշ մի և յաւանակը իրեն հետ, որուն վրայ տակաւին մարդ նստած չէ։ Կապը լուծէք և բերէք ինձ մօտ։ Եթէ մէկը հարցնէ թէ ինչու այդպէս կ'ընէք, պատասխանեցէք, որ Տէրը կը պահանջէ, և այնուհետեւ չեն արգելուր ձեզ։»

Աշակերտները գնացին և զարմանալով ուրախացան, որ ամէն բան այնպէս գտան, ինչպէս Տէրը ասած էր։ Գիւղը մտնելու ժամանակ գտան էշը և յաւանակը դրան մօտ կապած եւ երբ կամեցան լուծանել, տէրը հարցուց. «Ինչու կը լուծանէք։ — Աշակերտները պատասխանեցին. — Տէրոջը պիտոյ է.» — և հարցնող տէրը ամենեւին չարգիլեց լուծանելու։

Երեւելեան եկեղեցիներու մէջ թագաւորներն անդամ էշի վրայ կը նստէին, մանաւանդ հանդիսաւոր ժամանակները և ձիերը գործ կ'ածէին պատերազմներու մէջ։ Աշակերտները իրենց հանդերձները ձգեցին յաւանակի վրայ և Յիսուս հեծաւ։ Ճանապարհը Զիթենեաց սարի վրայէն էր։ Երբ հասան սարի գլուխը և Երուսաղեմը երեւեցաւ, աշակերտները և Տէրոջ ուղեկից ժողովուրդը յիշելով Յիսուսի կատարած

գործքերը եւ մոռածելով այն օրհնութեան վրայ, որ Աստուած նորա ձեռքով ուղարկած էր մարդկային ազգին, ուրախութենէ եւ երախտագիտութենէ շարժուած, բարձր ձայնով կ'աղաղակէին եւ կ'ասէին. «Օրհնեալ է Աստուծոյ անունով Եկողը. օրհնեալ է Իսրայելի Թագաւորը։ Խաղաղութիւն յերկինս եւ փառք 'ի բարձունս։ Ովսաննա (օրհնութիւն) Դաւթի որդւոյն։»

Փարիսեցիներէն մի քանիսը կ'ասէին Յիսուսին. «Ուրամայէ աշակերտներուդ, որ լռեն։» Յիսուս պատասխանեց. «Եթէ նոքա լռեն, քարերը կ'աղաղակեն։» Յիսուս ամենեւին չէր ուրախանար այս բերկրական աղաղակներու եւ գովասանքներու վրայ, այլ նորա մարդասէր սիրտը լցուած էր արտմութեամբ այն սպառնացող թշուառութեանց համար, որ հասնելու էր Ուրեից ազգին։ Եր՚ուսաղէմին նայելով՝ նա սկսաւ լալ, եւ յետոյ ասաց. «Ո՜հ, երանի թէ գոնէ այժմ կարողանայիր հասկնալ թէ ի՞նչ է քեզ օգտակար։ Բայց ամեն բան ծածկուած է քո աչքերէն։ Պիտի այնպիսի օրեր գան, որ թշնամեաց զօրքը պիտի ամեն կողմէն պաշարէ զքեզ եւ քո մէջ քո որդիքդ կոտորէ. պիտի չքնայ քո քարը քարի վրայ, որովհետեւ չգիտցար քո այցելութեան ժամանակը։»

Յիշենք նոյնպէս Յիսուսի միւս խօսքերը, որոնք ասաց նա ուրիշ անգամ եւ որոնք կը յայտնեն նորա տրտմութիւնը Երուսաղեմի ապագայ վիճակին վրայ։ Յիսուս ասաց մի անգամ. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ մարգարէները կոտորեցիր եւ առ քեզ ղրկուածները քարկոծեցիր, քանի՞ անգամ կամեցայ ժողովել քո որդիքը, ինչպէս հաւը կը ժողովէ իւր ձագերը թեւերուն տակ, բայց դուք չկամեցաք, այժմ ձեր քաղաքը պիտի ամայի մնայ։»

Զատկի տօնի համար Երուսաղեմի մէջ հաւաքուեցաւ մեծ բազմութիւն։ Այն մարդիկը, որոնք վկայ էին Ղազարոսի յարութեանը՝ ամենուն կը պատմէին այս հրաշալի անցքը, եւ այս պատճառաւ ժողովուրդը Յիսուսի մօտաւոր գալուստը լսելով՝ շտապեց նորա առաջը ելաւ արմաւենիի ոստերով եւ բարձր ձայնով կ'աղաղակէր. «Ովսաննա, օրհնեալ է Աստուծոյ անունով եկող Իսրայելի Թագաւորը։» Ովսանք Ճանապարհի վրայ կը սփռէին իրենց հանդերձները նորա ոտներու տակ. իսկ Փարիսեցիները նախանձով յուզուած՝ կ'ասէին. «Ի՞նչ ընենք արդեօք, ամենքը նորան կը հետեւին։»

Երբ ժողովուրդը այսպէս հաւաքուեցաւ Յիսուսը ընդունելու եւ ուրախութիւն բացատրելու կը կոչէր, մանուկներն եւս իրենց

գուլասանքները կը խառնէին ժողովրդի աղաղակներուն հետ, և աշակերտները կը հրաճառէին երենց վարդապետը Երուսաղէմ բերելով յաւանակի վրայ, որ գրեթէ պատահմամբ գտած էին։ Այս գեղեցիկ հանդէսով կատարուեցաւ այն մարգարէութիւնը, որ Զրիսատոսի ծննդեանէն շատ առաջ գուշակուած էր այսպէս. «Մի վախնար, Սիոնի դուստր, ահա՛ կուգայ քո թագաւորդ՝ հեզ և փրկիչ, աւանակի վրայ նստած» Զաք. Թ. 9։ Եւ թէ՝ «Կաթնկեր մանուկներու բերանէն պիտի կատարուի քո օրհնութիւնը։» Սաղմ. Ը. 5։

Այս ուրախական աւուր յիշատակը ցարդ եւս կը կատարէ մեր Հայաստանեաց Ս. Եկեղեցին կանաչ ոստերով, և այս տօնը Ծաղկազարդ կը կոչուի։ Սակայն պարտաւոր ենք իմանալ, որ այս գեղեցիկ արարողութեան հետ՝ մեր սրտերը եւս կանաչացած և ծաղկած պէտք է լինին արդարութեան և առաքինութեան ոստերով եւ ծաղիկներով։ Ինչպէս որ ժողովուրդը, աշակերտները եւ մանուկները Երուսաղէմի մէջ Յիսուսը ընդունելու համար հանդերձներ և ոստեր կը տարածէին, նոյնպէս մենք մեր սրտի մէջ ընդունելու համար՝ պարտաւոր ենք ճշմարիտ աստուածպաշտութեան ծաղիկներ սրսիւել, մեր հոգին ամեն տեսակ բարեպաշտութեամբ դալար պահպանել և մեր սուրբ զգացմունքներով պատուել և պաշտել մեր Փրկիչը։ Պարտաւոր ենք միշտ օրհնել և փառաւորել Յիսուսի մարդասիրութիւնը, ինչպէս կ՚օրհնէին Իսրայէլացւոց մանուկները։

ԿԸ.

Զորացած Թզենին։ Մտթ. ԻԱ. 9։ Մարկ. ԺԱ. 12։

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԸ և փարիսեցիները միշտ կ՚աշխատէին միջոց դտնել և Յիսուսը գիշերով բռնել, որովհետեւ ցերեկը ժողովրդէն երկիւղ կը կրէին։ Յիսուս՝ ցերեկը Երուսաղէմի տաճարին մէջ անցընելէն յետոյ՝ երեկոյեան դարձաւ Բեթանիա իւր բոլոր աշակերտներով, և գիշերը կ՚անցընէր քահանայապետներէն անծանօթ տեղերու մէջ։

Երուսաղէմ մտնելու հանդիսին երկրորդ օրը, երբ Բեթանիայէն քաղաք կը դառնար՝ անօթեցաւ Յիսուս և թզենիին մօտենալով՝ որ ճանապարհին մօտ էր, նայեցաւ թէ արդեօք պտուղ կայ վրան, բայց բաց ի տերևներէն ոչինչ չգտնելով ասաց. «Այսուհետեւ միշտ անպտուղ պիտի մնաս դու։» Այս օրը նոյն ճանապարհէն անցնելու ժա-

մանակ աշակերտները զարմացան, երբ տեսան, որ Թղենին արդէն չորացած է։»

Այս ծառը ամենու համար պէտք է ըղդուշութեան օրինակ լինի. Այն մարդը, որ բարի գործ չգործէր, իւր անձը չուղղէր և կ'ապրի առանց ընկերին օգնելու, անպատճառ Թղենիի վիճակին կը հասնի։

Պետրոս առաքեալը ասաց Փրկչին. «Վարդապետ, տես Թղենին՝ որ դու անիծեցիր, ահա չորացեր է։» Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտ ասեմ ձեզ, եթէ հաւատ ունենաք, ոչ միայն մի իսօքով Թղենին կը չորացնէք, այլ եթէ ասէք՝ այս սարին, շարժիր տեղէդ և ընկիր ծովը, ամենը կը կատարուի ձեր իսօքով։ Այս ինչ որ խնդրէք ձեր աղօթքով, ամենը կըստանաք։»

Կ Թ.

Փրկչի խօսակցութիւնը իւր աստուածային փառաց եւ նշանակութեան վրայ։

Ա՛ն անգամ Յիսուս ժողովրդին կը քարոզէր տաճարի մէջ և ասաց այսպէս. «Այս եմ աշխարհի լոյսը, ով որ ինձ հաւատայ և հետեւի, նա խաւարի մէջ չը շրջիր, այլ

կըստանայ կենաց լոյսը։» Յովհ. Ը. 12։ «Հաւատացէք լուսին և դուք կը լինիք լուսոյ որդիք։» Յովհ. ԺԲ. 36—46։ «Այս եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք չէ կարող հօրս մօտ գալ, եթէ ոչ ինձմով։» Յովհ. ԺԴ. 6։

Այն մարդիկներէն շատերը, որոնք հրաշալի կերպով կերակրուեցան անապատի մէջ, միւս օրը կրկին եկան Յիսուսի մօտ և երկար ժամանակ կը փնտռէին։ Յիսուս ասաց նոցա. «Ճշմարիտ ասեմ ձեզ, դուք ոչ թէ այն պատճառաւ եկաք ինձ մօտ, որ հրաշք տեսաք, այլ այն պատճառաւ, որ հաց կերաք ու կշտացաք։ Այդ քան հոգս մի քաշէք մարմնաւոր կերակուրի վրայ. այլ հոգացէք հոգւոյ կերակուրի համար, զոր կուտայ ձեզ մարդոյ Որդին։»

«Այս եմ կենաց հացը, ով ինձ հետեւի, երբէք չանօթենար. ով ինձ հաւատայ, երբէք չը ծարաւիր։ Իմ առաքչի կամքն այն է, որ Որդին տեսնողները ամենքը հաւատան և ստանան յաւիտենական կեանք։ Կենաց հացը, զոր ես տալու եմ, իմ մարմինս է, որ ես պիտի տամ բոլոր աշխարհի կենդանութեան համար։ Ով իմ մարմինս ուտէ և արիւնս ըմպէ, յաւիտենական կեանք կ'ունենայ և ես կը յարուցանեմ վերջին օրը։»

Փրկչի այս խօսքերէն կ'երեւի՝ թէ որչափ

հարկաւոր է մեզ Հաղորդութեան սուրբ խորհուրդը, ինչպէս և միւս խորհուրդները, և որչափ անարատութիւն և սրբութիւն պարտինք ունենալ Քրիստոսի սուրբ մարմինը և արիւնը ճաշակելու համար։ Մանաւանդ հարկաւոր է հաշտութիւն և սէր ունենալ մեր եղբարց կամ մերձաւորաց հետ, որովհետեւ անհաշտութեամբ կարող չենք արժանապէս հաղորդուիլ. վասն զի հաղորդուիլ՝ կը նշանակէ միանալ Յիսուսի հետ և մեր եղբարց հետ, ուստի և պէտք է իմանանք, որ առանց զղջման, սրբութեան, հաշտութեան և սիրոյ՝ անհնարին է որ միութիւն լինի Աստուծոյ և մարդկան մէջ։

Մի անգամ Յիսուս տաղաւարահարաց տօնին եկաւ Երուսաղէմ։ Այս տօնը կարգուած էր իբրեւ յիշատակ այն ճանապարհորդութեանը, զոր Իսրայէլացիք կատարեցին անապատի մէջ. և փաղաստրակարգ կոչուելու պատճառն այն էր, որ նոյն տօնի կատարման ժամանակը նոքա կը բնակէին տաղաւարներու կամ վրաններու տակ։ Այս տօնը կը կատարուէր շատ մեծ հանդէսով։ Տաճարի դռները և սիւները կը զարդարէին դալարի կանաչներով և ժողովուրդը ջուր կը հանէր Սելոամի աւազանէն։ Այս ջրի մի մասը կը թափէին զոհարանի առջև, իբրեւ շնորհակալութեան պատարագ, իսկ

մնացածը կը խմէին, ասելով մարգարէի այս խօսքերը. «Առէք ուրախութեան ջուր փրկութեան աղբիւրէն» (Եսայի. ԺԲ. 5)։

Այս տօնի վերջին օրը Յիսուս տաճարի մէջ կանգնած՝ կ'ասէր. «Ով ծարաւ է՝ թող գայ ինձ մօտ և խմէ։ Ով հաւատայ ինձ, Գրոց խօսքը կը կատարուի նորա վրայ. «Կենդանի ջրոյ գետեր կը բղխեն նորամէն։» Այս խօսքը կ'ասէր Հոգւոյն սրբոյ համար, զոր հաւատացեալները պիտի ընդունէին։

Քահանայապետները և Հրէից ծերերը խորհուրդ կազմեցին և վճռեցին, որ ժողովրդապետնէն աքսորեն, ով որպէս Սեսիա ընդունի զՅիսուս։ Բայց Յիսուս ասաց նոցա յետագայ խօսքերը. «Ես եմ քաջ հովիւը. քաջ հովիւը իւր անձը կը դնէ իւր ոչխարներու համար։ Վարձկանը, որ իսկական հովիւ չէ և ոչխարները իրենը չեն, երբ կը տեսնէ որ գայլը կուգայ, կը թողու ոչխարները և կը փախչի, ուստի և գայլը կը յափշտակէ ոչխարները և կը ցրուէ։ Ես քարի հովիւ եմ. կը ճանաչեմ իմ ոչխարները և նոքա զիս կը ճանաչեն։ Ինչպէս Հայրս գիտէ զիս, նոյնպէս և ես գիտեմ Հայրս։ Ես կը դնեմ իմ անձս ոչխարներուս համար։ Ուրիշ ոչխարներ եւս ունիմ, որոնք այս գաւթէն չեն. բայց այն ոչխարները եւս այս տեղ պիտի բերեմ. Նոքա պիտի լսեն իմ ձայնը

և լինին մի հօտ և մի հովիւ։»

Յիսուսի Քրիստոսի հօտը ընդհանրական սուրբ Եկեղեցին է, զոր հիմնեց և սրբեց իւր արիւնով։ Ոչխարները՝ հաւատացեալներն են — սուրբ Եկեղեցւոյ անդամները — որոնք առաջ Հրէաներէն ընտրուեցան և ապա Հեթանոսներէն եւս, որոնք իբրեւ ոչխար չէին պատկաներ Հին Կտակարանի եկեղեցւոյ գաւթին։ Իսկ քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ միակ հովիւը, գլուխն և կառավարիչը է Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Հրէաներէն մի քանիսը ասացին Յիսուսին. «Մինչեւ երբ պէտք է երկբայութեան մէջ պահես զմեզ։ Եթէ իրաւի դու ես Քրիստոսը, յայտնապէս ասա մեզ։» Փրկիչը պատասխանեց. «Ես ձեզ ասացի, բայց չէք հաւատար։ Այն գործքերը, որ ես Հօրս անունով կը գործեմ, կը վկայեն ինձ համար. բայց դուք ոչ մի բանի չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէն չէք։ Իմ ոչխարները կը լսեն իմ ձայնը. ես գիտեմ և կը ճանաչեմ իմ ոչխարները և նոքա կը հետեւին ինձ։ Ես յաւիտենական կեանք պիտի տամ նոցա, և նոքա յաւիտեան պիտի չը կորնչին և ոչ ոք կարէ յափշտակել իմ ձեռքէն։ Հայրս, որ այն ոչխարները ինձ տուաւ, ամենէն մեծ է և ոչ ոք կարող չէ իմ

Հօր ձեռքէն յափշտակել։ Ես և Հայրս մի ենք — (ըստ Էուլթեան)։»

Հ.

Յիսուս կը գուշակէ Երուսաղէմի եւ տաճարի քանդումն։ Մատ. ԻԴ. 1։ Մարկ. ԺԳ. 1։ Ղուկ. ԻԱ. 5։

Երուսաղէմի տաճարը շինուած էր շատ հայկապ և գեղեցիկ։ Ունէր պերճաշուք գռներ և սիւներ։ Ամեն տեղ կը փայլէր ակնախտիղ սպիտակ մարմարիոնը և ոսկին։ Մի անգամ երեկոյին Փրկիչը իւր աշակերտներու հետ կ'երթար տաճարէն, աշակերտները կանգնեցան, որ աքանչանան տաճարի շինուածի վրայ։ Նոքա ասացին Յիսուսին. «Նայէ, թէ ինչպիսի քարեր են և ինչպիսի շինուածք։» Յիսուս պատասխանեց. «Ճշմարիտն ասեմ ձեզ, այդ ամենը այնպէս պիտի քանդուի, որ քարը քարի վրայ պիտի չը մնայ։»

Երբ եկան Ձիթենեաց սարի գլուխը, դարձեալ կանգ առին և հարցուցին Յիսուսին. «Ե՞րբ պիտի լինի այս ամենը, և այս զարհուրելի անցքի նշանները որո՞նք են։» Յիսուս պատասխանեց. «Երբ լսէք պատերազմնե-

բու համբաւներ և ազգերու խռովութիւն-
ներ, մի՛ վախնաք, այս ամենը պիտի լինի,
բայց տակաւին վերջը չէ։ Պիտի յառնէ ազ-
գը ազգի վրայ և թագաւորութիւնը՝ թա-
գաւորութեան վրայ, զանազան տեղեր պի-
տի լինի սով և սրածութիւն, բայց այս ա-
մենը տակաւին նեղութեանց սկիզբն է։ Ա-
մենեքն առաջ ձեզ պիտի ձեռք զարնեն, պի-
տի հալածեն, պիտի տանեն առեան և բանտ.
պիտի հանեն թագաւորներու և իշխաններ-
ու առջեւ իմ անուան համար. այս ամենը
պիտի լինի այն պատճառաւ, որ դուք կա-
րողանաք վկայութիւն տալ ինձ համար։
Առաջուց մի՛ մտածէք թէ ի՞նչ պիտի պա-
տասխանէք։ Այս կուտամ ձեզ իմաստութիւն
և շնորհքներու զօրութիւն, որուն մարդ
կարող չէ ընդդիմանալ։ Ձեզ պիտի մատնեն
ձեր ծնողները, եղբայրները, ազգականները
և բարեկամները, ձեզմէ շատերը պիտի ըս-
պանեն և ամենուն ատելի պիտի լինիք իմ
անուան համար. բայց առանց ձեր երկնա-
ւոր Հօր գիտութեանը՝ ձեր գլխու մազն
անգամ չկորնչիր։ Համբերութեամբ պիտի
փրկէք ձեր հոգին։ Իսկ երբ տեսնէք Երու-
սաղեմը զօրքով պատած, իմացէք որ հասած
է նորա օրը։ Երբ սուրբ տեղւոյն մէջ պղ-
ծութիւն տեսնէք, զոր գուշակած է Դանիէլ
մարգարէն, այն ժամանակ Հրէաստանի մէջ

գտնուողները թող սարերը փախչին. նոքա,
որոնք քաղաքի մէջ են, թող աշխատին հե-
ռանալ այն տեղէն. իսկ նոքա, որոնք քաղա-
քէն դուրս են, թող ներս չըմտնեն իրենց
ստացուածքի համար։ Այն ժամանակ պիտի
գան վրէժխնդրութեան օրերը, որոց վրայ
արդէն գրուած է, — Վա՜յ յղի և սնտուու
կանանց այն ժամանակ. մեծ թշուառութիւն
պիտի լինի երկրիս վրայ և Աստուծոյ բար-
կութիւնը այս ամեն մարդոց վրայ։ Նոքա
պիտի կերակուր լինին սրերու և գերի պի-
տի լինին ուրիշ ազգերու։ Երուսաղեմը ոտ-
նակոխ պիտի առնեն կռապաշտները, մինչև
որ կատարուին հեթանոսաց ժամանակները։
Ճշմարիտն ասեմ ձեզ, այս ազգը չանցնիր,
մինչեւ այս ամենը կատարուի։»

Յիսուսի Քրիստոսի գուշակածը բոլորը
կատարուեցաւ ճշմարտութեամբ։ Երուսա-
ղեմի աւերման մասին իսկութեամբ կատա-
րուած այս գուշակութիւնը պէտք է հա-
մոզէ մեզ անկասկած հաւատալու աշխարհիս
կատարածի անտուտ ճշմարտութեան եւ
մարգարէութեանն հետ, զոր իւր բերանով
յայտնեց աստուածային միակ վարդապետը՝
Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս։

ՀԱ.

Մարգարէութիւն աշխարհիս կատարածի եւ երկրորդ գալստեան վրայ։ Մաթ. Ի Գ. 29. Մարկ. ԺԳ. 24։ Ղուկ. ԻԱ. 25։

«Այս նեղութեան օրերէն յետոյ Աստուծոյ արքայութեան Աւետարանը պիտի քարոզուի բոլոր երկրիս վրայ և պիտի գայ ժամանակի վերջը, այսպէս ըսաւ Փրկիչը իւր խօսքը։ Այն ժամանակ պիտի լինին զարհուրելի նշաններ արեգակի, լուսնի և աստղերու վրայ։ Արեգակը պիտի խաւարի, լուսինը լոյս պիտի չքաւայ, աստղերը պիտի թափին երկնքէն և երկնային զօրութիւնքը պիտի շարժուին։ Իսկ երկրիս վրայ պիտի լինի վիշտ և սարսափ ամեն մարդու վրայ. ծովը պիտի սաստիկ ալէկոծուի, և մարդիկ գրեթէ պիտի հոգեվարքը լինին ահէն և սարսափէն, ինչ որ պիտի հասնի տիեզերքին. Այն ժամանակ պիտի երեւի մարդոյ Որդւոյ նշանը եւ երկրիս ամեն ազգերը պիտի կոծեն, երբ որ տեսնեն մարդոյ Որդին ամպերու վրայ նստած մեծ փառքով և զօրութեամբ։ Նա իւր հրեշտակները պիտի զրկէ փողով և պիտի հաւաքեն ընտրեալները երկրիս ամեն ծայրերէն։

Երբ այս ամենը սկսուի, բարձրացու-

ցէք ձեր գլուխները և իմացէք, որ մօտ է ձեր փրկութեան ժամը։ Թզենիէն սովորեցէք ժամանակը ճանաչել, երբ նորա ոստերը կը փափկանան և տերեւները կը ցցուին, կ'իմանաք որ ամառը մօտ է։ Այնպէս եւ դուք երբ այս ամենը տեսնէք, գիտացէք՝ որ ես մօտեցած եմ։

Իսկ մարդոյ Որդւոյ գալստեան օրը եւ ժամը մարդ չգիտէր, և ոչ հրեշտակները երկնքի մէջ, բայց միայն Աստուած։ Արթուն կացէք և աղօթեցէք, որովհետեւ ժամանակը չգիտէք թէ ե՞րբ պիտի հասնի։ Ոգոյշ կացէք, մի՛ ծանրացնէք ձեր սրտերը շուայտութեամբ, արբեցութեամբ և աշխարհային հոգսերով, որ չլինի թէ այն օրը յանկարծ վրայ հասնի ձեզ անպատրաստութեան մէջ, որովհետեւ իբրեւ ցանց (որոգայթ) պիտի ընկնի երկրիս վրայ։

Ինչպէս որ Նոյի ժամանակն էր, այնպէս պիտի լինի մարդոյ Որդւոյ գալստենէն առաջ։ Այն ժամանակ կուտէին, կը խմէին, կ'ամուսնանային մինչեւ այն օրը, երբ Նոյը տապանը մտաւ եւ ջրհեղեղը ընջեց բոլոր մարդկային ազգը։ Այնպէս պիտի լինի մարդոյ Որդւոյ գալստեան օրը։

Եթէ տան տէրը իմանար, թէ երբ պիտի գողը գայ, կը հսկեր և չէր թողուր իր տունը ական հատանել։ Այնպէս դուք ևս

միշտ պատրաստ եղէք, որովհետեւ չը գիտէք մարդոյ Որդւոյ գալստեան օրը։

Սովորեցէք այս առակէն։ Տան տէրը ուրիշ տեղ գնալու ժամանակ իւր ծառաներէն մէկը մեծ նշանակեց միւսներու վրայ, որ նա կերակուր տայ նոցա իր ժամանակին։ Երջանիկ է այն ծառայն, եթէ տէրը դարձած ժամանակը տեսնէ որ կատարեր է իւր պարտաւորութիւնը։ Տէրը կը նշանակէ այն ծառայն կառավարիչ իւր բոլոր ստացուածոց վրայ։ Բայց եթէ ծառայն ասէ իւր սրտին մէջ. "Իմ տէրը կ'ուշացնէ իւր գալուստը," և սկսի միւս ծառայակիցները և աղախինները ծեծել, և շուայտութեամբ, արբեցութեամբ ու անկարգութեամբ ապրել, տէրը յանկարծ կը հասնի և ստոփիկ կը պատժէ անպատրաստ ծառայն, և այն անպիտանը կը ձգեն այն տեղ, ուր է լացն ու ատամանց կրճտումն։

Ուրեմն պատրաստ կացէք, որովհետեւ ոչ օրը գիտէք և ոչ ժամը՝ թէ երբ պիտի գայ տան տէրը, երեկոյեան արդեօք, թէ առաւօտուն, կէս գիշերին արդեօք, թէ լուսաբացին, պատրաստ կացէք որ երբ գայ՝ ձեզ քնացած չը գտնէ։ Ինչ որ ձեզ կ'ասեմ, ամենուն կ'ասեմ, պատրաստ կացէք։"

Ինչ որ է հաստատակաց համար աշխարհի կատարածը, նոյն է և մահը ամենուս համար

առանձնապէս. ոչ ոք հաւատի և ապահով չէ իւր կենաց մի ժամին համար անգամ։ Մահը այնպէս յանկարծ կուգայ՝ ինչպէս տան տէրը կամ գողը։ Ուրեմն ամենքս հընազանդինք աստուածային պատուիրանին և պատրաստ լինինք մեր Փրկիչը ընդունելու։ Վասն զի՝ պատրաստութիւնը և արթնութիւնը ինչպէս որ մեր Փրկչի պատուէրն է, նոյնպէս և մեր ամենուս անհրաժեշտ պարտաւորութիւնը։

ՀԲ.

Վերջին դատաստանի վրայ։ Մատ. ԻԵ. 31։

Երբ մարդոյ Որդին գայ հրեշտակներով շրջապատուած և նստի իւր փառաց աթոռի վրայ, այն ժամանակ պիտի հաւաքուին նորա առջեւ աշխարհիս բոլոր ազգերը, և նա պիտի բաժանէ բարիները՝ չարերէն, ինչպէս հովիւը կը զատէ ոչխարները՝ այծերէն։ Ոչխարները պիտի կանգնին նորա աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ։

Այն ժամանակ Թագաւորը պիտի ասէ աջակողմեաններուն. "Եկէք, ով իմ Հօրը օրհնածներ, եկէք ժառանգեցէք արքայութիւնը որ պատրաստուած է ձեզ համար աշխարհիս ստեղծագործութենէն։ Զի

վեր։ Այս քաղցած էի, զիս կերակրեցիք։ Ծարաւի էի, ջուր տուիք։ օտարական էի և ձեր տան մէջ ընդունեցիք։ Հիւանդ էի՝ այցելութեան եկաք ինձ։ բանտի մէջն էի՝ և եկաք տեսութեան։»

Այն ժամանակ արդարները պիտի ասեն. «Տէր, մենք երբ տեսանք զքեզ քաղցած՝ և կերակրեցինք։ Ծարաւի՝ և արբուցինք։ օտարական՝ և մեր տունը ընդունեցինք։ մերկ՝ և հագուցինք։ հիւանդ՝ և այցելութեան եկանք, կամ բանտի մէջ՝ և տեսութեան եկանք քեզ։» Երկնաւոր Թագաւորը պիտի ասէ. «Ինչ որ իմ փոքրիկ եղբայրներէս մէկուն ըրիք՝ ինձ արարիք։»

Յետոյ Թագաւորը պիտի ասէ ձախակողմեաններուն. «Անիծեալներ, գնացէք կրակը, որ պատրաստուած է սատանային և նոցա ծառաներուն համար։ Այս քաղցած էի՝ դուք չկերակրեցիք զիս։ Ծարաւի էի, ջուր չը տուիք։ օտարական էի՝ օթեւան չը տուիք։ մերկ էի՝ չը հագուցիք, հիւանդ էի՝ այցելութեան չեկաք, և բանտի մէջ էի՝ տեսութեան չեկաք։» Անեղաւորները պիտի ասեն. «Տէր, մենք երբ քաղցած՝ տեսանք զքեզ և չը կերակրեցինք։ Երբ տեսանք ծարաւի և ջուր չը տուինք։ Երբ տեսանք պանդուխտ, մերկ, հիւանդ, բանտի մէջ, և չծառայեցինք քեզ։» Թագաւորը պիտի պատասխանէ։ «Ով որ չծառայեր իմ փոքրիկ եղբայրներուս, ինձ եւս չծառայեր։»

«Այն ժամանակ մեղաւորները պիտի ասեն՝ յաւիտենական տանջանք, իսկ արդարները յաւիտենական և երջանիկ կեանք։»

Այթէ իրենց ընկերին և մերձաւորին չծառայողները այսպիսի սաստիկ պատիժ պիտի ըստանան, ապա ինչ կարող են ասասել նոքա, որոնք բարութեան փոխարէն՝ կ'աշխատին չարիք և վնաս հասուցանել իրենց մերձաւորին։ Նոքա, որոնք զանազան զրկանքներով և հալածանքներով կը թիւնաւորեն իրենց մերձաւորի կեանքը։ Նոքա, որոնք կը խաբեն և կը զրկեն ստացուածքէ։ Նոքա, որոնք կը զրպարտեն, կը ծեծեն բարկութեան ժամանակ կամ կը սպանեն։ Նոքա, որոնք չար խորհրդներով և օրինակներով զեղխութեան կամ մոլութեան մէջ կը ձգեն իրենց ընկերը և կամ կը ջանան անպատուել ատելութեամբ և վնասաւորիչ խօսքերով։ Քրիստոսի կամքն է որ մենք ոչ թէ միայն չարիք չը հասուցանենք մեր ընկերին, այլ միշտ աշխատինք բարիք հասուցանել՝ թէ խօսքով, թէ գործքով, թէ մեր տաղանդով և թէ մեր հարստութեամբ։

ՀԳ.

Զատկի պատրաստութիւնը։ Մաթ. ԻԶ. 3։
Մարկ. ԺԴ. 12։ Ղուկ. ԻԲ. 1։

ԶԱՏԿԷՆ երկու օր առաջ, երբ ամեն Իսրայելացի կը պատրաստուէր արժանապէս տօնելու այս մեծ տօնը, քահանայապետները, դպիրները և ժողովրդեան ծերերը ժողովեցան Կայիափա քահանայապետի տունը, որ խորհուրդ առնեն, թէ ինչպէս ծածուկ բռնեն Յիսուսը և սպաննեն։ Նոքա կ'ասէին. «Այս գործը պէտք չէ կատարել տօնի ժամանակ, որպէս զի խռովութիւն չընկնի ժողովրդեան մէջ։» Նոքա կ'երկնչէին ժողովրդէն, և ոչ թէ Աստուծոյ բարկութենէն կը սարսափէին։

Այնուհետև Յիսուս առաջուց դուշակեց ինչ որ կատարուելու էր։ Երուսաղէմ դալու ժամանակ, դեռ Ճանապարհին էր, աշակերտներուն ասաց. «Մենք կը մտնենք Երուսաղէմ, ուր պէտք է կատարուի ամեն բան, ինչ որ մարգարէները դուշակեր են մարդոյ Որդւոյ վրայ։ Նա պիտի մատնուի քահանայապետներու, դպիրներու և ժողովրդեան ծերերու ձեռքը։ Նոքա պիտի 'ի մահ դատապարտեն մարդոյ Որդին և հեթանոսաց ձեռքը մատնեն, որոնք պիտի հայ-

հոյեն, թքանեն, ծեծեն և վերջապէս սպաննեն։ Բայց նա երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։»

Յիսուս աւելի պարզ հասկացնելու համար իւր մերձակայ մահը՝ կրկնեց. «Այժմ ահա երկու օրէն յետոյ պիտի Զատիկ լինի և մարդոյ Որդին պիտի մատնուի խաչուելու։»

Տաներկու առաքեալներէն մէկը՝ Յուդա Իսկարիովտացին գնաց քահանայապետներու մօտ և ասաց. «Ի՞նչ կուտաք ինձ, եթէ Յիսուսը ձեր ձեռքը մատնեմ։» Նոքա սաստիկ ուրախացած՝ խոստացան երեսուն արծաթ տալ։ Այս ժամանակէն 'ի վեր Յուդան միշտ յարմար միջոց կը փնտուէր, որ իր Վարդապետը անօրէն Հրեաներու ձեռքը մատնէ։

Բաղարջակերաց տօնի առաջին օրը, երբ արդէն ամենքը կը պատրաստուէին Պասեքը տօնելու, աշակերտները եկան Փրկչի մօտ և հարցուցին. «Վարդապետ, ուր կամիս, որ քեզ համար Պասեք պատրաստենք։» Այս հինգշաբթի օրն էր։ Յիսուս Քրիստոս հաստատ բնակութիւն չունէր Երուսաղէմի մէջ, և այս պատճառաւ ասաց Պետրոսին և Յովհաննէսին. «Գնացէք քաղաքը, այն տեղ կը հանդիպիք մի մարդու, որ սափորով ջուր կը տանէ, հետեւեցէք նորան և մտէք այն

տուն, ուր նա կը մտնէ, և ասացէք տան տիրոջը. «Վարդապետը պատուիրեց ասել քեզ թէ՝ — Իմ ժամանակս մօտ է, ես կը ցանկամ աշակերտներով հանդերձ Զատիկը քեզ մօտ ուտել։ — Նա կը ցուցնէ ձեզ մի մեծ և զարդարած վերնատուն. այն տեղ պատրաստեցէք Պասէքի գառն։»

Աշակերտները երբ քաղաք գնացին, ամեն բան գտան այնպէս, ինչպէս Տէրը ասած էր, և պատրաստեցին Պասէքը։

ՀԴ.

Ռոնաչուայ։ Յովհ. ԺԳ. 4։

Երեկոյեան Յիսուս մտաւ այն լուսաւորած սենեակը, ուր պատրաստուած էր Պասէքի գառն, և իւր աշակերտներու հետ միասին սեղան նստան։ Նա գիտէր, որ արդէն մօտեցած է այն ժամը, որ պէտք է առ ժամանակ մի բաժնուի իւր աշակերտներէն։ Նա կամեցաւ այս վերջին ժամուն մէջ ցոյց տալ իւր աշակերտներուն իւր սէրը և փրկարար յիշատակ թողուլ նոցա սրտի մէջ.

«Նա շատ կը փափաքէի, ասաց նա, չարչարանքէս առաջ Պասէքը ձեզ հետ ուտել. որովհետեւ ահա կ'ասեմ ձեզ, որ այսուհետեւ չըպիտի ուտեմ նոյն Պասէքը, մինչեւ որ զայն չը տօնեմ ձեզ հետ Աստուծոյ արքայութեան մէջ։»

Եբրայեցւոց մէջ սովորութիւն կար, որ հիւրերը եկած ժամանակ, նոցա ոտքերը կը լուային։ Այս պարտաւորութիւնը սովորաբար կը կատարէր ծառաներէն մէկը։ Բայց Յիսուս Քրիստոս տիրերայ իշխողը ինքը կատարեց այս սովորութիւնը ընթրեաց ժամանակ։ Նա եաւ սեղանէն, առաւ զենջակ, ջուր լեցուց կոնքի մէջ, լուաց իր աշակերտաց ոտքերը և սրբեց զենջակով, որ կապած ունէր։

Երբ կարգը հասաւ Պետրոս առաքեալին, սա յարգութեամբ լցուած առ աստուածային վարդապետը՝ ասաց. «Տէր, դո՞ւ պէտք է լուանաս ոտքերս։» Յիսուս պատասխանեց. «Այժմ դուն չես հասկանար իմ ըրածն, բայց յետոյ պիտի հասկանաս։» Պետրոս ասաց. «Երբէք չեմ թողուր, որ դուն իմ ոտքերս լուանաս։» Յիսուս պատասխանեց. «Եթէ ես ոտներդ չըլուանամ, դուն մասն չես ունենար ինձ հետ։» Այն ժամանակ Պետրոս ասաց. «Տէր, ոչ թէ միայն ոտներս, այլ և ձեռքերս ու գլուխս ալ լուա։» Յիսուս պատասխանեց. «Անոր որ բանը հարկաւոր չէ լուանալ, դուք սուրբ էք, բայց ոչ ամենքդ։» Այս խօսքը ասաց

այն պատճառաւ, որովհետեւ սրտագէտ Փրկիչը արդէն գիտէր այն անձը, որ կը խորհէր զինքը մատնել։

Յիսուս բոլոր աշակերտաց ոտքերը լուանալէն յետոյ, հանդերձը հագաւ, նստաւ սեղանի մօտ և ասաց. «Գիտէք դուք, թէ ես ի՞նչ արարի։ Դուք զիս կ'անուանէք ձեր Տէրը և վարդապետը. ճշմարիտ է, որովհետեւ ես ձեր Տէրն ու վարդապետն եմ։ Բայց եթէ ես լուացի ձեր ոտքերը, մի և նոյնը դուք եւս պէտք է միմեանց առնէք։ Ես ձեզ օրինակ ցուցի՝ թէ ի՞նչպէս պէտք է վարուիլ։ Ծառայն կարող չէ իր տիրոջէն մեծ լինիլ, նոյնպէս և ոչ առաքեալը իր առաքողէն։ Եթէ դուք գիտէք այս, երջանիկ պիտի լինիք, եթէ նոյնը գործով կատարէք։»

Այսպէս Յիսուս ցոյց տուաւ խոնարհութեան գեղեցիկ օրինակ։ Ա՛յ՝ որ երկնքի եւ երկրի Թագաւորն էր, անպատուութիւն չըհամարեց կատարել ամենայն տին ծառայի պարտաւորութիւն։ Ա՛յ անյիշաչարութեամբ և խոնարհութեամբ լուաց մինչեւ անգամ Յուդայի ոտները, որոյ մատնութեան չար խորհուրդը արդէն գիտէր։ Որչա՞փ պանչելի է Յիսուսի օրինակը։ Ա՛յ ցոյց տուաւ, որ մենք մեր խոնարհութեան և մարդասիրութեան պարտաւորութիւնը պէտք է կատարենք ուրախ սրտով, չը խորհելով ո՛չ բարեկամը և ո՛չ թշնամին։ Ա՛յ ցոյց տուաւ, որ որչափ խոնարհինք, այնչափ կը բարձրանանք։ Ա՛յ ցոյց տուաւ, որ աշխարհիս մէջ ամենէն մեծը նա է, ով որ շատերուն կը պատաւորէ, շատերուն կ'օգնէ, շատերու համար իւր պարտաւորութիւնները կը կատարէ։ Յիսուս կենդանի օրինակով յայտնեց, որ աշխարհի մեծութիւնը իշխանութեան և փառաց մէջ է, բայց քրիստոնէութեան մեծութիւնը՝ խոնարհութեան և պարտքը կատարելու մէջ։ Ուրեմն՝ մենք, որպէս քրիստոնեայ և Քրիստոսի աշակերտ, պարտաւոր ենք ամեն կերպով ջանալ և մեր Փրկչի ցուցած օրինակը սիրով կատարել. վասն զի ինքն ասաց. «Որչա՞փ պէս ես կատարեցի, նոյնպէս և դուք ձեր ընկերներու և մերձաւորներու համար կատարեցէք։»

Հե.

Ցուդայ մատնիչ։ Մատ. Ի.Զ. 20։ Մարկ. ԺԴ. 1։ Յովհ. ԺԴ. 18։

Յիսուս աշակերտաց ոտքերը լուանալէն յետոյ՝ ասաց. «Պէտք է կատարուի այն մարգարէութիւնը, որով գուշակուած է թէ՝

«Նա՝ որ ինձ հետ կ'ուտէր, զիս դաւաճանեց.» Սաղմ. Խ. 10։ Ահա այս մարգարէութիւնը չկատարուած՝ ես կ'ասեմ ձեզ, որ հաւատաք, թէ ես այն եմ, որոյ համար մարգարէն ասած է իւր դուշակութեան խօսքերը.» Յովհ. ԺԳ. 19։

Յիսուս ասաց այս խօսքերը սրտաշարժ կերպով։ Սատանիչի վրայ ոչ թէ կը բարկանար, այլ կը ցաւէր։ Փրկիչը կամէր մատնիչը զգուշացնել։ Բոլոր աշակերտաց վրայ նայելով ասաց. «Ձեզմէն մէկը զիս պիտի մատնէ։»

Աշակերտները երբ լսեցին՝ սարսափեցան, միմեանց վրայ կը նայէին, բայց չը գիտէին թէ որո՞ւ համար ասաց։ Ոչքա կարգաւ կը հարցընէին. «Միթէ ե՞ս եմ, Տէր։» Բայց Յիսուս լուռ էր եւ չէր ուզեր մատնիչը յանդիմանել, այլ կամէր զգուշացընել և զղջացընել։ «Այո՛, կրկնեց Յիսուս, ձեզ մէն մէկը զիս պիտի մատնէ։ Պիտի կատարուի ամենը, ինչ որ գրուած է մարդոյ Որդւոյ վրայ, բայց վա՜յ մատնողին, աւելի լաւ էր, որ ծնուած չը լինէր նա։»

Յիսուսի սիրելի աշակերտն՝ հեղն Յովհաննէս նստած էր նորա մօտ։ Պետրոս Յովհաննէսին նշան տուաւ, որ հարցընէ թէ՝ ո՞վ է մատնիչը։ Յովհաննէս՝ կամաց հարցուց. «Տէր, ո՞վ է այն։» Յիսուս պատասխանեց. «Նա է, որուն կուտամ ես թաց հեալ պատառը։»

Փրկիչը սիրով բաժանեց իւր հացը մատնիչի հետ. նա իւր սէրը յայտնելով կամէր նորա չար խորհուրդը փոխել, բայց Յուդան հացը Փրկչի ձեռքէն առնելէն յետոյ՝ դարձեալ կը կեղծաւորէր և կ'աշխատէր ուրիշներու նման անմեղ երեւիլ։ Յուդան եւս կեղծաւոր անհոգութեամբ կը հարցընէր միւսներու նման. «Միթէ ե՞ս եմ, Տէր։»— «Դու ինքդ ասացիր այդ,» պատասխանեց Յիսուս։ Յուդան տեսաւ որ, կեղծաւորութիւնը չօգնէր և իւր չար խորհուրդն արդէն յայտնի է Փրկչին, բայց ամենեւին զղջալու չունէր։ Յիսուս ասաց. «Կատարէ՛ շուտով, ինչ որ մտքիդ մէջ դրած ես։» Բայց՝ Ի Յովհաննէսէն ոչ ոք չը հասկցաւ այս խօսքերու միտքը. միւսները կը կարծէին թէ որովհետեւ հասարակաց արկղը Յուդայի մօտ էր, Տէրը կը հրամայէ գնել ինչ որ հարկաւոր է այն տօնի կամ աղքատներուն ողորմութիւն տալու համար։ Յուդան սեղանէն ելաւ և գնաց։ Արդէն գիշեր էր։ Երբ նա գնաց։

ՀԶ.

Պետրոսի ուրացութեան զուշակութիւնը.

Մաթ. ԻԶ. 31։ Ղուկ. ԻԲ. 31։ Յովհ. ԺԶ. 31։

ՅՈՒԴԱՆ դուրս եկաւ իւր սարսափելի և աններելի խորհուրդը կատարելու համար։ Յիսուս իմանալով որ իւր չարչարանաց ժամանակը կը մօտենայ, ասաց. «Հասաւ արդէն ժամը, որ մարդոյ Որդին պիտի փառաւորուի և Աստուած պիտի փառաւորուի իւր Որդւով։ Եթէ նա փառաւորեց զԱստուած, Աստուած եւս պիտի փառաւորէ զնա։ Որդեակներ, ես երկար չը պիտի մընամ ձեզ հետ։ Ես կուտամ ձեզ նոր պատուիրան, զիրար սիրեցէք, ինչպէս ես ըզձեզ սիրեցի։ Սէրը՝ զոր դուք պիտի ունենաք միմեանց վրայ՝ կը ցուցընէ ուրիշները, որ դուք իմ աշակերտներս էք։»

Պետրոս առաքեալը հարցուց. «Տէր, իսկ դու ո՞ւր կ'երթաս։»—Յիսուս պատասխանեց. «Ուր ես կ'երթամ, դու չես կարող ինձ հետ գալ, բայց յետոյ պիտի գաս իմ ետևէն։»—«Ինչո՞ւ այժմ չեմ կարող գալ քո ետեւէն, հարցուց Պետրոս, ես պատրաստ եմ իմ անձս դնել քո համար։»—«Դո՞ւ չպիտի անձդ դնես ինձ համար, ասաց Յիսուս, ճշմարիտն ասեմ քեզ, որ մինչ-

չեւ հաւի խօսիլը երեք անգամ պիտի ուրանաս զիս։»

Յետոյ դառնալով դէպ 'ի աշակերտները՝ ասաց Յիսուս. «Այս գիշեր դուք ամենքդ պիտի դայթակղիք իմ մասին։» Պէտք է մարգարէական խօսքերը կատարուին թէ՝ «Հովիւը պիտի հարկանեմ և ոչխարները պիտի ցրուին։» Զաք. ԺԳ. 7։ Բայց յարութիւնէն յետոյ ձեզ պիտի հանդիպիմ Գալիլիայի մէջ։»

Պետրոս առաքեալը ասաց. «Եթէ ամենքը դայթակղին, ես դարձեալ հաստատիմ կը մնամ քեզ, ես պատրաստ եմ քեզ հետ բանտ նստիլ և մինչեւ անգամ մեռնիլ։»

Բայց Յիսուս կրկնեց անոր միւսանգամ. «Ճշմարիտն ասեմ քեզ, որ սոյն իսկ գիշերը մինչեւ աքաղաղի խօսիլը՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս։ Ով Սիմո՛ն, Սիմո՛ն, սատանան կ'աշխատի խարբալել զքեզ, ինչպէս ցորեան, բայց ես աղօթեցի քեզ համար, որ հաւատքդ չը պակսի, դու պիտի դառնաս և հաստատես եղբայրներդ։»

ՀԷ.

Խորհրդաւոր ընթրիք։ Մատ. Ի.Զ. 26։

Այս խօսակցութեան ժամանակ զատկական գառը կերան և հօնը աւարտեցին, որ հին Ուխտի կամ Կտակարանի կանոնով յիշատակ էր այն ազատութեան, որով Իսրայէլացիք ազատեցան Եգիպտացւոց գերութենէն։

Յիսուս իւր մահով կը պատրաստէր աշխարհի համար աւելի լաւ ազատութիւն, այսինքն փրկութիւն՝ մեղաց գերութենէն։ Յիսուս փոխանակ զատկական գառին իւր անձը զոհեց մարդկային մեղաց քաւութեան համար, և ահա այս մեծ զոհով կը սկսուի Նոր Ուխտը։ Այս մեծ զոհագործութեան յիշատակի և մեղաց թողութեան համար կարգեց խորհրդաւոր ընթրիքը, որով մենք կը հաղորդինք նորա մարմնոյն և արեանը։

Յիսուս առաւ հասարակ բաղարջ հաց, օրհնեց, կոտորեց և տուաւ իւր աշակերտներուն ասելով. "Առէք, կերէք այս է իմ մարմինս, որ կը զոհեմ ձեզ համար։" Նոյնպէս անապակ գինւոյ բաժակն առաւ, գոհացաւ և տուաւ աշակերտներուն ասելով. "Խմեցէք ամենքդ այս բաժակէն. սա է նոր ուխտի արիւնս, որ բազմաց վրայ կը հեղանի մեղաց թողութեան համար։ Այս կատարեցէք իմ յիշատակիս համար։"

Ինչ որ աշակերտներուն ասաց Քրիստոս, ամեն քրիստոնէից ասաց։ Ուրեմն մենք պարտաւոր ենք թէ՛ մեր մեղաց քաւութեան համար և թէ՛ փրկութեան մեծ զոհի յիշատակը անմոռաց պահպանելու համար՝ երկիւղածութեամբ և ճշմարիտ զղջմամբ հաղորդիլ Քրիստոսի մարմնոյն և արեանը։ Այս է մեր փրկութեան զոհը. նորա շնորհիւ մենք Աստուծոյ հետ հաշտուեցանք և դարձեալ նորա շնորհիւ կարող ենք Աստուածութեան հետ հաղորդուիլ և անբաժան մնալ այն մարդասէր Փրկչէն, որ մեզ համար չը խնայեց իւր անձը զոհելու։ Ինչպէս Յիսուս իւր անձի պատարագաւոր ուխտ հաստատեց մեզ հետ, նոյնպէս և մենք բանիւ, գործով և մեր կեանքով և մահուամբ պիտի ուխտենք հաստատուն պահել մեր հաղորդութիւնը և միութիւնը Յիսուսի հետ, նորա սիրոյ և ճշմարտութեան համար զոհել մեր անձը, ինչպէս զոհեց նա իւր անձը մեր սիրոյն համար։ Երբէք չը պիտի մոռանանք այս փրկարար ուխտի քաղցր յիշատակը։

ՀԸ.

Յիսուսի հրաժարական խօսակցութիւնը իւր աշակերտաց հետ։ Յովհ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԵ.

Վերջին ժամանակը արդէն հասած է։ Յիսուս կը պատրաստուէր հաղորդուելու և մեռնելու։ Նա գիտէր որ միւս օրը այս ժամանակ նորա մարմինը գերեզմանի մէջ պիտի լինի։ Աշակերտները նորա շուրջ նստած էին տխուր լռութեան մէջ։ Մօտեցած էր բաժանման ժամը և նոցա սիրտը լցուած էր ցաւով։ Յիսուս աշակերտները միխիթարելով ասաց. «Թող չը խռովին ձեր սրտերը. հաւատացէք Աստուծոյ և ինձ։ Իմ հօրս տունը օթեւաններ շատ կան. եթէ այս այսպէս չը լինէր, ես ձեզ պիտի ասէի թէ՝ կ'երթամ ձեզ համար տեղ պատրաստելու։ Եթէ երթամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձեալ կը դառնամ և ձեզ կ'առնում ինձ հետ, որ դուք եւս այն տեղ լինիք, ուր ես եմ։ Ձեզ արդէն յայտնի է ճանապարհը, ուր որ ես կ'երթամ։»

Թոմաս առաքեալը չը հասկանալով Յիսուսի խօսքերու միտքը՝ հարցուց. «Տէր, ուր կ'երթաս, մենք ինչպէս կարող ենք քո ճանապարհը գիտնալ։» Յիսուս պատասխանեց. «Ես եմ ճանապարհ, ճշմարտու-

թիւն և կեանք։ Ոչ ոք կարող չէ Հօրս մօտ գալ, եթէ ինձմով։ Եթէ զիս ճանաչէիք, իմ Հայրն եւս կը ճանաչէիք։ Այսուհետեւ կը ճանաչէք Հայրս և արդէն տեսաք։

Փիլիպպոսը ասաց. «Տէր, ցոյց մեզ քո Հայրը և բաւական է մեզ։»—Յիսուս պատասխանեց. «Փիլիպպոս, այսքան ժամանակ է ձեզ հետ եմ և տակաւին զիս չը ճանաչեցիր։ Նա որ զիս տեսաւ, իմ Հայրս եւս տեսաւ, և դուք ինչպէս կ'ասես թէ՝ ցոյց մեզ Հայրդ։ Միթէ դուք չեն հաւատար. որ ես Հօրս մէջն եմ և Հայրը իմ մէջ։ Այս խօսքերը որ կը խօսիմ՝ ինձմէ չեմ խօսիր, և այս գործքերը, որ կը գործեմ՝ ինձմէն չեմ գործեր, այլ Հայրս որ իմ մէջ բնակած է. նա կը գործէ այս գործքերը։ Կը հաւատաք ինձ, որ ես Հօրս մէջն եմ եւ Հայրը իմ մէջ։ Գոնէ գործքերուս համար հաւատացէք ինձ։ Ճշմարիտն ասեմ ձեզ, ով որ հաւատայ ինձ, կարող է այն գործերը գործել, որ ես կը գործեմ և աւելի մեծ գործեր կը գործէ, որովհետեւ ես Հօրս մօտ կ'երթամ։ Ինչ որ իմ անունովՀՀՀ Հօրմէս խնդրէք՝ պիտի կատարուի, որ Հայրը փառաւորուի Իւր Որդւով։ Եթէ զիս կը սիրէք, իմ պատուիրաններս պահեցէք, և ես պիտի աղաչեմ որ Հայրս այլ միխիթարիչ տայ ձեզ, որ յաւիտեան ձեզ հետ բնակի, այսինքն ճըշ-

մարտութեան Հոգին, զոր աշխարհս չէ կարող ընդունիլ. որովհետեւ չըտեսներ և չը ճանաչեր զնա (Հոգին), բայց դուք կը ճանաչէք, վասն զի ձեր մէջ կը բնակի և ձեզ հետ պիտի լինի։

«Չս ձեզ որբ չեմ թողուր, այլ կուգամ ձեզ մօտ։ Փոքր ժամանակէն յետոյ աշխարհը չըտեսներ զիս. բայց դուք պիտի տեսնէք, որովհետեւ ես կենդանի եմ և դուք եւս կենդանի պիտի լինիք։ Այն ժամանակ դուք պիտի իմանաք, որ ես Հօրս մէջն եմ, դուք իմ մէջս և ես ձեր մէջ։

«Ով ունի իմ պատուիրաններս և կը կատարէ, նա կը սիրէ զիս. իսկ ով զիս կը սիրէ, նա կը սիրէ իմ Հայրս։ Չս եւս կը սիրեմ զնա և պիտի զինքս յայտնեմ նորան և մենք պիտի գանք նորա մօտ և օթեւանենք նորա մօտ։»

Աշակերտները դեռ Յիսուսի խօսքերը բոլորովին չէին հասկանար, նորա զարմանալով կը նայէին նորա վրայ։ Յիսուս աւելացուց այս խօսքերը. «Տակաւին շատ բան հարկաւոր է ասել ձեզ, քանի որ ձեզ հետ եմ, բայց այժմ դուք կարող չէք սաստներս հասկանալ։ Իսկ մխիթարիչ սուրբը Հոգին, զոր Հայրս իմ անունով պիտի զրկէ ձեզ, նա պիտի ուսուցանէ ձեզ ամեն բան և պիտի ձեր միտքը բերէ, ինչ որ ես ձեզ ասացի։»

Յետոյ օրհնելով իւր աշակերտները՝ ասաց. «Իմ խաղաղութիւնը կը թողում ձեզ, իմ խաղաղութիւնը կուտամ ձեզ, ոչ թէ այնպէս, ինչպէս աշխարհս կուտայ։»

Յիսուս նկատելով աշակերտաց տրտմութիւնը և երկիւղը ասաց. «Թող չը խռովին ձեր սրտերը և չըվախնան։ Դուք լսեցիք, ինչ որ ձեզ ասացի, թէ ես կ'երթամ, բայց պիտի դարձեալ գամ ձեզ մօտ։ Եթէ դուք զիս կը սիրէք, պէտք է ուրախանաք, որ ասացի թէ կ'երթամ Հօրս մօտ, որովհետեւ Հայրս ինձմէն մեծ է։» (Յիսուս իւր մարդկութեան նկատմամբ կ'ասէ այս խօսքը)։

«Շատ երկար չեմ կարող խօսիլ ձեզ հետ. վասն զի աշխարհիս իշխանը կը մօտենայ, բայց իմ մէջ բան չըպիտի գտնէ (այսինքն իշխել կարող չէ)։ Սակայն թող աշխարհը իմանայ, որ ես Հայրս կը սիրեմ, և կը կատարեմ ամեն բան ինչ որ հրամայած է։ «Եկէք, ուրեմն գնանք այս տեղէն։»

Յիսուսի խօսակցութիւնը իւր աշակերտաց հետ շարունակուեցաւ մինչև այն ժամանակը, երբ նոցա հետ միասին եկաւ Գեթսեմանի պարտէզը։ Այս խօսակցութիւնը կը պարունակէ իւր մէջ այնպիսի սրտաշարժ և խրատական պատուէրներ և վարդապետութիւններ, որ ինչքան կարդանք, չենք կշտանար, այլ միշտ կը գտնենք նորա մէջ

նոր կերակուր և նոր սնունդ մեր մտքի և սրտի համար։ Այս խօսակցութիւնը Հոգւոյն Սրբոյ ազդեցութեամբ աւանդած է մեզ Յիսուսի սիրելի աշակերտը՝ Յովհաննէս աստուածաբանը. և երբ քրիստոնէական զգայմամբ կը կարդանք նորա Աւետարանի ԺԵ. ԺԶ. ԺԷ. գլուխները, մի երկնային մըխիթարութեամբ կը միխիթարուի մեր հոգին։ Աւետարանի յիշեալ գլուխները Յիսուսի վերջին Կտակն է, որով աւանդած է մարդասէր Փրկիչը իւր սէրը, իւր մխիթարութիւնը, իւր սրբութիւնը և բարութիւնը, և պատուիրած է մեզ սիրել, մխիթարուիլ, սուրբ լինիլ և բարի գործել, որով կարող ենք օթեւան լինիլ աստուածութեան և մեր մէջ ընդունիլ ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայր, Որդի և Հոգին սուրբ։ Ի՜նչ երջանկութիւն է քրիստոնէի համար, երբ Աստուած իր մէջը բնակած է և ինքը Աստուծոյ մէջ։ Երբ որ քրիստոնեայն միացած է Աստուծոյ հետ, այնուհետեւ ոչ ինչ են նորա համար աշխարհի նեղութիւնները, վիշտերը, փորձանքները, աղքատութիւնը և տառապանքները։ Նա աշխարհի ամէն հարուստներէն հարուստ է, ամէն մեծամեծներէն մեծ է, և ամէն հզօրներէն հզօր է, որովհետեւ աշխարհի Տէրը և Թագաւորը իրեն մէջ ունի։ Որեմն պարտաւոր ենք ամէն

ժամանակ կարդալ մեր Փրկչի Կտակը և սիրով կատարել ինչ որ կտակած և պատուիրած է մեզ։

ՀԹ.

Յիսուս Գեթսեմանիի պարտիզին մէջ։
Մատ. Ի.Զ. 36։ Մարկ. Ժ.Զ. 32։ Ղուկ. Ի.Թ. 39։

Յիսուս Կեդրոնի ձորէն անցնելով եկաւ մի գիւղ, որ Զիթենեաց սարի տակն էր և կը կոչուէր Գեթսեմանի։ Նա իւր աշակերտաց հետ պարտէզը մտաւ և ասաց. «Մընացէք այս տեղ, ես կ'երթամ աղօթելու։» Յիսուս իւր հետ առաւ Պետրոսը և Զեբեդեայի երկու որդիքը՝ Յակոբոս և Յովհաննէս։ Երբ առանձնացան՝ Փրկիչը ասաց նոցա. «Ոգիս մինչեւ 'ի մահ տրտում է, կացէք այս տեղ եւ հսկեցէք ինձ հետ։» Յետոյ փոքր ինչ հեռանալով գետնին ընկաւ երեսի վրայ և կ'աղօթէր ասելով. «Հայր իմ, եթէ հնար է, թող անցնի այս բաժակը ինձմէն, բայց ոչ թէ ինչպէս ես կամիմ, այլ ինչպէս դու կամիս. թող կատարուի քո կամքը։»

Յետոյ դառնալով աշակերտաց մօտ տեսաւ որ քնացած են, և ասաց Պետրոսին.

«Սիմոն, կը քնանա՞ս. չկարողացար ժամ մի արթուն մնալ ինձ հետ։ Մի՛ քնանաք, աղօթեցէ՛ք որ փորձութեան մէջ չընկնիք։ Ոգիս յօժար է, բայց մարմինս տկար։» Այս ասելով դարձեալ հեռացաւ աշակերտներէն և ծունր իջած սկսաւ կրկին աղօթել. «Հա՛յր իմ, կ'ասէր նա, եթէ հնար չկայ որ այս բաժակը ինձմէն անցնի, ես կը խմեմ, թող քո կամքդ լինի։»

Դառնալով աշակերտաց մօտ դարձեալ քնացած գտաւ, որովհետեւ նոցա աչքերը ծանրացած էին։ Յիսուս աշակերտները թողլով մեկնեցաւ և վերստին կ'աղօթէր ասելով. «Հա՛յր իմ, եթէ հնար չկայ որ այս բաժակը ինձմէն անցնի, թող քո կամքդ լինի։»

Այս ժամանակ հրեշտակը երեւեցաւ և կը զօրացնէր զՅիսուս։ Նա այնպիսի մըտադրութեամբ կ'աղօթէր, որ արեան քրտինքի կայլակները ոլոռն ոլոռն կը հոսէին գետնի վրայ։ Հրեշտակէն մխիթարուելով եւ աղօթքով զօրանալով՝ Յիսուս դարձաւ իւր քնացած աշակերտներու մօտ և հեղութեամբ ասաց. «Դուք տակաւին կը քնանա՞ք և կը հանգստանա՞ք։ Հասաւ ժամը, մարդոյ Որդին կը մատնուի մեղաւորաց ձեռքը։ Ելէ՛ք, գնանք։ Մատնիչը կը մօտենայ։» Իսկ աստուածային անհուն մարդասիրութիւն,

անմեղն և անարատն Յիսուս մարդկային ազգի փրկութեան համար կը հոկէ, կ'աղօթէ, կը տագնապի, կը քրտնի և մարդիկ կը քնանան։ Ո՜հ, քանի՞ քանի՞ անգամ այսպէս կը քնանանք մենք մեր անհոգութեան եւ ունայնասիրութեան մէջ, և Աստուած կը հոկէ և մեր դարձին ու արթնութեանը կը սպասէ։

Ի՞նչքան ապերախտութիւն և թշուառութիւն է մեզ համար, եթէ աստուածային մարդասիրութիւնը և խնամքը չըզգանք ու չզգաստանանք, և մեր կողմէն եւս չաշխատինք մեր փրկութեան համար։ Մենք եւս պարտինք հոկել, աղօթել և քրտնիլ մեր փրկութեան համար։ Մենք եւս պարտինք մեր փափաքը և եռանդը խառնել Յիսուսի մարդասիրութեան հետ և մեր քիրտը նորա քրտանց հետ, որ հասնինք մեր փրկութեանը։ Իսկ եթէ նեղութիւնք, տառապանք և վիշտք պատահին մեզ, միշտ Յիսուսի խօսքը պիտի կրկնենք. «Հա՛յր, թող քո կամքդ լինի.» քո կամքդ սուրբ և պաշտելի է մեզ համար։

2.

Յուդան կը մատնէ զՅիսուս։ Մաթ. Ի.Զ. 47։ Մարկ. ԺԳ. 43։ Ղուկ. ԻԲ. 47։ Յովհ. ԺԸ. 3։

ՀԱՍԻՒ թէ Յիսուս իւր խօսքը աւարտած էր և ահա Յուդան պարտէզ մտաւ։ Քահանայապետներու ծառայից և զինուորաց մեծ բազմութիւն ուղեկից էր Յուդային, վառած լապտերներով, սրերով և տեղերով։ Զինուորները և քահանայապետաց ծառաները չէին ճանաչեր Յիսուսը, և այս պատճառաւ Յուդան նոցա ասաց. «Ահա ձեզ նշան, որով կարող էք ճանաչել, բռնեցէք այն անձը, զոր ես պիտի համբուրեմ։»

Յուդա իւր բոլոր ուղեկիցներով մտաւ պարտէզը, ուր Փրկիչը յաճախ կ'անցընէր գիշերները աղօթելով, և ուղղակի դնաց Յիսուսի մօտ և ասաց, «Ողջոյն քեզ, վարդապետ, և խկոյն համբուրեց։» Յիսուս ասաց. «Յուդա՛, համբուրելով կը մատնես մարդոյ Որդին։» Արտաքէտ Փրկիչը խկոյն իմացաւ թէ ինչ գաղտնիք կայ այս նենգութեան համբուրի կամ նշանի մէջ, որոյ տակը ծածկուած էր մատնութիւնը։ Մարդկային չարամտութիւնը շատ անգամ սիրոյ նշանը եւս մատնութեան և սպանութեան

համար կը գործածէ։ Ի՞նչ սոսկալի նենգութիւն։

Յիսուս յետոյ մօտենալով զինուորուած մարդոցը՝ հարցուց. «Օ՞ւ խնդրէք» այսինքն ով կը փնտռէք։ Նոքա պատասխանեցին. «Յիսուս Նազովրեցին։»—«Ես եմ այն» ասաց Յիսուս։ Այս խօսքը որ լսեցին զինուորները և միւս Հրէաները, յետ քաշուեցան և գետնի վրայ ընկան։ Ամենազօրութեան համարձակ պատասխանը զարհուրելի է մինչեւ անգամ ամենամեծ չարագործներուն։

Յիսուս կրկին հարցուց զինուորներուն. «Օ՞ւ խնդրէք» — Նոքա պատասխանեցին. «Յիսուս Նազովրեցին։» Փրկիչը կրկնեց. «Ես արդէն ասացի ձեզ, որ ես եմ այն.» և հայրական գթութեամբ ցոյց տալով իւր աշակերտները՝ աւելցուց այս խօսքերը. «Եթէ եկած էք զիս բռնելու, թողէք որ սոքա (աշակերտները) երթան՝ ուր կամին։»

Զինուորները և քահանայապետաց ծառաները մատեցան Յիսուսին, որ բռնեն. իսկ աշակերտները երբ տեսան՝ ասացին. «Տէր, չպաշտպանուինք սրով.» և առանց պատասխանի սպասելու՝ Պետրոս առաջելը հանեց սուրը և քահանայապետաց ծառաներէն Մաղքոս անուանով մէկուն ականջը կտրեց։

Վարդապետի սերը սրբեց Պետրոսին

այս գործը կատարելու, բայց Փրկիչը ամենեւին կամք չունէր, որ իւր սիրոյ համար գործածուի որ եւ իցէ բռնութիւն։ Յիսուսի ամէն խօսքերէն կարող ենք տեսնել, թէ որչափ կը ցանկայ եւ կը փափաքի որ մենք նոյնս սիրոյ համար լինինք հեզ, ներողամիտ եւ մինչեւ անգամ մեր թշնամեաց դէմ մարդասէր գտնուինք։ «Խողէք այդ մարդիկը իրենց կամքին.» ասաց Յիսուս իւր աշակերտներուն, և դառնալով դէպ 'ի Պետրոս պատուիրեց. «Սուրդ պատեանի մէջ դիր։ Սուր բարձրացնողները՝ սրով կը մեռնին։ Միթէ կը կարծես դու, թէ չեմ կարող Հօրմէս խնդրել, որ տասներկու գունդ հրեշտակներ ղրկէ ինձ։ Բայց այն ժամանակ մարգարէութիւնները ինչպէս պիտի կատարուին։ Կարելի է արդեօք որ չը խմեմ այն բաժակը, զոր Հայրս ինձ համար ղրկած է։» Յիսուս մօտեցաւ քահանայապետի ծառայի ականջին և բժշկեց, և յետոյ ինքնակամ անձնատուր եղաւ այն մարդկանցը, որոնք եկած էին բռնելու։ Յիսուս թոյլ տուաւ որ կատարուի իւր Հօր կամքը, վասն զի այնպէս տնօրինուած էր, որ պիտի մատնուէր, բռնուէր և չարչարուէր։ Յիսուս յայտնեց աշակերտներուն, որ՝ իւր անձը պաշտպանելու համար չէ աշխարհ եկած, այլ եկած է իւր անձը շատերու փրկութիւն համար զոհելու։

Յիսուսի մօտ ժողովուած ամբոխի մէջ կային նամանաւորապէս տաճարի իշխանները և ժողովրդեան ծերերը։ Նա տեսնելով այս յուզուած ամբոխը՝ ասաց. «Դուք եկած էք իմ վրաս դէնքերով և բրերով ինչպէս մի աւազակի վրայ։ Այս միշտ ձեզ հետ էի տաճարի մէջ և կ'ուսուցանէի ժողովրդին, ինչու այն ժամանակ չը բռնեցիք զիս։ Բայց այժմ է ձեր ժամանակը. այժմ է խաւարի իշխանութիւն։» Այսպէս ահա Յիսուս մի կողմէն սուր առնուլն արգիլեց, իսկ միւս կողմէն ճշմարտութիւնը բացարձակ յայտնեց։ Նա ցոյց տուաւ, որ աւազակները և խաւարասէրները միայն մութ գիշեր կը մնտնուեն իրենց չարագործութեան համար։

Օ. Լինուորները կապեցին Փրկիչը և պարտիզէն հանին. իսկ աշակերտները, ինչպէս արդէն դուշակած էր Յիսուս, ահէն և երկիւղէն ցրուեցան։

Զ Ա.

Յիսուս Քրիստոս ատենի առջեւ։ Մատ. Ի.Զ. 57։ Մարկ. ԺԴ. 53։ Ղուկ. ԻԲ. 54։ Յովհ. ԺԸ. 15։

Զինուորները և քահանայապետներու ծառայքը տարան Յիսուսը Անանայի մօտ, որ նախորդ քահանայապետն էր և նոյն տա-

ղուան Կայիափա քահանայապետի անունն էր։ Նա քանի մի բան հարցուց Յիսուսին իւր աշակերտներու և վարդապետութեան մասին։ Յիսուս պատասխանեց. «Ես յայտնապէս կ'ուսուցանէի ժողովուրդը ամենի առջեւ. ես կը քարոզէի ժողովարաններու և տաճարի մէջ, ինչու կը հարցնես ուրեմն։ Հարցուր իմ ունկնդիրներէս իմ վարդապետութեան մասին։»

Այն տեղ կանգնած ծառաներէն մէկը, երբ լսեց այս պատասխանը՝ ապտակեց Յիսուսի երեսին և ասաց. «Այդպէս կը պատասխանես քահանայապետին։» Փրկիչը հեզութեամբ և հանդարտութեամբ պատասխանեց. «Եթէ չար խօսեցայ՝ վկայէ (ապացուցէ) չարին համար, իսկ եթէ բարի խօսեցայ, ինչու կը հարկանես։» Ծառայն ամենեւին խօսք չը գտաւ պատասխանելու. նա իւր կոպտութեամբ կ'ուզէր քահանայապետի սիրտը շահել։

Ընտ՝ Յիսուսը կապած ղրկեց Կայիափայի մօտ, որոյ տանը հաւաքուած էին օրէնսուսոյցները և ժողովրդեան ծերերը։ Նոքա կոչեցին սուտ վկաներ՝ Յիսուսը զրպարտելու և սուտ վկայութիւն տալու համար, որ կարենան 'ի մահ դատապարտել։

Երբ Յիսուս ներկայացաւ առենի առջեւ, իսկոյն յայտնուեցան զրպարտիչները։

Հարցուցին մի առ մի, բայց նոցա վկայութիւնները բաւական չէին դատապարտութեան համար։ Վերջապէս երկուսը յառաջ եկան և յետագայ սուտ վկայութիւնը տուին թէ՝ Յիսուսը ասած է որ «Կարող եմ Աստուծոյ տաճարը քանդել և երեք օրուան մէջ վերստին կանգնել։» Յիսուս ամենը զրպարտութիւնները անպատասխան թողուլ կը լսէր։ Քահանայապետն ելաւ տեղէն՝ եկաւ մէջ տեղը և ասաց Փրկչին. «Ինչու չես պատասխաներ՝ քեզ արդ արացներու համար։» Յիսուս դարձեալ լռեց, որովհետեւ զրպարտութեան ամենէն լաւ պատասխանը լռութիւնն է։

Բայց երբ քահանայապետը երդումով հարցուց Յիսուսին ասելով «Կ'երդուցնեմ կենդանի Աստուծոյ անունով, ասա մեզ ճշմարիտը՝ թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին։» Այն ժամանակ Յիսուս պատասխանեց. «Դու ինքդ ասացիր այդ, իսկ ես կը յաւելում՝ որ դուք պիտի տեսնէք մարդոյ Որդին Աստուծոյ զօրութեան աջ կողմը նստած, որ կուգայ ամպերու վրայ։»

Քահանայապետը իւր հանդերձը պատռեց ասելով. «Այս զԱստուած կը հայհոյէ, ուրեմն վկայ ինչ հարկաւոր է։ Դուք ինքներն լսեցիք սորա հայհոյութիւնը, ինչ կամիք ուրեմն որ առնենք։» Ամենքը պա-

տասխանեցին. «Պահապարտ է։» Ինչ ա-
նիրաւ ատեան և ինչ անիրաւ դատաստան։
Սակայն որչափ սոյնօրինակ դատաստաններ
կան աշխարհի մէջ, ուր ճշմարտութեան
դէմ ուրիշ պատասխան չունին, բայց միայն
զրպարտութիւն։

Օ. ինուորները հանին Փրկիչը գաւթի
մէջ, ուր պահապաններով շրջապատուած
պիտի անցընէր նա գիշերուան մնացած մասը։

Այս տեղ ամեն տեսակ հայհոյանք կը
թափէին Յիսուսի գլխուն. ամանք կը թքա-
նէին, ոմանք կը ծեծէին և ծիւսները երեսն
ապտակելով կ'ասէին. «Քրիստոս, մարգա-
րէացիր, թէ ո՞վ ապտակեց քեզ։» Ամենքը
կը ջանային որքան կարելի է աւելի հայհոյ-
ել և նախատել. իսկ նա կը համբերէր ե-
կայնմտութեամբ և կը ներէր քաղցրու-
թեամբ։ Այս մեծ օրինակը հանապազ մեր
աչքի առջև պէտք է ունենանք, և երբ պա-
տահի որ մենք եւս ճշմարտութեան համար
զրպարտութեան, հայհոյութեան և նախա-
տանաց մատնուինք, ամենեւին չը նեղանք
և չյուսահատինք, որովհետև հանուր մարդ-
կային ազգի Արարիչը և Փրկիչը կը տեսնենք
ահա դառն նախատանաց մատնուած։ Ինչ
պէս որ նա մեզ համար ուրախութեամբ կը-
րեց ամեն դառն զրպարտութիւն և նախա-
տինք, նոյնպէս և մենք նորա սիրոյ և ա-

նուան համար պարտաւոր ենք ցնծութեամբ
յանձն առնուլ ամեն վշտակրութիւն և մի-
անգամայն ապաչէլ որ զօրացնէ մեզ համբե-
րելու, ինչպէս ինքը համբերեց երկայնմ-
տութեամբ։

ՁԲ.

Պետրոս առաքեալի ուրացութիւնը։ Մաթ. Ի.Ձ. 69։
Մարկ. ԺԳ. 66։ Ղուկ. ԻԲ. 54։ Յովհ. ԺԸ. 15—25։

Տաճարն Յիսուս Կայիափայի տան մէջ
էր, յետոյ անցքը պատահեցաւ գաւ-
թի մէջ։ Պետրոս և Յովհաննէս առաքեալ-
քը հեռուէն կը հետեւէին Յիսուսին մին-
չեւ քահանայապետի տան դաւիթը կամ
բակը։ Յովհաննէս ծանօթ էր քահանայա-
պետի տանեցւոյ մի քանիսի հետ, ուստի և
ներս մտաւ. իսկ Պետրոս կանգնած էր դը-
րան եռեւ։ Յովհաննէս այս տեսնելով խրն-
դրեց դռնապանին որ ներս թողնէ, և նա
կատարեց այս խնդիրը։

Դիշերը ցուրտ էր. քահանայապետի
ծառայքը և զինուորները գաւթի մէջ վա-
ռուած խարոյկի շրջս կողմը բոլորած կը տաք-
նային։ Պետրոսը եւս մօտեցաւ կրակին և
կամէր ապասել և տեսնել թէ ի՞նչպէս պիտի
վերջանայ Յիսուսի դատաւճիռը։ Դռնա-

պահ աղախինը նայելով Պետրոսի երեսին՝ ասաց. «Սա եւս Գալիլիացի Յիսուսի հետ էր։» Պետրոս վախցաւ այս ամբաստանութենէն և ուրացաւ՝ ասելով. «Ոչ, ես չը գիտեմ, ինչ որ կ'ասես դու։» Այս ասելով գնաց դրան մօտ։ Այն ժամանակ պատահեցաւ Պետրոսին մի ուրիշ աղախինև ասաց ներկայ գտնուած մարդկանցը. «Սա եւս Նազովրեցի Յիսուսի հետ էր. սա նորա աշակերտներէն է։» Իսկ Պետրոս երդուելով ուրացաւ և ասաց. «Ես չեմ ճանաչեր այն մարդը։»

Դաւթի մէջ գտնուած մարդիկը արդէն իմացան, որ ատեանը 'ի մահ դատապարտեց զՅիսուս։ Օտարներէն մէկը Պետրոսի վրայ ակնարկելով՝ աղաղակեց. «Իսկ սա եւս նորա աշակերտներէն է. լեզուն իսկ կ'ապացուցանէ որ Գալիլիացի է։» Այս լսելով Մաղքոսի աղգականներէն մէկը, որոյ ականջը կտրած էր Պետրոս, մօտեցաւ և ասաց. «Այո, ես ինքս տեսայ այս մարդը Յիսուսի հետ պարտիզի մէջ։» Այս խօսքերը զարհուրեցուցին զՊետրոս, որ սկսաւ երդուիլ և հաւատացընել, որ ինքը ամենեւին Յիսուսը չը ճանաչեր։ Նոյն րոպէին Յիսուսը դուրս բերին քահանայապետի տանէն։ Նա դառնալով նայեցաւ Պետրոսի վրայ, և այն ժամանակ աքաղաղը խօսեցաւ։ Պետրոս յի-

շեց Յիսուսի խօսքը թէ՝ «Քաւը տակաւին երկու անգամ չը խօսած երեք անգամ պիտի ուրանաս զիս։» Նա դուրս եկաւ և ըսկըսաւ դառնապէս լալ։

Այս գղջման արտասուքներն էին, որ ըստիպեցին զՊետրոս հեղանալ և յոյսը աւելի Աստուծոյ վրայ դնել քան թէ իր վրայ։

Վերջապէս Յուդան եւս գղջաց, բայց ինչ հետեւանք ունեցաւ նորա գղջումն։ Նա լսելով, որ Յիսուս 'ի մահ դատապարտուեցաւ, սաստիկ տրտմեցաւ, եկաւ քահանայապետաց մօտ, դարձուց երեսուն արծաթը, որուն համար դաւաճանած էր իւր վարդապետը, և ասաց. «Ես մեղայ, որովհետև մատնեցի անմեղ արիւն։» Յուդայի խոստովանութիւնը քահանայապետները սառնութեամբ պատասխանեցին ասելով. «Մեզ վոյթ չէ, դու գիտես։» Յուդան այս պատասխանը լսելով երեսուն արծաթը տաճարի մէջ ձգեց և յուսահատութեամբ տաճարէն հեռանալով՝ գնաց խեղդուեցաւ։

Քահանայապետները նոյն երեսուն արծաթը ընդունելով ասացին. արժանի չեն որ եկեղեցական դանձի մէջ գտնուին, որովհետև արեան գին են, ուստի և վճռեցին նոյն արծաթով ագարակ մի գնել օտարները թաղելու համար։ Այս ժամանակէն 'ի վեր նոյն ագարակը կոչուեցաւ Գիւղ արեան։

ՁԳ.

Յիսուս Քրիստոս Պիղատոսի առջեւ։ Մատ.Ի.Ե.2։
Մարկ. ԺԵ. 1։ Ղուկ. ԻԳ. 1։ Յովհ. ԺԸ. 28։

ՀՐԵԱՅՔ արդէն իրենց Թագաւոր չունէին և այս պատճառաւ ամէն մահուան դատավճիռ պէտք է հաստատէր Հռովմայեցի կառավարիչը կամ դատաւորը։ Ուստի միւս առաւօտը շատ վաղ բարձրագոյն ատենի բոլոր անդամները ժողովեցան և հրամայեցին Յիսուսը տանիլ Պիղատոսի մօտ, որ Հռովմայեցի կառավարիչ էր Հրէաստանի մէջ և իրենք եւս գնացին նորա ետեւէն։ Բայց կառավարիչը, որովհետեւ հրեթանոս էր, նորա տունը չըմտան, որ չըպղծուին և արժանի չը լինին Օրէնքը տօնելու։

Այն տան առջեւ, ուր կը բնակէին Պիղատոսը և իւր պահապանները, կար մի փոքրիկ հրապարակ, քանի մի աստիճան բարձր այն փողոցէն որ կը կոչուէր Կապպոնա, այսինքն քարայատակ։ Այս տեղ բերին Յիսուսը և կը սպասէին, որ Պիղատոսը դուրս գայ։

Պիղատոսը, երբ տանէն դուրս եկաւ, տեսնելով բարձրագոյն ատենի բոլոր անդամները իր դրան առջեւ ժողովուած՝ զարմացաւ և հարցուց. «Ի՞նչ ամբաստանութիւն ունիք այդ մարդոյ վրայ։»

Նոքա պատասխանեցին. «Եթէ սա չարագործ չը լինէր, քեզ մօտ չէինք բերեր։» — Պիղատոս պատասխանեց. «Եթէ այսպէս է, առէք տարէք ուրեմն և ձեր օրէնքով դատեցէք։» — Նոքա պատասխանեցին. «Մենք իրաւունք չունինք մահուան վճիռ տալու։» և տեսնելով թէ գործը այնպէս շուտով չը պիտի վճռուի, ինչպէս իրենք կը ցանկային, սկսան Յիսուսը զբպարտել ասելով. «Այս մարդը ազգը կը խռովէ, կայսեր հարկ տալը կ'արգիլու և ինքը զինքը Իսրայելի Թագաւոր կ'անուանէ։»

Պիղատոս դառնալով դէպ 'ի Յիսուսը՝ հարցուց. «Դու Իսրայելացւոց Թագաւորն ես։» — «Դու ինքնդ կ'ասես,» կրկնեց Յիսուս, որ առաջ ամենեւին պատասխան չէր տար քահանայապետներու և ծերերու չարախօսութեանցը։ — «Կը լսէս, ասաց Պիղատոս, թէ որչափ չարախօսութիւններ կը լինին քո վրայ. միթէ անձդ արդարացնելու համար բան չունիս խօսելու։» — Յիսուս կը լռէր, և այս լռութիւնը շատ զարմացուց զՊիղատոս։ Նա կը տեսնէր, որ քահանայապետները միայն նախանձէ դրդռուած Յիսուսի մահուանը կը ցանկային, և այս պատճառաւ կ'ուզէր միջոց տալ Յիսուսին, որ իր Թշնամեաց առջեւ խօսի։

Պիղատոս իր տունը տանելով Յիսուսը

հարցուց. «Դու ճշմարտիւ Հրէից թագաւոր ես։»—Յիսուս պատասխանեց.«Դու քեզմէն կ'ասես այդ, թէ ուրիշ մարդէ լսած ես։» — Պիղատոս ասաց. «Ես Հրէայ չեմ, այլ քո ազգդ և քահանայապետները քեզ դատապարտած են ի մահ և մատնած են իմ ձեռքը։ Դու ի՞նչ ես գործեր։»

Փրկիչը պատասխանեց. «Իմ արքայութիւնը այս աշխարհէն չէ։ Եթէ իմ արքայութիւնը (թագաւորութիւնը) այս աշխարհէն լինէր, ես կ'ունենայի սպասաւորներ, որոնք զիս կը պաշտպանէին, որ Հրէից ձեռքը չըմատնուիմ։ Բայց իմ արքայութիւնը այս աշխարհէն չէ։»

Պիղատոս հարցուց. «Ուրեմն դու թագաւոր ես։»—«Դու կ'ասես, որ ես թագաւոր եմ.» պատասխանեց Փրկիչը. «Ես ծնայ և աշխարհ եկայ, որ վկայեմ ճշմարտութեանը. և ով որ ճշմարտութիւնը կը սիրէ, կը լսէ իմ ձայնս։»

«Ի՞նչ է ճշմարտութիւնը,» հարցուց Պիղատոս, և այս խօսքը արտաբերելու ժամանակ եաւ և Հրեաներուն ասաց. «Ես այս մարդու մէջ ոչ մի յանցանք չեմ գտներ։»

ԶԴ.

Յիսուս Քրիստոս Հերովդէսի առջև։

Ղուկ. ԻԳ. 6։

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԸ տեսնելով՝ որ Պիղատոս կամք չունի Յիսուսը դատապարտելու, աւելի եւս կը չարախօսէին նորա վրայ և կ'ասէին. «Նա կը խռովէ ժողովուրդը իւր վարդապետութեամբ, քարոզելով բոլոր Հրեաստանի մէջ Գալիլիայէն սկսած մինչև Երուսաղէմ։» — Պիղատոս երբ լսեց Գալիլիայի անունը՝ հարցուց. «Միթէ նա Գալիլիացի է։» Երբ նոքա ասացին որ Հերովդէսի իշխանութենէն է, Պիղատոս ղրկեց Յիսուսը Հերովդէսի մօտ, որ նմանապէս Օ.ատակի տօնի համար Երուսաղէմ եկած էր։

Պիղատոս զգուշացող մարդ էր. նա կամք չունէր անմեղը ի մահ դատապարտելու, բայց չունէր այն.քան հաստատամտութիւն որ պաշտպանէ և իր դէմ գրգռէ քահանայապետները և Իսրայելացւոց ծերերը։ Նա ուրախացաւ որ միջոց գտաւ այս գործքէն հեռանալու, և այս պատճառաւ Հերովդէսին յանձնեց, որով մի կողմէն նորա սիրտը եւս գրաւեց։ Պիղատոսի գործը կանոնաւոր էր և հաշուով, բայց ոչ առաքինի։ Ընաքինի մարդը բարի կը գործէ, առանց նայելու թէ

ինչ պիտի ասեն մարդիկ։ Ով որ մարդկանց կարծիքին նայելով միայն ուզէ առաքինութիւն գործել, նա շատ անգամ առանց բարեգործութեան կը մնայ։

Հերովդէս շատ գոհ էր, որ Յիսուսը իր մօտ բերին։ Նա շատ բան լսած էր Յիսուսի վրայ և կը փափաքէր աչքով տեսնել և կը սպասէր որ նա հրաշք գործէ իր ներկայութեանը։ Նա շատ հարցումներ առաջարկեց և Յիսուս ամենեւին չըպատասխանեց։ Իսկ քահանայապետները բորբոքուած անդադար կը չարախօսէին։ Յիսուս նոցա չարախօսութեանցը ևս չէր պատասխաներ։ Հերովդէս Յիսուսի լռութեանը վրայ զայրացած՝ թոյլ տուաւ որ զինուորները հայհոյեն, և սպիտակ հանդերձ հագցնելով՝ վերստին ղրկեց Պիղատոսի մօտ։

Հերովդէս և Պիղատոս իրարու հետ խռոված էին. բայց այս ժամանակէն հաշտուեցան և բարեկամացան։ Որովհետեւ, թէպէտ Պիղատոս այն նպատակաւ Յիսուսը Հերովդէսի մօտ ղրկեց, որ ինքը ազատ մընայ անհաճոյ գործքէն, բայց Հերովդէս այս վարմունքը համարելով իբրև պատիւ Հռովմայեցի կառավարչի կողմէն, շատ գոհ եղաւ Պիղատոսէն։ Մարդիկ այսպէս են, շատ անգամ իրարու սիրտ շահելու համար՝ անմեղութիւնը կը թողուն առանց պաշտպանու-

թեան, և ճշմարտութիւնը՝ չարախօսութեան մատնուած։ Չարախօսաց ցանկացածն ևս այն է, որ անմեղութիւնը չըպաշտպանուի, ինչպէս Յիսուս ոչ Պիղատոսէն պաշտպանութիւն գտաւ և ոչ Հերովդէսէն։ Թէպէտ Յիսուս կարօտ չէր պաշտպանութեան, բայց այս մի օրինակ է, որ ամենեւին չյուսահատինք, երբ պատահի, որ մեզ զրպարտեն և չարախօսեն և մենք մարդիկներէն պաշտպան չունենանք։ Աստուած միշտ անմեղութեան պաշտպան է, բաւական է որ մենք շարունակ աշխատինք անմեղ լինելու։

Զ.

Պիղատոս կ'աշխատի Յիսուսը ազատել։

Մաթ. Է. 15։ Մարկ. ԺԵ. 1։ Ղուկ. ԻԶ. 11։

Իսրայելացիք սովորութիւն ունէին, Եգիպտական դերութենէն ազատուելուն յիշատակի համար, իւրաքանչիւր Զատկի տօնին յանցաւոր մի ազատել, որ 'ի մահ դատապարտուած էր, և բանտէ հանել։ Այս սովորութեան պատճառաւ Հռովմայեցի կառավարչի տան առջեւ ժողովուեցաւ մեծ բազմութիւն, որ կըպահանջէր Պիղատոսէն յանցաւորներէն մէկը արձակել։

Պիղատոս կ'ուզէր այս միջոցը 'ի բարին գործ դնելով՝ Յիսուսը ազատել։ Յանցաւոր մի կար բռնուած Բարաբբա անունով, որ արգելուած էր քանի մէջ, որպէս մարդասպան և խռովարար ժողովրդեան։ Պիղատոս դուրս եկաւ քահանայապետներու և հաւաքուած ժողովրդի առջեւ և Յիսուսը ցոյց տալով ասաց. "Դուք բերիք այս մարդը ինձ մօտ՝ ասելով, որ սա ժողովուրդը կը խրոովէ. իսկ ես ձեր առաջ հարցուցի և այն յանցաւորութեան կամ չարագործութեան նշանը չըտեսայ սորա մէջ, ինչպէս դուք ասացիք։ Ես ղրկեցի Հերովդէսի մօտ և նա նմանապէս անմեղ գտաւ։ Սա մահու արժանի գործ չէ գործեր։ Դուք սովորութիւն ունիք Զատկի տօնին յանցաւորներէն մէկը ազատել. այժմ ո՞րը կամիք արձակել, Բարաբբա՞ն, թէ Յիսուսը, որ կ'անուանի Քրիստոս։"

Այս ժամանակ Պիղատոսի կինը ևս ծառան ղրկեց և հրամայեց ասել Պիղատոսին թէ՝ "Այդ արդարոյն (Յիսուսին) դիպաս չը տաս, որովհետեւ այս գիշեր երազիս մէջ շատ անցքեր պատահեցան ինձ դորա համար։"

Քահանայապետները և ծերերը ջանացին ժողովուրդը խռովել Յիսուսի դէմ և համոզեցին որ Բարաբբան պահանջեն ազա-

տելու, իսկ Յիսուսը դատապարտեն։ Ուստի և երբ Պիղատոս հարցուց, բոլորը ամբոխը միաձայն աղաղակեց. "Արձակէ՛ մեզ Բարաբբան։"

Պիղատոս, որ կամէր Յիսուսը ազատել, հարցուց. "Իսկ Յիսուսը ի՞նչ ընենք, որ Քրիստոս կ'անուանի։" Բոլոր ժողովուրդը միաձայն աղաղակեց. "Ի խաչ հան, 'ի խաչ հան։"

Այն ժամանակ Պիղատոս հրամայեց Բարաբբան արձակել. և Յիսուսը տուաւ Հրէից ձեռքը։

ԶԶ.

Յիսուս Քրիստոս կը համբերէ չարչարանաց։
Մաթ. Իէ. 27։ Մարկ. ԺԵ. 6։ Յովհ. ԺԹ. 1։

Պիղատոսի զինուորները տարան Յիսուսը գաւթի մէջ տեղը և կոչեցին բոլոր պահապանները։ Զինուորները կատակելով Փրկիչը, որ զինքը Թագաւոր կը կոչէ, դրին նորա գլխին փշեայ պսակ, հագուցին ծիրանի և հասարակ գաւազան մի ձեռքը տուին՝ փոխանակ արքայական գաւազանի։ Այս մէկ մէկ մօտենալով կատակելով ծունր կը դնէին առջեւը և կ'ասէին. "Ողջո՛յն քեզ,

թագաւոր Հրէից։» Յետոյ կը թքէին նոր
ա վրայ, երեսը կ'ապտակէին և գաւազանը
ձեռքէն խլելով կը զարկէին գլխուն։

Յիսուս երկնային հեզութեամբ և համ
բերութեամբ կը տանէր այս հայհոյանքնե
րը և կը լռէր առանց դանգատելու։ Վերջապէս Պիղատոս դուրս եկաւ զինուորնե
րու մօտ։ Պիղատոսի կարեկցութիւնը շարժեցաւ, տեսնելով անմեղը նախատանաց և չարչարանաց մատնուած, և կը կարծէր թէ ժողովուրդն եւս մի և նոյն զգացմունքը պիտի զգայ։ Ուստի հրամայեց զինուորներուն հանել Յիսուսը այն հրապարակը, որ իւրատան առջեւն էր և ասաց քահանայապետներուն. «Ես ահա մի անգամ եւս ձեր առջեւը բերելով կը յայտնեմ, որ ես այս մարդոյ մէջ ամենեւին յանցանք չը գտա։» Յովհ. ԺԹ. 4։

Քահանայապետները պատասխանեցին. «Մեր օրէնքով արժանի է սա մահուան, որովհետեւ ինքը զինքը Աստուծոյ Որդի կ'անուանէ։» Պիղատոս երբ լսեց այս խօսքերը, սիրտը խռովեցաւ և Յիսուսի հետ ապարանքը մտնելով հարցուց. «Որ տեղէն ես դու.» Իսկ Յիսուս լռեց առանց պատասխանելու։ Պիղատոս ասաց. «Ինձ եւս չՁո պատասխաներ. միթէ չգիտես որ իշխանութիւն ունիմ քեզ արձակելու և խաչելու։»

Յիսուս պատասխանեց. «Դու ամենեւին իշխանութիւն չէիր ունենար ինձ վրայ, եթէ քեզ տրուած չըլլէր 'ի վերուստ. ուստի և աւելի մեծ է նոցա մեղքը, որոնք զիս քո ձեռքը մատնեցին։»

Այս խօսքերը զարթուցին Պիղատոսի մէջ ցանկութիւն Յիսուսը ազատելու։ Պիղատոս կրկին յայտնուեցաւ ժողովրդին. բայց Հրէայքը երբ տեսան, ասացին. «Եթէ դու Յիսուսը արձակես, այդ մի ապացոյց է, որ դու բարեկամ չես կայսեր. ով որ ինքը զինքը թագաւոր կ'անուանէ, հակառակ է կայսեր։» Խորամանկ չարագործները գիտէին, որ Պիղատոս կայսեր պատիւը շատ կը յարգէ, և յիրաւի այս խօսքերը խոսքնջնջեցին Պիղատոսի սրտէն ոչ միայն կարեկցութեան զգացմունքը, այլ և արդարութիւնն անգամ։

Սակայն Պիղատոս տակաւին յոյս ունէր Հրէաներու զայրոյթը զսպելու։ Երբ իւր հրամանաւ դուրս բերին Յիսուսը, ասաց խռովայոյզ բազմութեանը. «Ահա ձեր թագաւորը։»

Չարչարուող Փրկչի կերպարանաց տեսիլն անգամ բաւական էր ամենքը համոզելու, որ նա ոչ երկրաւոր իշխանութիւն կը փնտռէ և ոչ կ'աշխատի Հռովմէացի կայսերէն թագաւորութիւնը յափշտակել։

Բայց քահանայապետները, նմանապէս և բոլոր ժողովուրդը, երբ տեսան Յիսուսը՝ բակման աղաղակել. «Ի խաչ հան զդա, ի խաչ հան զդա։» — «Խաչե՞մ ձեր թագաւորը,» ասաց Պիղատոս։ — «Մենք ուրիշ թագաւոր չունինք բաց ի կայսերէն,» բազմութիւնը կաղաղակէր կատաղաբար։

Պիղատոս տեսնելով, որ կարող չէ նոցա կատաղութիւնը զսպել, և խռովութենէն ստատիկ վախնալով, նստաւ իւր դատաւորական աթոռի վրայ, ջուր խնդրեց և բոլոր ժողովրդի առջեւ սկսաւ ձեռքերը լուալ։ Ամբոխը փոքր ինչ հանդարտեցաւ և կըսպասէր թէ ինչ պիտի լինի։ Այն ժամանակ Պիղատոս ասաց. «Ես քաւուած եմ այս անմեղի արենէն. այժմ դուք գիտէք. դուք էք պատասխանատու։» Բոլոր ժողովուրդը աղաղակեց. «Թող դորա արիւնը մեր վրայ և մեր որդւոց վրայ լինի։»

Պիղատոս, որ բոլոր ժողովրդեան առջև խոստովանեցաւ Յիսուսի անմեղութիւնը, մատնեց նոցա ձեռքը։ Ահա թուլութեան ողորմելի օրինակ։ Այս տեղէն կ'երեւի թէ մինչեւ ո՞ր աստիճան կարող է թուլանալ մարդ, երբ կը ցանկայ աշխարհի հաճոյ լինել։ Պիղատոս փոխանակ զանազան խորամանկ միջոցներ գործ դնելու, Յիսուսը աղատելու համար, պարտաւոր էր ուղղակի նորա անմեղութիւնը յայտնել և աղատել։ Սակայն Պիղատոս չունէր այնքան հաստատամտութիւն, որ վճռաբար ներդործէր. իսկ նորա թուլութիւնը աւելի համարձակութիւն տուաւ քահանայապետներուն և ծերերուն. որոնք տեսնելով, որ Պիղատոսի արդարասիրութիւնը հաստատուն չէ, այլ միշտ կը շարժի և կը փոփոխի, աւելի յանդգնաբար կը պահանջէին Յիսուսի դատապարտութիւնը։ Այսպէս ուրեմն, մարդերբէք պէտք չէ որ տեղի տայ անիրաւ պահանջումներու, այլ պարտաւոր է ընդդիմանալ և վարուիլ արդարութեամբ. ինչպէս իւր պարտաւորութիւնը և խիղճը կը պահանջեն։

Զ։

Յիսուսի Քրիստոսի խաչելութիւնը։ Մատ. ԻԷ. 51։ Ղուկ. ԻԳ. 26։ Մարկ. ԺԵ. 20։ Յովհ. ԺԹ. 17։

Զինուորները հանին Յիսուսի ծիրանին, հագուցին իւր հանդերձը և տարան խաչելու։ Յիսուս ինքը պէտք է տանէր այն խաչը, որուն վրայ մեռնելու էր։ Նա, մեծ ամբոխին շրջապատուած, կ'երթար դէպ ի դատապարտութեան տեղին։ Նորա հետ կը տանէին պատժելու երկու աւազակներ եւս։

Յիսուս, Երուսաղէմի փողոցներէն երթալու ժամանակ, թուլացաւ խաչի ծանրութենէն։ Այս ժամանակ Կիւրենացի Սիմէոն անուանով մէկը ագարակէն դառնալով կամէր մօտէն անցնիլ և երթալ, բայց զինուորները ստիպեցին կանգնիլ և Յիսուսի խաչը տանիլ։ Կարծիք չը կայ, որ զինուորները կարեկցութիւն նշմարեցին Սիմէոնի մէջ առ Յիսուս և կամեցան խաչի ծանրութեամբ նեղել։

Յիսուսի հետեւէն գնացողներու մէջ կային նմանապէս և կանայք, որոնք արտասուելով և ողբալով կը հետեւէին նորան։ Յիսուս դառնալով ասաց այս կանանցը. «Դստերք Երուսաղէմի, մի լայք իմ վրայ, այլ լացէք ձեր վրայ և ձեր որդւոց վրայ։ Ահա կը մօտենայ ժամանակը, որ պիտի ասեն. երանի՛ նոցա, որոնք ամուլ են, և նոցա, որոնք երբէք երեխայ չեն կերակրած իրենց ծիծերով։ Այն ժամանակ պիտի ասեն սարերուն՝ ընկէք մեր վրայ, և պիտի ասեն բլուրներուն՝ ծածկեցէք զմեզ։ Եթէ այսպէս կը վարուին դալար ծառի հետ, ապա չորին հետ ի՞նչ պիտի լինի։»

Յայտնի բան է, որ անմեղի չարչարանաց համար զգացած կարեկցութիւնը գովելի զգացմունք է, և յատուկ է միայն բարի սրտերուն. բայց Յիսուսի չարչարանքները ոչ

միայն կարեկցութիւն պիտի զարթուցանեն մեր մէջ, այլ և երկիւղ և զղջանք մեղաց դէմ։ Եթէ Աստուծոյ միածին Որդին իւր բարութեամբ և սրբութեամբ այնպիսի սարսափելի չարչարանքներ կրեց մեր մեղաց համար, ապա ո՞րչափ պիտի կրեն խստասիրտ մեղաւորները, որոնք առանց զղջալու իրենց յանցանքը՝ կ'ուրանան այն փրկութիւնը, որ Յիսուս պատրաստած է մեզ համար։ Կանայքը կուլային կարեկցութենէ շարժուած. բայց Յիսուս հասկացուց, որ միայն կարեկցելը բաւական չէ, այլ պարտաւոր են իրենց և իրենց որդւոց մեղաց համար լալ, որոնք խստասիրտ են և ապերախտ։ Յիսուսի դառն չարչարանքը լաւ զգալու համար, պարտաւոր ենք մտածել, թէ ո՞րչափ դառն էր և ծանր մարդկային ազգի յանցանքը, որոյ քաւութեան համար այնքան տառապանքներ կրեց անմեղն և անարատն Յիսուս։

Երբ զինուորները տարան Յիսուսը Կառափելոյ տեղին, որ քաղաքի պարսպէն դուրս էր և կ'անուանուէր Գողգոթա, տուին նորան զմռսած և լեղիով խառնած գինի։ Այս ըմպելիքը կուտային խաչուողներուն, որ իրենց չարչարանքը չըզգան։ Յիսուս համբտեսաւ և չկամեցաւ խմել։ Նա կամեր ոչ թէ թմրելով, այլ կատարեալ յիշողութեամբ կրել չարչարանքները և մահը, որ ամբողջա-

պէս իր հոգին և մարմինը զոհէ աշխարհիս փրկութեան համար և մինչև վերջին մրուրը քամէ չարչարանաց բաժակը։ Սիրելիներ, նա չը կամեցաւ գինին խմել և ուշաթափ լինիլ, այլ կամեցաւ չարչարանաց բոլոր դառնութիւնը զգալ և սիրով համբերել։ Խոնարհինք ուրեմն մեր բոլոր սրտով և անձնով Յիսուսի անհուն սիրոյն առջեւ, որ այսպիսի չարչարանքներ կրեց մեր փրկութեան համար։ Ունենք մեր սիրտը և հոգին սուրբ պահել, որպէս զի ուրախանայ մարգասէր Փրկիչը իւր չարչարանաց արդիւնքը տեսնելով մեր մէջ։

Զինուորները խաչեցին Յիսուսը։ Այնպէս խաչեցին նորա աջ և ձախ կողմը այն երկու աւազակները, որոնք բերած էին նորա հետ։ Այս էր Երեց ազգի շնորհակալութիւնը Յիսուսի մեծամեծ բարերարութեանց փոխարէն։ Փրկիչը իւր աչքերը դէպ 'ի երկինք բարձրացնելով՝ ասաց. «Հայր, ներէ սոցա մեղքը, որովհետեւ չը գիտեն թէ ինչ կը գործեն։» Ով երկայնամիտ նեղողութիւն, ով անհուն քաղցրութիւն։ Մարգասէր Փրկչի այս սքանչելի օրինակը կը պարտաւորէ զմեզ ներել մեր եղբարց յանցանքները և աղօթել նոցա համար։

Երուսաղեմացւոց օրէնքով հարկ էր, որ մահապարտներուն գլուխներուն վրայ գրուած

լիներ նոցա մեղաւոր գիրը, որպէս զի ամէն մարդ յայտնապէս տեսնէր թէ ինչ յանցանաց համար է դատապարտուած։ Պիղատոս հրամայեց Յիսուսի գլխոյն վերեւ գրել այս վերնագիրը. «Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրէից։» Այս վերնագիրը գրուած էր երեք լեզուով Եբրայեցերէն, Յունարէն և Դաղմատերէն (Երուսաղեմացւոց լեզուով)։ Քահանայապետները այս տեսակ վերնագիրը համարեցին կամ ծաղրաբանութիւն և կամ յանդիմանութիւն. ուստի և գնացին Պիղատոսի մօտ և ասացին. «Մի գրեր Թագաւոր Հրէից, այլ գրէ, թէ նա ինքն ասաց որ՝ Թագաւոր եմ Հրէից։» Յովհ. ԺԹ. 21։ Բայց Պիղատոս պատասխանեց. «Որ ինչ գրեցի, գրեցի։»

Զինուորները, որոնք Յիսուսը խաչեցին, առին նորա հանդերձները իրենց մէջ բաժանեցին. իսկ պատմուճանը, որովհետեւ առանց կարանի էր, չկամեցան պատառել, այլ վիճակ ձգեցին տեսնելու թէ՝ ո՞մ սիրտն ընկնի։ Յայտնի բան է, որ զինուորները չը գիտէին թէ կատարումն տուին Դաւթի մարգարէութեանը, որով գուշակուած էր թէ՝ «Իմ հանդերձներս բաժանեցին և իմ պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին։» Սաղմ. ԻԲ. 19։

ՁԸ.

Փրկիչը խաչի վրայ։ Մաթ. ԻԷ. 33։ Մարկ. ԺԵ. 25։
Ղուկ. ԻԳ. 33։ Յովհ. ԺԹ. 25։

ՅԻՍՈՒՍ Քրիստոս խաչի վրայ բեւեռած՝ կը կրէր սարսափելի չարչարանքներ։ Յեւեռները քանի որ կը մնային, աւելի կը պատառէին նորա վէրքերը եւ արիւնը աղբիւրի պէս կը վազէր Յիսուսի սուրբ ձեռքերէն եւ ոտքերէն։ Այն ձեռքերէն, որով հաղարաւոր վշտացածներ եւ հիւանդներ սփոփեց ու բժշկեց, եւ այն ոտքերէն, որով գաւառէ գաւառ եւ գիւղէ գիւղ շրջեցաւ տառապեալները մխիթարելու եւ ամենուն իր փրկարար վարդապետութիւնը քարոզելու։

Քահանայապետները, օրինականները եւ ժողովրդեան ծերերը ուրախանալով իրենց չար յաղթութեան վրայ՝ կ'ասէին. «Դու ուրիշները կ'ազատէիր, այժմ ազատէ քո անձդ։ Եթէ յիրաւի Քրիստոսն է եւ Աստուծոյ Որդին, թող այժմ իջնէ խաչէն եւ այն ժամանակ մենք եւս կը հաւատանք։ Նա միշտ իւր յոյսը Աստուծոյ վրայ կը դնէր, այժմ թող Աստուած փրկէ, եթէ սիրելի է իրեն։»

Նոյնպէս ժողովուրդը եւ անցաւորները այս չարչարանաց եւ մահուան րոպէին մէջ

կը ծաղրէին զնաչեալն, գլուխները կը շարժէին եւ կ'աղաղակէին. «Դու, որ երեք օրուան մէջ կամէիր տաճարը քանդել եւ նորէն շինել, այժմ անձդ ազատէ եւ իջիր խաչէն, եթէ յիրաւի Աստուծոյ Որդի ես դու։»

Օրինաւորները, որոնք Յիսուսը կը շրջապատէին, նոքա եւս կը հայհոյէին ուրիշներու հետ, քացախ կը մատուցանէին նորա շրթունքներուն եւ կ'ասէին. «Եթէ դու Իսրայելի Թագաւորն ես, փրկէ՛ քո անձդ։»

Մինչեւ անգամ աւազակն եւս, որ նորա մօտ խաչուած էր, այն մարդասպանը եւ չարագործ յանցաւորը, այնքան գօրութիւն գտաւ չարչարանաց վերջին ժամուն մէջ, որ սկսաւ նախատել եւ հայհոյել զՅիսուս. «Եթէ դու Քրիստոսն ես, կ'ասէր նա, փրկէ՛ զքեզ եւ զմեզ։» Բայց միւս աւազակը յանդիմանեց իւր ընկերը ասելով. «Մի՞թէ չես երկնչիր Աստուծմէ. դու ինքդ դատապարտուած ես մի եւ նոյն չարչարանքը կրելու. մանաւանդ որ մենք արժանի ենք մեր գործոց համեմատ հատուցումն ստանալու. իսկ սա ոչ մի չար գործ չէ գործած։» Յետոյ դառնալով դէպ 'ի Փրկիչն ասաց. «Տէր, յիշէ զիս քո արքայութեան մէջ։» Ամարիան ասեմ քեզ, պատասխանեց Յիսուս, այժմ իսկ ինձ հետ դրախտի մէջ պիտի լինիս։» Այսպէս, Յիսուս ոչ միայն ներեց զղջացեալ

յանցաւորին, այլ և արժանացուց արքայութեան, ուր լոյն է և երջանկութիւն մարդկան։

Այս բարեպաշտ աւաղակի օրինակը մի յայտնի ապացոյց է, որ մենք կարող ենք ճշմարիտ զղջմամբ թողութիւն ստանալ, եթէ միայն Աստուած իւր երկայնամտութեամբ ժամանակ և միջոց տայ մեզ ապաշխարելու։

Յիսուսի խաչի մօտ կանգնած էին Տիրամայրն Մարիամ, Մարիամ Կղէոպայ և Մարիամ Մագդաղենացին, նմանապէս և Փրկչի սիրելի աշակերտն Յովհաննէս, որ Յիսուսին հետեւած էր մինչեւ պատժապարտութեան տեղին։ Նա իւր վարդապետի սիրոյ համար յանձն առած էր ամեն հայհոյանք, վնասանք և մինչև անգամ մահ։ Սոքա ամենքը կանգնած էին խորին տրտմութեան մէջ և անպատում վշտակրութեամբ կը նայէին Յիսուսի չարչարանքներուն, մանաւանդ նորա մայրն՝ ամենասուրբ Կոյսն Մարիամ։ Կատարուեցաւ Սիմէօն ծերունիի մարգարէութիւնը թէ՝ "Սուրը պիտի խոցէ քո անձդ։" Փրկիչը տեսնելով իւր մայրը՝ ասաց, ակնարկելով Յովհաննէսի վրայ. "Ահա քո որդիդ։" յետոյ նայելով իւր սիրելի աշակերտին՝ ասաց. "Ահա քո մայրդ։" Այս ժամէն 'ի վեր Յովհաննէս առաւ իւր տունը Տիրամայրն Մարիամ և կը յարգէր ամենամեծ յարգանքով։ Մրջափ գեղեցիկ և պանչելի է Յովհաննէսի հաւատարմութիւնը իւր վարդապետին, որուն հետեւեցաւ մինչեւ չարչարանաց և խաչելութեան ամենադառն րոպէն։ Ոչ ապաքէն մենք եւս պարտաւոր ենք Յիսուսի սիրոյ համար ամեն նեղութիւն յանձն առնուլ և երբէք չը հեռանալ նորա պատուիրանքներէն և նորա փրկարար գրկէն։

Զ Թ։

Յիսուս Քրիստոս կ'աւանդէ հոգին։ Մատ. ԻԷ. 45։ Մարկ. ԺԵ. 55։ Ղուկ. ԻԳ. 44։ Յովհ. ԺԹ. 28։

Վեցերորդ ժամն երկամ ըստ եւրոպական տասներկու ժամն, երբ խաչեցին Յիսուսը։ Այս ժամէն յանկարծ խաւարը ծածկեց բոլոր երկիրը մինչեւ ինն ժամն, և արեգակը խաւարեցաւ կէս աւուր ժամանակ։ Յիսուսի թշնամիները սարսափեցան և լռեցին։ Յաղթվարդը լուռ էր և սաստիկ տարակուսանաց մէջ կը սպասէր։ Յիսուս կը կրէր ամենադառն չարչարանքներ և նեղութիւններ, երբէք ժամ կէս օրէն յետոյ, երբ նորա չարչարանքները մինչեւ վերջին աստիճանը հասաւ, աղաղակեց բարձր ձայնով.

«Էլի՛, Էլի՛, լամա սաբաք թանի,» այսինքն՝ «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ՝ ինչո՞ւ զիս թողիր։» Այն տեղ ներկայ գտնուողներէն մի քանիսը կ'ասէին. «Նա Էղիան կը կոչէ.» իսկ ոմանք կ'ասէին ծաղրաբանութեամբ. «Տեսնենք՝ թէ Էղիան պիտի գայ զինքը փրկելու։»

Մարդարէից ամէն գուշակութիւնները պէտք է կատարուէին։ Թագաւոր մարգարէն Դաւիթ հազար տարի Քրիստոսի ծնունդէն առաջ ասած էր Մեսիայի բերանէն. «Լեղին՝ ինձ կերակուր տուին և ծարաւի ժամանակս՝ քացախ արբուցին։» Փրկիչը իմանալով, որ շուտով ամէն բան պիտի կատարուի, ասաց. «Ծարաւի եմ։» Խաչի մօտ դրած էր քացախով լեցուն աման. զինուորներէն մէկը սպունգը թրջեց քացախի մէջ և եղեգնեայ գաւազանի ծայրէն կապելով մատուց Յիսուսի շրթունքներուն։

Յիսուս քացախը ընդունելէն յետոյ՝ ասաց. «Ամէն բան կատարուեցաւ.» և փոքր ժամանակ լուռ մնալէն ղկնի՝ աւելցուց. «Հայր, քո ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգին։» Այս խօսքերը երբ ասաց՝ գլուխը խոնարհեց և աւանդեց հոգին։

Այն րոպէին երկիրը շարժեցաւ, քարերը պատռուեցան և ցրուեցան, դերեզմանները բացուեցան և շատ արդարոց մարմինները յարութիւն առին, և Քրիստոսի յարութենէն յետոյ աշակերտներուն երեւեցան Երուսաղեմի մէջ. իսկ վարագոյրը, որ Սրբութիւնը կը բաժանէր Սրբոց Սրբութենէն, պատռուեցաւ վերէն մինչեւ 'ի վայր։

Խաչի մօտ կանգնած պահապաններու հարիւրապետը այս ամէն անցքը տեսնելով ասաց. «Արդարեւ՝ այս մարդը արդար էր. ճշմարիտ որ սա Աստուծոյ Որդի է։» Ամենապէս նորա իշխանութեան տակ եղած զինուորները, որոնք պարհաւրած էին երկրաշարժէն և քարերու պատռումներէն, կ'ասէին երենց մեծաւորի հետ. «Ճշմարիտ, սա Աստուծոյ Որդի է։» Իսկ ժողովուրդները որք խաչելու ժամանակը կանգնած էին խաչի մօտ և ականատես էին այս անցքերուն, կուրծքերը կը հարկանէին և բեկեալ սրտիւ և լուութեամբ տուն կը դառնային։

Զ.

Յիսուսի Քրիստոսի թաղումն։ Մատ. ԻԷ. 57։ Մարկ. ԺԷ. 42։ Ղուկ. ԻԳ. 50։ Յովհ. ԺԹ. 31։

Փրկիչն մեր Յիսուս և երկու աւազակները խաչուեցան Պասէքի տօնի նախընթաց օրը։ Այս մեծ և նշանաւոր օրը կարելի չէր մարմիններ թողուլ խաչի վրայ.

ուստի և Հրէայք եկան Պիղատոսի մօտ և խնդրեցին, որ հրամայէ կարդել խաչուածներու սրունքները, որ կամ շուտով մեռնին և կամ գոնէ չը կարենան փախչիլ։ Պիղատոս հրաման տուաւ որ կատարեն այս պահանջմունքը։

Զինուորները եկան պատժապարտութեան տեղը և առաջ կարդեցին աւազակներու սրունքները, իսկ երբ մօտեցան Յիսուսին, տեսան որ նա արդէն մեռած էր, ուստի և նորա սրունքները չը կարդեցին։ Բայց զինուորներէն մէկը Յիսուսի մահը ըստուգելուն համար՝ տէգով ծակեց նորա կողը, և իսկոյն բղխեցաւ արիւն և ջուր։ Այսպէս կատարուեցաւ Հին Կտակարանի խօսքը թէ. «Նորա ոսկրը թող չը փշրուի.» (Ոսկր մի բեկանիցէք 'ի նմանէ). ԵՂ. ԺԲ. 10։ Եւ նմանապէս թէ՝ «Պիտի նային իմ վրայ, որ խոցեցին։» (Հայեսցին առ ի, յոր խոցեցին).» Զաք. ԺԲ. 10։

Այսեղ խաչածները սովորաբար կը թաղեին պատժապարտութեան տեղւոյն մօտ։ Այս ժամանակ կը բնակէր Երուսաղէմի մէջ մի հարուստ մարդ, Յովսէփ անունով, որ ծննդեամբ Արիմաթիացի էր։ Սա նշանաւոր մարդ էր և միանգամայն բարձրագոյն ատենի անդամներէն մէկը, բայց իւր բարեպաշտութեան պատճառաւ չը համաձայնեցաւ

միւս անդամոց խորհրդին։ Նա Յիսուսի ծածուկ աշակերտներէն մէկն էր, և երկիւղ կրելով Հրէից չարութենէն՝ միայն աշակերտաց կը յայտնէր իւր սիրտը։ Յովսէփ երկիւղած էր և առաքինի և կրսպասէր Աստուծոյ արքայութեանը։ Սա համարձակեցաւ գնաց Պիղատոսի մօտ և խնդրեց Յիսուսի մարմինը։ Պիղատոս շատ զարմացաւ, երբ լսեց, որ Յիսուս արդէն մեռած է, ուստի և կոչել տուաւ պահապաններու հարիւրապետը և հարցուց. «Հաւատաբիտ է, որ Յիսուսը արդէն մեռած է։» Երբ հարիւրապետը հաստատեց որ արդէն մեռած է Յիսուս, հրամայեց որ մարմինը Յովսէփին տան։

Բաղարջակերաց ուրբաթ աւուր երեկոյին Յովսէփ եկաւ Գողգոթա և կոտաբերաւ իւր հետ Յիսուսի մարմինը պատելու համար։ Այս տեղ եկաւ Նիկոդեմոս, որ գիշերը միշտ կուգար և Յիսուսի վարդապետութիւնը կը լսէր։ Սա բերաւ մօտ հարիւր լիտր զմուռս և հալուէ։ Այս երկու բարեպաշտ անձինքը իւ ջուցին խաչէն Յիսուսի մարմինը և պատեցին կտաւով և խնկով Հրէից սովորութեան համեմատ։

Յովսէփ Գողգոթայի մօտ ունէր սեպհական պարտէզ մի, ուր կար նոյնպէս նո-

բափոր գերեզման մի, որոյ մէջ դեռ եւս ոչ ոք դրուած չէր։ Յովսէփ պատրաստած էր իւր եւ իւր ընտանեաց համար։ Բայց որովհետեւ Յովսէփ կը շտապէր Պասեքի տօնէն առաջ թաղելու Յիսուսի մարմինը եւ իւր պատրաստած գերեզմանը մօտ էր, ուստի Նիկոդեմոսի հետ տարան սուրբ մարմինը նոյն գերեզմանի մէջ. մեծ քար մի դրին այրի դրան վրայ, եւ իրենք տրտմութեամբ տուն դարձան։ Մարիամ Մագդալենացին եւ ուրիշ կանայք նմանապէս արտասուքով ներկայ գտնուեցան թաղմանը։ Նոքա վիշտերէ եւ նեղութիւններէ նուաղած՝ նստան այրին յանդիման եւ կը նային թէ ինչպէս մարմինը գերեզմանի մէջ կը դնեն։ Նոքա խորհեցան, որ պատրաստեն խունկ եւ ուրիշ անուշահոտ նիւթեր եւ շաբաթ օրը անցնելէն զկնի՝ գան Յիսուսի մարմինը օծեն, եւ այսպէս կատարեն թաղման հանդէսը։ Այս մտքով տուն դարձան։

Քահանայապետները եւ օրինականները շաբաթ առաւօտ վաղ ժողովեցան Պիղատոսի մօտ եւ ասացին. «Մենք յիշեցինք, որ այն խաբեբայն (ջարուութեամբ այսպէս կ'անուանէին զՅիսուս, չը կամենալով անունը տալ,) իւր կենդանութեան ժամանակ կ'ասէր թէ՝ ինքը երրորդ օրը յարութիւն պիտի առնէ։ Ուստի հրամայէ պահպանել նո-

ա գերեզմանը, որպէս զի աշակերտները չը գողանան նորա մարմինը եւ ժողովրդի մէջ հրատարակեն թէ՝ յարութիւն է առեր, որով եւ վերջին խաբէութիւնը առաջինէն աւելի վատ լինի։» Պիղատոս պատասխանեց. «Առէք պահապաններ եւ գնացէք պահպանեցէք, ինչպէս գիտէք։» Նոքա նոյն ժամին գնացին Յիսուսի գերեզմանը, պահապաններ կացուցին, եւ քաջ յայտնի կնքեցին գերեզմանի կափարիչ վէմը։

Արդարեւ՝ քահանայապետները մի կողմէն կը կարծէին թէ՝ իրենց նպատակին հասան, բայց միւս կողմէն եւս տակաւին ահուդողմ եւ կասկածանաց մէջ էին։ Ուստի ամէն զգուշութիւն 'ի գործ կը դնէին, որպէս զի չը խայտառակուին. սակայն այս ըզգուշութիւններով աւելի պիտի ամօթահար լինէին եւ աւելի պիտի հաստատէին Յիսուսի յարութեան ճշմարտութիւնը։ Այն չարամտութեամբ կուրացածները չը գիտէին թէ՝ Յիսուսը չարչարելով, խաչելով եւ թաղելով չը պիտի կարենան նորա անունը եւ յիշատակը յերկրէ ջնջել, այլ ընդ հակառակն՝ նա պիտի յարութիւն առնէ եւ հաստատէ իւր երկնային թագաւորութիւնը։

ՂԱ.

Քրիստոսի յարութիւնը։ Մաթ. ԻԷ. 62։
Մարկ. ԺԶ. 1։ Յովհ. Ի. 1։

ՇԱԲԱԹԻ երեկոյն հասաւ և սկսաւ երրորդ աւուրը սկիզբը կամ միաշաբաթը։ Երկիրը սասակիկ շարժեցաւ։ Աստուծոյ հրեշտակը իջաւ Յիսուսի գերեզմանի մօտ, վեմը թաւալեց գերեզմանի դռնէն և ինքն վրան նստաւ։ Նորա երեսը կը փայլեր ինչպէս փայլակ և հանդերձները սպիտակ էին ինչպէս ձիւն։ Պահապանները զարհուրելով գետնի վրայ ընկան կիսամեռ, բայց յետոյ երբ սթափեցան, իսկոյն փախան։

Այս միջոցին Քրիստոսի հաւատարիմ աշակերտուհի բարեպաշտ կանայքը առաւօտեան վաղ՝ արշալուսի ժամանակ քաղաքէն ելնելով և անուշահոտ իւղով լեցուն տմանները իրենց ձեռքը առած՝ կ'երթային Յիսուսի գերեզմանը, որ անուշահոտ իւղով և խնկով օծեն նորա մարմինը։ Նրքա տրտմութեամբ կ'ասէին միմեանց. «Ով պիտի գերեզմանի դրան քարը 'ի բաց թաւալէ մեզ համար։» Վէմը շատ մեծ էր։ Բայց երբ հասան, շատ զարմացան, երբ տեսան որ քարը գերեզմանի դռնէն գլորուած էր։ Երբ մօտեցան գերեզմանին՝ չը գտան Յիսուսի մարմինը նորա մէջ, բայց երիտասարդ մի տեսան, որ կանգնած էր գերեզմանի աջ կողմը։ Սա էր հրեշտակը, զոր չը ճանաչելով կը նայէին իրարու վրայ ահով և դողով։ Այն ժամանակ ուրիշ երկու հրեշտակներ ևս երևեցան, որոց հանդերձները փայլակի նման կը փայլէին և իրենց լուսով կը լուսաւորէին մութ այրը։ Խնկաբեր կանանցը ասաց հրեշտակը. «Դիտեմ որ խաչեալ Յիսուսը կը խնդրէք. բայց ինչու կենդանին մեռելոց մէջ կը փնտռէք։ Նա այս տեղ չէ։ Նա յարութիւն առաւ, ինչպէս գուշակեց ինքը. մինչդեռ ձեզ հետ էր։ Նա կ'ասէր ձեզ, որ մարդոյ Որդին պիտի մատնուի մեղաւորաց ձեռքը, պիտի խաչուի և երրորդ օրը պիտի յարութիւն առնէ։ Շտապեցէք աւետիս տալու նորա աշակերտներուն և Պետրոսին՝ նորա յարութեան համար։ Նա յարութիւն առաւ, ինչպէս ինքը կը գուշակէր, և պիտի հանդիպի ձեզ Գալիլիայի մէջ։»

Կանայքը ահ ու դողով հեռացան գերեզմանէն և սկսապարեցին դառնալու, բայց ճանապարհին հանդարտեցան, որովհետև յիշեցին Յիսուսի խօսքերը և նոցա ուրախութիւնը ահէն անցաւ։

Քրիստոսի յարութիւնը մեր սեպհական յարութեան գրաւականն է և առհաւատ-

չեան։ Մահը մեղաց պտուղն է. իսկ յաւիտենական կեանքը՝ փրկութեան պտուղը։ Ինչպէս Փրկիչը փառաւորեալ մարմնով յարութիւն առաւ գերեզմանէն, նոյնպէս յարութիւն պիտի առնեն ազգարները նոր և երջանիկ կենաց համար։ Մենք պարտաւոր ենք ուսանիլ Քրիստոսի յարութենէն երկու քրիստոնէական մեծ ճշմարտութիւններ, այսինքն՝ Բարոյականութիւն և Յոյս։ Պարտաւոր ենք աշխարհիս մէջ կատարեալ բարոյականութիւն ունենալ և ճշմարիտ յոյս մեր յարութեան համար։ Յարութեան յոյսը մեզ պէտք է քաջալերէ որ բարոյականութեան մէջ զարգանանք. և մեր բարոյականութիւնը արդէն մեզ կը յուսադրէ, որ Աստուած անպատճառ պիտի վարձատրէ։ Ի՞նչ մեծ և անպատում վարձատրութիւն է իւր առօրեայ կենաց առաքինութեամբ յաւիտենական կեանք ժառանգել։ Մեր պարտքն է ուրեմն և միանգամայն ճշմարիտ փառքը՝ հաստատ յուսալ և բարի գործել։ Յարութիւնը յուսոյ և բարի գործոյ պատկն է։

ՂԲ.

Յիսուս կը յայտնուի Մարիամ Մագդաղենացւոյն եւ ուրիշ կանանց։ Մաթ. ԻԸ. 1։ Մարկ. ԺԶ. 1։ Ղուկ. ԻԴ. 1։ Յովհ. Ի. 1։

ՏԱՊԱՒՆ մութն էր երբոր Մարիամ Մագդաղենացին Յիսուսի գերեզմանն եկաւ ուրիշ կանանցմէն առաջ։ Նա՝ Յիսուսի գերեզմանի դրան քարը գլորած տեսնելով և մարմինը գերեզմանի մէջ չը գտնելով սաստիկ զարհուրեցաւ և դառնալով աշակերտաց մօտ՝ ասաց նոցա. «Տէրոջ մարմինը գերեզմանէն առած են և չը գիտեմ թէ՝ ո՞ւր դրած են։» Երբ այս սխալուր համբաւը յայտնեց աշակերտաց, երկին դարձաւ Յիսուսի գերեզմանը։ Նորա բացակայութեան ժամանակ միւս կանայքը արդէն եկած էին Յիսուսի գերեզմանը և վերստին դարձած։ Մարիամ Թափուր գերեզմանի մօտ կանգնած կուլար։ Խոնարհելով դէպ 'ի գերեզմանը զարհուրանքով տեսաւ երկու հրեշտակ՝ ըստ պիտակ հանդերձով. մէկը նստած էր գլխի կողմը և միւսը ոտներու, ուր դրուած էր Յիսուսի մարմինը։ «Ինչո՞ւ կուլաս,» ասացին հրեշտակները։ — Կուլամ, որովհետեւ իմ Տէրը այս տեղէն առած են և չը գիտեմ թէ՝ ո՞ւր դրած են.» պատասխանեց Մարիամ

ամ, արտասուք թափելով, և յետ դառնալով տեսաւ իւր Տէրը, բայց չը ճանաչեց։ «Ինչո՞ւ կուլաս, — Յիսուս ասաց Մարիամին — և զի՞նչ կը փնտուես։» Մարիամը կարծելով թէ պարտիզպանն է, պատասխանեց. «Եթէ դու բարձեր իմ Տէրը, ասա՛ ինձ՝ թէ ո՞ւր դրած ես, որպէս զի կարենամ տեսնել։» Ողորմածն Յիսուս ասաց իւր ծանօթ ձայնով. «Մարիա՛մ։»

Մարիամ իսկոյն ճանաչեց Յիսուսը եւ նորա ոտքերը ընկնելով աղաղակեց՝ ի բոլոր սրտէ ուրախանալով. «Վարդապե՛տ։» Մարիամ իւր սաստիկ ուրախութենէն կամէր նորա ծունկերուն փաթաթուիլ, բայց Յիսուս ասաց. «Մի մօտենար ինձ, ես դեռ Հօրս մօտ չեմ բարձրացեր։ Գնա՛, ասա՛ իմ եղբայրներուն, (այսպէս կ'անուանէր Յիսուս իւր աշակերտները,) որ ես կ'երթամ իմ և ձեր Հօրս մօտ, իմ և ձեր Աստուծոյ մօտ։»

Իսկ միւս կանայքը հրեշտակի խօսքէն քաջալերուած քաղաքը կը դառնային. նոքա կ'երթային կամաց կամաց, մտածելով իրենց սանձերուն վրայ, և յանկարծ Յիսուս նոցա առջեւը ելաւ։ «Ուրախացէք.» ասաց նոցա։ Նոքա ուրախացած և միանգամայն զարհուրած՝ նորա ոտքերը ընկան և երկրպագութիւն տուին։ «Մի՛ վախնաք, կ'ասէր Յի-

սուս կանանցը, այլ գնացէք իմոց տուէք-իմ եղբայրներուն, որ գնան Գալիլիա, այն տեղ նոքա զիս պիտի տեսնեն։»

Այս անճառելի և սրտաշարժ անցքը գեղեցիկ նշան մի է, որ մենք եւս մեր մահէն յետոյ պիտի վերստին տեսնենք մեր սրտի սիրելիները։ Մարիամ և միւս կանայքը—Յիսուսի աշակերտուհիները — վկայ էին նորա մահուանը։ Նոքա Յիսուսը տեսան խաչի վրայ, տեսան նորա ծակած կողը, յորմէ վազեց արիւն և ջուր, տեսան Յիսուսը գերեզմանի մէջ դրած, բայց նոյնպէս տեսան և յարութիւն առած։ Թէպէտ Յիսուսի փառաւորեալ մարմինը կը փայլէր, բայց նոքա ճանաչեցին նորա աստուածային երեսը — նորա ողորմած ձայնը — և նոցա սրտերը լցուեցան կենդանի և քաղցր ուրախութեամբ։

Այսպէս պիտի երեւին մեզ մեր հանգուցեալ մերձաւորներու երեսները այլակերպուած եւ նորոգուած նոր կեանքով։ Մենք պիտի ճանաչենք նոցա անմոռաց գլուխները, պիտի ճանաչենք նոցա ձայնը որ մեր սրտին ծանօթ է։ Այն որը մանուկները, որոնք կուլան իրենց ծնողաց գերեզմանի վրայ, թող միսիթարուին, որ անշուշտ պիտի հասնի իրենց ծնողաց հետ տեսնուելու երջանիկ ժամը։ Մահէն պատճառած բացակայութիւնը կարճօրեայ է, իսկ մահէն յե-

ատ եղած միաւորութիւնը՝ յաւիտենական է։ Լրթէ կը ցանկան որ իրենց ուրախութիւնը կատարեալ լինի, թող այնպէս ապրին որ ամենեւին իրենց խղճմտանքի դէմ չը գործեն. թող այնպիսի արդար և սուրբ կեանք վարեն աշխարհիս մէջ, որ չը խափանուի յաւիտենական կենաց միաւորութիւնը։

Ղ. Գ.

Խնկարբեր կանաչքդ կ'առեւտեմ Յիսուսի յարութիւնը։ Մարկ. ԻԸ. 11։ Ղուկ. ԻԳ. 8։ Յովհ. Ի. 2։

ԱՌԱՋԻՆ անգամ Մարիամ Մագդաղենացին իմացուց Պետրոսին և Յովհաննէսին թէ՝ չը գտաւ Յիսուսի մարմինը գերեզմանի մէջ։ Երկու աշակերտները եւս աճապարեցին գերեզմանը գնալ։ Յովհաննէս առաջ հասաւ և կռանալով նայեցաւ գերեզմանի մէջ, բայց միայն գտաւ այն պատառակալը և կտաւը, որ Յիսուսի մարմինը կը ծածկէին։ Յովհաննէս սարսափեցաւ և չը համարձակեցաւ այրի մէջ մտնել։ Այս միջոցին Պետրոսն եւս եկաւ. սա իջաւ գերեզմանը եւ տեսաւ որ այն տեղ ընկած է միայն պատառակալը. իսկ կտաւը որ կը ծածկէր Յիսուսի գլուխը՝ ծալած և դրուած էր միւս կողմը։

մը։ Յովհաննէս եւս մտաւ գերեզմանի մէջ և հաւատաց Յիսուսի յարութեանը։

Պետրոս և Յովհաննէս առաքեալները տուն դարձան, ուր Ժողովեցան միւս աշակերտներն եւս։ Նոքա դեռ ամենքը երկիւղածութեան մէջ էին և ահա ներս մտան սուրբ կանայքը, որոնք տեսած էին հրեշտակները։ Նոքա ասացին աշակերտներուն այն խօսքերը, որ լսած էին հրեշտակներէն թէ՝ «Նա յարութիւն առաւ մեռելոց մէջէն, ինչպէս ինքը գուշակած էր և դուք պիտի տեսնէք.» բայց աշակերտները, բացի Պետրոսէն և Յովհաննէսէն, տակաւին չէին հաւատար։

Այս ժամանակ եկաւ Մարիամ Մագդաղենացին։ Սա աղաղակեց ուրախութեամբ. «Ես տեսայ Տէրը։» Յետոյ պատմեց ամեն բան, ինչ որ Յիսուս Քրիստոս ասած էր. բայց աշակերտները դեռ չէին հաւատար։

Վերջապէս եկան Յիսուսի միւս աշակերտուհիները և ամենքը միաբան՝ ի բոլոր սրտէ ուրախացած՝ կը հաստատէին, որ տեսած են Փրկչի գերեզմանի մօտ ոչ միայն հրեշտակներ, այլ և տեսած են զնոյն ինքն Յիսուս և լսած են նորա ձայնը և ընկած են նորա ոտքերը, բայց աշակերտները նոցա եւս չէին հաւատար, այլ մնացած էին անմխիթար։

Յիսուսի յարութիւնը իմացան նմանա-

պէս Հրէից ծերերը, որոնք մատնած էին խաչուելու։ Յիսուսի գերեզմանին պահապան կարգուած զինուորները զարհուրած քաղաքը վազեցին և ամէն բան պատմեցին քահանայապետներուն, ինչ որ պատահած էր։ Իսկոյն կոչեցին ժողովրդի բոլոր ծերերը և խորհուրդ առնելով՝ վճռեցին, որ կաշառեն զինուորները, որպէս զի ամէն տեղ համբաւ տարածեն թէ՝ երեկ քնացած էին և աշակերտները դիշերը գողցած են Յիսուսի մարմինը։ Քահանայապետները եւ ծերերը խոստացան զինուորները պաշտպանել, եթէ Պիղատոս կամենայ պատժել, որ իրենց պաշտօնը չեն կատարած ինչպէս հարկն է։ Զինուորները իրենց առաջարկած դրամը ընդունեցին և տարածեցին այս ուուտ համբաւը Հրէից մէջ։ Սակայն մը ստութիւն կարող է քրիստոնէական ճշմարտութեան անյաղթ ուժին դիմանալ։ Քահանայապետաց և ծերոց անարդ փորձերուն նըման շատ փորձեր գործադրուեցան, բայց մարդկութիւնը սիրով քրիստոնէութեան ծոցը դիմեց և տակաւին կը դիմէ, որովհետեւ Քրիստոնէութիւնն է միայն ճշմարիտ կրօնք հանուր մարդկութեան։

ՂԴ.

Յիսուս կը յայտնուի աշակերտաց՝ Եմմաուսի ճանապարհի վրայ։ Ղ-ի։ ԻԴ։ 15։

ՆՈՅՆ օրը, արեգակի մտնելէն փոքր ինչ առաջ, աշակերտներէն երկուսը՝ Ղուկաս և Կղէոփաս կ'երթային Եմմաուս գիւղը, որ Երուսաղէմէն շատ հեռի չէր։ Նոքա շատ տխուր էին և կը խօսէին ամէն պատահածներու վրայ և մանաւանդ ինչ որ լսած էին Քրիստոսի աշակերտուհի կանանցմէն։ Այն ժամանակ Յիսուս ինքը մօտեցաւ երկու աշակերտներուն և կ'երթար նոցա հետ, բայց նոքա չճանաչեցին։ Փրկիչը հարցուց. «Ի՞նչ բանի վրայ կը խօսիք և ինչո՞ւ այդպէս սըխուր էք։» Կղէոփաս պատասխանեց. «Երեւի թէ միայն դուն ես Երուսաղէմի մէջ, որ նոր պատահած բաները չը գիտես։»

«Ի՞նչ է պատահեր.» հարցուց Փրկիչը։ Աշակերտները պատասխանեցին. — «Մինթէ ամենեւին բան չէս լսած Յիսուս Նազովրեցիի վրայ, այն մեծ մարգարէին համար կ'ասենք, որ բանիւ և գործով մեծ եղաւ Աստուծոյ առջեւ։ Մինթէ չէս լսած՝ թէ ինչպէս մեր քահանայապետները և իշխանները ի մահ դատապարտեցին և խաչեցին։ Իսկ մենք կը յուսայինք, որ նա ինքն է որ պիտը

է փրկէ Իսրայէլը։ Եւ ահա արդէն երրորդ օրն է, որ պատահեցաւ այս անցքը։

«Բայց այսօր քանի մի կանայք նորա գերեզմանը գնալով մարմինը չէն գտած այն տեղ։ Այս կանայքը տեսած են հրեշտակներ, որոնք ասած են թէ՝ Նա (Յիսուս) կենդանի է, նմանապէս մեզմէն մի քանի անձինք գերեզմանը գնացին և ամէն բան այնպէս գտան, ինչպէս կանայքը պատմած էին։»

Այսպէս մի առ մի պատմեցին աշակերտները ինչ որ Երուսաղէմի մէջ պատահած էր մինչեւ իրենց ելնելը։

«Ով անմիտներ, պատասխանեց Փրկիչը, և հեղգասիրտներ, ինչպէս մարգարէից դուշակածներուն դժուարաւ կը հաւատաք։ Մի թէ չը գիտէք, որ Յիսուս առաջ պէտք է չարչարուէր և ապա իւր փառաց մէջ մտնէր։» Յետոյ սկսաւ Մեսիայի վրայ եղած մարգարէութիւնները մի առ մի մեկնել, թէ ինչ գրած են Մովսէս և միւս մարգարէքը։ Այսպէս խօսելով եկան նոքա Էմմաուս։ Յիսուս յայտնեց, որ ինքը կամի առաջ երթալ, բայց երկու աշակերտները կը համոզէին որ իրենցմէ չը բաժնուի, և կ'ասէին թէ՝ օրը արդէն տարաժամ է։ Յիսուս հաճեցաւ նոցա հետ միասին երթալ։

Երեկոյեան ընթրեաց ժամանակ Յիսուս

առաւ հաց, օրհնեց և բեկանելով տուաւ աշակերտներուն։ Այս րոպէին աշակերտները ճանաչեցին Յիսուսը։ Նոցա աչքերը բացուեցան։ Նոքա տեսան Փրկչի հեղ և աղօրմած երեսը, որ կը փայլէր բարութեամբ, բայց Տէրը յանկարծ անհետացաւ։

Աշակերտները սաստիկ ուրախութենէն աղաղակեցին. «Մենք առաջ չը ճանաչեցինք, բայց չէ՞ որ մեր սրտերը կը ճմլէին, երբոր ճանապարհին կը մեկնէր մեզ մարգարէութիւնները։» Իսկոյն ելան սեղանէն և չը նայելով գիշերուան մութենալուն՝ ճամապարհեցին դառնալ Երուսաղէմ և միւս աշակերտներուն եւս հաղորդել այս ուրախական աւետիսը։

Նոքա բոլոր առաքեալները և աշակերտները գտան միասին ժողովուած, որոնք նոյն աւետիսն ունէին, և շուտով պատմեցին եկողներուն։ Յիսուս ապաշխարող մեղաւորներու ողորմած բարեկամը՝ յայտնուեցաւ Պետրոսին, որ կուլար ուրախութենէն։ Երբ առաքեալները տեսան նոր եկող աշակերտները՝ ընդունեցին ուրախ աղաղակաւ. «Տէրը յարեաւ, նա երեւեցաւ Սիմոնին։» Լուկաս և Կղէոպաս եւս պատմեցին իրենց տեսածը՝ թէ ինչպէս խօսեցան Յիսուսի հետ և ընթրեաց ժամանակ ճանաչեցին։

Ղ Ե.

Փրկիչը կը յայտնուի առաքեալներուն։

Ղ՚-ի. ԻԴ. 36։ Յովհ. Ի. 19։

ՅԻՍՈՒՍԻ յարութիւն առած օրը առաքեալները միասին ժողովեցան, և երեկոյեան տան դռները փակեցին, Հրէից հալածանքէն վախնալով։ Նոքա կը խօսէին ամեն պատահած բաներու վրայ, բայց մի քանիսը տակաւին չէին հաւատար Յիսուսի յարութեանը։ Յանկարծ տեսան Յիսուսը իրենց առջեւը կանգնած։ Նա ասաց աշակերտներուն. «Խաղաղութիւն ձեզ։»

Աշակերտները ահով պաշարեցան։ Նոքա այնպէս կը կարծէին թէ անմարմին ոգի կը տեսնեն, բայց Փրկիչը ասաց նոցա. «Ինչու՞ կը խռովիք, և ինչու՞ կ՚երկմտիք։ Տեսէք ահա ձեռքերս և ոտքերս։ Ես ինքս եմ։ Շօշափեցէք և հաւատացէք։ Ոգին չունի մարմին և ոսկր, ինչ որ ես ունիմ։» Յիսուս ցոյց տուաւ աշակերտներուն իւր վիրաւորուած ձեռքերը, ոտքերը և կողքը։ Բայց տեսնելով որ առաքեալները իրենք զիրենք մոռացած էին և տակաւին չէին հաւատար այս երջանկութեանը, Յիսուս ասաց. «Կերակուր ունիք։» Նոքա մատուցին խորոված ձուկն և մեղրի խորիսխ։ Փրկիչը աշակերտաց առջեւ կերաւ այն կերակուրներէն և վերստին ասաց. «Խաղաղութիւն ձեզ, ինչպէս Հայրս ղրկեց զիս, նոյնպէս և ես կը ղրկեմ զձեզ։»

Այս ասելով փչեց առաքելոց վրայ՝ և այս խօսքը արտասանեց. «Ընդունեցէք Սուրբ Հոգին. նոքա զորս դուք մեղքէ կ՚արձակէք, թողութիւն կը ստանան. իսկ նոքա, զորս չէք արձակեր, թողութիւն չեն ստանար։»

Սորա հետ միասին բացաւ Յիսուս առաքելոց միտքը, որ Սուրբ Գիրքը հասկանան։» Այսպէս գրած են մարգարէները, ասաց նոցա, և այսպէս պէտք էր որ չարչարուէր Քրիստոս (խոստացեալ Մեսիան) և երրորդ օրը յարութիւն առնէր մեռելոց մէջէն։»

Փրկիչը խօսքը աւարտելով ինչպէս յայտնուած էր, նոյնպէս անհերեւոյթ եղաւ, թէ և տան դռները փակած էին։

Մոռացենք՝ թէ որչափ մեծ և երեւելի է Քրիստոսի յարութեան օրը։ Այն օրը Յիսուս գերեզմանէն յարեաւ և երեւեցաւ աշակերտներուն։ Այն օրը, որ Աստուծոյ կամ շաբաթուան առաջին օր կը կոչուի, պէտք է սուրբ լինի մեզ համար։ Ինչպէս որ մինչեւ Քրիստոսի յարութիւնը Շաբաթ օրը կը սրբուէր (սուրբ կը պահուէր) աշխարհի և մարդոց ստեղծագործութեան

յիշատակի համար, նոյնպէս այժմ մենք պիտի սուրբ պահպանենք յարութեան օրը, որ մեր նորոգման օրն է. վասն զի նոյն աւուր մէջ Քրիստոս իւր փառաւոր յարութեամբ հաստատեց մեր յարութիւնը։ Նոյն օրը հաստատուն յոյս մատակարարեց մեզ Փրկիչը, որ մենք եւս պիտի նորոգուինք անմահական նորոգութեամբ։ Յարութեան օրը մեր յաւիտենական կենաց վերածնելութեան օրն է։ Նա է օր անմահութեան։ Արդարեւ՝ մենք պարտաւոր ենք ամեն օր սրբութեան և բարեգործութեան մէջ ընթանալ. բայց յարութեան աւուր մէջ յատկապէս պարտինք մեր մարմնաւոր աշխատանքէն դադրիլ և հոգեկան գործքերով պարապիլ։ Նոյն օրը պարտաւոր ենք Քրիստոսի յարութեան յիշատակի հետ մեր յարութիւնը եւս միտներս բերել և Յիսուսի անհուն մարդասիրութիւնը օրհնել և յաւիտենականութեան արժանի գործքեր գործել։

ՂԶ.

Թոմայի հաւատոյը։ Յովհ. Ի. 24։

ԵՐԲ Յիսուս յայտնուեցաւ աշակերտներուն, մեռեալն առաքեալներէն մէկը՝

Թոմման՝ այն տեղ չէր։ Թոմման երբ դարձաւ, առաքեալները պատմեցին թէ՝ «Մենք Տէրը տեսանք։» Սակայն Թոմման չըհաւատալով պատասխանեց. «Այս չեմ հաւատար, մինչև ինքս չըտեսնեմ նորա ձեռաց բեւեռներու վերքերը, մինչև չըշոշափեմ և ձեռքս դնեմ նորա վիրաւորեալ կողի վրայ։» Ութ օրէն յետոյ, որ նոյնպէս Կիւրակի էր, բոլոր աշակերտները վերստին ժողովեցան միասին և Թոմման եւս իրենց հետ էր։ Դռները փակած էին առաջուան պէս։ Յանկարծ Յիսուս կանգնեցաւ նոցա առջեւ և ասաց. «Խաղաղութիւն ձեզ.» յետոյ դառնալով դէպ ի Թոմման՝ ասաց. «Ի՛ր մատդ և տես ձեռքերս. բեր ձեռքդ և դիր կողիս վրայ։ Ընհաւատ մի լինիր, այլ հաւատա։» Թոմման ազաղակեց. «Ով Տէր իմ և Աստուած իմ։» Յիսուս ասաց. «Դու տեսար և հաւատացիր ինձ, բայց երանի նոցա, որոնք չը տեսան սիրտի հաւատան ինձ։»

Լեթէ կը փափաքինք Յիսուսը տեսնել, պարտաւոր ենք ճշմարիտ հաւատ ունենալ նորա աստուածութեան և վարդապետութեան վրայ։ Յիսուս ամեն ժամանակ մեզ հետ է. բայց պարտինք սրտի սրբութիւն ունենալ, որ նորա տեսութիւնը կամ ներկայութիւնը կարենանք վայելել։

ԳԼ.

Յիսուս կը յայտնուի աշակերտներուն Տիբերիական ծովին մօտ։ Յովհ. ԻԱ. 1։

ԵՐԲ Օ.ատիկը անցաւ, մեռեալներուն առաքեալները Երուսաղեմէն դարձան Գալիլիա։ Այս տեղ ժողովեցան միասին Սիմոն Պետրոս, Թովմաս, Նաթանայէլ, Օ.երեդեայի երկու որդիքը՝ Յակոբոս և Յովհաննէս և միւս երկու աշակերտներն ևս։ Սիմոն Պետրոս ասաց նոցա. «Ես կ'երթամ ձուկն որսալու։» Միւսները պատասխանեցին. «Մենք ևս կու գանք քեզ հետ։» Նոքա նաւ նստան և գնացին ձուկն որսալու. բայց բոլոր գիշերը աշխատեցան և ամենևին ձուկն չը կալան։

Երբ առաւօտ եղաւ, Յիսուս երևեցաւ ծովափին վրայ, բայց աշակերտները չը ճանաչեցին։ Յիսուս հարցուց. «Մանուկներ, ուտելու բան ունիք։» Աշակերտները պատասխանեցին, որ ոչ ինչ չունին, որովհետև նոյն գիշերը չէին կարացեր ձուկն բռնել։ Այն ժամանակ Փրկիչն ասաց. «Երկէք ուռկանը նաւակի աջ կողմը և կը կալնուք։» Նոքա կատարեցին Տիրոջ պատուէրը և ձուկան բազմութենէն չը կարէին ուռկանը դուրս հանել։

Այն ժամանակ Յիսուսի սիրելի աշակերտն Յովհաննէս ասաց. «Այս Տէրն է։» Պետրոս երբ լսեց, հանդերձը հագաւ, որովհետև մերկ էր եւ այնպէս կը քաշէր ուռկանը։ Նա ընկաւ ջրի մէջ և կըշտապէր լողալով ափը ելնել։ Իսկ միւս աշակերտները նաւեցին և իրենց հետ քաշեցին ձկներով լցուած ուռկանը։ Երբ ափը ելան, տեսան կրակեայ մի, որոյ վրայ ձուկն էր դրած և հաց։ Յիսուս ասաց. «Բերէք ձեր որսած ձկներէն։» Պետրոս իսկոյն նաւակի մէջ մտաւ, ուռկանը քաշեց և նորա մէջ գտաւ 153 մեծ ձկներ։ Զը նայելով այսքան ձկանց բազմութեանը, ուռկանը չը պատռուեցաւ։ Այս տեղէն հաւատացին առաքեալները, որ Տէրը իրենց հետ է։

Յիսուս ասաց. «Եկէք, ճաշակեցէք։» Ամենքը նստան կրակի չորս կողմը։ Ոչ մէկը չէր համարձակեր հարցնելու. «Ո՞վ ես դու,» որովհետև ամենքը գիտէին, որ Փրկիչն է։ Յիսուս առաւ հաց, կուտուրեց և տուաւ աշակերտներուն, նոյնպէս և ձուկն։ Դ'աշի ժամանակ Յիսուս ասաց Սիմոն Պետրոսին. «Սիմոն Յովհանու, կը սիրե՞ս զիս։» Պետրոս պատասխանեց. «Տէր, դու գիտես, որ կը սիրեմ։» Փրկիչը ասաց. «Բաժէ դառներս։» Երկրորդ անգամ հարցուց Յիսուս. «Սիմոն Յովհանու, կը սիրե՞ս զիս։» Պետ-

ռոս պատասխանեց. «Տէր, դու գիտես, որ կը սիրեմ։» Փրկիչը ասաց. «Արածէ ոչխարներս։» Երրորդ անգամ հարցուց Յիսուս. «Սիմոն Յովհաննու կը սիրես զիս։» Այս հարցման կրկնութենէն Պետրոս տրտմեցաւ և պատասխանեց. «Տէր, դու ամեն բան գիտես, դու գիտես որ ես զքեզ կը սիրեմ։» Փրկիչը վերստին ասաց. «Արածէ ոչխարներս։ Ճշմարիտն ասեմ քեզ, երբ դու մանուկ էիր, ինքդ գօտիդ կը կապէիր և կ'երթայիր՝ ուր կը կամէիր. բայց երբ ծերանաս, ձեռքերդ պիտի բարձրացնես և ուրիշները գօտիդ պիտի կապեն և տանեն քեզ այն տեղ, ուր չես կամենար երթալ։» Այս խօսքերը կը նշանակէին թէ՝ ինչպիսի մահով Պետրոս պիտի փառաւորէ զԱստուած։» Յետոյ Տէրը ասաց. «Ա՛կ, զկնի իմ։»

Այսպէս Փրկիչը ներեց ուրացող Պետրոսին, որ երեք անգամ կրկնելով խոստովանեցաւ թէ կը սիրեմ զքեզ։ Երեք անգամ հարցմունք ընելով սիրոյ վրայ՝ Փրկիչը յիշեց Պետրոսի երեք անգամ ուրանալն և տեսնելով նորա մոերիմ սէրը և զղջումը՝ նորոգեց նորա Առաքեալ անունը։ Պետրոս իւր սէրը ապացուցանելով արժանացաւ միւս աշակերտաց պէս Քրիստոսի ոչխարները (ժողովուրդը) արածելու պաշտօնն ստանալու։

ՂԸ.

Յիսուս Քրիստոս կը յայտնուի աշակերտաց Գալիլիայի մէկ լերան մօտ։ Մաթ. ԻԸ. 16։

Մեծաւան առաքեալները, ինչպէս Յիսուս պատուիրած էր, ժողովեցան Գալիլիայի լերան վրայ։ Յիսուս երեւեցաւ աշակերտաց և ամենքը գետնի վրայ ընկնելով երկրպագութիւն տուին։ Այս ժամանակ Յիսուս իշխանութիւն տուաւ աշակերտներուն, որ Ճշմարտութեան Ճանապարհը ուսուցանեն մարդկանց և հրաւիրեն յերկնային արքայութիւնն։ Նա քաջալերեց և խոստացաւ նոցա, որ միշտ պիտի օգնէ և իրենց հետ լինի։

Յիսուս ասաց. «Ինձ տուած է ամեն իշխանութիւն երկնքի վրայ և երկրի երեսին. գնացէք և քարոզեցէք ամեն ազգերուն, մկրտելով անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել ամեն պատուէր, ինչ որ պատուիրեցի ձեզ։ Ով հաւատայ և մկրտուի, նա պիտի փրկուի. իսկ ով որ չը հաւատայ, նա պիտի դատապարտուի։ Հաւատացեալներու նշանը այս պիտի լինի, որ նոքա իմ անունով դեւեր պիտի հալածեն, պիտի զանազան լեզուներ խօսին, օձերը պիտի իրենց ձեռքե-

ղու վրայ առնեն և նոցա մահաբեր թոյնե-
րէն անվնաս պիտի մնան. հիւանդներու
վրայ ձեռք դնելով պիտի բժշկեն ամեն
ցաւեր։»

Յիսուս խօսքը վերջացընելով ասաց. «Դու
ես ձեզ հետ պիտի լինիմ մինչեւ յաւիտեան։»
Յիսուս իւր աստուածային խոստման հա-
մեմատ միշտ Հաւատացեալներու հետ է։ Հաւատացեալները Յիսուսի
ներկայութիւնը վայելելով ամենեւին երկիւղ չունին աշխարհի փորձանքներէն, տա-
ռապանքներէն և հալածանքներէն։ Այն
ժամանակ միայն ամենայն ինչ զարհուրելի
և վտանգաւոր է մարդկանց համար, երբոր
իրենք Յիսուսէն հեռացած են և իրենց ան-
ձը աշխարհին մատնած։ Աշխարհի մէջ ա-
մենէն անմխիթար և թշուառ մարդը նա է,
որ հեռի է Քրիստոսէն և որ աշխարհային
բաներու մէջ մխիթարութիւն կը փնտռէ։
Ինչպէս Յիսուս խոստացաւ մեզ հետ լինիլ
յաւիտեան, նոյնպէս մենք եւս պիտի խոս-
տանանք նորա հետ լինիլ և երբեք չըհեռա-
նալ ոչ չար մտածմունքներով և ոչ չար գործ-
քերով. վասն զի մեր երջանկութիւնը միայն
այն ժամանակ է կատարեալ, երբ Յիսուս
մեզ հետ է և մենք Յիսուսի հետ։

ՂԹ.

Քրիստոսի Համբարձումն։ Ղուկ. ԻԴ. 49.

ՅԻՍՈՒՍ իւր յարութենէն յետոյ քա-
ռասուն օր մնաց երկրիս վրայ։ Նա ոչ մի-
այն երեւեցաւ աշակերտներուն, այլ և երբ-
կարօրէն խօսեցաւ նոցա հետ, ճաշեց նո-
ցա հետ և ուսոյց նոցա՝ աբքայութեան
դաղտնիքը։ Պենտեկոստէի տօնէն տասն օր
առաջ ամեն առաքեալները ժողովեցան Յե-
րուսաղէմ, ուր վերջին անգամ Յիսուս
յայտնուեցաւ նոցա և պատուիրեց Երու-
սաղեմէն չը հեռանալ, մինչեւ որ իջնէ ի-
րենց վրայ Հոգին Սուրբ՝ իւր նորոգիչ շը-
նորհքներով։ Յիսուս ասաց աշակերտնե-
րուն. «Ես պիտի առաքեմ ձեզ իմ Հօրս
խոստացածը. մնացէք Երուսաղեմի մէջ,
մինչեւ որ զօրութիւն ստանաք վերեւէն։
Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը ստանալէն զկնի՝
քարոզեցէք Աւետարանը Երուսաղեմի մէջ,
Հրէաստանի և Սամարիայի մէջ և երկրիս
ամենահեռաւոր ծայրերուն մէջ։»

Այսպէս խօսելէն զկնի՝ Յիսուս աշա-
կերտները հանեց Երուսաղեմէն, տարաւ
մինչեւ Բեթանիա և եալաւ Զիթենեաց լե-
ռան գլուխը։ Այս տեղ Յիսուս բարձրա-
ցուց իւր ձեռքերը, օրհնեց իւր աշակերտ-

ները և օրհնելու ժամանակ համբարձաւ երկինքը։ Ամպը հովանի եղաւ Յիսուսին և ծածկեց աշակերտաց աչքերէն։ Փրկիչը բարձրացաւ երկինքը և նստաւ Հօր աջ կողմը։

Աշակերտները, որոնք վկայ էին այս փառաւոր համբարձմանը, մինչդեռ կը նայէին դէպ՝ի երկինք, և ահա երկու լուսազգեստ հրեշտակներ երեւեցան նոցա և ասացին. «Գալիլիացի մարդիկ, ինչու այդպէս ապշած երկնքին կը նայիք։ Այն Յիսուսը որ համբարձաւ, վերստին պիտի գայ աշխարհ։» Աշակերտները խնարհելով երկրպագութիւն տուին համբարձեալ Տիրոջը։ Յետոյ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ և միշտ տաճարի մէջ լինելով կը փառաբանէին և կ՝օրհնէին զԱստուած։

Այսպէս վերջացաւ Յիսուսի կեցութիւն և բնակութեան շրջանը երկրիս վրայ։ Նորա երկրաւոր կեանքը անընդհատ բարերարութիւն էր, եւ այսպէս թողաւ նա երկիրը, օրհնելով իւր աշակերտները։ Նա չըհեռացաւ իւր հետեւողներէն, այլ աներեւութապէս միշտ սուրբ եկեղեցւոյ և բոլոր հաւատացելոց բազմութեան հետ է։ Նա մինչեւ աշխարհիս կատարածը բոլոր հաւատացելոց Առաջնորդն է և Օգնականը հոգեւոր պատերազմին մէջ։ Մեր ամենազօր

Փրկիչը և Օգնականը մեզ հետ ունենալով՝ պարտաւոր ենք արիութեամբ պատերազմիլ մոլութեան, ստութեան, մոլորութեան և հալածանաց դէմ, որպէս զի արժանանք այն պսակը ընդունելու, որ պատրաստուած է Աստուծոյ սիրելեաց համար։

ՃԾ.

Գալուստ Հոգւոյն Սրբոյ։ Գործ. Բ. 1։

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ մնալով Երուսաղեմի մէջ կը սպասէին մխիթարիչ Սուրբ Հոգւոյ գալստեանը։ Նոքա իրենց ժամերը կ՝անցընէին անդադար աղօթից մէջ։ Մի օր Պետրոս առաջարկեց միւս առաքեալներուն որ Յիսուսի եօթանասուն աշակերտներէն մէկը ընտրեն Յուդա Իսկարիովտացւոյն տեղ, որ իւր մատնութեամբ արդէն առաքելոց կարգէն որոշուած և խեղդուած էր։ Այս ժամանակ բոլոր հաւատացելոց թիւն էր 120։ Նոքա իրենց մէջէն երկուսը ընտրեցին և աղօթելէն զկնի՝ վիճակ ձգեցին եւ վիճակը ընկաւ Մատաթիային, որ համարուեցաւ երկոտասաներորդ առաքեալ։

Յիսուսի համբառնալէն տասն օր յետոյ հասաւ Պենտէկոստէից տօնը, որ նշանակ-

ուած էր Սինէական օրէնսուսութեան յի-
շատակի համար, և ամեն տարի կը կատա-
ուէր։ Այս տօնակատարութեան ժամանակ
մեծ հանդէս կը լինէր և հեռաւոր տեղերէն
կը ժողովուէին ոչ միայն բարեպաշտ Հրեա-
ներ, այլ և զանազան հեթանոս ազգեր։ Այս
անգամ եւս ժողովուած էր անհամար բազ-
մութիւն զանազան երկիրներէ։ Երկոտասան
առաքեալները, Յիսուսի Մայրն սուրբն Մա-
րիամ և հարիւրէն աւելի աշակերտներ եւ
աշակերտուհիք միասին էին։ Սոքա ամենքը
հաւաքուած էին Սիոնի վերնատան մէջ։
Յանկարծ երկնքէն մեծ ձայն մի լսուեցաւ,
իբրեւ ձայն սաստիկ հողմոյ, և աշակերտաց
բնակած վերնատունը լուսով լցուեցաւ։
Ամեն ներկայ գտնուողներուն գլխոց վրայ
երեւեցաւ բոց՝ հրեղէն լեզուներու ձեւով։
Այս բոպէին մէջ աշակերտները ընդունե-
ցին Սուրբ Հոգին, զոր Փրկիչը խոստացած
էր։ Աշակերտները յանկարծական նորոգու-
թիւն և հրաշալի փոփոխութիւն զգացին
իրենց մէջ։ Նոքա սկսան այլ և այլ լեզուներ-
ով խօսիլ, ինչպէս որ Սուրբ Հոգին կու-
տար նոցա։ Նոցա միտքը լուսաւորեցաւ վե-
րին լուսաւորութեամբ, նոցա սիրտը լցուե-
ցաւ աստուածային շնորհաց անճառելի
քաղցրութեամբ, և անյաղթելի արիութիւն
զգացին իրենց մէջ յարուցեալ Մեսիայի

Աւետարանը բոլոր աշխարհին քարոզելու
համար։

Այս ձայնը լսելի եղաւ բոլոր ժողովրդի
մէջ։ Շատ մարդիկ ժողովեցան այն տան
մօտ, ուր հաւաքուած էին Յիսուսի աշա-
կերտները։ Այս ժողովուած բազմութեան
մէջ կային շատ Հրեաներ, որոնք օտար տե-
րութեանց մէջ կը բնակէին։ Նոքա եկած
էին Երուսաղէմ Պենտէկոստէի տօնի հա-
մար։ Այս եկաւորները շատ բան լսած էին
Յիսուսի աշակերտաց վրայ և կը սպասէին
տեսնել այն հասարակ և անուսում մարդի-
կը, որոնք կը խօսէին Գալիլեացւոց կոպիտ
լեզուով։ Ի՞նչպէս նկարագրենք նոցա զար-
մանքը, երբ տեսան թէ՝ Առաքեալները կը
քարոզեն Աստուծոյ գործքերը և Յիսուսի
վարդապետութիւնը՝ ամեն յայտնի լեզու-
ներով։ Հրեաները սկսան իրարու ասել «Ը-
որ սոքա ամենքը Գալիլիայի են, ինչպէս կը
խօսին զանազան լեզուներ։ Ի՞նչ պէտք է լինի
այս հրաշքը։» Ոմանք կը ծիծաղէին Քրիս-
տոսի աշակերտաց վրայ, և կը պնդէին որ
նոքա արբեցած են։ Թէ թեւամիտ և չարա-
միտ մարդիկ միշտ պատճառ կը գտնեն ծաղ-
րելու և չարաբանելու։

Այս ժամանակ Պետրոս առաքեալ բարձ-
րանալով մի բարձր տեղւոյ վրայ, ուստի
կ'երեւէր բոլոր հաւաքուած բազմութիւնը,

մեկնեց հրաշալի երեւութի պատճառը ասելով. «Ով Իսրայելացիք, դուք գիտէք Նազովրեցի Յիսուսը, այն Աստուածամարդը, որոյ ձեռքով զանազան հրաշքներ գործուեցան։ Դուք մատնեցիք անօրինաց ձեռքը և խաչի վրայ բեւեռեցիք, բայց Աստուած յարութիւն տուաւ, քակեց մահուան կապերը, որ չը կարացաւ իշխել նորա վրայ։ Դաւիթ նորա համար գրեց ասելով. «Պիտի չը թողուս իմ հոգին դժոխքի մէջ և պիտի չը թողուս որ քո Սուրբը ապականութիւն տեսնէ։» Սաղմ. ԺԵ. 10։ Անկ վկայ եղանք նորա յարութիւնը և երկինք համբառնալուն։ Այն այս Յիսուսը, որ երկինք բարձրացաւ, ղրկեց մեզ Սուրբը Հոգին, որուն դուք ամենքդ վկայ էք։ Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յիսուսի Քրիստոսի անուանովը ձեր մեղքերուն թողութիւն ստանալ եւ կարենաք ընդունել Հոգւոյն Սրբոյ շնորհքը։ Նա խոստացաւ Սուրբը Հոգին նոյնպէս ձեզ և ձեր որդւոցը։ Տերը կը հրաւիրէ ամենքը առհասարակ։» Այս աւուր մէջ երեք հազար հոգիէն աւելի մկրտուեցան։ Յետոյ հաւատացելոց թիւը օր աւուր կը բազմանար։

Այսպէս ծնուեցաւ առաջին քրիստոնէական Պենտէկոստէն, և մինչեւ ցայսօր կը ծնէ սուրբ Եկեղեցին Քրիստոսի յարութիւնէն յիսուն օր յետոյ։ Այս օրը, երբ բնութիւնը կը զարդարուի նոր ծաղիկներով՝ մեր հոգեւոր տաճարներն եւս կը զարդարուին հոգեւոր ծաղիկներով և կանաչներով։ Մենք կը ծնանինք Հոգւոյն Սրբոյ գալուստը և կը փառաւորենք ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայր, Որդի և Հոգին Սուրբ, այս անհուն Երրորդութիւնը, որ է կենդանաբար, համագոյ և անբաժանելի։ Մենք կը հայցենք սուրբ Երրորդութիւնէն, որ ներէ մեր մեղքերը, զօրացընէ Հոգւովն Սրբով՝ բարի գործքեր կատարելու եւ պահպանէ զմեզ ամէն չարէ և փորձանքէ։ Կ'աղօթենք նոյնպէս որ Աստուած հանգուցանէ մեր ննջեցեալ ծնողաց, եղբարց և բարեկամաց հոգիները։

ՃԱ.

Առաջին հայաձանք առաքելոց դէմ։

Գործ. Գ. Դ.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ հողմերը աւելի օգուտ կը բերեն երկրին քան թէ ձնաս։ Նոքա օդը կը մաքրեն և իրենց փչմամբ կը ցրուեն և կը փոխուեն պտղաբեր սերմերը։ Այնպէս եւս աշակերտներու դէմ եղած հալածանքը տարածեց քրիստոնէական հաւատոյ սերմերը։

Պենտէկոստէի տօնէն տակաւ ինչ յետոյ՝ Պետրոս և Յովհաննէս առաքեալները միասին տաճարը գնացին աղօթելու։ Գլխաւոր դրան առջեւ, որ կ'անուանուէր Գեղեցիկ, նստած էր կաղ աղքատ մի։ Այս ողորմելին մօտ քառասուն տարեկան էր և Երուսաղեմի մէջ ամենուն յայտնի էր։ Ամենքը գիտէին, որ նա կաղ ծնած էր։ Նա երբ տեսաւ, որ առաքեալները ներս կը մտնեն, ողորմութիւն խնդրեց։ Բայց սուրբն Պետրոս ասաց. "Ես ոսկի և արծաթ չունիմ, բայց ինչ որ ունիմ կուտամ քեզ։ Ելէ Յիսուսի քրիստոսի անունով և վազէ։" Առաքեալը այնչափ հաւատի էր այս խօսքին, որ ձեռքը մեկնեց դէպ 'ի կաղը, որ օգնէ կանգնելու և իսկոյն կաղը բժշկուեցաւ։ Նա վեր թռաւ տեղէն և առաքելոց հետ միասին տաճարը մտաւ՝ գովելով և փառաւորելով զԱստուած։ Տաճարի մէջ գտնուած մարդիկը շրջապատեցին առաքեալները և կը զարմանային կատարուած հրաշքի վրայ։ Բայց սուրբն Պետրոս, չը կամենալով գովեստներ լսել, ասաց, որ ինքը իւր զօրութեամբ ոչ մի հրաշք կարող չէ գործել։ Նմանապէս ճշմարիտ քրիստոնէայն երբէք իր զօրութեանը և իմաստութեանը չը սեպհականեր ամէն բան, ինչ որ կատարած է Աստուծոյ զօրութեամբ և իմաստութեամբ։

Պետրոս կ'ասէր որ այն կաղը բժշկուած է ոչ թէ իր զօրութիւն, այլ Յիսուսի Քրիստոսի անունով, զոր Աստուած յարոյց 'ի մեռելոց։

Քահանայապետները, որոնք տաճարի մէջ էին և լսած էին որ առաքեալները կը բժշկեն Յիսուսի անունով և նորա վարդապետութիւնը կը տարածեն, հրամայեցին պահապաններուն, որ Առաքեալները բռնեն և յանցաւորներու պէս բանտը դնեն, ուր և թողին մինչեւ միւս առաւօտ։ Թէպէտ և այս տեսակ անիրաւ միջոցներ գործ կը դնէին քրիստոնէութեան տարածուելուն դէմ, սակայն նոյն օրը հաւատացելոց թիւը բաղմացաւ մինչեւ հինգ հազար։ Փրկչի ցանած սերմերը պտղաբերելու վրայ էին և հունձի ժամանակը հասած էր։

Միւս օրը առաւօտեան Առաքեալները բերուեցան այն դատաւորի առջեւ, որ 'ի մահ դատապարտեց զՅիսուս։ Բայց առաքեալները շուտ ազատեցան, թէպէտ և բոլոր դատաւորաց ժողովն առջեւ համարձակ կ'ասէին թէ՝ Աստուած յարութիւն տուաւ Հրէից խաչած Նազովրեցի Յիսուսին։ Նորան հաւատալէն զատ՝ ուրիշ փրկութեան հնար չկայ։ Քահանայապետները և ծերերը չէին թողուր, որ առաքեալները իրենց վարդապետութիւնը շարունակեն և Յիսուսի անունը քարոզեն, բայց նոքա պատաս-

խանեցին. «Դուք ինքեանքդ դատեցէք, մի՞ պիտի աւելի հնազանդինք, Աստուծմ, թէ ձեզ։» Ծերերը և օրինականները առաքելոց հաստատութիւնը տեսնելով, շատ ըսպառնալիքներ տալէն յետոյ՝ թողին. որովհետեւ կը վախնային ժողովրդէն, որ վկայ էր կաղի հրաշալի բժշկութեանը և կը փառաւորէր զԱստուած։

Պետրոս և Յովհաննէս առաքեալները, երբ դարձան իրենց եղբարց մօտ, պատմեցին նոցա Հրէից ծերերու և օրինականներու սպառնալիքը։ Այն ժամանակ Յիսուսի ամեն առաքեալները և աշակերտները միաբերան աղաղակեցին. «Տէր Աստուած, դու որ ըստեղծեցիր երկինքը և երկիրը, ծովը և իր մէջ եղած ամեն բաները, դու ասացիր քո Դաւիթ ծառայի բերանով թէ՝ «Ինչո՞ւ կը խռովին հեթանոսները և անոտի բաներ կը խորհին ժողովուրդները։ Յանդիման եղան երկրիս թագաւորները, և իշխանները ժողովեցան Տիրոջ և նորա օծելոյն վրայ։» Որովհետեւ որ քո օծեալ Յիսուս Որդւոյդ եմ ելան այս քաղաքի մէջ Հերովդէս և Պոնտացի Պիղատոս՝ Հեթանոսաց և Հրէից հետ, որպէս զի կատարեն ինչ որ առաջուց սահմանած է քո Ձեռք և կամքդ։ Իւ այժմ, Նայէ, Տէր, նոցա սպառնալիքներուն և զօրութիւն տուր քո ծառաներուդ, որ համարձակութեամբ քարոզեն քո խօսքդ։ Զգէ՛ ձեռքդ հրաշքներ գործելու քո սուրբ Որդւոյ Յիսուսի անուամբ։» Այս աղօթքէն յետոյ շարժեցաւ այն տեղը, ուր կանգնած էին առաքեալները և ամենքը լցուեցան Հոգւով Սրբով, և սկսան համարձակութեամբ քարոզել Աստուծոյ խօսքը և վկայել Յիսուսի յարութեանը։

ՃԲ.

Յաղթանակող Եկեղեցին։ Գործ. Ե.

Շատ Հրէաներ Երուսաղեմի մէջ հաւատացին Յիսուսին։ Նոքա կը բնակէին միաբան և միառին, և ունէին գոգցես մի սիրտ և մի հոգի. ուստի և Յիսուսի իսկական աշակերտներ էին, ինչպէս ասած էր. «Ձեր միմեանց վրայ ունեցած սիրովը պիտի ճանաչեն, որ դուք իմ աշակերտներս էք։» Նոքա մեծ ուշադրութեամբ կը լսէին առաքելոյ խրատները և ճշդութեամբ կը կատարէին։ Ամեն օր տաճար կ'երթային և կ'աղօթէին միասին։ Կը ժողովուէին տներու մէջ հացը բեկանելու և Յիսուսի Քրիստոսի մարմնոյն և արեանը հաղորդուելու համար, ինչպէս որ սահմանած էր Փրկիչը այս խորհրդաւոր Ընթ-

ելքը։ յետոյ միասին կը ճաշէին հասարակաբար և մեծ ուրախութեամբ։ Երկրաւոր գանձու և հարստութեան չէին ցանկար, այլ կը մտածէին միայն Յիսուսի արքայութեան և յաւիտենական կենաց վրայ և հրաժարուած էին ամէն երկրաւոր բարութիւններէ։ Երբ հաւատացելոց թիւը բազմացաւ, առաքեալները կարեւոր համարեցին ընտրել սարկաւագներ կամ իրենց օգնականներ, որոց և յանձնեցին հասարակաց ստացուածոց կառավարութեան և կերակուր բաժանելու հոգը։ Սարկաւագները նմանապէս ունէին հրաման քարոզելու և մկրտելու։ Առաքեալները այս կարգը արին նոցա իրենց ձեռնադրութեամբ և աղօթքով։ Իսկ ինքեանք առաքեալները թողլով հասարակաց երկրաւոր պիտոյից հոգը՝ կը պարապէին միայն աղօթքով և Աստուծոյ պատուիրանները քարոզելով։

Հաւատացելոց թիւը ժամ առ ժամ կ'աւելնար։ Առաքեալները կը գործէին անթիւ հրաշքներ. նոցա մօտ կուգային ժողովուրդներ շրջակայ քաղաքներէն և գիւղերէն։ Մինչեւ անգամ հիւանդները կը դնէին ճանապարհի վրայ, ուր պէտք է անցներ Պետրոս, որպէս զի նոյն ողորմելիները միայն սուրբ առաքելոյն ստուերին հանդիպելով կարենան բժշկութիւն ստանալ։ Այսպէս Յիսուս իւր

համբառնալէն յետոյ եւս՝ անընդհատ կը յայտներ մարդոց իւր սէրը և ամենակարողութիւնը և կը հաստատէր պարզապէս, որ ինքը միշտ իւր Եկեղեցւոյն և ճշմարիտ հաւատացելոց հետ է։ Առաքեալներու դործոց բովանդակ պատմութիւնը հրաշից և բարեգործութեան մեծ շղթայ է, զոր կը կատարէին նոքա Յիսուսի Քրիստոսի անունով վշտաչարչար մարդկութեան օգտի համար։

Քահանայապետները և ժողովրդեան միւս մեծամեծները լսելով առաքելոց հրաշից համբաւները՝ եւս առաւել կը զայրանային և կը յուզէին։ Մի երեկոյ հրամայեցին նոքա առաքեալները բռնել և բանտարկել, ուր կալանաւորուած էին յանցաւորները։ Բայց նոյն իսկ գիշերը Աստուծոյ հրեշտակը բացաւ բանտի դուռը և ասաց նոցա. "Գնացէք տաճարը, յայտնուեցէք մարդոց և քարոզեցէք կենաց պատգամները։ Առաւօտեան առաքեալները եկան տաճար և կ'ուսուցանէին ժողովրդին։

Այն իսկ միջոցին քահանայապետը հաւաքեց բարձրագոյն ատենի ժողովը և բանտը մարդ ղրկեց, որ առաքեալները բերեն դատելու։ Սակայն ծառաները չը գտնելով բանտի մէջ առաքեալները՝ դարձան քահանայապետի մօտ և իմացուցին որ բանտը գը-

տան փակուած, պահապանները կանգնած դրան մօտ, բայց բանտի մէջ ոչ ոք չը կար։ Երբ այս լուրը լսեցին քահանայապետը և իւր հետ եղած բոլոր անձինքը, սաստիկ տարակուսեցան։ Այն միջոցին մարդ մի եկաւ ներկայացաւ ժողովին և ասաց. «Առաքեալները տաճարի մէջ են և կ'ուսուցանեն։» Իսկոյն պահապաններու գլխաւորը ծառաներ առնլով իւր հետ՝ գնաց որ առաքեալները քահանայապետի առջեւը բերէ, և ամենեւին բռնաբար չը վարուեցաւ, որովհետեւ սաստիկ կը վախնար ժողովրդէն։

Առաքեալները, երբ ներկայացան առենին, քահանայապետը ասաց. «Չէ՞ որ մենք պատուէր տուինք ձեզ, որ չուսուցանէք այս անունով, (նա այնչափ կ'ատէր Յիսուսը, որ չը կամէր մինչեւ անգամ անունը տալ). իսկ դուք բոլոր Երուսաղէմը լցուցիք ձեր ուսմունքով և կամիք այն մարդոյ արիւնը մեր վրայ հեղուլ։»

Սուրբն Պետրոս և միւս առաքեալները պատասխանեցին. «Աստուծոյ աւելի պէտք է հնազանդինք քան թէ ձեզ։ Մեր հայրերու Աստուածը յարութիւն տուաւ Յիսուսին, զոր դուք խաչեցիք։ Աստուած իւր աջովը բարձրացուց Յիսուսը և մարդկանց համար Առաջնորդ և Փրկիչ կացուց։ Նա բոլոր Իսրայելացիները կը կոչէ ապաշխարելու և նոցա մեղացը թողութիւն կուտայ։ Այս ամէն եղածներուն վկայ ենք մենք և Սուրբը Հոգին, զոր Աստուած պարգեւեց իրեն հնազանդուողներուն։»

Բարձրագոյն ատենի անդամները, երբ լսեցին այս խօսքերը, սաստիկ զայրացան և կամեցին սպանանել սուրբ Առաքեալները. բայց Փարիսեցիներէն մէկը՝ Գամալիել, որ օրէնսուսոյց էր և պատուաւոր էր բոլոր ժողովրդեան մէջ, հրամայեց առաքեալներուն փոքր ինչ ժամանակ դուրս երթալ, և ապա ասաց ժողովին. «Ո՛վ Իսրայելացիք, մըտածեցէք՝ թէ ինչպէս պիտի վարուիք այս մարդկանց հետ։ Ձեզ յայտնի է որ քանի մի ժամանակէն առաջ մէկ Թեւդաս անունով մարդ երեւեցաւ, որ թէպէտ իւր անձը մեծ մարդ կը քարոզէր և մօտ չորս հարիւր հոգի կողմնակից գտաւ, բայց երբ ինքը սպանուեցաւ, բոլոր կուսակիցները ցրուեցան և ամէն բան վերջացաւ։ Յետոյ յայտնուեցաւ Յուդայ Գալիլացին. սա եւս շատ մարդիկ իւր կողմը քաշեց, և սակայն սա եւս երբ վախճանեցաւ, բոլոր իրեն հետեւողները ցրուեցան։ Ուրեմն արձակեցէք այս մարդիկը (առաքեալները) և հանգիստ թողէք։ Եթէ նոցա փարդապետութիւնը երկրաւոր է, ինքնիրեն կը քակտուի, իսկ եթէ Աստուծմէ է, դուք չէք

կարող քակտել և գուցէ աստուածամարտ գտնուիք։»

Բարձրագոյն ատեանը հաւանեցաւ Դամասկիէլի առաջարկութեանը. բայց տակաւին յանձնառու չէին առաքեալները արձակել և առանց պատժոյ թողուլ։ Ուստի և կոչեցին առաքեալները, ծեծեցին, պատուիրեցին չքարոզել Յիսուսի վրայ, և ապա արձակեցին։ Առաքեալները ուրախացան, որ արժանի եղան Յիսուսի անուան համար նեղութիւն և հալածանք կրել, և բարձրագոյն ատեանի սպառնալիքը առ ոչինչ համարելով անդադար կը քարոզէին տաճարներու և տուներու մէջ։

ԺԳ.

Ստեփանոս Նախավկայ։ Գործ. Զ. Է.

Ադրեղոց ընտրած եօթն սարկաւագներն էին սոքա՝ Ստեփանոս, Փիլիպպոս, Պրոքորոն, Նիկանորը, Տիմոնը, Պարմենա և Նիկոդայոս՝ Անտիոք քաղաքէն եկած։ Ստեփանոս հաւատով և սուրբ Հոգւով լցուած մարդ էր։ Նա կը գործէր հրաշքներ և նշաններ Յիսուսի Քրիստոսի անուամբ։ Օրէնսուսցներէն շատերը նորա հետ կը

վիճէին, բայց ամենեւին չէին կարենար հակառակ կալ նորա իմաստութեանը և Հոգւոյն, որ Ստեփանոսի շրթունքներով կը խօսէր։ Օրէնսուսցները ամօթահար լինելով և պատկառելով հրապուրեցին քանի մի սուտ վկաներ, որ Ստեփանոսը զրպարտեն թէ նա հայհոյանքներ կը խօսի Մովսէսի և Աստուծոյ դէմ։ Այս հնարագիտութեամբ խռովեցին ժողովուրդը և Ստեփանոսը բռնել տալով տարան ատենի առջեւ։ Սուտ վկայքը իրենց ամբաստանութիւնը հաստատեցին այս խօսքերն աւելցնելով թէ՝ մենք լսեցինք որ սա (Ստեփանոս) կ'ասէր որ Նազովրեցի Յիսուսը այս տեղը (տաճարը) պիտի քանդէ և Մովսէսի օրէնքները պիտի փոխէ։ Ատենի ժողովականքը ամենքը դարձուցին իրենց հայեցուածքը Ստեփանոսի վրայ և տեսան նորա երեսը ինչպէս հրեշտակի երես։

Քահանայապետը հարցուց Ստեփանոսին. «Ճշմարիտ է ինչ որ քս վրայ կը խօսին»։ Ստեփանոս պատասխանեց. «Ով հարք և եղբարք, ականջ դրէք ինձ։» Համառօտաբար պատմեց Հին Ուխտի (Կտակարանի) բոլոր սրբազան անցքերը և հաւատի կերպով ապացուցեց, որ ինքը կը պաշտէ զԱստուած, կը յարգէ նորա մարգարէն Մովսէս, կը պատուէ Աստուծոյ տաճարը և օ-

ընկնքը. բայց մի և նոյն ժամանակ կ'ապա-
ցուցանէր, որ Իսրայելացիք զԱստուած չեն
սիրեր։ Ստեփաննոս վերջացուց իւր պատ-
մածները այս խօսքով. «Ազգ խստապարանոց
և անթլփատ, դուք միշտ հակառակ էք Հո-
գւոյն Սրբոյ։ Ինչ որ ձեր հայրերը կը գործ-
էին, նոյնը դուք կը գործէք։ Մարգարէից
ոչը չը հալածեցաւ ձեզմէն։ Ձեր հայրերը
սպանին այն մարգարէները, որոնք կը գու-
շակէին Արդարոյն (Յիսուսի) գալուստը,
զոր դուք նոյնպէս մատնեցիք և սպանիք։
Դուք հրեշտակներու ձեռքով օրէնքներ ըն-
տացաք, բայց չը կատարեցիք։»

Դատաւորները այս խօսքերը լսելով
չարութենէն եւ զայրութէն իրենց ա-
տամները կը կրճտէին։ Իսկ Ստեփաննոս
Հոգւով Սրբով լցուած՝ նայեցաւ դէպ 'ի
երկինք և տեսաւ Աստուծոյ փառքը և Յի-
սուս Քրիստոս Հօր աջ կողմը նստած։ Նա
աղաղակեց. «Ահա կը տեսնեմ երկինքը բա-
ցուած և մարդոյ Որդին՝ Աստուծոյ աջ կող-
մը նստած։» Սակայն ամեն ներկայ գտնը-
ւողները բարձր ձայնով գոռացին, ականջ-
ները խցեցին և կատաղաբար յարձակեցան
Ստեփաննոսի վրայ։ Քաղաքէն դուրս տա-
բան Ստեփաննոսը, իրենց հանդերձները
հանին մի երիտասարդի տուին պահելու,
որոյ անունը Սաւուղ էր, և սկսան քարկոծել։

Իսկ Ստեփաննոս այս սոսկալի չարչարանաց
ժամանակ կ'աղօթէր ասելով. «Տէր Յիսուս,
ընդունէ իմ հոգիս։» Յետոյ ծունր իջանե-
լով՝ բարձրաձայն աղաղակեց. «Տէր, այս՝
մեղք մի համարեր սոցա։» Այս էին Ստե-
փաննոսի վերջին խօսքերը, զորս արտասանեց
և վախճանեցաւ։ Քրիստոսի հետեւողնե-
րուն մէջ առաջին նահատակը Ստեփաննոս
եղաւ և այս պատճառաւ կը կոչուի Նախավկայ։

ՃԴ.

Եպիսկոպոսի ներքինիի մկրտութիւնը։

Գործք. Ը.

Ստեփաննոսի մահէն յետոյ սաստիկ հա-
լածումն բորբոքեցաւ Քրիստոսի աշակեր-
տաց դէմ։ Բաց 'ի առաքեալներէն, որոնք
մնացին Երուսաղէմի մէջ, միւսները ամենքը
ցրուեցան Հրէաստանի և Սամարիայի քա-
ղաքներուն և գիւղերուն մէջ։ Սաւուղ կամ
Պողոս քրիստոնէից հալածիչներէն ամենա-
խիստն էր։ Նա կը մտնէր այն տները, ուր
կը բնակէին Յիսուսի հետեւողները, դուրս
կը բերէր մարդիկ և կանայք և բանտի մէջ
կը ձգէր։ Քրիստոսի աշակերտները, ցրուած
ժամանակ, ճանապարհին ամեն տեղ կ'աւե-

տարանէին Աստուծոյ բանը, այնպէս որ նոյն իսկ հալածանքը օգնական եղաւ Քրիստոսի Աւետարանը և հաւատոյ ճշմարտութիւնները տարածելու։

Հօմն Սարկաւագներէն մէկը՝ Փիլիպպոս եկաւ Սամարիա, ուր կը քարոզէր Քրիստոսի Աւետարանը և նորա անունով կը բժշկէր զանազան ախտեր։ Այն քաղաքի բնակիչները յարգութեամբ եւ երկիւղածութեամբ կը լսէին աւետարանական փրկարար ճշմարտութիւնները և կը տեսնէին այն հրաշքները, զոր Փիլիպպոս կը գործէր, և այսպէս կը հաւատային Յիսուսի Քրիստոսի։ Բոլոր քաղաքը ուրախութեամբ լցուած էր։

Առաքեալները, երբ լսեցին Սամարացւոց քրիստոնէական դարձը, Պետրոսը և Յովհաննէսը զրկեցին այս նոր մկրտուած քրիստոնէից մօտ, որ հաղորդեն նոցա Հոգւոյն Սրբոյ շնորհքը։ Առաքեալները նոյն տեղը հասնելով իրենց ձեռքը կը դնէին հաւատացելոց վրայ, կ'աղօթէին, և նոքա կըստանային Հոգին Սուրբ։ Փիլիպպոսի վարդապետութիւնը հաստատելին եւ Աստուծոյ խօսքը ժողովրդին ուսուցանելին զկնի՝ Առաքեալները Երուսաղէմ դարձան՝ քարոզելով Աւետարանը ամեն տեղ, ուր որ կը հանդիպէին Ճանապարհին։

Աստուծոյ հրեշտակը երեւեցաւ Փիլիպպոսին և ասաց. «Էլ և գնա՝ Երուսաղեմէն դէպ 'ի հարաւ, Գազայի ճանապարհով։ Փիլիպպոս իսկոյն կատարեց հրեշտակի հրամանը։ Ճանապարհին տեսաւ նա հայկական կառք մի, որոյ մէջ նստած էր մի երեւելի Էթիոպացի։ Սա էր Էթիոպիոյ Կանդակ թագուհոյ գանձապետը և կ'երթար Երուսաղէմ տաճարի մէջ երկրպագութիւն տալու։ Յետ դառնալու ժամանակ կառքի մէջ կը կարդար Եսայի մարգարէի գրուածքը։ Սուրբ Հոգին ազդեց Փիլիպպոսին՝ կառքին մօտենալու։ Երբ լսեց նա, որ մեծատունը կը կարդայ Եսայեայ մարգարէութիւնը, քաղցրութեամբ հարցուց. «Ինչ որ կը կարդաս, կը հասկանաս։» — Ո՞նչպէս կարող եմ հասկանալ՝ առանց ուրիշի առաջնորդութեան,» պատասխանեց նեղքինին, եւ Փիլիպպոսէն խնդրեց, որ գայ իր մօտ կառքի մէջ նստի։ Մարգարէի խօսքերը որ կը կարդար, այս էր. «Ինչպէս ոչխար ապանուելու տարուեցաւ, ինչպէս որոջ անմեղունչ կանգնած է իւր կարչի առջեւ, այնպէս որ բերանը չը բանար։ Խոնարհութեան պատճառաւ նորա դատաստանը վերջացաւ և նորա ազգատոհմը ով պիտի պատմէ, որովհետեւ կը ջնջուի նորա կեանքը երկրիս երեսէն։» Եսայ. Ծգ. 7, 8։

«Կ'աղաչեմ քեզ, Էթիոպացին ասաց Փիլիպպոսին, մեկնէ՛ ինձ, ո՞ւմ վրայ կը գրե

մարգարէն սոյն խօսքերը, իւր վրայ, թէ ուրիշի վրայ։» Փիլիպպոս սկսաւ մեկնել Եսայեայ մարգարէութիւնը և աւետարանել զՅիսուս Քրիստոս։ Էթիոպացին մեծ ուշադրութեամբ կը լսէր։ Այս խօսակցութեան ժամանակ մօտեցան մի գետակի։ Սենատուրը ասաց. «Ահա ջուր, ինչ արգելք կայ իմ մկրտուելուս։» Փիլիպպոս պատասխանեց. «Եթէ կը հաւատաս բոլոր սրտով կարող ես մկրտուիլ։» Էթիոպացին աղաղակեց. «Ես կը հաւատամ, որ Յիսուս Քրիստոս է Որդին Աստուծոյ։» Իսկոյն հրամայեց կառքը կանգնեցնել, մտաւ ջրի մէջ և մկրտուեցաւ Փիլիպպոսէն։

Երբ մկրտուեցաւ Էթիոպացին, Աստուծոյ Հոգին իջաւ նորա վրայ. իսկ հրեշտակը յափշտակեց զՓիլիպպոս նոր մկրտուածի աչքէնի, որ այս հրաշքով աւելի պարզ տեսաւ Աստուծոյ բարութիւնը, և ուրախութեամբ շարունակեց իւր ճանապարհը։

Հրեշտակը տարաւ զՓիլիպպոս Ազովտոս քաղաքը, ուստի և գնաց նա Կեսարիա, Աստուծոյ խօսքը աւետարանելով ճանապարհին։

ՃԵ.

Սողոսի դարձը։ Գործ. Թ.

ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐՈՒ աշակերտ Սաւուղը կամ Սողոսը, որ սրտով զայրացած և հակառակ էր քրիստոնէից և կ'աշխատէր բոլորովին ջնջել, ասատիկ կը հալածէր Քրիստոսի Եկեղեցին Երուսաղեմի մէջ։ Բայց այսքանով չը բաւականանալով գնաց քահանայապետի մօտ և թղթով հրաման խնդրեց, որ երթայ Դամասկոս, այն տեղ եւս հալածէ քրիստոնեայքը, և ամենքը արք և կանայք շղթայակապ առնելով Երուսաղէմ ղրկէ։

Երբ Սաւուղ արգէն Դամասկոսի մօտենալու վրայէր, յանկարծ երկնքէն լոյս փայլատակեցաւ նորա չորս կողմը։ Սաւուղ այս լսելէն կուրանալով գետնի վրայ ընկաւ և լսեց այս ձայնը, որ կը կոչէր. «Սաւուղ, Սաւուղ, ինչու՞ կը հալածես զիս։» — «Ո՞վ ես դու, Տէր,» հարցուց Սաւուղ։ — «Ես եմ Յիսուս, զոր դուն կը հալածես» պատասխանեց ձայնը։ Սաւուղ զարմացած և ահէն դողալով հարցուց. «Տէր, ինչ կը հրամայես ինձ, որ առնեմ։» — Ձայնը պատասխանեց. «Էլ, գնա՛ քաղաքը, այն տեղ կ'իմանաս, թէ ինչ պիտի առնես։»

Սաւուղի հետ եղած մարդիկը անշշունչ կանգնած էին. նոքա ամենքը ձայնը կը լսե-

ին, բայց ոչ ոք չէին տեսներ։ Սաղոս եկաւ գետնէն, բայց ոչինչ չէր տեսներ, վասն զի կուրացած էր և այնպէս կոյր տարան Դամասկոս։ Այս տեղ մնաց նա երեք օր, առանց ուտելու և խմելու։

Այս ժամանակ Դամասկոսի մէջ կար Քրիստոսի աշակերտներէն մէկը՝ Ընանիա անունով։ Տէրը ասաց տեսլեան մէջ. "Ընանիա, էլ և գնա այն փողոցը՝ որ կը կոչուի Ուղիղ. այն տեղ Յուդայի տանը հարցուր Սաւուղ Տարսոնացին։ Նա կ'աղօթէր և տեսաւ տեսլեան մէջ, որ Ընանիան գալով իւր մօտ ձեռքը դրաւ և աչքերուն լոյս տուաւ։" Ընանիան պատասխանեց. "Տէր, ես շատերէն լսած եմ թէ այդ մարդը որչափ չարիք հասուցած է քո սուրբերուն Երուսաղեմի մէջ, և այժմ եկած է այս տեղ քահանայապետի հրամանաւ, որ ամէն քո անուան հաւատացողները կապէ։"— "Գնա դու նորա մօտ, ասաց Տէրը, նա իմ ընտրութեան անօթն է. նա իմ անունս պիտի վկայէ հեթանոսաց, թագաւորաց և Իսրայելացւոց առջեւ։ Ես պիտի ցոյց տամ նորան, թէ որչափ պիտի չարչարուի իմ անուանս համար։"

Ընանիան գնաց Սաւուղի մօտ և ձեռքը նորա վրայ դնելով ասաց. "Սաւուղ եղբայր, Տէր Յիսուս, որ երեւեցաւ քեզ ճանապարհին, զրկեց զիս քեզ մօտ, որ աչքերդ բացուին և լցուիս Հոգւով Սրբով։" Նոյն րոպէին Սաւուղի աչքերէն կեղեւանքի նման մի բան ընկաւ, և նա տեսաւ և մկրտուեցաւ։

Այս հրաշալի անցքէն յետոյ Սաւուղ կերակուրով զօրանալով գնաց Քրիստոսի աշակերտներու մօտ, որոնք Դամասկոսի մէջ էին և քանի մի օր նոցա մօտ մնաց։ Նա իսկոյն սկսաւ քարոզել ժողովրդանոցներու մէջ թէ Յիսուս Քրիստոս է Որդին Աստուծոյ։ Ամէն լսողները կը զարմանային և կ'ասէին. "Սա չէ՞ր, որ ամենքը կը հալածէր Երուսաղեմի մէջ, որոնք կը համարձակէին արտասանել այս անունը։ Եւ մի՞թէ այն պատճառաւ չէկա՞ւ այս տեղ, որ այս տեղ գըտնուած Յիսուսի ամէն հետեւողները կապէ և Երուսաղէմ զրկէ քահանայապետի մօտ։" Իսկ Սաւուղ եւս առաւել կը հաստատուէր հաւատքի մէջ և պարզ կ'ապացուցանէր Դամասկոսի մէջ բնակող բոլոր Հրէաներուն, որ Յիսուս նոյն իսկ Մեսիան է, որուն կըսպասէին։ Դամասկոսի Հրէայքը չը կարենալով Սաւուղին պատասխան տալ, վճռեցին որ սպաննեն. և որպէս զի չը փախչի քաղաքէն, գիշեր ցերեկ կը պահպանէին քաղաքի դռները։ Սաւուղ իմացաւ նոցա այս չար խորհուրդը, նոյնպէս և Քրիս-

տոսի միւս աշակերտները, որոնք Դամասկոսի մէջ էին, ուստի գիշերը կողովով քաղաքի պատէն 'ի վար թողին և ազատեցին։ Սաւուղ Դամասկոսէն գնաց Արաբիա, իսկ յետոյ դարձաւ Երուսաղէմ, ուր Քրիստոսի աշակերտները կը վախնային նորամէն եւ չէին հաւատար նորա դարձին։ Աշակերտներէն մէկը՝ Բառնաբաս անունով, Սաւուղը իւր տունը ընդունեց, տարաւ առաքեալներու մօտ և պատմեց ամէն բան ինչ որ պատահած էր Դամասկոս երթալու ժամանակ։ Այս ժամանակէն 'ի վեր Սաւուղ միշտ առաքելոց հետ էր Երուսաղեմի մէջ և մեծ եռանդով կը քարոզեր Փրկչի Աւետարանը։ Երուսաղեմի մէջ վանդի հանդիպելով Քրիստոնեայք տարան Սաւուղը 'ի Տարսոն։ Յետոյ նա իւր բոլոր կեանքը նուիրեց քրիստոնէական հաւատը հեթանոսաց մէջ տարածելու, և արիութեամբ կը համբերէր ամէն տառապանաց և չարչարանաց Քրիստոսի անունը փառաւորելու համար։ Նա իւր եբրայական Սաւուղ կամ Սողոս անունը յետոյ փոխեց և ընդունեց հռովմէական հաւանական անունն՝ Պաւղոս կամ Պօղոս։

ԾԶ.

Կուռնելիոս հարիւրապետի դարձը։

Գործ. Ժ. ԺԱ.

Կեսարիայի մէջ կը բնակէր մի մարդ Կուռնելիոս անունով, և հարիւրապետ էր այն գնդին, որ կը կոչուէր Իտալիայի։ Այս զինուորականը (և բոլոր իւր ընտանիքը) էր բարեպաշտ, Աստուծմէ երկիւղած, աղքատներուն ողորմած՝ և յաճախ աղօթող։ Մի անգամ տեսլեան մէջ, կէս օրէն յետոյ, երեւեցաւ նորան Աստուծոյ հրեշտակը, գոչելով. «Կուռնելիոս։» Կուռնելիոս երբ հրեշտակը տեսաւ, դողաց և ապա պատասխանեց. «Ինչ է, Տէր։» Հրեշտակը ասաց. «Քո աղօթքներդ լսելի եղան և Աստուած յիշեց քո ողորմութիւնները. մէկ մարդ ղրկէ Յոպպէ և քեզ մօտ կոչէ Սիմոնը, որ Պետրոս կ'անուանի։ Նա կը բնակի ծովի մօտ՝ Սիմոն անունով մի խաղախարդի (տապաղ) տանը։ Պետրոս պիտի ուսուցանէ քեզ թէ՝ «Ինչ պիտի ընէք, որ փրկուիք դուք և քոյ ընտանիքդ։» Այս ասելով հրեշտակը անհետացաւ եղաւ։

Կուռնելիոս իսկոյն կոչեց իւր երկու ծառաները և բարեպաշտ զինուոր մի, որ իւր իշխանութեան տակն էր և պատմեց ինչ որ

հրեշտակէն լսած էր, և նոյն երեկոյին Յոպպէ ղրկեց։

Միւս օրը, կէս օրի ժամանակ, Կուռնելիոսի ղրկած երեք մարդիկը մօտեցան քաղաքին։ Այս միջոցին Պետրոս ելաւ տանիքի վերայ, որ հանդարտ աղօթէ առ Աստուած։ Յանկարծ հրաշալի տեսիլք մի տեսաւ։ Նայ տեսաւ որ երկինքը բացուեցաւ և մի անօթ ներքեւ իջաւ, որոյ մէջ կային զանազան կենդանիներ, որոնք ուտելու համար սովորական չէին։ Մի և նոյն ժամանակ Պետրոս ձայն լսեց երկնքէն, որ կ'ասէր. «Պետրէ, մարթէ և կեր։» Պետրոս պատասխանեց. «Բան լեցի, Տէր. ես խառնակ և անսուրբ երբէք կերած չեմ։» Ձայնը ասաց. «Ինչ որ Աստուած սրբած է։» Յետոյ անօթը դարձեալ երկինք բարձրացաւ։

Մինչդեռ Պետրոս կը մտածէր թէ՝ ինչ կը նշանակէ արդեօք այս տեսիլը, Կուռնելիոսի երեք մարդիկը եկան և խաղաղարարի դրան մօտ կանգնած կը հարցնէին թէ՝ «Այս տեղ է արդեօք Սիմոն Պետրոս։» Պետրոս ընկղմած էր խորին մտածմունքի մէջ, և ասա՝ Աստուծոյ Հոգին ասաց նորան. «Ցկած են այս տեղ երեք մարդիկ և քեզ կը խնդրեն։ Գնա նոցա հետ առանց երկմտելու, որովհետեւ ես եմ նոցա ղրկողը։» Պետրոս

իսկոյն իջաւ եկաւորաց մօտ և ասաց նոցա. «Ես եմ նա՝ զոր դուք կը խնդրէք. ինչ կամիք։» Եկաւորները պատասխանեցին. «Կուռնելիոս հարիւրապետը, որ յայտնի է բոլոր Հրէաստանի մէջ իւր բարեպաշտութեամբ, հրաման ստացաւ Աստուծոյ հրեշտակէն քեզ իւր տունը կոչելու, որ լսէ քո վարդապետութիւնդ։» Պետրոս՝ եկողները տուն հրաւիրեց, մեծարեց, գիշերը իւր մօտ պահեց և միւս օր առաւօտեան վաղ՝ նոցա հետ միասին Ճանապարհ ընկաւ դէպ 'ի Կեսարիա։ Եղբայրներէն մի քանիսը Յոպպէէն գնացին նամանակս Պետրոսի հետ։

Իսկ Կուռնելիոս, որ կը սպասէր Պետրոսին, տուն ժողովեց բոլոր ազգականները և բարեկամները։ Երբ Պետրոս տանը մօտեցաւ, Կուռնելիոս շուտով նորա առաջը ելաւ և ոտքերն ընկաւ։ Իսկ Պետրոս վեր կանգնեցընելով ասաց. «Էլ, ես եւս քեզ պէս մարդ եմ.» և հետը խօսելով տուն մտաւ։ Պետրոս տեսնելով մեծ ժողովը՝ ասաց. «Դուք գիտէք, որ Հրէաները երբէք կարող չեն օտարազգիներու ժողովը մտնել կամ նոցա մօտենալ. բայց Աստուած ինքը պատուիրեց ինձ, որ ոչ մի մարդ անսուրբ և պիղծ չը համարեմ։ Ահա այս պատճառաւ վաղվաղակի եկայ քո հրաւիրելդ։ Այժմ կամիմ իմանալ թէ՝ ինչու համար զիս կոչեցիր։»

Կոռնելիոս պատասխանեց. «Չորս օր առաջ ես կը պահէի և կ'աղօթէի կէսօրէն զկնի։ Աղօթելու ժամանակ երեւեցաւ ինձ սպիտակազգեստ մարդ մի եւ ասաց ինձ. —Կոռնելիոս, քո աղօթքդ լսելի եղաւ, և Աստուած կը յիշէ ողորմութիւնդ։ Մարդ մի ղրկէ Յոպպէ և կոչէ Սիմոնը, որ Պետրոս կ'անուանի։ Նա կը բնակի ծովի մօտ, Սիմոն անուն խաղախորդի տանը. նա պիտի ուսուցանէ քեզ ինչ որ գործելու ես։— Ես մարդիկ ղրկեցի քեզ մօտ, և բարւոք է, որ եկար։ Այժմ մենք ամենքս այս տեղ կանգնած ենք Աստուծոյ երեսաց առջեւ, սպասելով որ դուն յայտնես մեզ նորա կամքը։»

Պետրոս ասաց. «Ես յայտնի կը տեսնեմ, որ Աստուած ակնառութիւն չունի, այլ ամեն ազգեր, որոնք երկիւղած են և արդարութիւն կը գործեն, ընդունելի են Աստուծոյ։ Զեզ յայտնի է ինչ որ պատահեցաւ Գալիլիայի և բոլոր Հրէաստանի մէջ այն մկրտութենէն յետոյ, զոր Յովհաննէս քարոզեց։ Աստուած ինքը օծեց Յիսուս Նազովրեցին իւր Սուրբ Հոգւով և զօրութեամբ։ Նա կը բժշկէր ամեն ախտեր և ամենքը կ'ազատէր դիւաց իշխանութենէն, որովհետեւ Աստուած նորա հետ էր։ Մենք վկայ ենք ամեն բանի, ինչ որ նա գործեց Հրէաստանի և Երուսաղեմի մէջ։ Հրէանե-

ը սպանին Յիսուսը՝ խաչի վրայ բեւեռելով, բայց Աստուած յարութիւն տուաւ երրորդ օրը մեռելոց մէջէն և մենք կենդանի տեսանք։ Ոչ թէ բոլոր ժողովրդին երեւեցաւ յարուցեալ Յիսուսը, այլ միայն մեզ, որ նորա վկայքն ենք և զորս Աստուած ընտրեց յառաջագոյն։ Յիսուս իւր յարութենէն յետոյ ոչ թէ միայն կ'երեւէր մեզ, այլ և կը խօսէր, և կ'ուտէր մեզ հետ միասին։ Նա մեզ ղրկեց քարոզել մարդկանց և վկայել, որ նա է Աստուծմէ նշանակուած դատաւորն կենդանեաց և մեռելոց։ Նորա համար կը վկայեն ամեն մարգարէք ասելով թէ՝ ամեն հաւատացողներ պէտք է իրենց մեղքերուն թողութիւն ստանան։»

Պետրոսի խօսելու ժամանակ Սուրբ Հոգին իջաւ ամեն լսողներու վրայ։ Զարմացան, ինչպէս առաքեալները Պենտէկոստէի օրը, սկսան զանազան լեզուներ խօսիլ և փառաւորել զԱստուած։ Պետրոսի հետ եկած Հրէաները զարմացան, երբ տեսան թէ՝ Աստուած ղրկեց Հոգին Սուրբ հեթանոսներուն եւս։ Բայց Պետրոս ասաց. «Ո՞վ կարող է արգելուլ, որ ջրով մկրտենք այս մարդիկը, որոնք մեզ նման ընդունեցին Հոգին Սուրբ։» Նա շուտով ամենքը մկրտեց Յիսուսի Քրիստոսի անունով։ Այս նոր Քրիստոնեայքը խնդրեցին Պետրոսէն քանի

մի օր եւս մնալ իրենց մօտ։

Առաքեալները և միւս աշակերտները, որոնք Երուսաղեմի մէջ էին, լսեցին որ հեթանոսներն ևս ընդունեցին Աստուծոյ խօսքը։ Երբ Պետրոս Երուսաղէմ դարձաւ, հաւատացեալ Հրէաներէն մի քանիսը կը յանդիմանէին, որ այնքան ժամանակ հեթանոսաց ժողովի մէջ կեցաւ և մինչեւ անգամ Յրիստոսէից թուոյն մէջ խառնեց հեթանոսները։ Բայց Պետրոս պատմեց նոցա Կուռնելիոսի կոչելու պատճառը մանրամասնաբար. յիշեց նմանապէս՝ թէ ինչպէս քառասուն ժամանակ Հոգին Սուրբ իջաւ ունկնդիրներուն վրայ, և աւելցուց այս խօսքը. «Այս միջոցին ես յիշեցի Տիրոջ խօսքը թէ՝ Յովհաննէս միրտաց ջրով, բայց դուք պիտի մկրտուիք Հոգւով Սրբով։ Աստուած կռապաշաներուն եւս նոյն պարգեւը տուաւ, ինչ որ տուաւ մեզ հաւատացեալներուս։ Ուրեմն ինչպէս կարող էի ես Աստուծոյն հակառակիլ։» Այս խօսքերէն յետոյ նոքա հանդարտեցան եւ կը փառաւորէին զԱստուած, որ հեթանոսներուն ևս զղջիւն ապաշխարութիւն և նոցա համար բացաւ յաւիտենական կենաց դուռը։

ՃԼ.

Հրեշտակը կ'ազատէ Պետրոս առաքեալը բանտէն։ Գործ. ԺԲ.

Ոչ միայն Հրէից առեւանը, այլ նոյն ինքն Հերովդէս կը հալածէր Յրիստոսի Եկեղեցին։ Հերովդէս սրով սպանեց Յովհաննէսի եղբայր Յակոբը, և տեսնելով որ այս սպանութիւնը հաճոյ է Հրէաներուն, հրամայեց Պետրոսն ևս բանտը ձգել։ Բայց որովհետեւ այդ ժամանակ Պասէքի տօնը հասնելու վրայ էր, առ ժամանակ անկատար թողաւ նորա դատապարտութիւնը։

Յրիստոնէից բոլոր Եկեղեցին անդադար կ'աղօթէր առ Աստուած Պետրոսի համար, նորա բանտարկութեան ժամանակ։ Վերջին գիշերը արդէն հասաւ և միւս օրը պէտք է դատապարտէին։ Նա հանգիստ ննջէց, երկու շղթաներով կապուած և պահապաններով պատած, որոց երկուքը նորա մօտ էին բանտի մէջ. իսկ միւսները կանգնած էին դուրսը դրան մօտ, և կը պահպանէին բանտը։ Յանկարծ Աստուծոյ հրեշտակը երեւեցաւ Պետրոսին և խաւար բանտը լուսաւորեցաւ մեծ լուսով։ Հրեշտակը արթնցուց զՊետրոս և ասաց. «Շուտով ել։» Նոյն րոպէին երկաթի շղթաները ընկան Պետրոսի ձեռ-

քերէն։ Հրեշտակը ասաց. “Հագիր հան-
դերձդ և հողաթափդ։” Պետրոս կատարեց
հրեշտակի հրամանը։ — “Այժմ եկ իմ ետ-
ևէս,” ասաց հրեշտակն։ Պետրոս կ'երթար, բայց չգիտէր թէ՝ ճշմարիտ է եղածը թէ տեսիլք է միայն։

Նոքա անցան առաջին պահի (պահնոցի) մօտէն, յետոյ երկրորդէն և ապա վերջապէս հասան երկաթի դռներուն, ուստի քաղաքը կը մտնէին։ Դռները ինքնին բացուեցան և նոքա քաղաքը մտան։ Հրեշտակը մի փողոց ևս շարունակեց Պետրոսի հետ ճանապարհը և ապա անհետացաւ նորա աչքերէն։ Պետրոս աղաղակեց. “Այժմ կը տեսնեմ որ Աստուած ղրկեց իւր հրեշտակը, որ զիս ազատէ Հերովդէսի ձեռքէն և ամեն վտանգէ, որ կըսպասնար ինձ Հրէից ազգը։ Պետրոս երախտագէտ սրտիւ գնաց այն տունը, ուր սովորաբար կը հաւաքուէին Քրիստոսի աշակերտները։ Այս տեղ գտաւ նա աշակերտներէն շատերը, եւ թէպէտ գիշերը շատ ուշ էր, բայց նոքա կ'աղօթէին Պետրոսի համար։

Հռոդէ անուանով աղախին մի լսելով որ դուռը կը բաղխեն, դուրս գնաց տեսնելու, և Պետրոսի ձայնը ճանաչելով՝ ուրախութենէն առանց դուռը բանալու տեղեակը վազեց, ուր աշակերտները ժողովուած

էին, և աղաղակեց. “Պետրոս դրան մօտ կանգնած է։” Աշակերտները ասացին. “Դուռկը սխալիս։” Բայց նա եւս կը պնդէր, որ ճշմարիտը կ'ասէ։ “Ուրեմն անշուշտ նորա հրեշտակն է,” կրկնեցին աշակերտները։ Իսկ Պետրոս անդադար կը բաղխէր։ Աշակերտները իրենք գնացին դուռը բանալու և ըզ Պետրոս տեսնելով զարմացան։ Պետրոս նշան տուաւ որ լռեն, պատմեց թէ ինչ հրաշալի կերպով Տէրը զինքը ազատած է, պատուիրեց իմացընել Յակոբին և միւս եղբայրներուն (այսպէս կը կոչէին այն ժամանակ ամեն քրիստոնեայք,) և գնաց որ ապահով տեղ գտնէ իւր համար։

Երբ լուսացաւ, պահապանները չգտնելով Պետրոսը բանտի մէջ, զարհուրեցան։ Նոքա կարող չէին հասկանալ թէ՝ Պետրոս ինչպէս ելած է բանտէն, որովհետեւ չէին տեսած, ինչ որ պատահած էր։ Երբ Հերովդէս իմացաւ Պետրոսի փախուստը, խիստ զայրացաւ և հրամայեց պահապանները ըսպաննել։

Հերովդէս շուտով Երուսաղէմէն Կեսարիա գնաց, ուր մնաց քանի մի ժամանակ։ Հերովդէս շատ տժգոհ էր այս միջոցին Տիւրոս և Սիդոն քաղաքներէն։ Այս երկու քաղաքները դեսպաններ ղրկեցին Հերովդէսի մօտ։ Դեսպանները գնացին Բղաստոսի

մնա, (որ Հերովդէսի սիրելին էր,) և խընդրեցին միջնորդելու, որ խաղաղութիւն տայ իրենց. որովհետև Տիւրոս և Սիդոն իրենց ուտելիքը կը տանէին այն երկիրներէն, որոնք Հերովդէսի իշխանութեան տակն էին։ Այն օրը, որ նշանակուած էր դեսպանները ընդունելու համար, Հերովդէս իւր թագաւորական ճոխ զգեստները հագած՝ ընդունեց դեսպանները և առանի մէջ նստած՝ սկսաւ ճառ խօսել։ Ամէն ներկայ եղողները կ'աղաղակէին. «Այս խօսողը Աստուած է և ոչ մարդ։» Այս մարդելուղութիւնը, որ Աստուծոյ անհաճոյ էր, ընդհակառակն Հերովդէսին շատ ընդունելի եղաւ։ Բայց Աստուծոյ հրեշտակը պատժեց այս սնափառ թագաւորը, որ չկամեր Աստուծոյն փառք տալ։ Հերովդէս կենդանի որդնալից եղաւ և խակոյն մեռաւ։

ՃԸ.

Քրիստոնէական հաւատոյ տարածումն։

ԱՌԱՔԵԱՆԵՐԸ կը քարոզէին Աւետարանը այն երկիրներու մէջ, որոնք յայտնի էին նոյն ժամանակը։ Նոքա իրենց սուրբ կենցաղավարութեամբ, իրենց գործած հրաշքներով, քաշած չարչարանքով և վերջապէս իրենց մահով վկայեցին Քրիստոսի վարդապետութեան ճշմարտութեանը։ Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը՝ Սուրբն Յակոբ մնաց Երուսաղեմի մէջ։ Սուրբն Յովհաննէս՝ Օքեբեթիայի որդին քարոզեց փոքր Ասիոյ և Եփեսոսի մէջ և հաստատ խորին ծերութեան։ Սուրբն Պօղոս, որ նոյնպէս առաքելոց թուոյն մէջ էր ընդունուած, Աստուծոյ խօսքը տարածելու համար ջերմեռանդով և կենդանի հաւատով լցուած, գրեթէ իւր բոլոր կեանքը անցուց դժուարին ճանապարհորդութեանց մէջ։ Նա կը քարոզեր Աւետարանը, կուսուցանէր բարեպաշտութիւն, և այս առաքելական արիութեամբ հիմնեց եկեղեցիներ Աստրեստանի, Փոքր Ասիայի, Մակեդոնիայի, Յունաստանի և Իլլիրայի մէջ, և վերջապէս Հռոմ գնաց, ուր եկաւ Պետրոս առաքեալն եւս։ Հռոմէն սուրբն Պետրոս զրկեց իւր աշակերտն Մարկոս Աղէքսանդրիայի մէջ եկեղեցի հիմնելու։

Հին աւանդութիւնը կը պատմէ որ նաև Լուկաս առաքեալն Անդրեաս քարոզեց Աւետարանը Սեւ Ծովի մօտ և Սկիւթացւոց երկիրներու մէջ։ Իսկ Թադէոս, Բարդուղիմէոս և Թովմաս տարածեցին աւետարանական լոյսը Հայաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի մէջ։

Առաքելոց աշակերտները հիմնեցին եկեղեցիներ Իտալիայի, Սիկիլիայի, Սիրիկէի, Սպանիայի և Գաղղիայի մէջ։

Աւետարանը քարոզելու ժամանակ առաքեալները շատ նեղութիւններ կը կրէին։ Նոքա միշտ ճանապարհորդութեանց մէջ էին. կը կերակրուէին կամ իրենց ձեռաց աշխատանքով և կամ հաւատացելոց տուրքովը։ Նոքա մեծ համբերութեամբ և խոնարհութեամբ կը կրէին ամեն կերպ զրկոզութիւններ, հալածանք և տանջանք։ Հեթանոսներէն կ'առուէին իբրեւ Հրէաներ. իսկ Հրէաներէն կ'առուէին իբրեւ նոր վարդապետութիւն տարածող մարդիկ։ Երկու կողմէն եւս հալածանք եւ զրկանք անպակաս էին։ Յիսուսի Քրիստոսի մարգարէութիւնը կատարուեցաւ առաքելոց վրայ թէ՝ "Ամենուն ատելի պիտի լինիք իմ անուան համար։" Բայց մի և նոյն ժամանակ Հոգւոյն Սրբոյ շնորհքը, որ ինջած էր նոցա վրայ, կը զօրացնէր ամեն նեղութեանց և տառապանաց մէջ։ Վերջապէս նոքա ամենքը, բաց Ի Սուրբ Յովհաննէսէն, կատարեցան մարտիրոսական մահուամբ և արիաբար զոհեցին իրենց կեանքը Յիսուսի վարդապետութեան և անուան վկայութեան համար։ Սուրբն Պետրոս խաչուեցաւ Հռովմի մէջ, Ներոնի կայսերութեան ժամանակ, որ հռովմէական

կայսերաց մէջ առաջինն եղաւ, որ սկսաւ քրիստոնեայքը հալածել։ Իսկ սուրբն Պօղոս գլխատուեցաւ իբրեւ Հռովմայ քաղաքացի և երկուսն եւս մեռան Ի Հռովմ մի աւուր մէջ, ինչպէս կ'ասէ աւանդութիւնը։ Թադէոս և Բարդուղիմէոս նահատակուեցան Հայաստանի մէջ Հայոց Սանատրուկ Թագաւորի իշխանութեան ժամանակ։

Առաքելոց գործքերը և Աւետարանի տարածման համար ունեցած աշխատանքը նկարագրեց սուրբ առաքեալն և աւետարանիչն Ղուկաս, որ սուրբ Պօղոսին ուղեկից էր առաքելութեան մէջ։

Առաջին Աւետարանը գրեց սուրբն Մատթէոս. իսկ փոքր ինչ ժամանակէն յետոյ՝ գրեց սուրբն Մարկոս, Պետրոսի աշակերտն, և ապա գրեց սուրբն Ղուկաս, որոյ մէջ այնպիսի անցքեր կան նկարագրուած, զորս առաջին երկու աւետարանիչներն չեն յիշած։ Վերջապէս, Քրիստոսի համբառնալէն երեսուն երկու տարի յետոյ, սուրբն Յովհաննէս՝ Յիսուսի սիրելի աշակերտը գրեց չորրորդ Աւետարանը, որուն մէջ զգալի կերպով նկարագրուած է Փրկչի Աստուածութիւնը։

Այսպէս ահա Յիսուսի Քրիստոսի կեանքը և վարդապետութիւնը և քրիստոնէական սուրբ Եկեղեցւոյ նախկին վիճակը նը-

կարագրուած է Նոր Ուխտի պատմութեան կամ Նոր Կտակարանի մէջ։ Նոր Կտակարանի գրքերը սոքա են՝ Սուրբ Աւետարաններ՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու. Գործք Առաքելոց. եօթն Ընդհանրական կամ Կաթողիկեայ Թուղթք, որոց երեքը գրած է Յովհաննէս, երկուսը՝ Պետրոս, մէկը՝ Յակոբոս և մէկը Յուդայ. Զորեքտասան Թուղթք Պօղոսի առ Հռովմայիս, առ Կորնթացիս, առ Գաղատացիս առ Եփեսացիս, և այլն։ Բաց յայսմանէ Նոր Կտակարանի մէջ մարգարէութեան գիրք մի եւս կայ Յայտնութիւն անուամբ, որուն մէջ ատուածաբան առաքեալն Յովհաննէս նըկարագրած է Քրիստոնէական Եկեղեցւոյ ապագայ վիճակը։

ՃԹ.

Երուսաղեմի աւերումն։

ՄԻՆՉԴԵՌ Յիսուսի փրկարար արքայութիւնը կը հաստատուէր և կը տարածուէր երկրիս վրայ ամեն ազգերու մէջ, Հրէից Թագաւորութիւնը, զոր Աստուած Թողած էր, քանդուելու վրայ էր։ Յիսուսի համբառնալէն մօտ քառասուն տարի յետոյ՝ նո-

բա մարգարէութեանը համեմատ՝ Հեթանոսները աւերեցին Երուսաղէմը։ Հրեայքը որոնք միայն իրենց ազգը Աստուծոյ ժողովուրդ կը համարէին, չէին կամենար հեթանոսաց իշխանութեան տակ լինիլ, ուստի և ապըստամբեցան Հռովմայեցւոց դէմ։ Այս ապըստամբութեան համար շատերը կոտորուեցան զանազան երկիրներու մէջ, և վերջապէս Վեսպասիանոս կայսեր որդին՝ Տիտոս պաշարեց և առաւ Երուսաղէմը։ Պատերազմը խիստ սաստիկ էր և ահռելի։ Մի միլիոն և հարիւր հազար Հրեայք կորուսին իրենց կեանքը և մնացածները գերի վարեցան։ Տաճարը այրուեցաւ և քար քարի վրայ չըմնաց, Թէպէտ և Տիտոս կը ցանկար պահպանել։ Երուսաղէմ իսպառ աւերեցաւ և կոտորածէն ու սովէն այնպիսի զարհուրելի անցքեր պատահեցան, որ մարդ կը սարսափի երբ պատմութեան մէջ կը կարդայ։ Այսպէս պատժեց Տէր այն քաղաքը, որ այնքան մարգարէից արիւնը Թափեց և վերջապէս խաչեց զՄեսիան՝ Յիսուս Քրիստոս։ Հրէաները գերի եղան Հռովմայեցւոց և յետոյ ապստամբութեան համար իրենց հայրենիքէն աքսորուելով՝ ցրուեցան զանազան երկիրներու մէջ և մինչեւ ցայսօր նոյն վիճակն ունին։ Այն ժամանակէն ՝ի վեր նոքա երբեք չըկարողացան միանալ եւ

կաղմել առանձին անկախ քաղաքական հաս-
տարակութիւն կամ մարմին։

Այս ազգի վիճակի մէջ յայտնապէս կը
տեսնենք Աստուծոյ յաւիտենական խորհրդ-
ոյ կատարումն հանուր մարդկային ազգի
փրկութեան համար։ Այս ազգէն ծագեցաւ
երկրիս վրայ ճշմարիտ հաւատոյ լոյսը,
երեւեցան առաքեալներ և հաւատոյ քարոզ-
իչներ, որոնք Սուրբ Հոգին ընդունեցին։
Բայց Երուսաղեմի քանդուելէն յետոյ ջնջ-
ուեցան արարողութիւնները և Իսրայելաց-
ւոյ ազգային քաղաքական օրէնքները։
Վերջացան զոհերը եւ մասամբ հրէական
աստուածպաշտութեան միւս ծէսերը, իսկ
մասամբ փոփոխուեցան և քրիստոնէական
հաւատոյ ծէսերուն յարմարեցան։ Հրէից
քաղաքական օրէնքները յարմար էին իրենց
վիճակին, զոր ունէին խոստացեալ երկրի
մէջ. ուստի և քրիստոնեայք պարտաւորեն
Հին Կտակարանի մէջէն միայն այն օրէնքնե-
րը կատարել, որոնք բարոյականութեան կը
վերաբերին և ոչ քաղաքականութեան, այս-
ինքն այն օրէնքները, որոնք ընդհանուր են
և կը կատարուին ամեն ժամանակ և ամեն
երկիրներու մէջ։

Ճ Ժ.

Տեսութիւն քրիստոնէական եկեղեցւոյ վիճակի վրայ Առաքեալներէն յետոյ։

Քրիստոսի վարդապետութիւնը Առաքելոց հիմնած եկեղեցիներէն փոքր առ փոքր տարածուեցաւ բոլոր երկրիս վրայ։ Հեթանոսները տեսնելով որ քրիստոնէական հաւատը յառաջանալով կը ջնջէ իրենց կռապաշտութիւնը, ամենայն զօրութեամբ նորա դէմ դնեցան։ Երբեք հարիւր տարի Քրիստոսի եկեղեցին շարունակ հալածանաց մէջ էր։ Ամենադառն տանջանքներ և չարչարանքներ գործ դրուեցան Քրիստոնէից դէմ, որպէս զի իրենց հաւատը ուրանան և կուռքեր պաշտեն։ Բայց քրիստոնեայք արիութեամբ կը համբերէին ամեն տանջանքներուն և իրենց արիւնով կնքեցին քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը։ Այս քաջած տառապանքներէն ամենեւին չը յուսահատեցան. վասն զի որքան աւելի կը չարչարուէին, այնքան աւելի կ'ուրախանային, հաստատ հաւատալով, որ կարճատեւ չարչարանքէն զինի կրսպասէ իրենց արդարութեան պսակը երկնային թագաւորութեան մէջ։

Այժմ Աւետարանը ամեն յայտնի լեզուներով թարգմանուած է և կը քարոզուի

ամեն ազգերու. այնպէս որ չըկայ երկրիս երեսին տեղ մի, ուր քրիստոնեայք չըլնին։ Եւրոպան, ուր առաջ կռապաշտներ կը բնակէին, այժմ լցուած է քրիստոնեաներով. իսկ ի բոլոր Ասիա ցրուած կան շատ քրիստոնեայք։ Քրիստոնէական հաւատը վերջին ժամանակներս քարոզուելով Ամերիկայի ընդարձակ երկիրներուն մէջ միակ մը խիթարութիւն եղաւ խեղճ սեւ գերիներուն, և մարդավաճառութիւնը ջնջեց։ Աֆրիկէի այրող աւազներու բնակչաց մէջ եւս արդէն կը լսուի Յիսուսի Քրիստոսի անունը։

Ընթիւ են այն բարիքները, զորս քրիստոնէական հաւատոյ լոյսը սփռած է մեր երկրաւոր կենաց վրայ։ Նա է, որ կ'ամոքէ և կը կակղացնէ ազգերու կոպիտ վարքն ու բարքը։ Նա է, որ կ'աղնուացնէ եւ կը բարձրացնէ մարդուս բնական ընդունակութիւնները, կը մաքրէ բարոյականութիւնը, առաքինութիւններ կ'ուսուցանէ մարդկանց և կը կրթէ ամենակեցոյ կատարելութեանց մէջ։ Նա է, որ սրբեց և կը սրբէ ընկերականութեանց փոխադարձ կապերը, կը զարդարէ իշխանաց թագերը նոր և գեղեցիկ լուսով, խոնարհութիւն կ'ուսուցանէ հպատակաց իրենց օրինաւոր կառավարիչներուն, կ'ամրացընէ ամուսնական կապը,

և ծնողք ու որդիք փոխադարձ սիրոյ եւ յարգանաց մէջ կը վարժէ։ Քրիստոնէական հաւատն է, որ տարածեց եւ կը տարածէ մարդկանց մէջ ճշմարիտ լուսաւորութիւն։ Նա ստեղծեց նոր և գեղեցիկ հոգեւոր աշխարհ, ուր մենք երկրիս վրայ անդամ կարող ենք երջանկութիւն փայելել, եթէ կատարենք Աւետարանի պատուէրները և մաքուր սրտով և մտքով հետեւինք Քրիստոսի ուսմանը։ Աւետարանը բացաւ մեզ համար ամենավսեմ և փրկարար ճշմարտութիւններ, ուստի ոչ թէ միայն դպրոցներու մէջ, այլ և ամեն քրիստոնէի տան մէջ առաջին գիրքը պէտք է լինի Աւետարանը։ Այսն զի Աւետարանի ճշմարտութեանց և գեղեցիկ բարոյականի վրայ հիմնուած ուսումն ու կեանքը միայն կարող են լուսաւորել մեր միտքը և մխիթարել մեր սիրտը անպատում լուսով եւ մխիթարութեամբ։ Կատարենք ուրեմն Աւետարանի պատուէրները և սիրով կապուինք մեր Փրկչի հետ, որ ազատ պահպանէ զմեզ փորձանքներէ։ Այսն զի նա է մեր Տէրն և Աստուածը մեր կենաց մէջ։ Նա է մեր Միջնորդը վշտաց մէջ, մեր Ուրախութիւնը՝ մանկութեան ժամանակ, մեր Նեցուկը և Մխիթարիչը՝ ծերութեան ժամանակ, մեր Յոյսը՝ մահուան ժամանակ և մեր Յաւիտենական Երջանկութիւնը մեր մահէն յետոյ։

Ինչպէս ուրիշ աղգաց համար իրենց եկեղեցիները, նոյնպէս մեր համար՝ Քրիստոսի ուսման աւանդապահն է մեր Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցին, որ հաստատուած է Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց քարոզութեամբ։ Ուրեմն ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ պատմութիւնը ուսանելէն զկնի՝ կը մնայ մեզ ամենայն սիրով ուսանիլ մեր Առաքելական Եկեղեցւոյ պատմութիւնը։

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Զաքարիա և Եղիսաբեթ. 1
Սուրբ կոյսն Մարիամ. 4
Սուրբ կոյսն Մարիամ և որդւոյն Եղիսաբեթ. 9
Սուրբ Յովհաննէս Կարապետի ծնունդը. 12
Ժրիստոսի ծնունդը. 14
Բեթղեհեմի հովիւները. 17
Յիսուսի տաճարը տարուիլը. 19
Աստուածընկալ Սիմէօն և Աննա մարգարէուհին. 20
Մոգերու երկիրպագութիւնը. 22
Փախուստը Եգիպտոս. 25
Տաներկու տարեկան Յիսուսը տաճարի մէջ. 27
Յովհաննէս կը քարոզէ Յորդանանի անապատին մէջ. 28
Սուրբ Յովհաննէս Կարապետի վկայութիւնը Քրիստոսի համար. 31
Յիսուս կը մկրտուի Յովհաննիսէն. 55
Յիսուս Քրիստոս կը փորձուի սատանայէն։ 54
Յիսուսի առաջին աշակերտները. 57
Գալիլիայի Կանա քաղաքի հարսանիքը։ 59
Յիսուս Քրիստոս կ'արտաքսէ հատավաճառները. 42
Փրկչի խօսակցութիւնը Նիկոդիմոսի հետ. 46
Սամարացի կինը. 48
Յիսուս Քրիստոս Սամարիայի մէջ. 53
Թագաւորական որդւոյ բժշկուիլը Կափառնայում քաղաքի մէջ. 53
Յիսուս Քրիստոսի քարոզութիւնը Նազարէթի մէջ. 56
Ձկան հրաշալի որսը. 58
Յիսուս Քրիստոս կ'ինչնէ Կափառնայում և կը շրջի Գալիլիայի մէջ. 60
Կափառնայում քաղաքի հարիւրապետը. 65
Անդամալուծի բժշկուիլը. 65
Յիսուս կը յարուցանէ Յայրոսի աղջիկը և կը բժշկէ հիւանդ կինը. 68

Հիւանդը Պետրոսի առագանի մօտ. 72
Մի քանի խրատական անց.քեր. 77
Յիսուս կը բժշկէ ձեռքով գօսացեալը. 80
Տաներկու Առաքեալները. 82
Յիսուս Քրիստոս կը յարուցանէ Դայրենի այրի կնոջ որդին. 86
Յովհաննէս Մկրտիչին զրկուածները Յիսուսի մօտ. 87
Սերմնացանի և հունձի առակը. 90
Փրկչի մի քանի առակներն ևս. 94
Մի քանի խրատական առակներ, որոնք կ'ուսուցանեն. թէ աղօթքը շատ կարեւոր է մարդուն և ամեն ճշմարիտ աղօթք միշտ լսելի կը լինի. 100
Ապաշխարող մեղաւոր կինը. 102
Յիսուս Քրիստոս կը սատակ մրրկին. 105
Փրկչի մի քանի խօսքերը. 106
Յովհաննէս Մկրտչի վրայ. 111
Յիսուս Քրիստոս սակաւ հացով կը յագեցնէ մի քանի հազար հոգիներ. 115
Յիսուս կը գնայ Ջրի երեսին. 118
Յիսուս Քրիստոս կ'օրհնէ մանուկները. 119
Խրատ հեզութեան և Աստուծոյ արքայութեան գը-ժուար ճանապարհին վրայ. 122
Մեծատուն երիտասարդը. 124
Քանանացի կինը. 127
Յիսուսի այլակերպութիւնը. 128
Անառակ որդին. 130
Ողորմած Սամարացին. 135
Երկու պարտապանների առակը. 135
Մաքսաւորը և Փարիսեցին. 137
Դարձեալ մի քանի առակներ. 138
Քանքարների առակը. 140
Այգիի համար վարձված մշակների առակը. 145
Այգիի առակը. 146
Թագաւորի հարսանիքը հրաւիրուածներու վրայ. 148
Տան կուսերու վրայ. 150
Մեծատան և Ղազարոսի առակը. 152
Յիսուսի Քրիստոսի հրաշքները և բարեբարութիւնները. 154

Զաքէոս. 157
Կոյր ծնածի բժշկութիւնը. 158
Ողորմութիւն գտնող մեղաւոր կինը. 164
Մարթա և Մարիամ. 166
Ղազարոսի յարութիւնը. 167
Մարիամը իւղով կ'օծէ զՅիսուս. 173
Յիսուս Երուսաղէմ կը մտնէ. 174
Զորացած թզենին. 179
Փրկչի խօսակցութիւնը իւր աստուածային փառաց և նշանակութեան վրայ. 180
Յիսուս կը գուշակէ Երուսաղէմի և տաճարի քանդումն. 183
Մարգարէութիւն աշխարհիս կատարածի և երկրորդ գալստեան վրայ. 188
Վերջին դատաստանի վրայ. 191
Հատկի պատարաստութիւնը. 194
Ոտնալուայ. 196
Յուդայ մատնիչ. 199
Պետրոսի ուրացութեան գուշակութիւնը. 202
Խորհրդաւոր ընթրիք. 204
Յիսուսի հրաժարական խօսակցութիւնը իւր աշակերտաց հետ. 206
Յիսուս Գեթսեմանիի պարտիզին մէջ. 211
Յուդան կը մատնէ զՅիսուս. 214
Յիսուս Քրիստոս տունի առջեւ. 217
Պետրոս առաքեալի ուրացութիւնը. 221
Յիսուս Քրիստոս Պիղատոսի առջեւ. 224
Յիսուս Քրիստոս Հերովդէսի առջեւ. 227
Պիղատոս կ'աշխատի Յիսուսը ազատել. 229
Յիսուս Քրիստոս կը հանձնէ չարչարանաց. 231
Յիսուսի Քրիստոսի խաչելութիւնը. 235
Փրկչը խաչի վրայ. 240
Յիսուս Քրիստոս կ'առանձէ հոգին. 245
Յիսուսի Քրիստոսի թաղումն. 245
Քրիստոսի յարութիւնը. 250
Յիսուս կը յայտնուի Մարիամ Մագդաղենացւոյն և ուրիշ կանանց. 253

024

Խնկաբեր կանայքը կ'աւետեն Յիսուսի յարութիւնը. 256
Յիսուս կը յայտնուի աշակերտաց՝ Էմմաուսի ճանապարհի վրայ. 259
Փրկիչը կը յայտնուի առաքեալներուն. 262
Թովմայի հաւատալը. 264
Յիսուս կը յայտնուի աշակերտներուն Տիբերիական ծովին մօտ. 266
Քրիստոսի Համբարձումն. 271
Գալուստ Հոգւոյն Սրբոյ. 273
Առաջին հալածանք առաքելոց դէմ. 277
Յաղթանակող Եկեղեցին. 281
Ստեփաննոս Նախավկայ. 286
Եթովպացի Ներքինիի մկրտութիւնը. 289
Սողոսի դարձը. 293
Կուռնելիոս հարիւրապետի դարձը. 297
Հրեշտակը կ'ազատէ Պետրոս առաքեալը բանտէն. 303
Քրիստոնէական հաւատոյ տարածումն. 306
Երուսաղէմի աւերումն. 310
Տեսութիւն քրիստոնէական Եկեղեցւոյ վիճակի վրայ Առաքեալներէն յետոյ. 313

ՀԱՅԿ-ՍՍՌ

1707

2ռ

1652